ԷՋԱՆԻՇԵՐ

Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ձեռնարկ

Վերանայված հրատարակություն

2020

NO HATE SPEECH MOVEMENT

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

NO HATE SPEECH MOVEMENT

ԷՋԱՆԻՇԵՐ

Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ձեռնարկ

Վերանայված հրատարակություն (2020)

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ԵՎ ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝
ԷԼԼԻ ՔԻՆ, ՄԱՐԱ ՋՈՐՋԵՍԿՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՏԵԼ ԵՆ՝
ՕԼԵՆԱ ՉԵՐՆԻԽԸ, ԱՆԿԱ ՌՈՒՔՍԱՆԴՐԱ-ՊԱՆԴԵՈՒՆ ԵՎ ՍԱՏՈՒ ՎԱԼՏԵՐԵՆ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒՄ՝
ՌՈՒՅ ԳՈՄԵՍ

Bookmarks - A manual for combating hate speech online through human rights education
Revised edition, 2020

«Էջանիշեր» - Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ձեռնարկ, Վերանայված հրատարակություն, 2020

Տեքստը պատրաստվել և կիրառվում է Եվրոպայի խորհրդի կողմից: Այս փաստաթուղթը հրատարակվել է Եվրոպայի խորհրդի հետ համաձայնեցված, սակայն թարգմանչի լիարժեք պատասխանատվության նեքո:

Ձեռնարկում ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և միշտ չէ, որ համընկնում են Եվրոպայի խորհրդի հայացքների հետ:

Հրատարակության հեղինակային իրավունքը պատկանում է Եվրոպայի խորհրդին: Այս հրատարակության ոչ մի հատված չի կարող թարգմանվել, վերահրատարակվել կամ տարածվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրտրոնային (CDRom, համացանց և այլն) կամ մեխանիկական, ներառյալ՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկությունների պահպանման/ընդունման ցանկացած համակարգի միջոցներով, առանց Եվրոպայի խորհրդի հրատարակչական բաժնի հաղորդակցությունների տնօրինության գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg Cedex or publishing@coe.int):

Այս հրատարակության նյութերի վերահրատարակումը թույլատրվում է միայն ոչ առևտրային, կրթական նպատակներով՝ սկզբնաղբյուրին պատշաճ հղում տալու պայմանով:

Այս փաստաթղթի հետ կապված բոլոր մյուս հարցերով նամակագրությունը պետք է հասցեագրվի Եվրոպայի խորհրդի Երիտասարդական բաժնին:

Ձեռնարկի հայերեն տարբերակը տպագրվել է Վրաստանում՝ Եվրոպայի խորհրդի գրասենյակի աջակցությամբ և ֆինանսավորմամբ:

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Վրաստանում

www.coe.ge

Email: informTbilisi@coe.int

Էջանիշեր՝ Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ձեռնարկ

© Council of Europe, 2020 English edition
© Council of Europe 2021 Armenian edition
© Եվրոպայի խորհուրդ, 2020, անգլերեն հրատարակություն
© Եվրոպայի խորհուրդ, 2021, հայերեն հրատարակություն

Հայերեն հրատարակության բովանդակային խմբագրում՝ Մարինա Թորոսյան

Հայերեն հրատարակության որակի ստուգում՝ Զառա Լավչյան

Կազմի լուսանկարների համար շնորհակալություն ենք հայտնում Եվրոպայի խորհրդին/«Ո՛չ ատելության խոսքին» շարժմանը

Էջադրում և ձևավորում՝ Հորվաթ Դանիել – danielhorvath.com

ՆԱԽԱԲԱՆ

«Էջանիշեր» կոչվող այս ձեռնարկը արժեքավոր գործիք է ինչպես ատելության խոսքի դեմ պայքարում, այնպես էլ մարդու իրավունքների ամրապնդման գործում: Դուք, իհարկե, կարող եք հարցնել. «Իսկ ինչու՞ մենք պետք է ընդհանրապես անհանգստանանք այդ կապակցությամբ: Չէ որ, ժողովրդավարական հասարակությունում մարդիկ ազատ արտահայտվելու իրավունք ունեն»: Այո, իսկապես, արտահայտման ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, որը տարածվում է նաև այն գաղափարների վրա, որոնք կարող են վիրավորել, ցնցել կամ անհանգստացնել մարդկանց, սակայն այն ենթադրում է նաև հստակ պարտականություններ և պատասխանատվություններ: Ատելության խոսքը «պաշտպանված» չէ, ատելությամբ լի խոսքը կարող է դառնալ ատելության հիմքով իրական հանցագործությունների պատճառ: Նման հանցագործությունները արդեն իսկ կործանել են բազմաթիվ մարդկանց և խլել բազում կյանքեր:

Ատելության խոսքը դարձել է Եվրոպայում անհանդուրժողականության և այլատյացության ամենատարածված ձևերից մեկը: Հատկապես մտահոգիչ է ատելության խոսքի առկայությունը քաղաքական խոսույթում և այն, թե որքան սովորական են դարձել նման դրսևորումները հանրային ոլորտում, մասնավորապես՝ համացանցում: Այն, որ անընդունելին դառնում է ընդունելի և վերածվում «նորմի», իրական սպառնալիք է մարդու իրավունքների համար: Եվրոպայի խորհրդի «Ո՛չ ատելության խոսքին» շարժումը ձեռնարկվել է առավելապես նպատակ ունենալով հակազդել ատելության խոսքի, որպես սովորական երևույթ ընկալելու և ընդունելու միտմանը, և կասեցնել դրա «նորմի վերածվելու» գործընթացը, հատկապես՝ առցանց տիրույթում:

Անառարկելի է այն փաստը, որ համացանցը մեզ տալիս է էապես նոր գործիքներ հաղորդակցության, համերաշխության արտահայտման, սոցիալական փոփոխություններին նպաստելու և ժամանցի համար: Սակայն մենք չպետք է թույլ տանք, որ այն դառնա առցանց հալածանքների և ատելության քարոզչության գործիք: Առցանց արտահայտման ազատությունը պետք է նշանակի նաև առցանց վախի բացակայություն:

Եվրոպայի խորհուրդն առաջինն էր, որ սահմանեց ատելության խոսք եզրույթը և կոչ արեց դատապարտել համացանցում տարածվող այլատյացությունը և ռասիզմը: Իրավական միջոցները չափազանց կարևոր են, սակայն դրանք բավարար չեն: Միակ երկարաժամկետ լուծումը կրթությունն է, քանի որ միայն կրթության միջոցով է հնարավոր կանխարգելել ատելության խոսքը, սովորեցնել բացահայտել և դատապարտել այն, ինչպես նաև խթանել նման դրսևորումների զոհերի նկատմամբ համերաշխության զգացողության ձևավորումը:

Մարդու իրավունքների մասին, դրանց միջոցով և հանուն դրանց սովորելն առանցքային նշանակություն ունի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և պաշտպանության գործուն մթնոլորտի ձևավորման և պահպանման համար՝ հատկապես հաշվի առնելով այն սրընթաց փոփոխությունները և ռազմավարությունները, որ ծավալվում են մեր հասարակություններում: Սա առավելապես վերաբերում է երեխաներին և երիտասարդներին, և ժամանակակից աշխարհում անկասկած պետք է ներառվի մեդիա ոլորտի և համացանցային գրագիտության վերաբերյալ կրթական ծրագրերի մեջ:

Եվրոպայի խորհրդի «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավը իրականացնում են հենց երիտասարդները. նրանք են եղել այս շարժման նախաձեռնողները և նրանք են որոշում, թե ինչպես այն պետք է իրականացվի: Սա չափազանց կարևոր է նաև հաշվի առնելով, որ համացանցում՝ ատելության խոսքի և ահաբեկման միջոցով մարդու իրավունքների ոտնահարման հիմնական թիրախները հենց նրանք են:

Հուսով եմ, որ այս ձեռնարկը կսկսեն կիրառել դպրոցներում, երիտասարդական կազմակերպություններում և կենտրոններում, և որ այն կտարածվի նաև համացանցում: Ես կոչ եմ անում ուսանողներին, աշակերտներին, ուսուցիչներին և բոլոր մյուս շահագրգիռ կողմերին ազատորեն օգտագործել այն և միանալ մեր քարոզարշավին: Եկե՛ք օգտագործենք «Էջանիշեր»-ը ատելությանը դիմակայելու համար:

Թորբյորն Յագլանդ

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց առաջարկություններով և արձագանքներով նպաստել են այս ձեռնարկի ստեղծմանը: Մասնավորապես՝

- «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի վերահսկող խմբի անդամներին, նախևառաջ՝ Երիտասարդության հարցերով խորհրդատվական խորհրդի և Երիտասարդութան հարցերով եվրոպական ղեկավար կոմիտեի ներկայացուցիչներին և կրթական ռազմավարության ու պրակտիկայի հարցերով Եվրոպական ղեկավար կոմիտեի դիտորդներին, Երիտասարդության հարցերով տեղեկատվական և խորհրդատվական Եվրոպական գործակալության, Երիտասարդության հարցերով ֆորումի, Երիտասարդության հարցերով ասոցիացիայի, EEA (Նորվեգիայի դրամաշնորհներ) ներկայացուցիչներին և առցանց ակտիվիստներին՝ Քլաուդիա Լենզին (Եվրոպական Վերգելանդ կենտրոն), Աննի Սիլտանենին (Insafe) և Վիկտոր Թոմեին (խորհրդատու):
- Անն Վեբերին (Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակ), Ջորդանա Բերջանին (Երեխաների ծրագիր), Լի Հիբարդին, Էլվանա Թաչիին և Ջեյմս Լավսոնին (Համացանցային կառավարման բաժին), Պաուլա Էք-Վոլթերսին (Ռասիզմի և խտրականության դեմ Եվրոպական հանձնաժողովի քարտուղարություն), Ջոզեֆ Հյուբերին, Յուլիա Պերերվային (Կրթական բաժին), Անկա-Ռուքսանդրա Պանդեային, Մենո Էթեմային, Այլեն Դոնեգանին, Քլեր Ուզինսկիին և Մաուդ Հոֆման Բոյվինին (Երիտասարդության հարցերով բաժին) և բոլորին՝ Եվրոպայի խորհրդից:

Մենք աշխատել ենք գտնել տեքստերի և հեղինակների գործունեությունների հետ կապված հղումներ և արժանացնել դրանք պատշաճ ուշադրության: Մեր ներողամտությունն ենք հայցում ձեռնարկում տեղ գտած բոլոր անճշտությունների և բացթողումների համար: Ուրախ կլինենք ուղղել դրանք հաջորդ հրատարակության մեջ:

«ԵՍ ԸՆՏՐՈՒՄ ԵՄ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ»

«Էջանիշեր»-ի հայերեն թարգմանությունն իրականացվել է «Խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի դեմ պայքար Վրաստանում» (2018-2021) ծրագրի շրջանակներում:* Ծրագիրը նպատակ ունի իրականացնել նախաձեռնություններ, որոնք նախատեսում են օրենսդրական կարողությունների զարգացման և իրազեկման բարձրացման միջոցառումներ: Այն միտված է պայքարելու Վրաստանում խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների դեմ, ինչպես նաև՝ խթանելու բազմազանությունն ու հանդուրժողականությունը և բարձրացնելու այդ հարցերի շուրջ իրազեկվածությունը: Ծրագիրը հիմնված է Եվրոպայի խորհրդի, Վրաստանի իշխանությունների, դատարանի, իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության երկարամյա համագործակցության վրա:

Ծրագրի կարևոր մասն է կազմում «Ես ընտրում եմ հավասարություն» արշավը, որի նպատակը խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների հանրությանը պատճառած ռիսկերի մասին իրազեկման բարձրացումն է: Կրթական միջոցառումները, համայնքային նախաձեռնությունները և հասարակական արշավները նպաստում են մարդու իրավունքների վրա հիմնված արժեքների հաստատմանը, միջմշակութային ուսուցմանը, ինչպես նաև՝ ատելության խոսքի զոհերի կողմից իրավական պաշտպանության մեխանիզմների կիրառմանը:

Արշավի կրթական և իրազեկման բարձրացման նախաձեռնությունները հիմնված են Եվրոպայի խորհրդի կողմից իրականացված «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական արշավի լավագույն փորձի վրա՝ ուղղված ատելության խոսքի դեմ պայքարին ու մարդու իրավունքների պաշտպանությանն առցանց հարթակում: «Ես ընտրում եմ հավասարություն» արշավի հիմնական թիրախային լսարանը երիտասարդներն են՝ հաշվի առնելով, որ նոր սերունդը կարևոր դեր է կատարում բազմազանության վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորման, ինչպես նաև համայնքային մակարդակում խտրականության դեմ պայքարին մասնակցելու գործում:

Մենք հրավիրում ենք ձեզ միանալ արշավին՝ http://ichooseequality.ge/

* «Խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի դեմ պայքար Վրաստանում» ծրագիրն իրականացվում է համաձայն Վրաստանում Եվրոպայի խորհրդի 2016-2019 թթ. գործողությունների պլանի և Դանիայի Հարևանության ծրագրի (DANEP) աջակցությամբ: «Էջանիշեր»-ի օրիգինալ թարգմանությունը ֆինանսավորվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Լրատվամիջոցների ազատության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության խթանումը» համատեղ ծրագրի կողմից (2015-2017):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 - ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ 10

1.1 Ներածություն 10

1.2 Ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդիրը 12

ԳԼՈՒԽ 2 - «Ո՛Չ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ 15

2.1 Քարոզարշավի մասին 15

2.2 Քարոզարշավի արդյունքները 16

2.3 Քարոզարշավի գործիքներն ու աղբյուրները 17

2.4 Քարոզարշավի հետագա քայլերը Եվրոպայի խորհրդում 18

2.5 Ի՞նչ կարող են անել երիտասարդներ 20

ԳԼՈՒԽ 3 - ՁԵՌՆԱՐԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ 21

3.1 Ձեռնարկի անհրաժեշտությունը 21

3.2 Ձեռնարկի կառուցվածքը 23

3.3 Վարժությունների անցկացումը 24

3.4 Խրախուսել, խուսափել 26

3.5 Թեմաներ և հարցեր 26

ԳԼՈՒԽ 4 - 24 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28

Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի 24 վարժություն 28

Վարժությունների ամփոփ աղյուսակ 29

ԳԼՈՒԽ 5 - ՀԱՄԱՏԵՔՍՏ 188

5.1 Ատելության խոսքի առցանց դրսևորումներ 189

5.2 Մարդու իրավունքներ 199

5.3 Արտահայտման ազատություն 207

5.4 Ռասիզմ եվ խտրականություն 215

5.5 Անձնական կյանք և անվտանգություն 221

5.6 Ժողովրդավարություն եվ մասնակցություն 227

5.7 Քարոզարշավի ռազմավարություններ 235

5.8 Համացանցային գրագիտություն 240

5.9 Կիբերբուլինգ 252

5.10 Եվրոպայի խորհուրդը և ատելության խոսքի առցանց դրսևորումները 258

ԳԼՈՒԽ 6 - ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 264

6.1 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ամփոփ տարբերակ) ... 265

6.2 Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և նրա արձանագրությունները (ամփոփ տարբերակ) 267

6.3 Ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրին անդրադառնալու այլ ռեսուրսներ 271

6.4 Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար (պարզեցված տարբերակ) 274

6.5 «Էջանիշեր» ձեռնարկի հիման վրա մշակված աշխատարանների օրինակներ 277

ԳԼՈՒԽ 1
ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձա՞յն եք այս մտքին՝
«փայտերով և քարերով կարելի է ջարդուխուրդ անել մարմինս, բայց բառերն ինձ երբեք չեն կարող վնասել»

Ձեռնարկը մշակվել է Եվրոպայի խորհրդի՝ «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական շարժման քարոզարշավի շրջանակներում՝ նպաստելու համար ատելության առցանց դրսևորումների դեմ պայքարին: Սա օգտակար գործիք է այս խնդրին անդրադառնալ ցանկացող ուսուցիչների համար ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթական համակարգի շրջանակներում: Ձեռնարկը նախատեսված է 13-ից 18 տարեկան երիտասարդների համար, սակայն այստեղ զետեղված վարժությունները կարող են հարմարեցվել նաև այլ տարիքային խմբերին:

Էջանիշերը հրատարակվել է 2014 թվականին և թարգմանվել 18 լեզուներով: 2016 թվականի հրատարակությունում ձեռնարկը թարմացվել է՝ ներառելով Եվրոպայի խորհրդի՝ համացանցի օգտատերերի համար Մարդու իրավունքների ուղեցույցը:

Եվրոպայի խորհրդի կողմից «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի համակարգումն ավարտվել է 2018 թվականին, թեև ազգային մակարդակով որոշ քարոզարշավներ դեռևս ակտիվ են: Ներկայիս (2020 թվականի) վերանայումը ներառում է թարմացված տեղեկություններ այն մասին, թե ինչպես է երիտասարդական շարժման շրջանակներում մեկնարկած աշխատանքն իրականացվել Եվրոպայի խորհրդի և ատելության խոսքի դեմ գործող նրա գործընկերների կողմից:

Կիբերատելության դեմ պայքարի կրթական նախաձեռնությունների պահանջարկը մասամբ պայմանավորված է համացանցում բռնության հետզհետե աճող ծավալներով: Իրենց բնույթով այդ դրսևորումները ռասիստական են և ունեն ծայրահեղական տոնայնություն, այդիսկ պատճառով ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքների տեսանկյունից կարող են դիտարկվել որպես վտանգ: Սակայն կիբերատելությունը ոչ միայն ռասիզմին և խտրականությանը վերաբերող խնդիր է, այլ նաև սերտորեն առնչվում է նրան, թե ինչպես են մարդիկ օգտագործում համացանցը: Սա համեմատաբար նոր երևույթ է, որն ուսումնասիրված չէ լիովին: Ելնելով դրանից, ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրին աշխարհը դեռևս չի կարողանում դիմակայել:

Կիբերատելության դեմ պայքարին ուղղված գործողությունների մեծամասնությունը, հիմնականում, միտված է վերահսկողության մեխանիզմների գործարկմանը, այն է՝ ատելության խոսքի դրսևորումների վերացմանը: Այս ձեռնարկում ատելության խոսքը դիտարկվում է որպես ավելի արմատական խնդրի ախտանիշ: Գրքում ներառված վարժությունները մշակվել են այնպես, որպեսզի թիրախավորեն ատելության դրսևորումների արմատական պատճառները, ինչպես նաև օգնեն ատելության խոսքի դեմ պայքարի արդյունավետ ուղիներ բացահայտելու հարցում:

Ատելության խոսքի առցանց դրսևորումները նման են մի թունավոր բույսի տերևների, որն արմատավորվել է հասարակության մեջ: Տերևներն էտելով անհնար է վերացնել խնդրի խորքային պատճառները:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

Ձեռնարկում ընդգրկված վարժությունները կօգնեն երիտասարդներին ձեռք բերել այնպիսի գիտելիք, հմտություններ և ձևավորել այնպիսի վերաբերմունք, որոնք անհրաժեշտ կլինեն, երբ իրական կյանքում հաստատված սկզբունքները կգործեն համացանցում ևս: Այդ սկզբունքները մշակվել և համաձայնեցվել են ավելի քան 60 տարի առաջ և հայտնի են որպես մարդու իրավունքներ: Դրանց հիմքում ընկած են յուրաքանչյուր անհատի արժանապատվության, իրավահավասարության, ազատության սկզբունքները, ինչպես նաև ամրագրված է մարդու իրավունքների առանցքային դերը՝ մեր ամենօրյա գոյությունը կազմակերպելու և կառավարելու վերաբերյալ որոշումներ ընդունելու առումով:

Ինչպես ամբողջ երիտասարդական քարոզարշավը, այնպես էլ այս ձեռնարկը մշակելիս ատելության խոսքը դիտարկվել է որպես մարդու իրավունքները վտանգող երևույթ, իսկ վարժությունները կազմելիս առանցքային են եղել մարդու իրավունքների սկզբունքներն ու չափանիշները: Այդիսկ պատճառով ձեռնարկը օգտակար է ոչ միայն ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի տեսանկյունից, այլ նաև հենց մարդու իրավունքները և դրանց՝ ինչպես առցանց, այնպես էլ իրական կյանքում կիրառությունը հասկանալու համար:

Կրթական մոտեցումն առավել մանրամասն ներկայացված է Գլուխ 3-ում, իսկ մարդու առցանց և անցանց իրավունքների մասին ընդհանուր տեղեկությունները՝ Գլուխ 5-ում:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՑԱՆՑ

Ձեռնարկի հիմքում այն խոր համոզումն է, որ առցանց տարածքը հանրային տարածք է և հետևաբար ժողովրդավարական հասարակության բոլոր սկզբունքները կարող են և պետք է կիրառվեն նաև առցանց: Այս համատեքստում, ատելության խոսքի դեմ պայքարի մեջ չափազանց կարևոր է հենց երիտասարդների դերը:

Երիտասարդները քաղաքացի են նաև առցանց տարածքում, իսկ դա նշանակում է, որ նրանք կարող են արտահայտել իրենց ձգտումներն և մտահոգություններն առցանց, կարող են միջոցներ ձեռնարկել և պատասխանատվության կանչել նրանց, ովքեր ոտնահարում են մարդու իրավունքները նաև վիրտուալ տարածքում: Ավելին, նրանք կարող են ստանձնել մարդու իրավունքների առցանց պաշտպանների դերը:

Վիրտուալ տարածքը նաև չափազանց մասնակցային է, ներառում է համացանցի կառավարման գործընթացների մասին իրազեկություն: Ձեռնարկում տարբեր վարժությունների և առցանց հաղորդակցության տարբեր ձևերի միջոցով դիտարկվում է, թե ինչպես են կարող երիտասարդները քայլեր ձեռնարկել և քարոզարշավ իրականացնել առցանց՝ համացանցն ավելի լավ և անվտանգ տարածք դարձնելու համար:

Ժողովրդավարության, առցանց քարոզարշավների և համացանցային գրագիտության մասին ընդհանուր տեղեկությունները ներառված են Գլուխ 5-ում:

1.2. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՈՐ ՎՏԱՆԳՆԵՐ

Գիտե՞ք, թե այնտեղ ինչ կա

Օրինակները տե՛ս էջ 195, կամ ինքնուրույն կատարեք առցանց հետազոտություն:

Համացանցի ի հայտ գալու հետ մարդկանց միջև հաղորդակցման հնարավորությունները վիթխարի փոփոխությունների ենթարկվեցին: Տեսականորեն համացանցը մեզ հնարավորություն ընձեռեց հաղորդակցվել ցանկացած այլ մարդու հետ աշխարհի ցանկացած կետում: Այժմ համացանցի շնորհիվ աշխարհի ցանկացած, շատերի համար անհայտ, փոքր մի անկյունում ծագած և ձևավորված միտքը կարող է հասանելի դառնալ բոլորի համար: համացանցից օգտվելու հնարավորություն ունեցող յուրաքանչյուր ոք այժմ և՛ հրատարակիչ է, և՛ բանախոս: Այժմ արդեն ոչ ոք չի կարող խանգարել մեզ արտահայտել մեր կարծիքը:

Սա մի նորամուծություն է, որից քչերը կցանկանային հրաժարվել: Սակայն, միևնույն ժամանակ մեզ չպետք է զարմացնի այն հանգամանքը, որ մշտապես ընդլայնվող առցանց հաղորդակցության ոլորտն արտացոլում է այն բոլոր բարդությունները, որոնց մարդիկ մշտապես բախվել են իրենց «իրական» կյանքում: Անհիշելի ժամանակներից անհանդուրժողականությունն ու «ատելությունը» մարդկային հանրույթի կենսակերպի մասն են եղել: Համաձայն որոշ հետազոտությունների՝ վերջին տարիներին նման դրսևորումների աճ է արձանագրվել:

Ո՞վ է ստուգում

Արդյո՞ք ավելի հեշտ է արտահայտել մեր բացասական մտքերն ու վերաբերմունքը համացանցի միջոցով:

Խնդիրն այն է, որ բազմազանության և տարբերվող կարծիքների նկատմամբ հանդուրժողականությունը նվազում է, և եթե անհանդուրժողականությունը զսպող միջոցները չվերահսկվեն, ապա անխուսափելիորեն կգտնվեն եղանակներ, այդ անհանդուրժողականությունն ու ատելությունն արտահայտելու համար, ինչպես մարդկանց արարքների, այնպես էլ՝ խոսքի միջոցով:

Համացանցն արտահայտվելու նոր ձևեր ստեղծեց, ինչպես նաև նոր ճանապարհներ այդ ասելիքը ավելի մեծ քանակությամբ մարդկանց հասանելի դարձնելու համար: Միևնույն ժամանակ, «վիրտուալ» խոսքը զսպող հանգամանքները շատ ավելի քիչ են, քան «ոչ վիրտուալ» խոսքինը: Հաճախ մարդիկ առցանց տիրույթում արտահայտում են այնպիսի կարծիքներ, որը երբեք չէին բարձրաձայնի հանրայնորեն:

Եթե իրական կյանքում ատելության խոսքը հանրությունը դիտարկում է որպես խնդիր և փնտրում այն վերացնելու միջոցներ, արդյոք հնարավո՞ր է այն կանխել առցանց տիրույթում:

Ո՞րն է ավելի վատ:

Ելույթ հանրային հանդիպման ժամանակ
«Եթե գեյ ես՝ բուժվիր, նոր հետո միացիր մարդկությանը»

Հրապարակում առցանց ֆորումում
«Եթե գեյ ես՝ բուժվիր, նոր հետո միացիր մարդկությանը»

ԽՆԴՐԻ ԾԱՎԱԼԸ

«Վաղը 9-ին քեզ բռնաբարելու եմ: Քո տան մոտ ե՞նք հանդիպում»:[1]

«Քեզ ստեղ տեսնել չենք ուզում, մնա քո երկրում, քո երկիրը քանդի, ոչ թե՝ մերը»:[2]

*«Դու հիմար **** մեկն ես: Մայրդ՝ նեգռ, հայրդ՝ այլասերված:»*[3]

Ատելության խոսքի առցանց դրսևորումների մշտադիտարկում իրականացնելը չափազանց դժվար է: Իրականում, հենց սա է պատճառը, որ ատելության խոսքը հեշտությամբ տարածվում է առցանց միջավայրում, ինչը բարդացնում է պետական կամ իրավասու այլ մարմինների կողմից այդ գործընթացի վերահսկումը: Որոշ կազմակերպություններ փորձել են գնահատել խնդրի ծավալները: Բոլորը միակարծիք են, որ նկատվում է ատելության խոսքի աճի միտում:

Խնդրի ծավալները

- 2019 թվականին Ֆեյսբուքը հայտարարել է, որ միայն երրորդ քառորդում հեռացվել է ատելության խոսքի յոթ միլիոն դեպք: Դեպքերի 80 %-ը հեռացվել է արհեստական բանականության օգնությամբ:[4]
- Կանանց 73%-ը ենթարկվել է առցանց վիրավորանքի, ներառյալ՝ ատելության խոսքի: 2014 թվականին BBC հարցմանը մասնակցող կանանց միայն 50%-ն է համաձայնել այն արտահայտության հետ, թե «Համացանցն ապահով տիրույթ է՝ արտահայտելու իմ կարծիքները»:[5]

Հետազոտության շրջանակներում փորձել ենք պարզել, թե որքանով հաճախ են հանդիպում երիտասարդները ատելության խոսքի առցանց դրսևորումների:

Երիտասարդները և ատելության խոսքի առցանց դրսևորումները

- Եվրոպայի ողջ տարածքով 9-16 տարեկան համացանցի օգտատերերի 6%-ը հայտնել է, որ ենթարկվել է առցանց ահաբեկման և ծաղրի, իսկ 3%-ը խոստովանել՝ որ իրենք են ահաբեկել կամ ծաղրել այլ օգտատերերի:[6]
- Կանադայում համացանցի երիտասարդ օգտատերերի 16%-ը խոստովանում է, որ համացանցում հրապարակել է ատելություն պարունակող գրառումներ այլ անձի կամ խմբի նկատմամբ:[7]
- Առցանց հարցման մասնակիցների 78%-ը պատասխանել է, որ հաճախ են հանդիպել ատելության առցանց դրսևորումների: Ատելության խոսքի երեք հիմնական թիրախներն էին ԼԳԲԹ (70%), մահմեդականները (60%) և կանայք:[8]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ստելլա Քրիսիի թվիթը (Միացյալ Թագավորության Խորհրդարանի անդամ)
2. “Bugger off Asylum Seekers”–ի Ֆեյսբուքյան էջից
3. Թվիթ, որն արվել է այն ժամանակ, երբ ծագումով Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունից ֆուտբոլիստ Ֆաբրիս Մուամբայի մոտ ֆուտբոլային խաղի ժամանակ արձանագրվել է սրտի կանգ ։
4. Բիլի Պերիգո, Ֆեյսբուքն ասում է, որ հեռացրել է ատելության խոսքի առցանց դրսևորումների այնքան շատ դեպքեր, որքան չի եղել երբեք: (2019 թվականի նոյեմբերի 27), https://time.com/5739688/facebook-hate-speech-languages/;
5. Կիբերբուլինգ կանանց և աղջիկների նկատմամբ սթափվելու աշխարհասփյուռ կոչ, Միացյալ Ազգերի Կազմակերպության լայնածավալ հանձնաժողովի աշխատանքային խմբի հաշվետվություն, 2015 թվական, https://en.unesco.org/sites/default/files/genderreport2015final.pdf;
6. Միացյալ Ազգերի՝ “KidsOnline” հետազոտությունից:
7. Վալերի Սթիվենսից՝ երիտասարդ կանադացին Լարային աշխարհում, Փուլ III. ռասիստական և սեքսիստական առցանց նյութերի բախում, Մեդիա Սմարթս, Օտտավա, 2014 թվական: Սա ազգային դպրոցական հետազոտություն է, որն իրականացվել է 2013 թվականին 4- 11-րդ դասարանների 5,436 աշակերտների և երիտասարդների շրջանում: Հասանելի է հետևյալ հասցեով՝
   https://mediasmarts.ca/research-policy/young-canadians-wired-world-phase-iii/young-canadians-wired-world-phase-iii-encountering-racist-sexist-content-online
8. Եվրոպայի խորհրդի առցանց հետազոտություն «Ո՛չ ատելության խոսքին» շարժման մասին, 2015 թվական, https://rm.coe.int/questions-and-lessons-learned-hate-speech-2015-online-survey/pdfa/16808b5f64;

ԳԼՈՒԽ 2

«Ո՛Չ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ.

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ՝ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

«Ատելության խոսքը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի բնորոշմամբ՝ ներառում է արտահայտվելու բոլոր ձևերը, որոնք տարածում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականության կամ ատելության այլ դրսևորումները, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, ներառում են փոքրամասնությունների, արտագաղթյալների և ներգաղթյալների նկատմամբ ագրեսիվ ազգայնականությամբ, էթնոցենտրիզմով, խտրականությամբ և թշնամանքով դրսևորված անհանդուրժողականություն։ Քարոզարշավի տրամաբանությամբ, խտրականության և նախապաշարմունքի այլ ձևերը, ինչպիսիք են՝ ռոմաֆոբիան, քրիստոնեաֆոբիան, իսլամաֆոբիան, կնատյացությունը, սեքսիզմը և սեռական կողմնորոշման և գենդերային պատկանելիության հիմքով խտրականությունը լիովին ատելության խոսքի տիրույթում են»։

Շարժման կողմից օգտագործված ատելության խոսքի բնորոշումը տե՛ս այստեղ՝ www.nohatespeechmovement. org

2.1. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

Ատելության խոսքի առցանց դրսևորման դեմ Եվրոպայի խորհրդի «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական շարժման քարոզարշավն ընթանում էր 2013 թվականի մարտից մինչև 2017 թվականի վերջը։ Երիտասարդների կողմից իրականացվող արշավը երիտասարդներին մոբիլիզացրել է՝ ատելության խոսքի առցանց դրսևորման խնդրի վերաբերյալ տեղեկացված լինելու, դրա նկատմամբ վերաբերմունքը փոխելու և դրա դեմ պայքարի ու կանխարգելման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար։ «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական

շարժման քարոզարշավը Եվրոպայի խորհրդի առավել լայնածավալ նկրտումների մի մասն է, որը նպատակաուղղված է խթանել մարդու իրավունքների առցանց պաշտպանությունը և ժողովրդավարական արժեքներին, մարդու իրավունքներին և օրենքի գերակայությանը երիտասարդների ներգրավմանը նպաստելու գործում ։

Եվրոպայի խորհուրդն ատելության խոսքը դիտարկում է որպես ժողովրդավարության և մարդու իրավունքների դեմ ուղղված վտանգ։ «Ո՛չ ատելության խոսքին» շարժումը հիմնվում էր հենց մարդու իրավունքների վրա, սակայն այն կիբերբուլինգի դեմ պայքարելու իրավական մեխանիզմների շրջանակներից առավել լայն մոտեցում է կիրառում։ Քարոզարշավը նպաստում է արտահայտվելու ազատության հարգանքին և ատելության խոսքին արձագանքելու այլընտրանքային ուղիների կիրառմանը, ներառյալ՝ կանխարգելումը, ուսուցումը, իրազեկման բարձրացումը, օգտատերերի ինքնակարգավորումը և տուժողներին աջակցության ցուցաբերումը։

2.2 ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի համաձայն քարոզարշավը՝ «եղել է ատելության խոսքի դեմ ուղղված առաջին լայնածավալ միջազգային նախաձեռնությունը, որն ատելություն խոսքը դիտարկում էր, որպես մարդու իրավունքների հետ կապված հիմնական խնդիրներից մեկը»։ Քարոզարշավը մեծ դեր է խաղացել հետևյալ հարցերում.

ա. նպաստել է ատելության խոսքի էության և ռիսկերի մասին երիտասարդների, և առհասարակ հասարակության իրազեկման բարձացմանը,

բ. հազարավոր ուսուցիչների, երիտասարդ աշխատակիցների և երիտասարդ առաջնորդների օժտել է անհրաժեշտ կարողունակություններով՝ մարդու իրավունքների ուսուցման միջոցով ատելության խոսքը ճանաչելու, հաղորդելու և դրան արձագանքելու նպատակով,

գ. մոբիլիզացրել է երիտասարդական կազմակերպություններին և երիտասարդներին ողջ Եվրոպայում և դրա սահմաններից դուրս՝ արձագանքելու ատելության խոսքի առցանց դրսևորումներին և պայքարելու դրանց դեմ,

դ. կազմակերպել է գործունեություն՝ ի պաշտպանություն ատելության խոսքի հատուկ թիրախային խմբերի և ուշադրությունը կենտրոնացրել ատելության խոսքի ոչ լիարժեք գնահատված կամ ոչ պատշաճ կերպով հաղորդված դրսևորումներին,

ե. ստեղծել է ատելության խոսքին հակադիր և այլընտրանքային պատումներ, ակնարկներ, ինչպես նաևազգային, մշակութային, սոցիալական, կրոնական, էթնիկ կամ կազմակերպչական սահմաններից այն կողմ մշակել երիտասարդների համար ներգրավվածության և ինքնության դրական ձևեր, ներգրավվածության և դրսևորման դրական ձևեր,

զ. վերագնահատել է լրատվական և տեղեկատվական գրագիտության կարևորությունը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգերում,

է. նպաստել է որպեսզի համացանցի կառավարումն ընկալվի որպես քաղաքացիական պարտականությունների իրականացման և երիտասարդության ներգրավվածության հարթակ։

(Նախարարների խորհրդի կողմից 2019 թվականի մայիսի 29-ին ընդունված հռչակագիրը «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի ժառանգության վերաբերյալ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=090000168094b576)։

Քարոզարշավը կարևոր դեր է խաղացել երիտասարդական դաշտի ներսում և դրանից դուրս՝ հիմնական շահագրգիռ անձանց ուշադրությունը բևեռելով այն դերակատարության կարևորությանը, որ ունեն երիտասարդական կազմակերպություններն ու երիտասարդ առցանց ակտիվիստները։ Քարոզարշավի համար և դրա շրջանակներում մշակվել են թե՛ առցանց, և թե՛ անցանց կրթական գործիքներ։

Քարոզարշավի արդյունքներին և գնահատականներին առավել մանրամասն ծանոթանալու համար անցեք հետևյալ հղումով՝ https://www.coe.int/en/web/no-hate-campaign/reports-of-seminars-and-conferences

2.3 ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Այս պահին www.nohatespeechmovement.org-ը ատելության խոսքի շուրջ Եվրոպայի խորհրդի կողմից տարվող աշխատանքի, ինչպես նաև երիտասարդական շարժման արդյունքներն ու արխիվը ներկայացնող դեռևս հիմնական առկա տեղեկատվական հարթակն է։

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ

Քարոզարշավը ստեղծվել է Եվրոպայի խորհրդի և դրա եվրոպական գործընկերների աջակցությամբ և իրականացվել անդամ պետություններում գործող Արշավի ազգային հանձնաժողովների կողմից։ Ընդհանուր առմամբ, 45 պետությունում իրականացվել է թվով 46 քարոզարշավ։ Որոշ արշավներ դեռ գործում են։ Տեղեկությունների համար անցեք հետևյալ հղումով՝ https://www.coe.int/en/web/no-hate-campaign/national-campaigns1

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Այն ներառում է ավելի քան 270 աղբյուր, որոնք ստեղծվել են Ազգային արշավների, գործընկերների և Եվրոպայի խորհրդի կողմից։ https://www.coe.int/en/web/no-hate-campaign/compendium-of-resources

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Էջանիշեր ձեռնարկը հատուկ մշակվել է արշավին աջակցելու համար և մարդու իրավունքների ուսուցանման միջոցով անդրադառնում է ատելության խոսքի առցանց դրսևորման թեմային։ Այն նախատեսված է 13-18 տարեկան դպրոցականների համար և կարող է հեշտությամբ հարմարեցվել այլ խմբերի համար ևս։ Ձեռնարկը թարգմանվել է ավելի քան 18 լեզվով։ https://www.coe.int/en/web/no-hate-campaign/bookmarks-connexions

«ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ: ԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ՝ ՀԱԿԱԴԻՐ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ»

Այս ձեռնարկը երիտասարդ և մարդու իրավունքներով զբաղվող այլ ակտիվիստների համար ներկայացնում է հաղորդակցման և ուսուցողական մոտեցումներ ու գործիքներ, նպատակ ունենալով աջակցել նրանց պայքարին ու օգնել ատելության խոսքի հակադիր և այլընտրանքային պատումներ մշակելու հարցում: : https://www.coe.int/en/web/no-hate-campaign/we-can-alternatives1

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուղեցույցը գործիք է համացանցի օգտատերերի համար, որը տրամադրում է տեղեկություններ մարդու առցանց իրավունքների, դրանց հնարավոր սահմանափակումների և նման դեպքում հասանելի իրավական պաշտպանության մեխանիզմների մասին: Ուղեցույցը ներկայացնում է իրավունքների և ազատությունների կարևորությունը գործնականում և համացանցի համատեքստում, դրանց կիրառման և պաշտպանության համապատասխան իրավական մեխանիզմները: Ձեռնարկը հասանելի է հետևյալ հասցեով. https://www.coe.int/en/web/internet-users-rights/guide.

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՆԵՐ

Այս բաժինը տրամադրում է տեղեկություններ այն մասին, թե ինչպես է պետք սոցիալական մեդիայի հիմնական հարթակներում և պետական մարմիններին կամ տարբեր երկրների հասարակական կազմակերպություններին հաղորդել ատելության խոսքի կիրառման դեպքերը. https://www.coe.int/en/web/no-hate-campaign/reporting-hate-speech

Քարոզարշավի բլոգը, ատելության խոսքի դիտորդական գործիքը (Hate Speech Watch) և հարթակը կասեցվել են, սակայն տեղեկություններին դեռևս հնարավոր է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.coe.int/en/web/no-hate-campaign/previous-blog-and-platform.

Քարոզարշավի սոցիալական լրատվական էջերը դեռևս ակտիվ են և հետևորդներին թարմացված տեղեկություններ են տրամադրում Եվրոպայի խորհրդի գործունեության մասին. https://www.coe.int/en/web/no-hate-campaign/social-medias

2.4 ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Եվրոպայի խորհրդի երիտասարդական դեպարտամենտի կողմից «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի համակարգումը ամփոփվեց 2018 թվականի ապրիլին: Ազգային մակարդակով ընթացող քարոզարշավները, առցանց ակտիվիստները և գործընկեր կազմակերպությունները շարունակեցին շարժումը մարդու իրավունքների ուսուցման և իրազեկվածության բարձրացման նախաձեռնությունների իրականացման միջոցով: Եվրոպայի

խորհրդի տարբեր մարմիններ, ինչպիսիք են՝ Խորհրդարանական վեհաժողովը և Ռասիզմի ու անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը շարունակում են աշխատել ընդդեմ ատելության խոսքի։

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀՌՉԱԿԱԳԻՐ

2018 թվականին Երիտասարդության հարցերով համատեղ խորհուրդը վերանայել է քարոզարշավի արդյունքները և փոխանցել դրանք Նախարարների խորհրդին՝ հետագա գործողությունների վերաբերյալ հանձնարարականներով։ 2019 թվականի մայիսին Նախարարների խորհուրդը ընդունել է բանաձև արշավի մասին, որը նախատեսում է հետևյալ միջոցները.

[Նախարարների խորհուրդ]

1. Որոշում է շարունակել քարոզարշավի հետագա գործողությունները՝ ընդգծելով ՌԱԵՀ-ի դերը և Եվրոպայի խորհրդի երիտասարդական, մարդու իրավունքների, հակախտրականական , կրթական և լրատվական կառույցների հատուկ պատասխանատվությունը։
2. Ընդունում է, որ նշված հետագա գործողությունները, ի թիվս այլոց, կարող են ներառել՝
   - Եվրոպական երիտասարդական կենտրոնների և Եվրոպական երիտասարդական հիմնադրամի շրջանակներում ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների ուսուցման բարելավում,
   - ոչ ֆորմալ կրթության շրջանակներում մեդիա և տեղեկատվական գրագիտության շուրջ ծրագրերի թարմացում և նոր նախագծերի ստեղծում,
   - համացանցի կառավարման գործընթացում երիտասարդների լիարժեք ներգրավվածության աջակցություն,
   - քարոզարշավից բխող Եվրոպական և ազգային երիտասարդական ցանցերի և գործընթացների սատարում,
   - ատելության խոսքին արդյունավետ արձագանքելու նպատակով համապատասխան և ընդգրկուն քաղաքականության ապահովում,
   - քարոզարշավի գործիքների ազդեցության գնահատման ներառում շարունակվող ծրագրերում։*

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

«Երիտասարդությունը հանուն ժողովրդավարության» ծրագիրը շարունակում է երիտասարդական արշավից ժառանգած գործընթացը, հատկապես՝ մարդու իրավունքների ուսուցման, համացանցի կառավարմանը երիտասարդների մասնակցության և երիտասարդների շրջանում խոցելի խմբերին վնասող խտրականության (ներառյալ՝ ատելության խոսքը) դեմ պայքարի միջոցով։ Եվրոպական երիտասարդական կենտրոններում իրականացված մի շարք ուսումնական սեսիաների արդյունքում, ի թիվս այլոց, ստեղծվել է «Ատելության խոսքի դեմ ցանցը» (No Hate

* «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի ժառանգության մասին Նախարարների խորհրդի հռչակագիրն ընդունվել է 2019 թվականի մայիսի 29-ին։

Speech Network, https://nohatespeech.network)։ Երիտասարդական բաժինը շարունակում է նաև արշավի հիմնական կրթական ռեսուրսների թարգմանության աջակցությունը և ատելության խոսքի դեմ պայքարի հարցերը ներառում եվրոպական և ազգային մակարդակով կազմակերպվող տարբեր դասընթացներում։

ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Հակախտրականության բաժինն աջակցում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի դեմ պայքարում՝ քաղաքականության չափորոշիչների հաստատման, վերահսկողության և հնարավորությունների ընդլայնման միջոցով։ Բաժնի կողմից իրականացված ատելության խոսքի դեմ ուղղված գործունեությունը հիմնվում է քարոզարշավի ժառանգության վրա և նպատակ ունի հաստատել համագործակցություն ազգային արշավների և գործընկերների միջև։

Ատելության դեմ պայքարի և մարդու իրավունքների ամրապնդմանն ուղղված Եվրոպայի խորհրդի տարբեր բաժինների իրականացրած գործունեության մասին տեղեկությունները հասանելի են հետևյալ հասցեով. https://www.coe.int/en/web/no-hate-campaign/coe-work-on-hate-speech

2.5. Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Առցանց և անցանց ատելության խոսքի դեմ պայքարելու, դրան համարժեք արձագանքելու խնդիրը երիտասարդների շրջանում շարունակում է մնալ չափազանց կարևոր՝ չնայած այն հանգամանքին, որ եվրոպական մակարդակով քարոզարշավն ավարտվել է։ Երիտասարդների համար ատելության խոսքի դեմ պայքարելու և մարդու իրավունքների օգտին գործողություններ ձեռնարկելու շատ ուղիներ և հնարավորություններ կան։ Այս տեսանկյունից ձեռնարկում ներառված են համապատասխան հանձնարարականներ՝ «Գաղափարներ հետագա գործողությունների համար» բաժնում։ Հանձնարարականները ներկայացված են նաև քարոզարշավի ռազմավարությունների մասին ենթագլխում և աղբյուրների ամփոփագրում։

ԳԼՈՒԽ 3
ՁԵՌՆԱՐԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում համառոտ ներկայացված է ձեռնարկի ընդհանուր կառուցվածքը, նպատակները և մեթոդաբանությունը: Այն կօգնի ձեզ ըմբռնել կրթական մոտեցումը, ինչպես նաև ծրագրել և իրականացնել միջոցառումներ թիրախային խմբում:

3.1 ՁԵՌՆԱՐԿԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ատելության խոսքը, յուրօրինակ հարձակում է արդեն իսկ խոցելի խմբերի վրա: Նման դրսևորումներն ավելի են սաստկացնում լարումը, անհավասարությունը և հաճախ պարարտ հող նախապատրաստում բռնության համար: Եվրոպայի խորհուրդը դիտարկում է ատելության խոսքը որպես վտանգ ժողովրդավարության և մարդու իրավունքների համար:

«Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավը գտել է, որ խնդիրը լուծելու ջանքերը պետք է ներառեն մի շարք տարբեր մակարդակներով աշխատանքներ: Խնդիրը և լուծումները ոչ միշտ են միանշանակ: Սույն ձեռնարկը ստեղծվել է աջակցելու կրթական միջոցառումներին, որոնք կօգնեն երիտասարդներին ատելության խոսքի առցանց դրսևորումներին արձագանքելու և դրանց դեմ պայքարելու սեփական ուղիները փնտրելու հարցում: Ձեռնարկը նպատակ ունի բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը և մոտիվացիան, զարգացնել հմտությունները: Այս ամենը կօգնի նրանց ակտիվ մասնացություն ցուցաբերել քարոզարշավում, ինչպես նաև ստեղծել այնպիսի առցանց հարթակ, որը պաշտպանում է մարդկանց իրավունքները և կառուցված է ժողովրդավարական մասնակցության սկզբունքների վրա:

Երիտասարդներն ատելության խոսքի առցանց դրսևորումների ընդամենը պասիվ հետևողներ չեն. նրանցից ոմանք արդեն իսկ վերածվել են այդ երևույթի զոհերի, ոմանք էլ անցել հալածողների շարքերը: Կրթական նախաձեռնությունները մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ հարցերը և դիտարկել երիտասարդների առջև ծառացած մարտահրավերները բոլոր երեք տեսանկյուններից: Այսպիսով այս ձեռնարկում զետեղված վարժությունները կազմվել և մշակվել են յոթ առանցքային նպատակների հասնելու համար:

ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- օգնել, որպեսզի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտի ներկայացուցիչները կարողանան արձագանքել ատելության խոսքին երիտասարդների շրջանում և աջակցեն դպրոցական հանրություններին՝ «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի փորձն ու աղբյուրներն օգտագործելու հարցում,
- ձևավորել երիտասարդների հմտություններն ու մոտիվացիան, որպեսզի վերջիններս ճանաչեն ատելության խոսքի առցանց դրսևորումը և դառնան մարդու առցանց ու անցանց իրավունքների պաշտպանության ակտիվիստներ,
- բարձրացնել իրազեկվածությունը մարդու իրավունքների սկզբունքների մասին և խթանել համացանցի՝ որպես այդ սկզբունքները արտացոլող միջավայրի գաղափարը,
- աջակցել ոչ ֆորմալ կրթական մոտեցումների միջոցով մարդու իրավունքներին վերաբերող կրթական ծրագրերի իրականացմանը և նպաստել երեխաների և երիտասարդների մոտ քննադատական մտքի զարգացմանը,
- պայքարելու և դիմակայելու հմտություններ տալ նրանց, ովքեր արդեն դարձել կամ կարող են դառնալ ատելության խոսքի առցանց դրսևորումների զոհ,
- խրախուսել ատելության խոսքի առցանց դրսևորումների զոհ դարձած անձանց կամ խմբերի հետ համապրելու կարողությունը,
- քանդել ատելության խոսքի ամենատարածված թիրախ հանդիսացող խմբերի մասին գոյություն ունեցող միֆերն ու նախապաշարմունքները:

ՁԵՌՆԱՐԿԻ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ

Այս ձեռնարկում որդեգրվել են մարդու իրավունքների ուսուցման մեջ կիրառվող կրթական մոտեցումները: «Կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների ուսուցման» Եվրոպայի խորհրդի խարտիան (2010) սահմանում է մարդու իրավունքների կրթությունը որպես՝

> Կրթություն, ուսուցողական դասընթացներ, իրազեկվածության բարձրացում, տեղեկատվություն, գործնական գիտելիք և գործունեություն, որոնց նպատակն է ուսումնառուներին զինել գիտելիքով և հմտություններով, ինչպես նաև օգնել նրանց հասկանալ և մշակել վերաբերմունք և վարվելակերպ, որպեսզի նրանք ի զորու լինեն իրենց ներդրումն ունենալ հասարակության մեջ մարդու իրավունքների համընդհանուր մշակույթի ձևավորման և պաշտպանության գործում՝ նպատակ ունենալով խթանել և պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

Մարդու իրավունքների կրթությունն ունի երեք հարթություն՝

- **Սովորել մարդու իրավունքների մասին.** ձեռք բերել գիտելիք դրանց բովանդակության վերաբերյալ, հասկանալ, թե ինչ է նշանակում մարդու իրավունքներ առցանց հարթակում և դրա շրջանակներից դուրս և ինչպես են դրանք երաշխավորվում և պաշտպանվում:

- **Սովորել մարդու իրավունքների միջոցով.** հասկանալ, որ այն համատեքստը և եղանակը որով կազմակերպված է մարդու իրավունքների կրթությունը պետք է համահունչ լինի այն արժեքներին, որոնք ընկած են մարդու իրավունքների հիմքում (օրինակ՝ մասնակցություն, մտքի և արտահայտման ազատություն և այլն), ինչպես նաև այն կարևոր հանգամանքը, որ մարդու իրավունքների ուսուցման մեջ սովորելու գործընթացը նույնքան կարևոր է, որքան բովանդակությունը:
- **Սովորել հանուն մարդու իրավունքների.** զարգացնելով հմտություններ, ձևավորելով մոտեցումներ և ձեռք բերելով արժեքներ, որոնք ուսումնառուներն այնուհետև կկիրառեն իրենց ամենօրյա կյանքում և առանձին կամ մյուսների հետ միասին կձեռնարկեն մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու քայլեր:

Եվրոպայի խորհրդի՝ երիտասարդների շրջանում մարդու իրավունքների ուսուցման համար ստեղծված «Կողմնացույց» ձեռնարկում զետեղված են տեղեկություններ և նյութեր, որոնք կարող են օգնել ֆասիլիտատորներին (վարող) հասկանալ կրթական մոտեցումներն ու գործնական օրինակները: Ձեռնարկին կարող եք ծանոթանալ այստեղ՝ www.coe.int/compass

3.2 ՁԵՌՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԳԼՈՒԽՆԵՐ

Այս և երկու նախորդ գլուխները կարևոր են վարժությունների և խաղերի անցկացման համար անհրաժեշտ համատեքստը ներկայացնելու տեսանկյունից: Ձեռնարկի և քարոզարշավի ողջ էությունը և համատեքստը հասկանալու համար խորհուրդ է տրվում ծանոթանալ նաև ձեռնարկի այս հատվածին:

Առաջին գլխի մեջ ներկայացված նյութի մեծ մասն ավելի մանրամասն ներկայացված է նաև 5.1 բաժնում «Ատելության խոսքի առցանց դրսևորումներ»: Այստեղ ներկայացված տեղեկությունները կօգնեն ձեզ ավելի լավ պատկերացում կազմել ատելության խոսքի առցանց դրսևորումների հետ առնչվող հարցերի ողջ ծավալի, ինչպես նաև այս խնդրին անդրադառնալու հրատապության մասին:

Երկրորդ գլուխը ներկայացնում է Եվրոպայի խորհրդի՝ «Ատելության խոսքի դեմ» քարոզարշավի (2013-2017) հակիրճ ամփոփումը, ինչպես նաև՝ միջոցները, որոնցով կառույցը շարունակում է անդրադառնալ ատելության խոսքին:

ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐ

Ձեռնարկի հիմքում ընկած է ութ թեմա, որոնք ուղղակիորեն առնչվում են ատելության խոսքի առցանց դրսևորումների հետ: Ե՛վ թեմաները, և՛ դրանց թիրախը հանդիսացող խնդիրները ներկայացված են էջ 28-ի աղյուսակում: Սակայն ընտրված խնդիրներն այդքանով չեն սպառվում. այստեղ ներկայացված են յուրաքանչյուր թեմային առնչվող ամենակարևոր հարցերը, ինչն իր հերթին օգնում է նոր մարտահրավերներ բացահայտելու հարցում :

Վարժությունների մեծ մասն անդրադառնում է մի քանի տարբեր թեմաներին վերաբերող խնդիրների, որոնցից յուրաքանչյուրն ինքնին չափազանց կարևոր է: Հենց այս պատճառով վարժություններից շատերը կարող են կիրառվել նաև ռասայական խտրականության դեմ, համացանցային գրագիտության, ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների և այլ թեմաների շրջանակներում տարվող կրթական գործունեության համար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկի առանցքային բովանդակությունը բաղկացած է 24 վարժությունից, որոնցից յուրաքանչյուրը մշակվել է մեկ կամ ավելի թեմաներին անդրադառնալու համար: Վարժությունները դասակարգվել են նաև ըստ «բարդության աստիճանի». 4-րդ աստիճանի բարդության վարժությունը ենթադրում է թեմայի մասին որոշակի նախնական փորձի կամ գիտելիքի առկայություն, իսկ 1-ին աստիճանի բարդության վարժությունները կարելի է անցկացնել սկսնակների խմբերում:

Համապատասխան վարժություններն ըստ թեմայի, պահանջվող ժամանակի և բարդության աստիճանի ընտրելու համար կարող եք օգտագործել էջ 30-ում ներկայացված աղյուսակը: Չնայած նրան, որ ամենայն հավանականությամբ, ուսուցանողներից շատերը հնարավորություն կամ անհրաժեշտություն չեն ունենա անցկացնել բոլոր վարժությունները, այնուամենայնիվ, թեմաների փոխկապակցվածությունը կարևոր է նաև նրանով, որ բոլոր վարժությունները կարող են օգտագործվել ոչ միայն ատելության խոսքի խնդրին անդրադառնալու համար, այլ նաև կիրառվել մի շարք այլ կարևոր թեմաների շրջանակներում:

Յուրաքանչյուր վարժություն ներառում է «Գաղափարներ հետագա գործողությունների համար» բաժինը: Այն օգնում է երիտասարդներին համախմբել ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները՝ նախաձեռնություններ իրականացնելու համար:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

5-րդ գլխում ներկայացված են տեքստեր վարժությունների անցկացմանն օժանդակելու նպատակով: 5.1 և 5.2 բաժինները, որոնք վերաբերում են ատելության խոսքի առցանց դրսևորումներին և մարդու իրավունքներին, առանցքային նշանակություն ունեն բոլոր վարժությունների համար: Մյուս տեքստերը կարող են օգտագործվել ըստ անհրաժեշտության և որոշ վարժությունների պահանջներից ելնելով:

3.3 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Մարդու իրավունքների հետ կապված վարժությունների անցկացման վերաբերյալ լրացուցիչ խորհուրդների և առաջարկությունների համար տե՛ս

«Կողմնացույց» ձեռնարկի 1 գլխում www.coe.int/compass.

Վարժությունների անցկացման ցուցումները և հրահանգները բավականին մանրամասն են և ներառում են նաև լրացուցիչ հուշումներ՝ «Խորհուրդներ վարողներին» հատվածում: Այս խորհուրդներում նաև անդրադարձ է արված հնարավոր բարդություններին, ինչը նշանակում է, որ դրանց ցանկալի է ծանոթանալ նախապես:

Ստորև ներկայացված բաժինը պարունակում է ընդհանուր հանձնարարականներ՝ վարժություններն առավել

արդյունավետ անցկացնելու համար, ինչպես նաև ձեռնարկում որդեգրված կրթական մոտեցման մասին համառոտ ակնարկ: Վերջում ծանոթացեք «ինչ անել և ինչ չանել» ցանկին՝ բոլոր կարևոր կետերը մտապահելու համար:

ՎԱՐՈՂԻ ԴԵՐԸ

Ձեռնարկում վարժություններն անցկացնողին անվանում ենք «վարող»: Վարողն այն անձն է, ով «գործընթացը հնարավոր է դարձնում» և աջակցում ու խրախուսում է մյուսներին ուսումնասիրել և զարգացնել իրենց ներուժը: Գործընթացի արդյունավետությունը կախված է վարողից: Մարդու իրավունքների ուսուցման և այս վարժությունները տեքստից ակտիվ գործընթացի վերածելու առումով վարողի դերն ունի առանցքային նշանակություն:

Մի՛ կարծեք, որ այս թեմաներին անդրադառնալու համար դուք պետք է «փորձագետ» լինեք: Լավ վարողին պետք չէ ինչ-որ հատուկ գիտելիք կամ փորձագիտական կարծիք, բացառությամբ երևի թե երիտասարդներին հասկանալու և նրանց հետ հաղորդակցվելու ոլորտում «փորձագետ» լինելուց: Ձեռնարկում ներկայացված վարժություններն արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է ձևավորել միջավայր, որտեղ խմբի անդամներն անկաշկանդ կուսումնասիրեն բարդ, իսկ հաճախ նաև հակասական հարցերը և կփորձեն կառուցել իրենց սեփական մոտեցումները: Վատ չէր լինի, եթե դուք ցույց տայիք մասնակիցներին, որ դուք էլ եք նրանց պես ուսումնասիրում հարցը: Կրթական գործընթացին ուսուցանողների անմիջական մասնակցությունը հաճախ նպաստում է նյութի առավել արդյունավետ և որակյալ յուրացմանը և մարդու իրավունքների միջոցով սովորելու սկզբունքի անքակտելի մասն է: Այսպիսով, վարողը չպետք է լինի փորձագետ բոլոր հարցերում, բայց պետք է կարողանա օգնել մասնակիցներին տեղեկություններ ձեռք բերելու և պատասխաններ/տեսակետներ ձևավորելու հարցում:

ԱՊԱՀՈՎ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Ձեռնարկվում ներառված վարժություններից և շոշափվող հարցերից շատերը կարող են ուղղակիորեն կապված լինել ձեր մասնակիցների հետ: Մասնակիցներից ոմանք կարող են ենթարկված լինել բուլինգի կամ կիբերբուլինգի, միգուցե նույնիսկ խմբի որևէ անդամի կողմից: Ոմանք էլ միգուցե դարձել են ռասիստական կամ խտրական վարքագծի թիրախ: Չափազանց կարևոր է, որպեսզի գիտակցեք նման զարգացումների հավանականությունը և նրբանկատ լինեք: Դուք պետք է կարողանաք հասկացնել մասնակիցներին, որ անհրաժեշտության դեպքում միշտ կօգնեք և կաջակցեք նրանց: Պատրաստ եղեք անհրաժեշտության դեպքում ապահովել այդ աջակցությունը կամ ինքնուրույն, կամ ուղղորդելով նրանց այնտեղ, որտեղ նրանց կկարողանան օգնել: **InSafe** և **InHope** ցանցերը (https://www.betterinternetforkids.eu) տրամադրում են օգտակար կոնտակտներ և թեժ գծեր բազմաթիվ երկրներում, որոնց նպատակն է հայտնել առցանց վիրավորանքների մասին: Շատ անդամ պետություններ ունեն իրենց սեփական յուրահատուկ ծառայությունները, որոնց նպատակն է ընդունել համապատասխան

բողոքներ և աջակցություն ցուցաբերել դրանց շուրջ: Վարողներին խորհուրդ է տրվում ձեռք բերել տեղեկություններ և անհրաժեշտության դեպքում՝ ներգրավել այս ծառայություններն իրենց կրթական գործընթացներում:

Հարցերը քննարկելիս մասնակիցներն իրենց պետք է զգան հնարավորինս «ապահով»: Կարող եք խմբի հետ միասին սահմանել որոշ ելակետային կանոններ, օրինակ՝ համաձայնության գաք ուրիշի կարծիքը հարգելու, որևէ տեսակի վիրավորանքներից և ահաբեկումից, ծաղրուծանակից և անձին ուղղված քննադատությունից զերծ մնալու մասին:

3.4 ԽՐԱԽՈՒՍԵԼ, ԽՈՒՍԱՓԵԼ

	Թույլատրվում է.	Արգելվում է.
1	Խրախուսե՛ք մասնակիցներին արտահայտել իրենց սեփական կարծիքը և կիսվել գաղափարներով, ինչպես նաև խոսել իրենց սեփական փորձառության մասին:	Մի՛ քննադատեք որևէ տեսակետ՝ անվանելով այն «անօգուտ», «առնչություն չունեցող» կամ «հիմար»:
2	Աշխատե՛ք ձևավորել փոխադարձ հարգանքի, անվտանգ, ապահով միջավայր, որտեղ ոչ ոք չի ունենա սեփական կարծիքն արտահայտելու խնդիր:	Թույլ մի՛ տվեք, որպեսզի խումբը մերժի, անտեսի, կանխակալ վերաբերմունք ցույց տա կամ անհարգալից վերաբերվի որևէ մեկին: Աշխատեք հենց սկզբից սահմանել որոշ ելակետային սկզբունքներ:
3	Խրախուսե՛ք քննարկումներն ու հարցադրումները. իրենց կասկածներն ու անվստահությունն արտահայտելով մասնակիցները ձեռք կբերեն ավելի շատ գիտելիքներ:	Մի՛ արեք երկար ներկայացումներ: Այդպես դուք միայն կկորցնեք մասնակիցների հետաքրքրությունը:
4	Աշխատե՛ք կապել նյութը մասնակիցներին շրջապատող իրականության և իրենց կյանքում հանդիպող իրական խնդիրների հետ:	Մի՛ ընդհանրացրեք այն գաղափարները, որոնք անընդունելի են նրանց համար:
5	Հրաժարվե՛ք դոգմատիկ արտահայտություններից: Հնարավորություն տվեք նրանց կասկածի տակ առնել «անքննելի ճշմարտությունները» և դուք էլ հետևեք նրանց օրինակին:	Մի՛ «քարոզեք» և մի՛ օգտագործեք ձեր դիրքորոշումը՝ վեճը փակելու համար:
6	Անկե՛ղծ եղեք մասնակիցների հետ: Նրանք ձեզ ավելի շատ կհարգեն և ավելի հեշտությամբ կբացվեն:	Մի՛ փորձեք ցույց տալ, որ դուք գիտեք պատասխանը, եթե դա այդպես չէ: Ասե՛ք նրանց, որ կփորձեք պարզել կամ հորդորե՛ք ինքնուրույն գտնել պատասխանները:

7	Վստահե՛ք մասնակիցներին: Նրանք պետք է կարողանան ինքնուրույն գտնել հարցերի պատասխանները:	Մի՛ վերաբերվեք նրանց բարձրից և մի՛ փորձեք առաջնորդել, եթե նրանք դա չեն ուզում:
8	Լուրջ վերաբերվե՛ք նրանց առաջարկներին: Հավանականությունը, որ նրանք կներգրավվեն շատ ավելի մեծ կլինի, եթե նրանք զգան, որ իրենց կարծիքը հաշվի է առնվում:	Մի՛ փորձեք անպայման հետևել նախնական ծրագրին: Հարմարվեք մասնակիցների հետաքրքրություններին, եթե զգում եք, որ նրանք գերադասում են շարժվել այլ ուղղությամբ:
9	Փորձե՛ք ազդել նրանց բնական մարդկային զգաց- մունքների վրա: Հարցրե՛ք՝ ի՞նչ են նրանք զգում, կամ ի՞նչ կզգային եթե...	Մի՛ հանձնվեք, եթե նրանց կարծիքները սխալ են կամ անմիտ: Ցու՛յց տվեք նրանց այլ տեսանկյուն:
10	Վարվե՛ք մասնակիցների հետ ինչպես հավասարը հավասարին : Դուք՝ բոլորդ սովորական մահկանացուներ եք:	Մի՛ անտեսեք որևէ մասնակցի և նախապես կարծիք մի՛ կազմեք նրանց կարողությունների մասին: Մարդիկ անկանխատեսելի են:

3.5 ԹԵՄԱՆԵՐ ԵՎ ՀԱՐՑԵՐ



ԳԼՈՒԽ 4

24 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Մեկ օր դատարանում 33
Սլիփվիլի նոր մզկիթը 43
Գործողությունների եվ քարոզարշավի պլանավորում՝ քայլ առ քայլ 53
Փոխում ենք խաղի կանոնները 66
Ատուգում ենք փաստերը 74
Ազատությունների բախում 81
Դիմակայում ենք կիբերբուլինգին 89
Անսահմանափակ ազատություն 93
X խումբ 101
Մարդու իրավունքների առցանց հարցաշար 106
Առցանց մասնակցություն 112
Մեր իրավունքներն առցանց տիրույթում 116
Խաղանք նորից 121
Իրավունքների մրցավազք 125
Ծանոթանանք կանոններին 132
Արմատներ եվ ճյուղեր 140
Վատագույն տարբերակը 145
Եկե՛ք արտահայտվենք 151
Ի՞նչ են նրանք պատմում 156
Իսկ ի՞նչ է ատելության խոսքը 161
Վիրտուալ գործողություն 168
Կրի՛ր եվ կիսվի՛ր 174
Ցանցային հարձակում 178
Անձնական էջեր 183

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿ

Վերնագիր	Թեմաներ	Համառոտ նկարագիր	Աստիճան	Ժամանակ (րոպեներով)
Մեկ օր դատարանում	Արտահայտման ազատություն, մարդու իրավունքներ, ռասիզմ և խտրականություն:	Մասնակիցները Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննված իրական դատական գործի հիման վրա փոքր դատական նիստ են բեմականացում:	4	120
Սլիփվիլի նոր մզկիթը	Ժողովրդավարություն և մասնակցություն, ռասիզմ և խտրականություն, համացանցային գրագիտություն:	Առցանց խորհրդակցության/քննարկման սիմուլացիոն վարժություն է: Քննարկվում է ավանդաբար քրիստոնեական թաղամասում նոր մզկիթի կառուցման հարցը:	4	3 սեսիա, յուրաքանչյուրը՝ 50 րոպե:
Գործողություն-ների և քարոզարշավի պլանավորում՝ քայլ առ քայլ	Ռասիզմ և խտրականություն, քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ, մարդու իրավունքներ:	4 վարժություններից բաղկացած շարք , որը կօգնի ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների դեմ գործողություններ պլանավորելու հարցում: Վարժության մասերից յուրաքանչյուրը կարող է անցկացվել ինչպես առանձին, այնպես էլ գրքում զետեղված այլ վարժությունների հետ համադրվելով:	4	90, 60 և 45 րոպե տևողությամբ 3 սեսիա: Անհրաժեշտ է ժամանակ նաև բուն քարոզարշավն իրականացնելու համար:
Փոխում ենք խաղի կանոնները	Ռասիզմ/ խտրականություն, համացանցային գրագիտություն, քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ, ժողովրդավարություն և մասնակցություն:	Մասնակիցները ծանոթանում են քարոզարշավին և նախապատրաստում «փոքր քարոզարշավ»՝ առցանց խաղերում սեքսիզմի դեմ:	3	60
Փաստերի ստուգում	Համացանցային գրագիտություն, ռասիզմ/ խտրականություն, քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ:	Այս դերային վարժության համար մասնակիցները պետք է «հետազոտեն» նույնասեռականների նկատմամբ ատելության տարբեր դրսևորումների հարցը և ձեռք բերված տեղեկությունները տրամադրեն քաղաքական գործիչներին: Նրանք պետք է ուսումնասիրեն առցանց տեղեկատվության արժանահավատությունը և մշակեն ռազմավարություններ իրենց գործունեության համար:	4	60

Վերնագիր	Թեմաներ	Համառոտ նկարագիր	Աստիճան	Ժամանակ (րոպեներով)
Ազատությունների բախում	Ժողովրդավարություն/ մասնակցություն, արտահայտման ազատություն, ռասիզմ/ խտրականություն:	Սիմուլացիոն վարժություն, ուր երկու համայնք ունեն արտահայտման ազատության վերաբերյալ հակադիր մոտեցումներ, սակայն, ստիպված են միասին ապրել միևնույն կղզու վրա:	4	120
Դիմակայում ենք կիբերբուլինգին	Կիբերբուլինգ, ժողովրդավարություն/ մասնակցություն, համացանցային գրագիտություն:	Այս վարժությունը կօգնի մասնակիցներին հասկանալ, թե ինչպես իրենք կարձագանքեին, եթե հայտնվեին հալածանքների և ահաբեկման հետ առնչվող տարբեր իրավիճակներում: Վարժության ընթացքում կքննարկվեն նաև գործողությունների այլընտրանքային սցենարներ:	1	45
Անսահմա-նափակ ազատությու՞ն	Արտահայտման ազատություն, ժողովրդավարություն/ մասնակցություն, մարդու իրավունքներ:	Մասնակիցները մի շարք իրական դեպքերի հիման վրա ուսումնասիրում են արտահայտման ազատության գա ղափարը: Նրանք պետք է որոշեն ինչ անել վիճահարույց, վիրավորական կամ հնարավոր վտանգ պարունակող մեկնաբանությունների և հաղոր-դագրությունների:	2	45
X խումբ	Ռասիզմ/խտրականություն, մարդու իրավունքներ, անձնական կյանք/ անվտանգություն:	Մասնակիցները պետք է որոշեն, թե Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի որ իրավունքների ոտնահարումների հետ են ամենից հաճախ բախվում երիտասարդ ռոմաները:	4	60
Մարդու իրավունքների առցանց հարցաշար	Մարդու իրավունքներ	Նախաձեռնությունն իրենից ներկայացնում է հարցաշար մարդու առցանց իրավունքների վերաբերյալ: Այն օգնում է մասնակիցներին ճանաչել իրենց առցանց իրավունքները՝ օգտագործելով համացանցի օգտատերերի «Մարդու իրավունքների ուղեցույցը համացանցի օգտատերերի համար»:	3	60
Առցանց մասնակցություն	Համացանցային գրագիտություն, անձնական կյանք և անվտանգություն, Մարդու իրավունքներ,	Մասնակիցները մտածում են, թե ինչպես են իրենք օգտագործում համացանացը և ինչպես են առցանց մասնակցում: Նրանք բացահայտում և գնահատում են իրենց առցանց մասնակցության մակարդակը և մշակում են ծրագիր առ այն, թե ինչպիսի առցանց դեր իրենք կցանկանան խաղալ ապագայում:	3	45
Մեր իրավունքները առցանց տիրություում	Մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և մասնակցություն	Մասնակիցները ծանոթանում են «Մարդու իրավունքների ուղեցույցին համացանցի օգտատերերի համար»: Նրանք վերլուծում են ուղեցույցի հիմնական ուղերձներն ու պնդումները և անդրադառնում դրա առօրյա կիրառմանը:	2	60

Վերնագիր	Թեմաներ	Համառոտ նկարագիր	Աստիճան	Ժամանակ (րոպեներով)
Խաղանք նորից	Կիբերբուլինգ, ժողովրդավարություն/ մասնակցություն, ռասիզմ/խտրականություն:	Սա դերային խաղ է: Ըստ սցենարի՝ երեխաներից մեկին հասակակիցների ճնշումներով ներքաշում են մեկ այլ երեխայի նվաստացնելու և ծանակելու մեջ: Մասնակիցները պետք է վերաբեմականցնեն իրավիճակն այլ արդյունք ստանալու նպատակով:	2	60
Իրավունքների մրցավազք	Մարդու իրավունքներ, ռասիզմ/խտրականություն, անձնական կյանք/ անվտանգություն:	Այս վարժության մեջ թիմային խաղի միջոցով մասնակիցներն ընդհանուր պատկերացում են կազմում մարդու իրավունքների հետ կապված հիմնական սկզբունքների մասին: Մասնակիցները պետք է իրենց թիմի մյուս անդամներին առանց խոսքերի, տարբեր միջոցներով նկարագրեն տարբեր իրավունքներ:	1	60
Ծանոթանանք կանոններին	Քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ, համացանցային գրագիտություն, ժողովրդավարություն/ մասնակցություն:	Մասնակիցները քննարկում են կայքէջի օգտագործման պայմաններն ու կանոնները և քայլեր ձեռնարկում այդ կայքի օպերատորին անցանկալի բովանդակության մասին տեղեկացնելու համար: Մասնակիցները քննարկում են նաև նման բովանդակության մասին հայտնելու առավելություններն ու թերությունները, հատկապես հաշվի առնելով Վեբ 2.0-ի ընձեռած հնարավորությունները:	3	60
Արմատներ և ճյուղեր	Ռասիզմ/խտրականություն, մարդու իրավունքներ, քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ:	Մասնակիցներն ուսումնասիրում են ատելության խոսքի առցանց դրսևորումների պատճառներն ու հետևանքները՝ կիրառելով «խնդիրների ծառ» մեթոդը: Այս վարժությունը կարող է օգտագործվել ինչպես առանձին, այնպես էլ, որպես «X խմբի» վարժության շարունակություն:	2	45
Վատագույն տարբերակը	Ռասիզմ/խտրականություն, ժողովրդավարություն/ մասնակցություն:	Սա ատելության խոսքի առցանց դրսևորումներին վերաբերող ներածական վարժություն է: Մասնակիցները պետք է դասակարգեն նույնասեռականների դեմ ուղղված ատելության խոսքի օրինակները,՝ սկսելով «ամենավատից»:	1	45

Վերնագիր	Թեմաներ	Համառոտ նկարագիր	Աստիճան	Ժամանակ (րոպեներով)
Եկե՛ք արտա-հայտվենք	Քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ, ռասիզմ/խտրականություն, համացանցային գրագիտություն:	Վարժության ընթացքում կիրառվում է «ակվարիում քննարկում» մեթոդը՝ հասարակության որոշակի խմբերի մասին տարածված նախապաշարմունքները քննարկելու համար: Այս մեթոդի կիրառումը նպաստում է, որպեսզի մասնակիցները ավելի քննադատորեն մոտենան ընդունված և հաստատված համոզմունքներին և մշակեն ատելության խոսքին արձագանքելու փաստարկներ:	1	45
Ի՞նչ են նրանք պատմում	Ռասիզմ/խտրականություն, մարդու իրավունքներ, արտահայտման ազատություն:	Մասնակիցները փոքր խմբերով վերլուծում են լրատվական մի նյութ՝ ներգաղթյալների և ներգաղթի մասին: Արդյունքները ներկայացվում են կոլաժի տեսքով:	2	60
Իսկ ի՞նչ է ատելության խոսքը	Մարդու իրավունքներ, ռասիզմ/խտրականություն:	Մասնակիցներն ուսումնասիրում են ատելության խոսքի օրինակներ և քննարկում դրանց հնարավոր ազդեցությունն անհատների և հասարակության վրա:	2	60
Վիրտուալ գործողություն	Քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ, ռասիզմ/խտրականություն, մարդու իրավունքներ:	Այս վարժության ընթացքում մասնակիցները տեղեկանում են ռասիզմի դեմ մի քանի ոգևորիչ ծրագրերի մասին և միասին մտածում, թե ինչ նմանատիպ առցանց գործո-ղություններ է կարելի իրականացնել:	3	60
Կրի՛ր և կիսվի՛ր	Անձնական կյանք/ անվտանգություն, համացանցային գրագիտություն, կիբերբուլինգ:	Մասնակիցները լրացնում են սխեմա, որի միջոցով ցույց են տալիս իրենց անձնական նախապատվությունները՝ առցանց որոշակի տեղեկություններ տեղադրելու և կիսելու առումով: Այնուհետև քննարկում են անձնական բնույթի տեղեկություններն առցանց տեղադրելու հարցում ավելի զգուշավոր լինելու հարցը:	1	40
Ցանցային հարձակում	Համացանցային գրագիտություն, քարոզարշավի ռազմավարություններ, ռասիզմ/խտրականություն:	Մասնակիցները պետք է վերափոխեն (մտացածին) քարոզարշավի կայքը, որպեսզի կարողանան լուծել տեղական համայնքի կողմից ռասիստական բնույթի մեկնաբանությունների տեղատարափի հարցը:	3	90
Անձնական էջեր	Ռասիզմ/խտրականություն, համացանցային գրագիտություն, ժողովրդավարություն/ մասնակցություն:	Վարժությունը տեղի է ունենում երևակայական համացանցային ֆորումում: Մասնակիցները պետք է ողջունեն միմյանց՝ որոշակի խմբերի մասին ընդունված կարծրատիպերի հիման վրա: Այս վարժության ընթացքում նրանք պետք է մշակեն ուղղորդող սկզբունքներ՝ առցանց հաղորդակցության համար:	1	Մաս I՝ 35 րոպե Մաս II՝ 25 րոպե

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 4

ՄԱՍՆԱԿԻՑ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 9-15

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 120′

ՄԵԿ ՕՐ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Մասնակիցները բեմականացնում են փոքր դատական նիստ, որի համար հիմք է ծառայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննված իրական գործերից մեկը:

ԹԵՄԱՆԵՐ	Արտահայտման ազատություն, մարդու իրավունքներ, ռասիզմ, խտրականություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	4
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	9-15
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	120 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Քննարկել, թե ինչպես է կարելի հավասարակշռել մի կողմից արտահայտման ազատության իրավունքը, մյուս կողմից՝ ռասիստական վիրավորանքների և ատելության խոսքի զոհերին պաշտպանելու անհրաժեշտությունը • Ուսումնասիրել արտահայտման ազատության իրավունքի (Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա, հոդված 10) պաշտպանության միջոցները և սահմանափակումները • Հասկանալ Եվրոպական դատարանի դերը
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Էջ 39-42 քարտերի մի քանի օրինակ • Գրիչներ և թուղթ՝ նշումների համար • Փոքր խմբերի համար աշխատանքային տարածք՝ ցանկալի է տարբեր սենյակներում
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք էջ 39-ի քարտերը՝ պատճենելով և կտրատելով դրանք, բոլոր մասնակիցները պետք է ունենան իրենց քարտը և դատական գործի մեկ օրինակ, յուրաքանչյուր փոքր աշխատանքային խմբում պետք է լինեն հավասար կամ հնարավորինս հավասար թվով դատավորներ, դանիական կառավարության և պրն. Յերսիլդի ներկայացուցիչներ • Համարակալե՛ք յուրաքանչյուր խմբի քարտերը, այնպես, որ յուրաքանչյուր խմբում լինի մեկ դատավոր, մեկ պրն. Յերսիլդ և մեկ դանիական կառավարության ներկայացուցիչ • Ձեզ անհրաժեշտ կլինի այնպիսի տարածք, որտեղ «խումբ-դատարանները» (թվով 3 հոգի) կարողանան նստել մյուսներից առանձին

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ասացե՛ք խմբին, որ այս խաղն՝ ընդդեմ դանիական կառավարության դատական գործի մասին է, որը քննվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Մասնակիցները պետք է խաղան այս դատական գործի տարբեր մասնակիցների դերերը՝ դատավորների, դանիական կառավարության և ռասիստական տեսակետներ արտահայտող հաղորդում պատրաստելու համար դատապարտված, լրագրող՝ պրն. Յերսիլդի: Անհրաժեշտության դեպքում, հիշեցրե՛ք մասնակիցներին, թե ինչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Մարդու իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան: Ասե՛ք նրանց, որ գործը վերաբերում է արտահայտման ազատությանը:
2. Հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչպես են նրանք հասկանում արտահայտման ազատությունը: Վերջում, օգտվելով ստորև կամ գլուխ 5-ում ներկայացված նյութերից, համառոտ լրացումներ արե՛ք:

Ազատ խոսքը, կամ արտահայտման ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է: Մարդիկ պետք է հնարավորություն ունենան «արտահայտել» իրենց կարծիքները կամ մտքերը, քանի որ մեր մտքերը, կարծիքները և համոզմունքները մեր ինքնության կարևոր մասն են կազմում:
Արտահայտման ազատությունը պետք է պաշտպանվի, քանի որ այն առանցքային դերակատարում ունի ժողովրդավարական հասարակության մեջ: Սակայն, երբեմն, եթե արտահայտման ազատությունը կարող է վնասել անհատներին կամ վտանգավոր լինել հասարակության համար, այդ իրավունքը կարող է սահմանափակվել:

3. Խմբի համար կարդացե՛ք «գործի» մասին նյութը (էջ 38): Համոզվե՛ք, որ գործի բոլոր մանրամասները հասկանալի են խմբի բոլոր մասնակիցների համար:
4. Բաժանե՛ք մասնակիցներին երեք հավասար խմբի:
   - Խումբ Ա-ն ներակայացնում է պրն. Յերսիլդին
   - Խումբ Բ-ն՝ դանիական կառավարությանը
   - Խումբ Գ-ն՝ Եվրոպական դատարանի դատավորներին:
5. Յուրաքանչյուր խմբին տվե՛ք իրենց դերաքարտը և գործի մասին տեղեկություններ պարունակող տեքստի օրինակ: Բացատրե՛ք նրանց, որ մինչև մյուս խմբերի ներկայացուցիչներին հանդիպելը և դատական նիստը սկսելը, նրանք ունեն 30 րոպե իրենց սեփական դիրքորոշումը քննարկելու և հստակեցնելու համար: Հատկացված ժամանակը նրանք պետք է օգտագործեն իրենց փաստարկները նախապատրաստելու համար կամ եթե դա դատավորների խումբն է, նախապատրաստեն կողմերին տրվելիք հարցերը:
6. Երբ նախապատրաստական աշխատանքի համար նախատեսված 30 րոպեն կլրանա, ասացե՛ք մասնակիցներին, որ պետք է գտնեն մյուս երկու խմբերի նույն համարն ունեցող անդամներին և կազմեն նոր աշխատանքային խմբեր: Այսինքն, Ա խմբի 1-ին համարը պետք է գտնի Բ և Գ խմբերի 1-ին համարներին և նրանց հետ նոր խումբ կազմի:

7. Բացատրե՛ք, որ այս նոր փոքր խմբերից յուրաքանչյուրը փոքր դատարան է: Այնուհետև, խմբերը կունենան 20 րոպե կողմերի փաստարկները լսելու և դատավորների հարցերին պատասխանելու համար:
8. Այս ժամանակի լրանալուց հետո դատավորներից յուրաքանչյուրը պետք է վճռի՝ոտնահարվել է արդյոք հոդված 10-ը: Բոլոր մասնակիցները այժմ վերադառնում են մեծ խմբի մեջ, որպեսզի լսեն դատավորներից յուրաքանչյուրի վճիռը և այդ վճռի հիմնավորումները:
9. Մյուս երկու խմբերի ներկայացուցիչներին (դանիական կառավարության և պրն. Յերսիլդի ներկայացուցիչներին) առաջարկե՛ք մեկնաբանել կայացված վճիռը: Վերջում ասե՛ք նրանց, թե ինչպիսին է եղել Եվրոպական դատարանի իրական վճիռը (էջ 38): Հարցրե՛ք, թե ի՞նչ են կարծում մասնակիցները այս վճռի մասին:
10. Անցե՛ք վարժության քննարկում փուլին: Ստորև ներկայացված հարցերը քննարկելուց առաջ համոզվե՛ք, որ մասնակիցները դուրս են եկել իրենց դերերից:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Որո՞նք էին գործի ամենաբարդ հարցերը:
- Ձեզ դժվա՞ր էր խաղալ Ձեր դերը:
- Համաձա՞յն եք այս գործի վերաբերյալ «դատավորի» կայացրած վճռի հետ: Որո՞նք էին վերջնական որոշման վրա ազդեցություն գործած ամենակարևոր գործոնները:

  Պատմե՛ք մասնակիցներին, որ՝

  > *Չնայած նրան, որ Եվրոպական դատարանի առջև դրված չէր խնդիր՝ որոշել «կանաչ բաճկոնների» մեկնաբանությունների պատժելիության հարցը, այնուամենայնիվ, իրենց վերջնական վճռի մեջ նրանք մեկնաբանություն էին ներառել նաև դրա վերաբերյալ: Ըստ դատավորների՝ «կանաչ բաճկոնների» մեկնաբանությունների վրա չէր տարածվում արտահայտման ազատության իրավունքը, այլ կերպ ասած նրանք չպետք է ունենային նման տեսակետ «ազատ» արտահայտելու իրավունք:*

- Համաձա՞յն եք այս մոտեցման հետ: Ի՞նչ փաստարկներ կարող եք բերել հօգուտ և ընդդեմ նրանց իրավունքները սահմանափակելուն:
- Երբևէ հանդիպե՞լ եք ռասիզմի առցանց դրսևորումների: Ինչպե՞ս կարձագանքեիք, եթե հանդիպեիք:
- Ի՞նչ եք կարծում, ունեն արդյոք մարդիկ առցանց տիրույթում ռասիստական մեկնաբանություններ հրապարակելու կամ ատելության խոսք գործածելու իրավունք:
- Կարո՞ղ եք առաջարկել գործողություններ, նման դրսևորումների քանակը նվազեցնելու համար:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- «Կանաչ բաճկոնների» որոշ մեկնաբանություններ ներառված են առանձին առձեռն նյութի մեջ: Դուք ինքներդ կարող եք որոշել, թե որքանով տեղին է այդ նյութի օգտագործումը յուրաքանչյուր խմբում:
- 5-րդ կետը սկսելուց առաջ, երբ մասնակիցներն աշխատում են միևնույն դերն ունեցողների հետ, նախազգուշացրե՛ք, որ յուրաքանչյուրը պետք է իր համար անի իր սեփական նշումները, քանի որ երբ ձևավորվեն «դատարան» խմբերը նրանք չեն կարողանա օգտվել մյուսների արած նշումներից:
- Հորդորե՛ք մասնակիցներին, որպեսզի նրանք հատկացված ժամանակի մի մասն օգտագործեն մյուսների հետ գործի մանրամասները քննարկելու, իսկ մյուսը՝ բացման խոսքին նախապատրաստվելու համար: Դատավորները պետք է հստակեցնեն գործի մանրամասները և մտածեն, թե կողմերից ինչ լրացուցիչ տեղեկությունների կարիք կարող են ունենալ որոշում կայացնելու համար:
- Բացատրե՛ք դատարանի երկու կողմին էլ, որ եթե նրանք համաձայն չեն հակառակ կողմի դիրքորոշման հետ, ապա դատավորներին պետք է ներկայացնեն լավագույն փաստարկները:
- Գերադասելի է, որ տարբեր «դատարանները» հանդիպեն առանձին սենյակներում (կետ 7), կամ հնարավորինս հեռու նստեն, որպեսզի ո՛չ իրենք կարողանան լսել մյուս խմբերի քննարկումները, ո՛չ էլ՝ մյուսները իրենցը:
- «Դատական նիստի» տևողության կառավարումը հանձնարարեք դատավորներին, մասնավորապես՝ նրանք պետք է սահմանեն հարցերին հատկացվող ժամանակը: Հատուկ շեշտե՛ք, որ կողմերից յուրաքանչյուրին պետք է տրվի հավասար ժամանակ: Բացի այդ, պետք է ապահովել, որպեսզի վերջում ժամանակ մնա անհասկանալի և վիճելի հարցերի պարզաբանման համար:
- Միգուցե նաև, արժե պարզաբանել, որ Եվրոպական դատարանը որոշում էր ընդունում ոչ թե պրն. Յերսիլդի վարքագծի վերաբերյալ, այլ քննում էր դանիական կառավարության «վարվելակերպը» պրն.Յերսիլդի նկատմամբ: Եվրոպայի խորհրդի անդամ երկրները պետք է ապահովեն, որպեսզի ներպետական օրենքները պաշտպանեն մարդու իրավունքները: Երբ Եվրոպական դատարան են դիմում գործը քննելու խնդրանքով, այն քննում է, թե որքանով է օրենքը կամ դրա մեկնաբանությունն ապահովում այդ իրավունքների պաշտպանությունը:
- Համացանցի օգտատերերի համար Մարդու իրավունքների ուղեցույցում կարող եք ծանոթանալ «Արտահայտման և տեղեկատվության ազատություն» բաժնին՝ առցանց և անցանց տիրույթում այս իրավունքների հետ կապված հարցերի միջև զուգահեռներ անցկացնելու նպատակով:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Դատական նիստը կարող եք անցկացնել նաև դերային խաղի միջոցով, որին կմասնակցի մասնակիցների մի փոքր խումբ, իսկ մյուսները կլինեն հանդիսատեսի դերում: Դերային խաղի մասնակիցներին դերաքարտերը կարելի է բաժանել նախօրոք և խնդրել որպեսզի նրանք նախապատրաստեն իրենց փաստարկները մինչև բուն գործընթացի մեկնարկը: Հանդիսատես մասնակիցները դերային խաղի վերջում պետք է արտահայտեն իրենց կարծիքը և վերաբերմունքը:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները պետք է պարզեն, արդյոք՝ իրենց կողմից ավելի հաճախ այցելած կայքերը և հարթակներն ունեն ռասայական բնույթի վիրավորանքների միտումներ կամ ատելության խոսքի այլ դրսևորումներ:

- Նրանք կարող են հավաքել մի շարք օրինակներ և ողջ խմբով համեմատել տարբեր կայքերի և հարթակների միտումները: Խումբը պետք է քննարկի, թե նշվածներից որոնք պատշաճ կերպով չեն պաշտպանում օգտատերերին, և թե ինչպես կփոփոխեին այն: Նրանք հայտնի կայքերին և օգտատերերին կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն, ինչպես նաև՝ խրախուսել մյուս առցանց ակտիվիստներին ուսումնասիրել իրենց կողմից թիրախավորված կայքերը:
- Մասնակիցները կարող են նաև ընտրել մեկ կամ երկու կայք, որոնց առթիվ ստացվել են բողոքներ առ այն, թե դրանք ունեն ատելության խոսքի դրսևորումներ, և՝ հետևել, թե ինչպես է կիրառվում մարտավարությունը: Ատելության խոսքի առցանց դրսևորման ցանկացած օրինակ կարող է ուղարկվել կայքերին, որոնք ընդունում են բովանդակությունը՝ բողոքով և ռազմավարության հղումով:

Մասնակիցների հետ միասին մշակե՛ք այս գործի մեջ արտահայտված ռասիստական դիրքորոշումների դեմ այնպիսի հակափաստարկներ, որոնք նրանք կկարողանան օգտագործել նաև ռասիստական կարծիքների արտահայտման այլ դրվագների հանդիպելիս:

Մասնակիցների հետ միասին պատրաստե՛ք տեսաֆիլմ՝ ժողովրդավարական հասարակության շրջանում բազմազանության նկատմամբ հարգանքի և արժեքների կարևորության մասին:

ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

Այս գործը քննվել է Եվրոպական դատարանի կողմից 1994 թվականին: Դատարանը չէր համաձայնել դանիական դատարանի որոշման հետ և վճռել էր, որ պրն. Յերսիլդը չպետք է պատժվեր ֆիլմը նկարահանելու և ցուցադրելու համար: Դատարանը գտել էր, որ ֆիլմում բավականաչափ հստակ էր արտահայտված, որ ռասիստական մեկնաբանությունները ֆիլմի հեղինակի համար ո՛չ ընդունելի էին, ո՛չ էլ նախընտրելի, ինչպես նաև, որ չկար հասարակության կողմից ֆիլմի ուղերձը սխալ ընկալվելու վտանգ:

Նրանք մասնավորապես նշել էին, որ

> *« [ֆիլմում] փորձ էր կատարվել հարցազրույցի միջոցով ի ցույց դնել, վերլուծել և բացատրել երիտասարդների հենց այս խմբի վարքագիծը, որի անդամները սահմանափակ են և դժգոհ իրենց սոցիալական կարգավիճակից, հակված են բռնության և արդեն իսկ ունեն դատվածություններ: Այսպիսով, ֆիլմում փորձ էր կատարվել խոսել մի խնդրի մասին, որն այն ժամանակ արդեն հանրության լուրջ մտահոգությունների առիթ էր համարվում:»*

Դատարանը առանձնահատուկ շեշտել էր նաև լրատվության առանցքային կարևորությունը ժողովրդավարական հասարակության համար և այն հանգամանքը, որ այդպիսով լրատվամիջոցները հնարավորություն են ստանում կատարելու «հանրության պահակաշան» բացառիկ դերը: Նրանք նաև նշել էին, որ այլ անձի հայտարարությունները հանրայնացնելու պատճառով լրագրողին պատժելու համար պետք է լինեն չափազանց ուժեղ հիմքեր: Ազատ մամուլի ամենակարևոր գործառույթներից մեկը դա այնպիսի հարցերի շուրջ հանրային քննարկումների հնարավոր դարձնելն ու խրախուսելն է, որոնք կարևորություն ունեն ողջ հասարակության համար:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԳՈՐԾԸ

Դիմողը՝ պրն. Յենս Օլաֆ Յերսիլդը, Դանիայի քաղաքացի է և աշխատում է Դանիայի ռադիոյում (որը հեռարձակում է նաև հեռուստահաղորդումներ): Լրատվական ալիքն ունի լուրջ լրատվամիջոցի հեղինակություն և նախատեսված է լավ տեղեկացված հանդիսատեսի համար: Պրն. Յերսիլդը ցանկանում էր հեռարձակել մի փաստագրական ֆիլմ, որը պատմում էր ծայրահեղ ռասիստական ուղղվածություն ունեցող՝ «Կանաչ բաճկոններ» խմբի մասնին: Նա կապվել էր խմբի անդամների հետ և ծավալուն հարցազրույց վերցրել նրանցից, այնուհետև մոնտաժել էր նյութը՝ դարձնելով այն մի քանի րոպե տևողությամբ ֆիլմ և ավելացնելով իր սեփական մեկնաբանությունները: Վերջնական արդյունքը ցուցադրվել էր լրատվական հաղորդման հատվածներից մեկում և հեռարձակվել ազգային հեռուստատեսությամբ:

Հեռարձակվող հաղորդման մեջ «Կանաչ բաճկոններ» խմբի անդամները հանդես էին գալիս Դանիայում բնակվող ներգաղթյալների և էթնիկ խմբերի հասցեին ահաբեկիչ և վիրավորական հայտարարություններով՝ համեմատելով սևամորթ մարդկանց գորիլաների հետ և ասելով, որ նրանք «մարդ չեն»: Դանիական դատարանը մեղավոր էր ճանաչել «կանաչ բաճկոններին» ռասիստական մեկնաբանությունների մեղադրանքով, ինչպես նաև

պրն. Յերսիլդին, գտնելով, որ նա «խրախուսել էր» նրանց և այնուհետև հեռարձակել այդ մեկնաբանությունները՝ հասանելի դարձնելով հանրության համար:

Պրն. Յերսիլդը բողոքարկել էր իր դատապարտման մասին որոշումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, քանի որ համարում էր, որ դանիական դատարանի կողմից իր դատապարտումը ոտնահարում էր արտահայտման ազատության իր իրավունքը (ՄԻԵԿ, հոդված 10).

Եվրոպական դատարանը պետք է որոշեր, թե որքանով «իրավաչափ» էր մեկնաբանությունները հեռարձակելու նրա իրավունքի սահմանափակումը: Սա ենթադրում էր, որ անհրաժեշտ էր հասկանալ, թե որքանով էր պահպանվել անհրաժեշտ հավասարակշռությունը ռասիստական մեկնաբանությունների թիրախ դարձած մարդկանց իրավունքների պաշտպանության և նման խմբի գոյության մասին հանրությանը տեղեկացնելու անհրաժեշտության միջև:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Կամընտրական նյութ

Հեռարձակված հաղորդման ընթացքում հնչեցված որոշ մեկնաբանություններ՝

«... հյուսիսային նահանգները [Ամերիկայի] ուզում էին, որ նեգրերը ազատ մարդիկ լինեն, բայց դրանք մարդ չեն, դրանք կենդանի են»:

«Մի հատ վերցրու գորիլայի նկարին նայի, հետո նայի նեգրին, լրիվ նույն մարմնի կառուցվածքն ունեն, տափակ ճակատ, բան...»

«Նեգրը մարդ չի, կեդանի ա, նույնը վերաբերում է մյուս խոպանչիներին, թուրքերին, հարավսլավացիներին ու մնացածներին... չգիտեմ էլ անունները ինչ են»:

«...մեզ իրենց մտածողությունը դուր չի գալիս... դուր չի գալիս, որ իրենց զիմբաբվեական շորերով դուրս են գալիս փողոց ու խոսում իրենց անհասկանալի «հուլահուլա» լեզվով...»

«Քո կարծիքով ի՞նչ են վաճառում: Թմրանյութ են վաճառում: «Վեստրեի» բանտի կալանավորների կեսը թմրանյութերի պատճառով է այնտեղ... դրանք այն մարդիկ են, որ բանտում են թմրանյութերի վաճառքի համար...»

ՊՐՆ. ՅԵՐՍԻԼԴԻ ԴԵՐԱՔԱՐՏԸ

Դուք լուրջ լրագրող եք և ցանկանում եք նկարահանել ֆիլմ ռասիզմի և այլատյացության մասին, որտեղ պետք է դրսևորվեն՝

1. խնդրի ծավալները, ներառյալ «Կանաչ բաճկոնների» տեսակետների ծայրահեղական բնույթը,

2. այն որ «Կանաչ բաճկոնները» քրեականացված խումբ են, որի անդամներից շատերը էմոցիոնալ առումով հասուն չեն և սոցիալապես անապահով են:

Դուք գտնում եք, որ կարևոր է, որպեսզի հասարակությունը հասկանա այս երկու խնդիրը և կարծում եք, որ ձեր հաղորդումը կարողացավ անդրադառնալ երկուսին էլ, մասամբ հաղորդման մեջ ուղղակիորեն ներառելով հարցազրույցին մասնակցած երիտասարդների ամենավատ մեկնաբանությունները, մասամբ էլ նկարագրելով նրանց կրթվածության ցածր մակարդակը, նրանց ծագումը և այն սոցիալական խնդիրները, որոնց հետ նրանք բախվում են: Դուք չեք համարում, որ դիտելով ձեր հաղորդումը որևէ մեկը կեզրակացներ, որ դուք համաձայն եք արտահայտված ռասիստական կարծիքների հետ:

Որպես լրագրող՝ դուք շատ բարձր եք գնահատում արտահայտման ազատությունը. չափից ավել սահմանափակումները լրագրողների համար անհնար կդարձնեն հանրությանը՝ իրական և ոչ այնքան հաճելի խնդիրների մասին տեղեկատվություն տրամադրելը: Դուք համոզված եք, որ լրագրողի պարտականությունն է հանրության ուշադրությունը գրավել նման խնդիրների վրա, որպեսզի հանրությունը գիտակցի դրանց գոյությունը և փորձի լուծումներ գտնել:

Եվրոպական կոնվենցիայի հոդված 10 (պարզեցված)

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալը, տեղեկություններ և գաղափարներ ստանալը և տարածելը՝ առանց որևէ միջամտության:

2. Արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել, եթե սահմանափակումը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», մասնավորապես այլոց իրավունքները պաշտպանելու համար:.

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԴԱՆԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԱՔԱՐՏԸ

Դուք համարում եք, որ պրն.Յերսիլդին դատապարտելով՝ դանիական դատարանը կայացրել էր ճիշտ որոշում: Նրա հաղորդումը պարունակում էր ծայրահեղական և ռասիստական կարծիքներ, որոնք չպետք է հասու դառնային ավելի լայն լսարանի համար: Հաղորդումն ուներ սենսացիոն բնույթ և չէր պարունակում անհրաժեշտ քանակությամբ մեկնաբանություններ, որոնցից հասկանալի կդառնար, որ արտահայտված կարծիքները անընդունելի էին և վտանգավոր: Դուք համոզված եք, որ լրագրողները պատասխանատվություն են կրում իրենց լսարանը մոլորեցնելու և չափից ավել հուզելու համար: Դուք գտնում եք, որ այդ հաղորդումը դիտած մարդիկ չէին հասկանա, որ լրագրողը ցնցված էր այդ ռասիստական արտահայտություններից և համաձայն չէր դրանց հետ, չէին հասկանա, որ նման հայտարարությունները վտանգավոր և անօրինական տգիտության դրսևորումներ էին:

Պրն. Յերսիլդն այնպես էր մոնտաժել ֆիլմը, որպեսզի ներառվեն «Կանաչ բաճկոնների» ամենավատ մեկնաբանությունները: Դուք համարում եք, որ նա չպետք է վարեր հարցազրույց այդ խմբի անդամների հետ, չպետք է խրախուսեր նրանց նման կարծիքներ արտահայտել և վստահաբար չպետք է հանրայնացներ դրանք՝ ներառելով հաղորդման մեջ: Դուք կարծում եք, որ հաղորդումը չպետք է պատրաստվեր և պրն. Յերսիլդը պետք է պատասխանատվություն կրի նման վտանգավոր կարծիքները հանրայնացնելու համար:

Եվրոպական կոնվենցիայի հոդված 10 (պարզեցված)

1. *Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալը, տեղեկություններ և գաղափարներ ստանալը և տարածելը՝ առանց որևէ միջամտության:*
2. *Արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել, եթե սահմանափակումը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», մասնավորապես այլոց իրավունքները պաշտպանելու համար:*

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՐԱՔԱՐՏԸ

Ձեր առջև խնդիր է դրված վարել ողջ դատական նիստը և այնուհետև որոշել մեղավոր էր, թե ոչ պրն. Յերսիլդը:

Դատական նիստ

Նախ հիշեցրե՛ք պրն.Յերսիլդին և դանիական կառավարության ներկայացուցիչներին, որ կողմերից յուրաքանչյուրին կտրվի մի քանի րոպե գործի իրենց կողմը ներկայացնելու համար, այնուհետև դուք կտաք հարցեր, և նրանք կպատասխանեն միմյանց: Ասացե՛ք նրանց, որ պետք է հետևեն սահմանված կարգին և ձեր ցուցումներին:

Ի՞նչ պետք է դուք որոշեք:

Դուք պետք է որոշեք, թե արդյոք պետք է հեռարձակեր իր ֆիլմը պրն. Յերսիլդը: Արտահայտման ազատության նրա իրավունքի համաձայն՝ նա կարծես թե ուներ այդ իրավունքը, սակայն արտահայտման ազատության իրավունքը բացարձակ իրավունք չէ. այն պետք է որոշակի հավասարակշռության մեջ լինի սոցիալական այլ մտահոգությունների և մարդու մյուս իրավունքների հետ: Ձեր խնդիրն է, որոշել որքանով էր պահպանվել հավասարակշռությունը այս գործի շրջանակներում:

Ստորև այն առանցքային հարցերն են, որոնք պետք է կշռադատեք և մտորեք դրանց շուրջ, կողմերի փաստարկները լսելուց հետո:

- Արդյոք համամի՞տ եք, որ հանրությունը կարող էր մեկնաբանել ֆիլմը, որպես ռասիստական կարծիքներին աջակցող:

- Արդյոք կար հանրությանը՝ «Կանաչ բաճկոնների» ռասիստական մոտեցումների և նրանց կենսագրության մասին տեղեկացնելու անհրաժեշտություն, թե՞ ավելի կարևոր էր, որ նրանց կարծիքները հասանելի չլինեին այդքան մեծ լսարանի համար:

Եվրոպական կոնվենցիայի հոդված 10 (պարզեցված)

1. *Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալը, տեղեկություններ և գաղափարներ ստանալը և տարածելը՝ առանց որևէ միջամտության:*
2. *Արտահայտման ազատությունը կաԲրող է սահմանափակվել, եթե սահմանափակումը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», մասնավորապես այլոց իրավունքները պաշտպանելու համար:*

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 4

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 15-30

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 180′

ՍԼԻՓՎԻԼԻ ՆՈՐ ՄԶԿԻԹԸ

Սա առցանց խորհրդակցության/քննարկման սիմուլացիոն վարժություն է: Քննարկվում է ավանդաբար քրիստոնեական թաղամասում նոր մզկիթի կառուցման հարցը:

ԹԵՄԱՆԵՐ	Ժողովրդավարություն և մասնակցություն, ռասիզմ և խտրականություն, համացանցային գրագիտություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	4
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	15-30
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	2-3 ժամ տևողությամբ մեկ սեսիա, կամ երեք առանձին՝ յուրաքանչյուրը 50 րոպե տևողությամբ
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Ուսումնասիրել կրոնական փոքրամասնությունների իրավունքները և պարզել, թե որքանով են դրանք կապված ատելության խոսքի առցանց դրսևորումների հարցի հետ • Զարգացնել առցանց քննարկումներին մասնակցելու և վերլուծելու հմտությունները • Դիտարկել ժողովրդավարական քննարկման/մասնակցության օգտագործումը այլ ազգերի կամ այլ հավատքների նկատմամբ հանդուրժողականության աստիճանը բարձրացնելու համար
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Համացանցից օգտվելու հնարավորություն՝ առնվազն հինգ համակարգիչ • Տարածք խմբերի աշխատանքային հանդիպումների համար: • 2 վարող • Քվեաթերթիկներ Խորհրդի անդամների համար (կամընտրական)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Բոլոր մասնակիցների համար նախապատրաստե՛ք առձեռն նյութերի օրինակներ • Համացանցում ստեղծե՛ք փակ ընդհանուր տարածք/հարթակ: Առաջարկությունների համար տե՛ս խորհուրդներ վարողներին ենթավերնագիրը • Յուրաքանչյուր մասնակցի համար ստեղծե՛ք ծածկանուն (login) կամ նախապես ստուգեք, կարող են արդյո՞ք նրանք մուտք գործել այդ տարածք արդեն գոյություն ունեցող հասցեներով (տե՛ս՝ Խորհուրդներ վարողներին)

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Կարդացե՛ք խնդրի նկարագիրը էջ 47: Բացատրե՛ք, որ բոլոր մասնակիցները Սլիփվիլից են և, որ բոլորին անհանգստացնում է հետևյալ հարցը՝ արդյոք հանրային ամայի տարածքներից մեկում պետք է կառուցվի նոր մզկիթ:
2. Բաժանե՛ք մասնակիցներին առձեռն նյութերը և առաջարկեք, որպեսզի նրանք ընտրեն իրենց դերերը: Բացատրե՛ք խորհրդակցության ընթացակարգը և համոզվե՛ք, որ բոլորի համար այն հասկանալի է:
3. Տեղեկացրե՛ք նրանց, թե որտեղ կարող են հանդիպել մասնակիցները նախօրոք և որ համակարգիչներից կարող են օգտվել վարժության համար: Համոզվե՛ք, որ բոլորն ունեն ծածկանուն (login) և գաղտնաբառ:
4. Հիշեցրե՛ք բոլոր նրանց, ովքեր կարող են ներկայացնել նախնական հայտարարություն, որ դա անհրաժեշտ է անել նախքան խորհրդակցության՝ հանրության համար բացվելը: Խրախուսե՛ք, որպեսզի բոլորը օգտագործեն նախախորհրդակցական 30 րոպեանոց փուլը հետևյալի համար՝
   - համաձայնեցնել դիրքորոշումները խմբի ներսում և բաշխել դերերն ու փաստարկները (եթե կա դրա անհրաժեշտությունը),
   - հանդիպել այլ խմբերի ներկայացուցիչների հետ,
   - ստուգել՝ կարողանում են մուտք գործել կայք, թե ոչ:

   Եթե համակարգիչներից օգտվելու հնարավորությունը կամ ժամանակը սահմանափակ է, հիշեցրե՛ք մասնակիցներին, որ նրանք պետք է շատ հակիրճ ներկայացնեն իրենց փաստարկները և որ, միգուցե, նրանք ունենան իրենց տեսակետն արտահայտելու միայն մեկ հնարավորություն:
5. Հայտարարե՛ք նախախորհրդակցական փուլի մեկնարկը և բացատրե՛ք, որ բուն խորհրդակցությունը կբացվի հանրության համար 30 րոպեից:
6. 30 րոպե անց ազդարարեք հանրային խորհրդակցության մեկնարկը: Հրավիրե՛ք մասնակիցներին ծանոթանալ խմբերի նախնական հայտարարություններին և անել իրենց մեկնաբանությունները:
7. Խորհրդակցության ավարտին քաղաքապետը հայտարարում է, որ խորհրդակցությունը փակված է: Այնուհետև Քաղաքի խորհուրդը քվեարկում է: Եթե մեծամասնական կարծիք չի ձևավորվում, ապա որոշիչ ձայնը քաղաքապետինն է:
8. Քաղաքապետը հայտարարում է որոշումը: Ասացե՛ք մասնակիցներին, որպեսզի շրջանաձև նստեն և սկսե՛ք վերլուծությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սկսե՛ք քննարկումը բոլորին իրենց իրական անուններով դիմելով: Սա կարևոր է մասնակիցների համար, որպեսզի դուրս գան սիմուլացիոն գործընթացում իրենց տրված դերերից:

- Հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչ են նրանք զգում հենց նոր ավարտված գործընթացի կապակցությամբ:
- Ձեզ զարմացրե՞ց քվեարկության արդյունքը: Իսկ այն մարդը, ում դերը դուք խաղում էիք, գոհ կմնա՞ր այդ որոշումից:
- Ի՞նչ եք կարծում, արդյունավետ է արդյոք առցանց քննարկումը նման հարցերը որոշելիս: Որո՞նք են առավելություններն ու թերությունները:

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Արդյոք այլ մարդկանց կամ խմբերի հետ շփումը փոխե՞ց ձեր մոտեցումը կամ վերաբերմունքը քննարկվող հարցերից որևէ մեկի նկատմամբ:
- Որքանո՞վ էր ձեզ համար հեշտ խաղալ ձեր դերերը:
- Ինչ եք կարծում, նման իրավիճակ կարո՞ղ է առաջանալ իրական կյանքում: Կարո՞ղ եք հիշել որևէ նման իրավիճակ:
- Ինչպե՞ս կարձագանքեիք, եթե նման հարց բարձրանար ձեր քաղաքում/բնակավայրում: Արդյոք այս վարժությունը ինչոր չափով փոխե՞ց ձեր վերաբերմունքը:

ԿԱՊՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

- Ի՞նչ կարծիք ունեք ռասիստական կամ վիրավորական մեկնաբանությունները ջնջելու մասին կանոնի վերաբերյալ:
- Արդյո՞ք այս կանոնի առկայությունը ստիպեց ձեզ այլ կերպ վերաբերվել ձեր մեկնաբանությանը:
- Որքանո՞վ էր հեշտ որոշում կայացնել մեկնաբանությունները ջնջել-չջնջելու վերաբերյալ (հարցը նախատեսված է կայքի կառավարիչների/ադմինիստրատորների համար):
- Դուք համաձա՞յն էիք մոդերատորների որոշման հետ (հարցը վերաբերում է բոլոր մասնակիցներին):

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Նախքան վարժությունը մեկնարկելը ստեղծե՛ք անվտանգ կայք: Դա կարող է լինել Ֆեյսբուքյան էջ կամ մեկ այլ սոցիալական ցանցի/հարթակի հաշիվ: Այլ առաջարկներ կարող եք գտնել այստեղ՝ http://cooltoolsforschools.wikispaces.com/Collaborative+Tools:
- Համոզվե՛ք, որ բոլոր մասնակիցներն ունեն հաշիվ, որի միջոցով կարող են մուտք գործել կայք:
- Վարժությունն անցկացնելու համար ձեզ անհրաժեշտ է երկրորդ վարողի օգնությունը: Չնայած խմբերը պետք է ունենան ինքնուրույն աշխատելու հնարավորություն, այնուամենայնիվ, ինչպես նախապատրաստական փուլում, այնպես էլ բուն խորհրդակցության ժամանակ, նրանք կարող է ունենան աջակցության կամ ուղղորդման կարիք: Օրինակ՝ նախապատրաստական փուլում, միգուցե, անհրաժեշտություն լինի

հետևել, թե արդյոք նրանք օգտագործում են այդ ժամանակը մյուսների հետ հանդիպելու կամ հանդիպման ժամանակ իրենց ասելիքը հստակեցնելու համար:

- Եթե համակարգիչների քանակը սահմանափակ է, ապա ճիշտ կլինի, որպեսզի դուք հստակ սահմանեք ժամանակը (կամ բառերի քանակը) այնպես, որ բոլորն ունենան իրենց մեկնաբանություններն անելու հնարավորություն
- Վերլուծության ժամանակ շատ կարևոր է կարողանալ խուսափել սիմուլացիոն վարժությունը վերարտադրելու փորձերից: Մասնակիցները պետք է դուրս գան վարժության ընթացքում իրենց ստանձնած դերերից, որպեսզի կարողանան ինչպես հարկն է վերլուծել ձեռք բերված փորձառությունը: Դուք պետք է օգնեք նրանց հետադարձ հայացքով նայել սիմուլացիոն վարժությանը իրենց իրական ինքնության, և ոչ թե՝ ստանձնած դերերի կարգավիճակով:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Դուք կարող եք կրճատել կամ սահմանափակել բառերը, որոնք մարդիկ հրապարակելու են նախնական հայտարարությունների կամ մեկնաբանությունների տեսքով: Փորձե՛ք սահմանափակել մեկնաբանությունները՝ դարձնելով դրանք «թվիթներ»՝ մինչև 280 նշան: Վարժությունը կարելի է անցկացնել մի նաև քանի օրվա ընթացքում՝ նվազեցնելով կազմակերպված սեսիաների համար հատկացված ժամանակը և հնարավորություն տալով մասնակիցներին մեկնաբանություններ անել նաև տնից:

Եթե դուք չունեք առցանց գործիքներից օգտվելու հնարավորություն, վարժությունը կարելի է ամբողջությամբ իրականացնել առանց համացանցի կիրառման: Այս վարժությունը «Կողմնացույց» ձեռնարկի նույնանուն վարժության ձևափոխված տարբերակն է: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել այստեղ՝ www.coe.int/compass:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Որո՞նք են ձեր երկրի կրոնական և ազգային փոքրամասնությունները, և ի՞նչ են գրում լրատվամիջոցները դրանց մասին: Ազգային կամ տեղական նորությունների կայքերում գտեք պատմություններ այն խմբերի վերաբերյալ, որոնց մասին սովորաբար գրում են բացասական երանգավորումներով: Այնուհետև գրեք նյութի համար պատասխանատու լրագրողներին կամ, եթե կայքը տալիս է նման հնարավորություն, մեկնաբանություն թողեք հենց նյութի տակ:

Ձեր տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպու՞մ են նման առցանց խորհրդակցությունքննարկումներ: Կա՞ արդյոք հնարավորություն, որպեսզի օգտվելով առցանց գործիքներից, երիտասարդները կապ հաստատեն տեղական իշխանությունների ընտրված ներկայացուցիչների հետ: Մասնակիցների հետ միասին անցկացրեք առցանց հետազոտություն և առցանց գործիքների առկայության պարագայում սկսե՛ք դրանք օգտագործել երիտասարդներին մտահոգող հարցերը բարձրացնելու նպատակով:

Հանդիպե՛ք փոքրամասնությունների տեղական կազմակերպությունների հետ՝ պարզելու համար, թե ինչպես են ձեր իսկ համայնքում լուծում բազմազանության հետ առնչվող խնդիրները:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Բոլոր մասնակիցների համար: Այս նյութերը հնարավոր է հրապարակվեն նաև խորհրդակցության կայքում:

ՍԼԻՓՎԻԼԻ ՄԶԿԻԹԸ

Դուք ապրում եք, մոտավորապես 80,000 բնակչություն ունեցող, գեղատեսիլ Սլիփվիլ քաղաքում: Վերջին 60 տարիների ընթացքում քաղաքի բնակչությունը էական փոփոխությունների է ենթարկվել: Մասամբ սա պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանք գտնելու համար երիտասարդների զգալի մասը ձգտում է տեղափոխվել ավելի մեծ քաղաքներ, ինչպես նաև դեպի այս տարածաշրջան, հիմնականում մահմեդական երկրներից, ներգաղթյալների ներհոսքով: Եվ չնայած, ներգաղթյալների մի մասն արդեն մի քանի սերունդ է ինչ այստեղ է բնակվում, քաղաքի բնակիչներից շատերը շարունակում են նայել նրանց որպես «նորեկների»: Այժմ նրանք կազմում են քաղաքի բնակչության գրեթե 15% ը:

Քաղաքի բնակիչները կիսվել են երկու խմբի, այն բանից հետո, երբ Սլիփվիլի մահմեդականները ցանկություն հայտնեցին մզկիթ կառուցել հանրային հանդիսացող մի անբարեկարգ հողակտորի վրա: Այս հողակտորը որևէ նշանակությամբ չի օգտագործվում և տարիներ շարունակ քաղաքի խորհուրդը բազմաթիվ բողոքներ է ստանում այդ կապակցությամբ: Այն գտնվում է հիմնական առևտրային կենտրոնի մոտ և տարածքում հաճախակի բնույթ են կրում վանդալիզմի և թմրամոլության հետ կապված խնդիրները:

Սա է պատճառը, որ երբ մի հարուստ գործարար առաջարկեց թեթևացնել խորհրդի բեռը և լուծել այդ տարածքի խնդիրը, քաղաքապետը դա համարեց մեծ հաջողություն: Խորհուրդը մեծ պատրաստակամությամբ համաձայնեց հանձնել այդ տարածքը և ֆինանսավորել այնտեղ կառուցվելիք մզկիթի շինարարական ծախսերի 20%ը: Շինարարության ծախսերի ևս 10%ը, որ գործարարը չէր կարող իր վրա վերցնել, պետք է հոգային մահմեդական համայնքի անդամները:

Շինարարությունը պետք է սկսվեր այս շաբաթ... Սակայն, որոշումն ընդունելուց հետո հանգիստ Սլիփվիլ քաղաքը հանկարծ արթնացավ: Մեկ շաբաթ առաջ քաղաքի խորհրդի Թվիթեր սոցիալական ցանցի հասցեն կոտրել էր հակամուսուլմանական մի խումբ և մի քանի վիրավորական և ռասիստական թվիթ հաղորդագրություններ ուղարկել այդ հասցեից, որոնցից մի քանիսն անգամ կոչեր էին՝ դուրս գալ փողոց և «որսալ օտարներին»: Ռասիստական «հարձակումը» մահմեդականների վրա հետզհետե սաստկացավ՝ որոշ դեպքերում ավարտվելով բռնությամբ: Դրվագներից մեկի զոհն անգամ ստացել էր ծանր մարմնական վնասվածքներ: Որոշ մահմեդական խմբեր անպատասխան չթողեցին հարձակումները, և այժմ տարբեր խմբավորումների միջև բռնություններն ու բախումները գնալով սաստկանում են: Սլիփվիլի քաղաքապետը կոչ է արել բոլորին զսպվածություն դրսևորել և հայտարարել է, որ մզկիթի կառուցման մասին որոշումը կվերանայվի հանրային խորհրդակցություններից հետո: Նրանք որոշել են անցկացնել առցանց խորհրդակցական ֆորում, որպեսզի քննարկմանը մասնակցեն հնարավորինս մեծ թվով մարդկիկ:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Բոլոր մասնակիցների համար

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Խորհրդակցությանը կարող է մասնակցել18 տարին լրացած Սլիփվիլի ցանկացած բնակիչ:

Ստորև նշված գրանցված խմբերը/անհատները կարող են հանդես գալ նախնական հայտարարություններով՝ բացատրելով իրենց դիրքորոշումը խնդրո առարկա մզկիթի վերաբերյալ: Նախնական հայտարարությունները պետք է ուղարկվեն մինչև հանրության համար խորհրդակցության բացվելը:

- **Սլիփվիլի քաղաքապետը և փոխքաղաքապետը** (համատեղ հայտարարություն)
- **Քաղաքի Խորհրդի անդամները, որոնք ներկայացնում են Ավանդապաշտ, Ժողովրդական և Բազմազանեցման կուսակցությունները** (1-ական հայտարարություն յուրաքանչյուր կուսակցությունից)
- **Հասարակական կազմակերպություններ՝** «Երիտասարդ Սլիփվիլցիները Հանուն Մարդու Իրավունքների» երիտասարդական նախաձեռնությունների խումբ, «Անցյալը և ներկան» միությունը, «Սլիփվիլի մահմեդականների միությունը» (մեկական հայտարարություն յուրաքանչյուր կազմակերպությունից)

Նախնական հայտարարությունները կտեղադրվեն քաղաքի Խորհրդի կայքում և այնուհետև **18-ը լրացած բոլոր բնակիչները կունենան այդ հայտարարությունների տակ իրենց մեկնաբանությունները թողնելու հնարավորություն: Ցանկացած մեկնաբանություն, որը կգնահատվի որպես սպառնալիք պարունակող, ռասիստական կամ վիրավորական կջնջվի Խորհրդի կայքից:**

Խորհրդակցությունը կփակվի 30 որպե անց. այնուհետև, Խորհրդի անդամները կքվեարկեն որոշման համար, և եթե քվեարկության արդյունքում չձևավորվի մեծամասնական կարծիք՝ քաղաքապետը կօգտագործի իր որոշիչ քվեն:

Խորհրդի որոշումը կլինի վերջնական:

ՍԼԻՓՎԻԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Դուք քաղաքի գլուխն եք և շատ լավ եք գիտակցում, որ անհրաժեշտ է վերականգնել քաղաքի անդորրը և բնակիչների միջև բնականոն հարաբերությունները: Դուք համոզված եք, որ կարևոր է, որպեսզի ողջ գոր ծընթացի ընթացքում բոլորը տեսնեն անկողմնակալությունը: Ձեզ համար կարևոր է հասարակության տարբեր հատվածների միջև արդար միջնորդի Ձեր համբավը: Դուք զանկանում եք գտնել մի լուծում, որն ընդունելի կլինի հնարավորինս մեծ թվով մարդկանց համար:

Նախքան հանրության համար խորհրդակցության բացվելը, դուք պետք է նախապատրաստեք նախնական հայտարարություն `բացատրելով Ձեր դիրքորոշումը: Դուք պետք է քննարկեք սա փոխքաղաքապետի հետ: Եթե ժամանակը բավարար լինի, պետք է նաև փորձեք

հանդիպել այլ խմբերի կամ բնակիչների հետ, հասկանալ ընդհանուր տրամադրությունները և նվազեցնել բռնությունների հավանականությունը:

Դուք կքվեարկեք միայն այն պարագայում, եթե ձայները հավասար բաշխվեն: Եթե իրավիճակն այդպես դասավորվի, ապա Ձեր ձայնը կլինի որոշիչ վերջնական արդյունքի համար:

ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ

Դուք աշխատում եք քաղաքապետի հետ և պետք է օգնեք նրան նախապատրաստել նախնական հայտարարությունը: Գուցե անհրաժեշտ լինի հանդիպել առավել ծայրահեղական խմբերի հետ նախքան Խորհրդակցության մեկնարկը և փորձել բացատրել նրանց, թե որքան կարևոր է բոլորի համար ընդունելի լուծում գտնելը:

Խորհրդակցության մեկնարկից հետո Դուք պետք է օգնեք քաղաքապետին՝ հանդիպելով տարբեր խմբերի և բնակիչների հետ հասկանալ ընդհանուր տրամադրությունները և նվազեցնել բռնությունների հավանականությունը:

Դուք չեք քվեարկում:

ԿԱՅՔԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐՆԵՐ (2 ՄԱՍՆԱԿԻՑ)

Դուք պետք է հետևեք քննարկման ընթացքին և ապահովեք, որ մեկնաբանությունները չլինեն ռասիստական կամ վիրավորական: Ցանկացած նման մեկնաբանություն պետք է անմիջապես հեռացվի Խորհրդի կայքից: Նախքան Խորհրդակցության մեկնարկը տրված ժամանակը օգտագործեք սահմանելու համար, թե ինչպես եք որոշելու մեկնաբանությունների ընդունելի կամ անընդունելի լինելը: Միգուցե, օգտակար կլինի համառոտ ձեռնարկ կազմելը:

Դուք կարող եք նաև տեղադրել մեկնաբանություններ՝նախազգուշացնելով մասնակիցներին, որ իրենց օգտագործած լեզուն անընդունելի է, կամ խրախուսեք մասնակիցներին լինել ավելի քաղաքավարի և նրբանկատ քննարկման մյուս մասնակիցների նկատմամբ:

Դուք չեք քվեարկում:

ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԱՎԱՆԴԱՊԱՇՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(2 ԿԱՄ 3 ՄԱՍՆԱԿԻՑ)

Քաղաքի Խորհրդում դուք ներկայացնում եք Ավանդապաշտ կուսակցությունը և կտրականապես դեմ եք մզկիթի կառուցմանը: Դուք համարում եք, որ քաղաքին պատկանող հողը և Խորհրդի ռեսուրսները չպետք է ծախսվեն այնպիսի աղոթատեղիի վրա, որը չի հարգում ձեր երկրի և քաղաքի ավանդույթները: Դուք համարում եք, որ ներգաղթյալների ընտանիքների համար ձեր երկրում ապրելն արտոնություն է և, որ նրանք չպետք է պարտադրեն ապրելակերպի այլ ձևեր մի երկրում, որտեղ նրանք հյուր են:

Ձեր կուսակցության որոշ անդամներ ունեն խիստ հակամահմեդական դիրքորոշումներ և համարում են, որ նման վարքագիծ կարող էր դրսևորել միայն այդօրինակ բռնի կրոն

ունեցող համայնքը: Իրականում դուք կցանկանայիք նվազեցնել մահմեդականների թիվը ձեր քաղաքում, քանի որ համոզված եք, որ նրանք խարխլել են Սլիփվիլի ավանդական արժեքները: Դուք նաև համոզված եք, որ մզկիթը կվերածվի ահաբեկիչներ հավաքագրման կենտրոնի:

Դուք պետք է նախապատրաստեք նախնական հայտարարություն՝ ներկայացնելով ձեր դիրքորոշումը, որը կտեղադրվի կայքում խորհրդակցության մեկնակից առաջ: Պատրաստե՛ք հնարավորինս համառոտ տեքստ:

Ձեր անդամներից յուրաքանչյուրն ունի մեկ ձայնի իրավունք վերջանական որոշման քվեարկության ժամանակ:

ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(1 ԿԱՄ 2 ՄԱՍՆԱԿԻՑ)

Քաղաքի Խորհրդում դուք ներկայացնում եք Ժողովրդական կուսակցությունը: Դուք ի սկզբանե կողմ էիք մզկիթի կառուցմանը, քանի որ հասկանում եք, որ մահմեդական համայնքի առկայությունը շատ լավ է անդրադարձել քաղաքի տնտեսության վրա և չեք ցանկանում օտարել նրանց: Սակայն, բնակիչների բողոքները և վերջին շրջանում բռնության դրսևորումները ձեզ շատ են մտահոգում: Դուք նաև մտածում եք Խորհրդի հաջորդ ընտրություններում ձեր կուսակցության տեղերը պահելու մասին և ամենայն հավանականությամբ կսատարեք ամենա ոչ հակասական որոշմանը: Դուք պետք է նախապատրաստեք նախնական հայտարարություն՝ ներկայացնելով ձեր դիրքորոշումը, որը կտեղադրվի կայքում խորհրդակցության մեկնակից առաջ: Պատրաստեք հնարավորինս համառոտ տեքստ: Ձեր անդամներից յուրաքանչյուրը ունի մեկ ձայնի իրավունք վերջանական որոշման քվեարկության ժամանակ:

ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(1 ԿԱՄ 2 ՄԱՍՆԱԿԻՑ)

Քաղաքի Խորհրդում դուք ներկայացնում եք բազմազանության կուսակցությունը: Դուք համոզված եք, որ աշխարհի տարբեր ծայրերից Սլիփվիլ եկած ներգաղթյալների համեմատաբար մեծ մասը էապես հարստացրել է ձեր քաղաքի մշակույթը և հետաքրքիր դարձրել այն: Ըստ ձեզ՝ այն, որ քաղաքն այսքան երկար ժամանակ նրանցից շատերին հնարավորություն չի տվել հետևել իրենց հավատքին՝ արդար չէ: Դուք կցանկանայիք ավելի ակտիվ երկխոսության միտում տեսնել Սլիփվիլի տարբեր համայնքների միջև և ներդնում եք ձեր ջանքերը՝ փորձելով հանդարտեցնել բռնության ալիքը և հակադիր կողմերին ներգրավել երկխոսության մեջ: Դուք նաև տեսնում եք, որ այդ անբարեկարգ տարածքը բազմաթիվ խնդիրներ է առաջացնում քաղաքում, և որ ներկա պահին քաղաքի Խորհուրդը չունի անհրաժեշտ դրամական միջոցներ այն բարեկարգելու համար: Դուք պետք է նախապատրաստեք նախնական հայտարարություն,՝ ներկայացնելով ձեր դիրքորոշումը, որը կտեղադրվի կայքում խորհրդակցության մեկնակից առաջ: Պատրաստեք հնարավորինս համառոտ տեքստ: Ձեր անդամներից յուրաքանչյուրն ունի մեկ ձայնի իրավունք վերջանական որոշման քվեարկության ժամանակ:

«ԱՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ» ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ (2-4 ՄԱՍՆԱԿԻՑ)

Դուք մզկիթի կառուցմանը դեմ արտահայտվող հիմնական խմբերից մեկն եք: Ձեր միության անդամները Սլիփվիլի ավանդապաշտ (ոչ մահմեդական) համայնքի ներկայացուցիչներն են, և դուք համոզված եք, որ չափազանց կարևոր է պահպանել այն քաղաքի ավանդական տեսքը, որտեղ ապրում եք ողջ կյանքի ընթացքում: Այն տարածքը, որն առաջարկվում է տրամադրել մզկիթի կառուցմանը գտնվում է կենտրոնում և եթե մզկիթը կառուցվի, ապա տեսանելի կլինի քաղաքի բոլոր ծայրերից: Մասնավորապես՝ մզկիթը կարող է փակել քաղաքի կենտրոնական հրապարակից հիմնական եկեղեցու տեսարանը: Դուք գտնում եք, որ ձեր հարազատ քաղաքի տեսքն ամբողջովին փոխվում է մի համայնքի պատճառով, որն այստեղ բնակություն է հաստատել ընդամենը վերջերս: Դուք չեք հասկանում, թե ինչու այլ տեղերից ձեր երկիր եկած մարդիկ չեն կարող ապրել համաձայն գործող կանոնների:

Վերջին տարիների ընթացքում ձեր միության անդամների դիրքորոշումն աստիճանաբար դարձավ ավելի արմատական: Ձեր կազմակերպությանը մեղադրում են բացահայտ ռասիստական տեսակետներ ունենալու և փողոցներում տեղի ունեցող բռնությունների մասնակիցը լինելու մեջ: Դուք սերտ կապեր ունեք Խորհրդում ներկայացված Ավանդապաշտ կուսակցության հետ:

Դուք պետք է նախապատրաստեք նախնական հայտարարություն՝ ներկայացնելով ձեր դիրքորոշումը, որը կտեղադրվի կայքում Խորհրդակցության մեկնակից առաջ: Պատրաստեք հնարավորինս համառոտ տեքստ:

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԼԻՓՎԻԼՑԻՆԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ (2-4 ՄԱՍՆԱԿԻՑ)

Ձեր խումբը ստեղծվել է Սլիփվիլի երիտասարդների ամենացավոտ խնդիրներին անդրադառնալու համար: Դուք համարում եք, որ մզկիթի կառուցումը միաժամանակ կլուծի և՛ մահմեդական համայնքի պաշտամունքի վայրի հարցը, և՛ այն բազմաթիվ սոցիալական խնդիրները, որոնք առաջացել էին այդ տարածքն այսքան երկար ժամանակ անբարեկարգ և ամայի թողնելու պատճառով: Դուք կողմ եք մզկիթի կառուցմանը, բայց մտահոգված եք, որ եթե քաղաքային խորհուրդը ստիպված լինի իր ներդրումն անել շինարարության մեջ, ապա մյուս սոցիալական հարցերը կմնան չլուծված: Մասնավորապես, քաղաքի բյուջեից երիտասարդությանը հատկացվող գումարը վերջին 5 տարիների ընթացքում այնքան է նվազել, որ այլևս չի բավարարում քաղաքի կարիքները հոգալու համար:

Դուք պետք է նախապատրաստեք նախնական հայտարարություն՝ ներկայացնելով ձեր դիրքորոշումը (առավելագույնը 250 բառ), որը կտեղադրվի կայքում Խորհրդակցության մեկնակից առաջ:

«ՍԼԻՓՎԻԼԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ» ԱՆԴԱՄՆԵՐ *(2-4* ՄԱՍՆԱԿԻՑ*)*

Արդեն մի քանի տարի է, ինչ դուք դիմում եք քաղաքային խորհրդին, խնդրելով տրամադրել տարածք մզկիթ կառուցելու համար, սակայն միշտ մերժում եք ստանում՝ ֆինանսների բացակայության պատճառով: Ըստ ձեզ, այն որ մահմեդական համայնքից պահանջում են

ապահովել շինարարական ծախսերի 10%ը տնտեսական նման դժվարին իրավիճակում, և, հաշվի առնելով, որ քրիստոնեական համայնքի 11 եկեղեցիների , ծխականները շատ ավելի քիչ են, քան կլինեին մզկիթում՝ արդարացի չէ: Դուք կարծում եք, որ քաղաքի կյանքում ձեր համայնքի ներդրումը չի գնահատվում և ձեր համայնքի անդամներն անարդարացիորեն բախվում են խտրականության հետ իրենց կյանքի ամենատարբեր իրավիճակներում, և, որ մերժելով մզկիթի կառուցումը, խորհուրդը զրկում է ձեր համայնքի անդամներին իրենց հավատքը դավանելու հիմնարար իրավունքից:

Դուք գիտեք, որ ձեր միության որոշ անդամներ ունեն միության պաշտոնական դիրքորոշումից շատ ավելի ծայրահեղական տեսակետներ և անհանգստացած եք, որ որոշ մահմեդականներ բռնությամբ են պատասխանել իրենց համայնքի վրա հարձակումներին : Ձեզ մտահոգում է այն, որ եթե որոշումը փոխվի, ապա դա ավելի շատ կոտարի մահմեդական համայնքը և կարող է դառնալ միջհամայնքային բռնությունների նոր ալիքի պատճառ:

Դուք պետք է նախապատրաստեք նախնական հայտարարություն՝ ներկայացնելով ձեր դիրքորոշումը, որը կտեղադրվի կայքում խորհրդակցության մեկնակից առաջ: Պատրաստե՛ք հնարավորինս համառոտ տեքստ:

ՍԼԻՓՎԻԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Ձեզ անհանգստացնում է այն ընդհարումը, որը համակել է ողջ Սլիփվիլը: Դուք դեռ չգիտեք, թե դիրքորո շումներից որի կողմնակիցն եք. նախատեսում եք նախ ծանոթանալ հասարակական կազմակերպությունների և խորհրդում ներկայացված կուսակցությունների դիրքորոշումներին և դրանից հետո միայն կազմել սեփական կարծիք:

Դուք չեք կարող մեկնաբանություն թողնել խորհրդի կայքում նախքան խորհրդակցության բացվելը (և մեկնարկից 30 րոպեի ընթացքում), բայց կարող եք ծանոթանալ կայքում տեղադրված նախնական հայտարարություններին և հանդիպել այլ բնակիչների, ՀԿների և խորհրդում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչների հետ՝ նրանց փաստարկներին ծանոթանալու համար:

Մտածեք, թե ի՞նչ կցանկանայիք ասել հանրության համար խորհրդակցության բացվելուց հետո և հիշեք, որ մեկնաբանություններում բառերի քանակը չպետք է գերազանցի 150ը: Երբ բոլորը կգրեն իրենց մեկնաբանությունները, և եթե ժամանակը ների՝ կարող եք կատարել ևս մեկ գրառում:

Այս վարժության հիմքում ընկած է «Կողմնացույց» մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկում զետեղված «Սլիփվիլի մզկիթը» վարժությունը: www.coe.int/compass

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 4

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ՑԱՆԿԱՑԱԾ

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԵՍ ՍՏՈՐԵՎ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ՝ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

Սա 4 վարժությունից բաղկացած շարք է, որի արդյունքում կարելի է կազմակերպել ակցիա՝ ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների դեմ: Շարքի տարբեր վարժությունները կարող են անցկացվել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ՝ ձեռնարկի այլ վարժությունների հետ համադրվելով:

ԹԵՄԱՆԵՐ	Ռասիզմ և խտրականություն, քարոզարշավի ռազմավարություններ, Մարդու իրավունքներ
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	4
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	Ցանկացած
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	1, 2 և 3-րդ մասերի համար 60 և 45 րոպե տևողությամբ 3 սեսիա, քարոզարշավի անցկացման համար նույնպես ժամանակ է անհրաժեշտ

ՄԱՍ 1 (60 րոպե) հայացք պատմության ընթացքում ռոմաների (գնչուների) տառապանքներին, այդ թվում՝ նացիստների կողմից իրականացված Հոլոքոստի ժամանակ: Այս վարժությունը կարող է անցկացվել առանձին: Վարժության նպատակն է տեղեկացնել և բացատրել մասնակիցներին ռոմաների (գնչուների) դեմ ուղղված ատելության հիմքով հանցագործությունների մասին, որոնք այդպես էլ չեն ճանաչվել և շարունակում են հետևանքներ թողնել առ այսօր:

ՄԱՍ 2 (60 րոպե) նախատեսվում է պլանավորել ակցիա՝ ռոմաների (գնչուների) տառապանքների մասին հանրությանը իրազեկելու և նրանց համերաշխություն հայտնելու նպատակով: Այս հատվածը կարող է կիրառվել քարոզարշավի շրջանակներում իրականացվող որևէ վարժություն ծրագրելու համար, ինչպես նաև որպես ձեռնարկում ընդգրկված այլ վարժությունների շարունակություն:

ՄԱՍ 3-ը հենց բուն ակցիան է: Ցուցումները կազմում է խումբը:

ՄԱՍ 4-ը (45 րոպե) ակցիայի վարժության քննարկումն է: Ավելի ընդհանրացված տեսքով հարցերը կարող են օգտագործվել քարոզարշավի շրջանակներում ձեր խմբի կողմից իրականացված որևէ գործողություն վերլուծելու և գնահատելու համար:

ՄԱՍ 1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Բարձրացնել իրազեկման մակարդակը՝ նացիստների կողմից իրականացված Հոլոքոստի ռոմա զոհերի մասին և նպաստել ռոմաներին (գնչուներին) համերաշխություն հայտնելու մշակույթի ձևավորմանը • Գտնել արմատացած նախապաշարմունքի և ատելության խոսքի մի ծայրահեղ օրինակ և ուսումնասիրել դրա հետևանքներն այսօր • Զարգացնել ռոմաների (գնչուների) նկատմամբ համերաշխության զգացումը և խրախուսել մասնակիցներին գործել ռասիզմի և խտրականության դեմ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Ֆլիպչարտներ և մարկերներ • Առձեռն նյութերի օրինակներ, «Հ-ի հետապնդման և հալածանքների համառոտ պատմություն» (կամընտրական)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախքան վարժությունը սկսելը՝ ասե՛ք մասնակիցներին, որ պատրաստվում եք խոսել Հոլոքոստի մասին և առանձին խոսեք բոլոր նրանց հետ, ովքեր ինչոր պատճառով կդժվարանան դա անել • Նախապատրաստե՛ք առձեռն նյութերի օրինակներ. յուրաքանչյուր փոքր խմբին մեկական օրինակ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Խնդրե՛ք մասնակիցներին կազմել 2-3 հոգանոց խմբեր այն մարդկանց հետ, ում հետ իրենց ինքնությունն ինչ-որ կերպ համընկնում է: Սա կարող է կապված լինել էթնիկ կամ ազգային պատկանելության հետ, ինչպես նաև պայմանավորվել սոցիալական կամ կրոնական խմբերի անդամակցությամբ (կամ նույնիսկ միևնույն ֆուտբոլային թիմի երկրպագու լինելով): Ձևավորված փոքր խմբերին հատկացրե՛ք 10 րոպե՝ քննարկելու համար այս ընդհանուր ինքնության հետ կապված իրենց մտքերն ու զգացողությունները:
2. Բաժանե՛ք մասնակիցներին «Հ-ի հետապնդման և հալածանքների համառոտ պատմություն» առձեռն նյութը, կամ ներկայացրեք նրանց այն առանձնահատուկ դաժան վերաբերմունքի որոշ փաստեր, որին ենթարկվել է ռոմա ժողովուրդը: Մի՛ ասեք նրանց թե կոնկրետ, որ ժողովրդի մասին է խոսքը:
3. Հակիրճ քննարկե՛ք նրանց արձագանքները՝ հնարավորության դեպքում առանց մասնակիցներին իրենց արդեն ձևավորված խմբերից տեղափոխելու: Այնուհետև, խնդրե՛ք, որպեսզի խմբերից յուրաքանչյուրը մեկ այլ խմբի հետ 15 րոպեի ընթացքում քննարկի հետևյալ հարցերը՝
   – Ի՞նչ կզգային իրենք, եթե ոչ վաղ անցյալում «իրենց» ժողովուրդը դառնար նման վերաբերմունքի թիրախ: (Խնդրե՛ք մասնակիցներին, որպեսզի քննարկեն այն խմբի տեսանկյունից, որը ձևավորել էին կետ 1-ում:)

- Ո՞րը կլինի նման դաժանության միջով անցած համայնքի համար աեենաբարդ խնդիրը:
- Իսկ ի՞նչ կլիներ, եթե այսօր գտնվեին Հոլոքոստը ժխտող մարդիկ: Ի՞նչն էր կարող ստիպել նրանց ժխտել այս փաստերը:

4. Բոլոր մասնակիցներին նորից միավորե՛ք մեծ խմբի մեջ և խնդրե՛ք, որպեսզի պատմեն իրենց քննարկման մասին: Այնուհետև հարցրե՛ք, կարո՞ղ են արդյոք նրանք գուշակել, թե որ ժողովրդի մասին էր առձեռն նյութի պատմությունը: Եթե նրանք չգուշակեն, ասացե՛ք, որ ռոմաների (գնչուների) մասին էր և հարցրե՛ք, թե ի՞նչ գիտեն նրանք ռոմաների (գնչուների) այսօրվա կյանքի մասին: Ինչպիսի՞ վերաբերմունքի են նրանք արժանանում և որքանո՞վ է հանրությունը տեղյակ ոչ վաղ անցյալում նրանց կրած տառապանքների մասին: Ինչպե՞ս է անդրադառնում ատելության խոսքը նրանց վրա այսօր:
5. Պատմե՛ք նրանց, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում եղել են գործեր, որոնց քննությունը ցույց է տվել այս խմբի անդամների՝ մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներ Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում: Հիշեցրե՛ք մասնակիցներին, որ և՛ լրատվամիջոցները, և՛ բնակչությունն, ընդհանուր առմամբ, չափազանց անհանդուրժողական վերաբերմունք են ցուցաբերում ռոմաների (գնչուների) նկատմամբ, և վերջիններս հաճախ դառնում են ատելության հիմքով հանցագործությունների և վիրավորանքների թիրախ: Հարցրե՛ք, արդյո՞ք նրանք երբևէ բախվել են նման օրինակների հետ իրենց «իրական կյանքում» կամ համացանցում:
6. Եթե դուք այս վարժությունն անցկացնում եք որպես քարոզարշավի ակցիաների նախապատրաստական վարժություն, ապա պատմե՛ք մասնակիցներին «Dosta!» («Բավական է») շարժման մասին: Այնուհետև տեղեկացրե՛ք նրանց, որ հաջորդ սեսիաի ընթացքում քննարկելու եք, թե ինչ գործողությունների կարող են դիմել մասնակիցները ռոմա ժողովրդի նկատմամբ խտրականության դեմ պայքարելու համար:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Վարժության մեջ ներառված ծայրահեղ բնույթի բովանդակությունը կարող է խմբի որոշ մասնակիցների համար չափազանց զգայուն լինել: Բնականաբար, եթե խմբում կան ռոմաներ, դուք պետք է նախապես նախազգուշացնեք նրանց և պատրաստ լինեք աջակցելու, եթե լինի դրա կարիքը: Միևնույն ժամանակ, քանի որ Հոլոքոստի զոհ են դարձել բազմաթիվ խմբեր, թեման կարող է զգայուն լինել նաև այլ խմբերի ներկայացուցիչների համար: Սա միգուցե առավելապես վերաբերում է հրեաներին, քանի որ նրանց տառապանքների ծավալը քաջ հայտնի է: Նախապես ճշտե՛ք խմբի կազմը և փորձե՛ք հասկանալ, թե մասնակիցներն ինչպես կարձագանքեն վարժությանը:
- Մասնակիցներին կարող եք տրամադրել նաև հավելյալ տեղեկություններ նացիստական ռեժիմի թիրախը դարձած այլ խմբերի մասին կամ խնդրեք, որպեսզի մասնակիցներն իրենք թվարկեն: Այդ խմբերի թվին են պատկանում՝

- լեհերը (սպանվել են շուրջ 2.5 միլիոն էթնիկ լեհեր),
- սլավոնական այլ ազգեր,
- Խորհրդային միության քաղաքացիները (մասնավորապես՝ ռազմագերիներ),
- «ոչեվրոպացիները». մասնավորապես՝ աֆրիկյան կամ ասիական ծագման ժողովուրդները,
- հոգեկան հիվանդություններից տառապողները կամ մտավոր խնդիրներ ունեցողները,
- խուլ կամ ֆիզիկական այլ հաշմանդամություն ունեցողները,
- նույնասեռականները և տրանսսեքսուալները,
- քաղաքական հակառակորդները, մասնավորապես՝ կոմունիստները և ձախականները,
- կրոնական «այլախոհները», մասնավորապես՝ Եհովայի վկաները:

(Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Holocaust_victims)

- Քննարկումը վարելիս դուք պետք է դրսևորեք առավելագույն նրբանկատություն և ճկունություն և չպետք է շտապեցնեք խմբին, եթե զգում եք, որ մասնակիցներին ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ իրենց զգացմունքներն արտահայտելու համար:
- Փոքր խմբերում աշխատանքի առումով ճիշտ կլինի, եթե նախօրոք մտածեք որոշ մասնակիցների համար հնարավոր բարդությունների մասին: Եթե իրավիճակը խնդրահարույց է, ապա միգուցե ավելի դյուրին կլինի, եթե դուք ինքներդ բաժանեք մասնակիցներին՝ ըստ «հանձնարարված» ինքնությունների, օրինակ՝ «կանանց» և «տղամարդկանց» խմբերի, կամ ըստ նախընտրելի սպորտաձևի (ֆուտբոլ, թենիս), կամ ըստ ուսումնասիրվող առարկաների:
- Ստորև ներկայացվող ռոմաների (գնչուների) ցեղասպանության համառոտ ժամանակագրության մեջ «ռոմա» կամ «ռոմաներ» բառերը փոխարինվել են X-ով: Այս նյութն օգտագործելիս կարող եք գործածել «խումբ» բառը կամ խնդրել մասնակիցներին, որպեսզի պատկերացնեն, որ դա իրենց խումբն է:
- Մասնակիցներին, իրենց համար կարևոր ինքնություն ընտրելու առաջադրանքի նպատակն այն է, որ նրանք փորձեն պատկերացնել, թե ինչ է նշանակում, երբ թիրախավորում են հենց իրենց խումբը: Սակայն, եթե ռոմաների (գնչուների) նկատմամբ մասնակիցների նախապաշարմունքները շատ արմատացած են, նրանք միևնույն է դժվարությամբ կընկալեն այս խմբի խնդիրները: Եթե նման իրավիճակ ստեղծվի, ապա դուք անպայման պետք է փորձեք հանգուցալուծել այն: Մաս 1-ի 4-րդ կետի համար հատկացրեք հնարավորինս շատ ժամանակ, որպեսզի մասնակիցները կարողանան քննարկել իրենց բոլոր մտահոգությունները: Տեղեկացրե՛ք նրանց, որ ըստ որոշ գնահատականների Հոլոքոստի զոհ են դարձել Եվրոպայի տարածքում բնակվող ռոմաների (գնչուների) 75%-80%ը, իսկ որոշ երկրներում՝ գրեթե 90%-ը: Կարող եք հարցնել նրանց, ի՞նչ կզգային իրենք, եթե կորցնեին

իրենց ժողովրդի 90%-ը, կամ հենց այս՝ աշխատանքային խմբի, 90%ը(այդ դեպքում 20 հոգանոց խմբից կենդանի կմնային միայն 2ը):

- Անհրաժեշտ կլինի մասնակիցներին բացատրել նաև, թե ինչ է ատելության հիմքով հանցագործությունը և փորձել հասկանալ դրանց կապը ատելության խոսքի հետ՝ իրական կյանքում և առցանց: «Ատելության հիմքով հանցագործությունները» հանցագործություններ են անհատների կամ խմբերի նկատմամբ, որոնց համար հիմք է հանդիսացել ատելությունն այդ ամբողջ խմբի նկատմամբ: Դուք կարող եք ուսումնասիրել, թե ինչպես կարող են ատելության «թեթև» արտահայտումները և ռասայական պատկանելությամբ պայմանավորված վիրավորական մականունները հեշտությամբ վերածել ավելի ծայրահեղ ձևերի, ստեղծել մոլորեցնող տպավորություն և արդարացնել հանցագործությունները:
- «Dosta» բառը ռոմաների (գնչուների) լեզվով նշանակում է «բավական է»: **«Dosta»ն՝ իրազեկման բարձրացման քարոզարշավ է, որի նպատակն է ավելի սերտ հարաբերություններ հաստատել ոչ ռոմա և ռոմա քաղաքացիների միջև: Քարոզարշավի մասին կարող եք տեղեկանալ այստեղ՝ http://dosta.org.** Լավ կլինի, եթե կարողանաք ապահովել համացանցից օգտվելու հնարավորություն, որպեսզի մասնակիցները կարողանան որոշ ժամանակ տրամադրել այս կայքի նյութերին ծանոթանալու համար:
- Կարող եք ընթերցել «Հիշելու իրավունքը», որն իրենից ներկայացնում է երիտասարդների կողմից մշակված ձեռնարկ ռոմաների (գնչուների) եղեռնի մասին (https://www.coe.int/en/web/youth-roma/right-to-remember) և/կամ՝ այցելել հետևյալ կայքերը, որոնք անդրադառնում են ռոմաների (գնչուների) եղեռնին.

  https://www.sintiundroma.org/en/
  https://www.coe.int/en/web/roma-genocide
  http://vhaonline.usc.edu/login
  http://isurvived.org/TOC-I.html#I-7_Romanies
  www.preventgenocide.org/edu/pastgenocides/nazi/parajmos/resources/

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տվեք մասնակիցներին որոշ ժամանակ քննարկելու համար ձեռք բերված տեղեկությունների և բուն վարժության արդյունքում առաջացած իրենց զգացողությունները: Կարող եք սկսել մեկ բառով իրենց զգացողությունները հերթով նկարագրելու առաջադրանքից:

- Վարժության արդյունքում արդյոք ձեռք եք բերել նոր տեղեկություններ կամ ձևավորել ավելի լավ պատկերացում խնդրի շուրջ:
- Վարժությունը փոխե՞ց ձեր վերաբերմունքը ռոմաների (գնչուների) նկատմամբ:
- Ինչ եք կարծում, ինչո՞ւ է այդքան քիչ հայտնի նացիստական ռեժիմի կողմից ռոմաներին (գնչուներին) պատճառած տառապանքների մասին:

- Ի՞նչ եք կարծում, եթե դրա մասին ավելի շատ իմանային, արդյո՞ք դա ռոմաների (գնչուների) նկատմամբ վերաբերմունքն այսօր:
- Ի՞նչ կարող եք անել դուք այս տեղեկությունները տարածելու համար:
- Ի՞նչ դասեր մենք քաղեցինք և քաղեցի՞նք արդյոք նացիստների իրականացրած հոլոքոստից: Կարող եք բացատրել, թե ինչպե՞ս եղավ, որ ատելության խոսքն այնքան մեծ տարածում գտավ, որ ահռելի քանակությամբ մարդկանց դեմ գործեցին ահավոր հանցագործություններ: Կարո՞ղ եք զուգահեռներ անցկացնել ատելության խոսքի առցանց և անցանց դրսևորումների հետ այսօրվա իրականության մեջ:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Կարող եք կիրառել այս վարժությունը Հոլոքոստի զոհ դարձած մյուս այն խմբերը դիտարկելու համար, որոնց տառապանքների մասին հանրությունն այդքան տեղեկացված չէ: Այդ խմբերից մի քանիսը թվարկված են Խորհուրդներ վարողներին բաժնում:

ՄԱՍ 2. ԱԿՑԻԱՅԻ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Վարժության այս հատվածի հիմքում ընկած է «Կողմնացույց» ձեռնարկի՝ 3-րդ գլուխը, որի վերնագիրն է «Դիմենք գործողությունների»: Ավելի մանրամասն տեղեկություններին կարող եք ծանոթանալ միևնույն գլխի «Արդյունքներ» ենթավերնագիրը կրող բաժնում: Ձեռնարկին կարող եք ծանոթանալ այստեղ՝ www.coe.int/compass.

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Նպաստել մասնակիցների կողմից արդյունավետ գործողությունների պլանավորմանը • Մտածել, թե ինչպես կարելի է օգտագործել համացանցը որպես քարոզչական գործիք • Մշակել գործողությունների պլան, որը պետք է կիրառի խումբը:
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Սխեմայի օրինակներ (կամընտրական) • Ֆլիպչարտներ և մարկերներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք սխեմայի օրինակներ կամ մեծ թղթի վրա նկարե՛ք դատարկ սխեմա

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Բացատրե՛ք, որ խումբը պետք է պլանավորի գործողություն, որի նպատակն է անդրադառնալ ռոմաների (գնչուների) (կամ որևէ այլ խմբի) նկատմամբ ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրին: Հիշեցրե՛ք նրանց ատելության խոսքի առցանց դրսևորումների ծավալի և ազդեցության մասին: Ասե՛ք մասնակիցներին, որ օրինակներ բերեն իրենց անձնական փորձից:
2. Կազմակերպե՛ք մտքերի գրոհ՝ ատելության խոսքի առցանց դրսևորումների հետ կապված որոշ խնդիրներ վերհանելու համար, մասնավորապես կենտրոնանալով այն խնդիրների վրա, որոնց շուրջ նրանք կկարողանան աշխատել: Հուշե՛ք նրանց, որպեսզի դիտարկեն ատելության խոսքի տարբեր աստիճանի դրսևորումներ՝ թեթև վիրավորանքից մինչև հրահրում, որը կարող է դառնալ ատելության հիմքով հանցագործության պատճառ: Հուշե՛ք նրանց նաև, որպեսզի դիտարկեն տարբեր ֆորումներ և դերակատարների, ովքեր նպաստում են ատելության խոսքի առցանց դրսևորումների ծավալի աճին: Գրե՛ք առաջարկությունները մեծ թղթերի վրա:
3. Բացատրե՛ք, որ նրանք պետք է ընտրեն իրենց «լուծումներից» մեկն՝ աշխատանքը շարունակելու համար: Հիշեցրե՛ք, որ կարևոր չէ, թե կոնկրետ որ լուծումն են ընտրում, բայց այն պետք է լինի իրականանալի և չպետք է լինի չափազանց հավակնոտ:
4. Քննարկե՛ք ամենից շատ ձայներ հավաքած լուծումները և փորձե՛ք համաձայնության գալ այն լուծման շուրջ, որի ուղղությամբ բոլորն ուրախությամբ կշարունակեն աշխատանքը:
5. Բաժանե՛ք էջ 65-ի սխեման կամ օգտագործե՛ք դրա՝ վատմանի վրա նկարված, դատարկ տարբերակը: Հետևելով էջ 65-ի սխեմայի վերնագրերին՝ մասնակիցների հետ հերթով լրացրե՛ք դատարկ վանդակները: Հավաստիացեք, որ՝
   - այն գործողությունը, որը մասնակիցները որոշել են իրականացնել կնպաստի խնդրի լուծմանը,
   - գործողությունն իրատեսական է՝ հաշվի առնելով խմբի ռեսուրսները և այն խոչընդոտները, որոնց հետ նրանք կարող են բախվել,
   - «լուծումն» այնքանով հստակ է, որ նրանք կկարողանան հասկանալ հասել են, թե ոչ նախանշված նպատակին:
6. Գծե՛ք Որոշումների Թերթիկ, որպեսզի բոլորը տեղյակ լինեն իրենց պարտականություններից և իրականացման ժամկետներից: Նմուշը կարող եք գտնել «Կողմնացույց»-ի «Դիմենք գործողությունների» գլխի ամենավերջում՝ www.coe.int/compass.
7. Վերլուծության և գնահատման միջոցով հավաստիացե՛ք, որ բոլորին գոհացնում է և՛ ընթացքը, և՛ արդյունքը, և որ նրանք պատրաստ են կիրառել պլանը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Որպեսզի օգնեք խմբին կենտրոնանալ խնդրի ընտրության վրա, որի շուրջ պետք է աշխատեն, կարող եք անցկացնել «Արմատներ և ճյուղեր» վարժությունը, որը կօգնի նրանց պետկերացում կազմել, թե ինչպես են փոխկապակցված որոշ խնդիրներ: Արդյունքում, մասնակիցները կկարողանան կազմել գործողությունների առավել հետևողական պլան:
- Աշխատեք հնարավորինս շատ ազատություն տալ խմբին և՛ խնդրի ընտրության, և՛ սխեմայի վրա աշխատելու փուլերում: Գործողությունը շատ ավելի արդյունավետ կլինի, եթե նրանք համարեն, որ պլանն իրենք ինքնուրույն են մշակել: Միևնույն ժամանակ, հավաստիացեք, որ հաշվի եք առել գործողությունն իրականացնելու հետ առնչություն ունեցող բոլոր հնարավոր բարդությունները և մտածեք, թե ինչպես կարող եք դրանք նվազեցնել:
- Հնարավորության դեպքում, խիստ ցանկալի կլինի, եթե պլանավորման փուլում՝ մինչև բուն գործողությունն իրականացնելը, փորձեք ներգրավել ռոմա (գնչու) համայնքի ներկայացուցիչների, կամ եթե ձեր ընտրած թիրախային խումբն այլ է, համապատասխանաբար այդ խմբի ներկայացուցիչների: Եթե հնարավորություն ունեք հրավիրելու որևէ մեկին, ով կկարողանա զրուցել խմբի հետ, ապա դա վստահաբար ավելի իրական կդարձնի ողջ գործընթացը և բացի այդ, խոսնակը կարող է նաև հետաքրքիր գաղափարների աղբյուր դառնալ: Նվազագույնը, որ պետք է անեք, դա համոզվելն է, որ ձեր խմբի իրականացրած ակցիան լավ կընդունվի համայնքի կողմից: Բացի այդ, կարող եք կապվել տեղական այն կազմակերպության հետ, որն աշխատում է խնդրո առարկա խմբի հետ:
- Եթե սխեմայով աշխատելիս չեք ուզում մասնակիցներին տալ այն առաջարկությունները, որոնք արդեն ընդգրկված են վանդակներում, կարող եք օգտագործել «Կողմնացույց»-ի «Դիմենք գործողությունների» գլխում ընդգրկված ավելի ընդհանրական տարբերակը, կամ ստեղծեք ձեր սեփական տարբերակը ֆլիպչարտի վրա: Եթե մասնակիցները դժվարանան առաջարկել ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրի լուծման ուղիներ, կարող եք օգտագործել «Քարոզարշավի ռազմավարություններ» բաժնում զետեղված առաջարկությունները:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ի՞նչ եք մտածում և զգում ձեր կազմած գործողության պլանի կապակցությամբ:
- Արդյո՞ք բոլորն են իրենց ներգրավված զգում և, եթե այո, ապա գոհացնո՞ւմ են արդյոք բոլորին այն դերերը, որ ստանձնել են:
- Կա արդյո՞ք որևէ այլ բան, որ պետք է հաշվի առնել կամ որի մասին պետք է տեղյակ լինել գործողությունն իրականացնելուց առաջ:
- Ինչպե՞ս հասկանանք, «հաջողված» էր, թե՞ ոչ մեր գործողությունը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Բնականաբար, այս վարժությունը կարելի է կիրառել նաև ատելության խոսքի թիրախ հանդիսացող այլ խմբերին անդրադառնալու համար: Բուն գործողությունը պլանավորելուց առաջ ցանկալի է, անցկացնել ներածական վարժություն, որը կօգնի մասնակիցներին ավելի լավ հասկանալ խնդիրը և կշահագրգռի նրանց աշխատել այն խնդիրների վրա, որոնք առանձնացրել են: Կարող եք ընտրել ձեռնարկում ընդգրկված բազմաթիվ այլ վարժություններից մեկը, ինչպես օրինակ՝

- «Փոխում ենք խաղի կանոնները» կարող է կիրառվել գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի խնդրին անդրադառնալու նպատակով,
- «Վատագույն տարբերակը» կարող է կիրառվել հոմոֆոբիայի խնդրին անդրադառնալու նպատակով,
- «Ցանցային հածակում» կարող է կիրառվել ապաստան հայցողների և ներգաղթյալների ընտանիքների նկատմամբ ատելության խոսքին անդրադառնալու նպատակով:

Ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրին անդրադառնալ, անշուշտ, կարելի է ինչպես առցանց, այնպես էլ՝ ոչ վիրտուալ գործողությունների միջոցով: Իրականացվելիք գործողությունները քննարկելիս կարող եք առաջարկել, որպեսզի խումբն ի սկզբանե դիտարկի միայն առցանց գործողությունների տարբերակը:

ՄԱՍ 3. ԲՈՒՆ ԱԿՑԻԱՆ

ՄԱՍ 4. ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ

- Չափազանց կարևոր է վերլուծել և գնահատել գործողությունն այն ավարտելուց հետո, ինչպես նաև այդ գործողության նախապատրաստական փուլը: Եթե գործը վերաբերում է շարունակական, ընթացքի մեջ գտնվող քարոզարշավին, ապա գործընթացը վերլուծելու և գնահատելու համար պետք է ժամանակ տրամադրեք դրա սկսվելուց կարճ ժամանակ անց: Սա կարևոր է, քանի որ մեկանգամյա ակցիաները սովորաբար մեծ ազդեցություն չեն ունենում, ինչից ելնելով խումբը կարող է հիասթափվել: Օգտագործեք այս սեսիան փարատելու համար մասնակիցների մտահոգությունները, որ ընդհանրապես «չարժեր» անել այդ ակցիան կամ որ «այն վատ անցավ»: Հիշեցրե՛ք նրանց, որ քարոզարշավները սովորաբար ենթադրում են բազմաթիվ ակցիաներ և գործողություններ, և դրանցից յուրաքանչյուրը կարևոր է վերաբերմունքի և վարվելակերպի փոփոխության գործընթացում:

- Ամրագրե՛ք վերլուծության արդյունքում նրանց եզրակացությունները, որպես քաղված դասեր ապագա գործողությունները պլանավորելու համար:
- Սկսե՛ք սեսիան, խնդրելով մասնակիցներին նկարագրել իրենց զգացողությունները ակցիայի օրվա ավարտից հետո: Մասնակիցները հերթով համառոտ կարող են կիսվել իրենց կարծիքներով:
- Բաժանե՛ք մասնակիցներին 45 հոգանոց խմբերի և հղե՛ք նրանց հետևյալ հարցերը, փոքր խմբերում քննարկելու համար.
  - Ի՞նչն, ըստ ձեզ, լավ անցավ:
  - Կա՞ր արդյոք բարդ կամ անսպասելի որևէ բան:
  - Ըստ ձեզ՝ որո՞նք են ակցիայի հիմնական ձեռքբերումները: Արդյոք դրանք համապատասխանու՞մ են ձեր կողմից նախանշված նպատակներին:
  - Ի՞նչ եք կարծում, կա՞ն արդյոք դասեր, որ քաղեցիք, որոնք օգտակար կլինեն հետագա գործողությունների պլանավորման համար:
- Նորից միացրե՛ք խումբը և քննարկե՛ք հարցերին տրված տարբեր պատասխանները: Ավարտե՛ք սեսիան գործընթացի մասին մի քանի ընդհանուր եզրահանգումներով՝
  - Դուք գո՞հ եք գործողությունը պլանավորելու և իրականացնելու փուլերում ձեր կատարած աշխատանքից:
  - Հետագա գործողությունները պլանավորելիս (ցանկացած թեմայով), ի՞նչը կհամարեիք հիմնական քննարկվելիք հարցը:
  - Որո՞նք էին անձնապես ձեզ համար ամենակարևոր արդյունքները: Արդյո՞ք ձեր տեսակետները կամ վերաբերմունքը ենթարկվեցին որևէ փոփոխության:
  - Ի՞նչ եք կարծում, ինչպես կարելի է շարունակել ձեր նախաձեռնած ակցիան: Կցանկանայի՞ք փորձել:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ (ՀԵՏԱԳԱ) ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խրախուսե՛ք խմբին շարունակելու աշխատել իրենց իսկ կողմից հայտնաբերված խնդիրների վրա: Նրանք կարող են օգտագործել նաև այլ խնդիրներ 2-րդ մասի սկզբում ներկայացված ցանկից կամ փորձել այլ մոտեցումներ ընտրված խնդիրների լուծման համար: Այս գործընթացի հիմքը կարող է օգտակար լինել այլ գործընթացների համար և մոտիվացնել ավելին անելու համար:

Մասնակիցները կարող են կապվել նաև այլ խմբերի հետ, ներառյալ՝ տարբեր երկրների խմբերը, և պլանավորել արդեն իսկ սկսած աշխատանքի շարունակությունը:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Հ-Ի ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱԼԱԾԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1890	Գերմանիայում անցկացվում է համաժողով «Հ տականքը» խորագրով: Ձինվորականներին շնորհվում է լիազորություն՝ վերահսկել Հ-երի տեղաշարժը:
1909	Անցկացվում է«Հ-երի հարցը» համաժողով: Առաջարկվում է բոլոր Հ-երի համար կիրառել ճանաչելի տարբերանշաններ:
1920	Երկու գիտնականներ ներկայացնում են «արժանի չեն ապրել» գաղափարը՝ առաջարկելով ստերիլիզացնել և ոչնչացնել Հ-երին որպես ժողովուրդ:
1922	(1920-ականների ողջ ընթացքում) Գերմանիայի տարածքում բնակվող բոլոր Հ-երին լուսանկարում են և վերցնում նրանց մատնահետքերը:
1926	Ընդունվում է օրենք «Հ ժանտախտը» վերահսկելու մասին: (Նման վարվելակերպը Սահմանադրության դրույթների ակնհայտ ոտնահարում էր:)
1927	Բավարիայում ստեղծվում են Հ-երի համար հատուկ ճամբարներ: Այդ Ճամբարներ են տեղափոխում ութ հազար Հ:
1928	Բոլոր Հ-երը գտնվում են ոստիկանության մշտական վերահսկողության ներքո: Մի պրոֆեսոր հրատարակում է հոդված, որում պնդում է, որ «հենց Հ-երն են օտար արյուն ներմուծել Եվրոպա»: Հ-երի համար ստեղծվում են նոր համակենտրոնացման ճամբարներ:
1934	Հ-երին ենթարկում են բռնի ստերիլիզացիայի՝ սրսկումների և կրտելու միջոցով: Այնուհետև ուղարկում են Դահաուի, Դիզելշտրասեի, Զաքսենհաուզենի և այլ վայրերի ճամբարներ: Այս նույն տարվա ընթացքում ընդունված երկու օրենքի համաձայն գերմանացիներին արգելվում է ամուսնանալ «հրեաների, Հ-երի և սևամորթների հետ»:
1938	Հունիսի 12-ից 18-ն ընկած ժամանակահատվածում Գերմանիայի և Ավստրիայի ողջ տարածքում հարյուրավոր Հ-եր ձերբակալվում են, ծեծի ենթարկվում և բանտարկվում: Հ-երն առաջին թիրախային խումբն էին, որին արգելվեց հաճախել դպրոցներ:
1939	Ռասայական մաքրության գրասենյակը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում էր, որ «բոլոր Հ-երին պետք է վերաբերվել որպես ժառանգաբար հիվանդների. միակ լուծումը ոչնչացումն է: (Հետևաբար, նպատակը՝ բնակչության այս արատավոր տարրի առանց վարանման ոչնչացումն է)».
1940	Հոլոքոստի առաջին մասայական ցեղասպանությունը. 250 Հ երեխաներ օգտագործվում են որպես փորձակենդանի՝ Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարում ցիանիդի գազի բյուրեղների փորձարկման համար: Նույն տարում Հ-երին արգելվում է աշխատել:
1941	Հուլիսին գործարկվում է «սպանել բոլոր հրեաներին, Հ-երին և հոգեկան և մտավոր հիվանդներին» նացիստների «Վերջնական լուծում» գործողությունը: Սկսվում է Հոլոքոստը: Դեկտեմբերի 24-ին Ղրիմում մեկ գիշերվա ընթացքում սպանվում է ութ հարյուր Հ:

1944	Օգոստոսի 1-ին՝ ԱուշվիցԲիրկենաու համակենտրոնացման ճամբարում մասայաբար՝ գազով թունավորելու և ողջակիզելու միջոցով սպանվել է 4,000 Հ:
1945	Պատերազմի ավարտին Հ բնակչության 70-80%-ը ոչնչացվել էր նացիստների կողմից: Որևէ Հ-ի չէին կանչել վկայություններ տալու Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, և որևէ մեկը վկայություններ չի տվել նրանց անունից: Հ ժողովուրդը պատերազմական հանցագործությունների դիմաց չի ստացել որևէ փոխհատուցում:
1950	Գերմանական կառավարության բազմաթիվ հայտարարություններից առաջինն առ այն, որ նրանք Հ ժողովրդին որևէ բան պարտք չեն՝ պատերազմական հանցագործությունների համար փոխհատուցման առումով:
1992	Գերմանիան Ռումինիային է վերադարձնում Հ ապաստան հայցողներին 21 միլիոն դոլլարի դիմաց, և նոյեմբերի 1-ին սկսում է նրանց ձեռնաշղթաներով հետ ուղարկել: Հ-երից ոմանք վերադառնալուն գերադասում են ինքնասպանությունը: Գերմանական լրատվական գործակալություններից մեկը դիմում է արևմտյան լրատվամիջոցներին՝ խնդրելով խուսափել «արտաքսում» բառից, քանի որ այդ բառն ունի «տհաճ պատմական ասոցիացիաներ»:

Յան Հանքոքի՝ ռոմաների (գնչուների) ցեղասպանության համառոտ ժամանակագրության խմբագրված տարբերակ: Վարժությունը մշակվել է «Կողմնացույց» մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկում (Եվրոպայի խորհուրդ, 2012) ընդգրկված "Dosta!" վարժության հիման վրա: www.coe.int/compass

NO HATE SPEECH MOVEMENT

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Ո՞Ր ԽՆԴԻՐՆ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԼՈՒԾԵԼ:

- Մարդիկ տեղեկացված չեն ռոմաների (գնչուների) ցեղասպանության մասին
- Ռոմաների (գնչուների) մասին գոյություն ունեցող կարծրատիպեր
- Ռոմաների (գնչուների) ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչված չէ
- Կրթական համակարգը անտեսում է Հոլոքոստի ռոմա զոհերին
- Շատ քչերն են ստացել որևէ փոխհատուցում
- Նրանք իրենց զգում են վտարված և մարգինալացված

Ո՞ՐՆ Է ՁԵՐ ԹԻՐԱԽ ԼՍԱՐԱՆԸ:

- Մեր համայնքի անդամները
- Երիտասարդները
- Մեր պետության քաղաքական գործիչները
- Տեղական դպրոցների ուսուցիչները
- Հոլոքոստը վերապրածները
- Ռոմա (երիտասարդները)

Ի՞ՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔ ՈՒՆԵՔ:

- Ռոմաների (գնչուների) ցեղասպանության ճանաչում
- Ավելի ճիշտ ըմբռնում և հանդուրժողականություն
- Հոլոքոստի ռոմա զոհերի հուշահամալիր
- Ռոմաների (գնչուների) Հոլոքոստի մասին դպրոցական միջոցառում
- Առնվազն մեկ հաջողությամբ ավարտված փոխհատուցման գործ
- Ռոմա (գնչուական) համայնքի երիտասարդների հետ կապերի հաստատում

ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

- Նրանց կներկայացվեն ապացույցներ
- Նրանք կտեղեկանան ռոմաների (գնչուների) տեսակետին
- Համապետական ճնշում և հրապարակայնացում
- Դպրոցներում երեխաների կողմից եկող պահանջներ/հարցեր
- Փոխհատուցում ստանալու համար պաշտոնական հայցադիմումներ
- Միմյանց սովորույթների ու հետաքրքրությունների մասին ավելի ամբողջական տեղեկություն

Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՁԵՐ ԼՍԱՐԱՆԻ ՎՐԱ ԱԶԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

- Գրելու եք հոդված և կազմակերպելու եք հանրային միջոցառում
- Կենդանի գրադարան՝ ռոմա (գնչուական) համայնքի ներկայացուցիչների հետ
- Օգտագործելու եք կապերը տեղական լրատվամիջոցներում. կազմակերպելու եք ստորագրահավաք առնվազն 1,000 անուններով
- Իրազեկելու եք համայնքի երիտասարդներին
- Իրազեկելու եք համայնքի անդամներին իրենց պատկանող փոխհատոցման մասին, խնդրանքների հետ կապված օգնություն եք ցուցաբերելու
- Համատեղ մշակութային միջոցառում

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 3

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ 15+

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60’

ՓՈԽՈՒՄ ԵՆՔ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մասնակիցները ծանոթանում են «Ո՛չ ատելության խոսքին» քարոզարշավին և պատրաստում առցանց խաղերում սեքսիզմի դեմ «փոքր քարոզարշավ»:

ԹԵՄԱՆԵՐ	Ռասիզմ և խտրականություն, համացանցային գրագիտություն, ժողովրդավարություն և մասնակցություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	3
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	15 և ավելի
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հետազոտել առցանց սեռական բնույթի վիրավորանքների խնդիրը, մասնավորապես՝ խաղերի տիրույթում • Զարգացնել առցանց քարոզարշավ անցկացնելու հմտությունները:
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Ֆլիպչարտներ և մարկերներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Պատրաստե՛ք «ցուցումների քարտեր»ի օրինակներ (էջ՝ 71-72) և ատելության խոսքի օրինակներ էջ 73 (կամ օգտագործեք սահիկներ) • Ծանոթացե՛ք առցանց քարոզարշավի անցկացման մասին տեղեկությունների (քարոզարշավի ռազմավարությունների 5.7 բաժինը) և «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական շարժման քարոզարշավին (սույն ձեռնարկի գլուխ 2)

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Ցույց տվե՛ք մասնակիցներին էջ 73-ի առձեռն նյութը և խնդրեք, որ արտահայտեն իրենց տեսակետները: Անհրաժեշտության դեպքում ուղղորդեք նրանց հարցերի միջոցով, ինչպես օրինակ՝
   - Ի՞նչ եք կարծում, ինչպես իրեն կզգար աղջիկը նման հաղորդագրություն կամ մեկնաբանություն ստանալու դեպքում:
   - Ի՞նչ եք կարծում, վիրավորանքների այս տեսակը տարածված է:

- Ի՞նչ եք կարծում, ինչպես իրեն կզգար աղջիկը, եթե ցանկանար միանալ խաղին, բայց բազմաթիվ նման մեկնաբանություններ տեսներ՝ ուղղված այլ աղջիկ խաղացողներին:

2. Բացատրե՛ք մասնակիցներին, որ կանանց նկատմամբ բռնությունը և վիրավորանքը չափազանց տարածված երևույթ է ոչ միայն առցանց խաղերին մասնակցողների (գեյմերների) հանրույթում, այլ նաև՝ առցանց այլ հաղորդակցության ժամանակ: Կարող եք հարցնել մասնակիցներին, երբևէ բախվե՞լ են նման իրավիճակների հետ, և չեն դարձել արդյո՞ք խմբի աղջիկները նման վիրավորանքների և հարձակումների թիրախ:
3. Բացատրե՛ք նրանց, որ սրանք բոլորը՝ ատելության խոսքի առցանց դրսևորման օրինակներ են և որ ատելության խոսքը մարդու իրավունքների ոտնահարում է: Եթե նման հայտարարություններով կանանց և աղջիկներին դիմեին իրական կյանքում, ապա դա կհամարվեր օրինախախտում:
4. Բացատրե՛ք մասնակիցներին, որ վարժության մեջ ուսումնասիրված մեթոդների/մոտեցումների միջոցով խումբը կարող է միանալ քարոզարշավին և արձագանքել կին խաղացողների նկատմամբ սեքսուալ բնույթի վիրավորանքների առկայության խնդիրներին: Մասնակիցները կձևավորեն իրենց սեփական «մինի-քարոզարշավները»: Նրանք կաշխատեն փոքր խմբերով՝ բացահայտելու համար տարբեր թիրախավորված խմբերին վերաբերվելու ձևերը, որոնք կապ ունեն խնդրի հետ:
5. Ցույց տվե՛ք մասնակիցներին «թիրախավորված խմբերի» ցանկը և խնդրե՛ք նրանց ընտրել մեկը՝ վարժության վրա աշխատելու համար: Փորձե՛ք հավաստիանալ, որ յուրաքանչյուր խմբում ներգրավված են հավասար քանակությամբ մասնակիցներ:
   - **Խումբ 1.** կին խաղացողներ (գեյմերներ):
   - **Խումբ 2.** նրանք, ովքեր վիրավորում են/կարող են վիրավորել կին խաղացողներին:
   - **Խումբ 3.** այլ խաղացողներ (նրանք, ովքեր պարտադիր ներգրավված չեն վիրավորանքի մեջ, սակայն ականատեսն են վիրավորանքի և թույլ են տալիս, որ դա տեղի ունենա):
   - **Խումբ 4.** քաղաքական գործիչներ՝ տեղական կամ ազգային մակարդակում խորհրդարանական պատվիրակներ, նախարարներ և այլն:
   - **Խումբ 5.** առցանց ծառայություններ մատուցողներ, ինչպես օրինակ՝ կայքերի տերերը, համացանցային ծառայություններ մատուցողները, առցանց հանրույթի կառավարիչները:
   - **Խումբ 6.** հանրությունն ընդհանրապես, քանի որ կարևոր է, որ մարդիկ հասկանան խնդրի լրջությունը և աջակցեն քարոզարշավին:
6. Յուրաքանչյուր խմբին տվե՛ք ֆլիպչարտի մեկական թուղթ և ցուցումներով քարտը: Ասե՛ք նրանց, որ ունեն 20 րոպե, որպեսզի մտածեն, թե հատկապես ինչ մեթոդներ են կիրառելու իրենց թիրախային լսարանը գրավելու համար: Հիշեցրե՛ք, որ բոլոր խմբերն աշխատում են տարբեր թիրախային լսարանների հետ. նրանք պետք է կենտրոնանան այն մեթոդների

և ուղերձների վրա, որոնք ավելի արդյունավետ կլինեն՝ իրենց լսարանի ուշադրությունը գրավելու և քարոզարշավի վրա դրական ազդեցություն թողնելու առումով: Հաջողված քարոզարշավն այն քարոզարշավն է, որի արդյունքում հնարավորինս մեծ թվով մարդիկ են միանում ընդհանուր գործին:

7. Մոտավորապես 20 րոպե անց հրավիրե՛ք մասնակիցներին, որպեսզի ներկայացնեն իրենց առաջարկությունները: Վերջում ժամանակ հատկացրե՛ք պարզաբանող հարցերի և մեկնաբանությունների համար:
8. Բացատրե՛ք մասնակիցներին, որ իրական քարոզարշավի ռազմավարությունը որոշելու համար անհրաժեշտ է 15 րոպեից շատ ավելի ժամանակ: Հաճախ նախնական գաղափարները փոփոխվում են և նույնիսկ մերժվում՝ ավելի արդյունավետ գաղափարների ի հայտ գալու արդյունքում: Լավ ռազմավարություն մշակելու համար անհրաժ եշտ է, որպեսզի մի խումբ մարդիկ ամիսներ շարունակ աշխատեն այդ ուղղությամբ և միգուցե նաև փորձարկեն այն գործադրելուց առաջ: Վերլուծության և գնահատման փուլում անհրաժեշտ կլինի քննարկել՝ մասնակիցների կարծիքները, ռազմավարության իրենց մշակած «առաջին տարբերակը»:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՐՑԵՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- Արդյո՞ք հեշտ էր ձեզ համար մտածել առցանց գործողություններ իրականացնելու ուղղությամբ: Որո՞նք են առցանց գործելու առավելություններն ու թերությունները:
- Ձեզ գոհացրե՞ց ձեր առաջարկած ռազմավարությունը: Ըստ ձեզ, ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ իրականացման փուլում:
- Ի՞նչ եք կարծում, քարոզարշավը կշահեր, եթե դուք ավելացնեիք գործողություններ նաև ոչ վիրտուալ տարածքում: Կարո՞ղ եք առաջարկել նման գործողությունների գաղափարներ:
- Ի՞նչ եք կարծում, ձեզ հաջողվեց գրավել թիրախային լսարանի ուշադրությունը: Ինչպե՞ս հասաք այդ արդյունքին:

ՀԱՐՑԵՐ ՍԵՔՍԻԶՄԻ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Արդյոք կարևո՞ր է սեքսիզմի և առցանց վիրավորանքների խնդրին ադրադառնալը համացանցային խաղերի համատեքստում: Ինչու՞ այո, կամ ոչ:
- Արդյոք կարևո՞ր է ընդհանրապես ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրին անդրադառնալը: Ինչու՞ այո, կամ ոչ:
- Ի՞նչ եք կարծում, անձամբ դուք կարո՞ղ եք ազդել այս իրավիճակի վրա և փոխել այն: Որքանո՞վ եք շահագրգռված դա անել:
- Ի՞նչ եք կարծում, ինչոր բան սովորեցիք այս վարժությունից: Փոխվեց արդյո՞ք ձեր տեսակետը կամ միգուցե դուք ինչոր բանի մասին ավելի ամբողջական պատկերացում կարողացաք կազմել:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Միգուցե, դուք գտնեք, որ այս վարժության մեջ օգտագործվող վիրավորանքների օրինակները հարմար չեն ձեր խմբի համար: Դուք կարող եք փոփոխել, հանել ամենից վիրավորականները կամ կազմել նոր օրինակներ: Հնարավոր է, որ ձեր խմբի աղջիկները բախվել են սեքսիստական վիրավորանքների հետ. կարող եք խնդրել նրանց բերել օրինակներ սեփական փորձից:
- Գործողությունը կշահի ավելի շատ ժամանակ հատկացնելու դեպքում. հնարավորության դեպքում, խմբերին կարող եք տրամադրել երեսուն րոպե՝ քննարկելու իրենց ռազմավարությունները և ընձեռեք նրանց տարբեր առցանց քարոզարշավների կայքերին ծանոթանալու հնարավորություն:
- Դուք կարող եք նաև ծանոթացնել մասնակիցներին «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավին և խրախուսել նրանց օգտագործել կայքըաղբյուրներ և գործընթացների օրինակներ որոնելու նպատակով:
- Եթե խումբը փոքր է, կարող եք չընդգրկել բոլոր «թիրախային լսարանները» ՝ ընտրեք միայն այն խմբերը, որոնք առավել կարևոր են ձեր մասնակիցների համար:
- Տարբեր լսարանների համար նախատեսված լինելով հանդերձ՝ մեթոդներից և ուղերձներից շատերը կարող են կրկնվել. միայն մեկի վրա կենտրոնանալու նպատակը մասնակիցներին հնարավորություն կտա ուշադրությունը կենտրոնացնել այնպիսի ուղերձ մշակելու վրա, որն իրենց թիրախային լսարանում ամենից շատ արձագանքներ կստանա:
- Ուշադիր եղե՛ք, որպեսզի խմբերում պահպանվի գենդերային հավասարակշռությունը: Ցանկալի է, որ կանանց և տղամարդկանց թիվը յուրաքանչյուր խմբում լինի հավասար:
- Երբ մասնակիցները կներկայացնեն իրենց ռազմավարությունները, թույլ տվեք, որպեսզի մյուս խմբերի մասնակիցները հանդես գան «կառուցողական քննադատությամբ»: Կարող եք առաջարկել, որ նախքան բարելավման հետ կապված առաջարկություններն անելը, նշեն քննարկվող ռազմավարության դրական կողմերը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Խմբային աշխատանքը մասնակիցներին կարող եք տալ նաև որպես նախագիծ, որի վրա նրանք կկարողանան աշխատել մեկ շաբաթվա ընթացքում: Կարող եք նաև հանձնարարել նրանց, որպեսզի ուսումնասիրեն այլ կայքեր, փորձեն հասկանալ խնդրի ծավալը և ծանոթանալ առցանց սեքսիստական վիրավորանքներին առնչվող օրենքներին ու կանոնակարգերին:

Մասնակիցներն իրենց առաջադրանքի համար կարող են ընտրել նաև այլ թեմա , ինչպես օրինակ՝ ռասիզմի առցանց դրսևորումները, կիբերբուլինգը կամ ընդհանուր առմամբ, սեքսիզմի առցանց դրսևորումները: Խմբերը կարող են նաև ինքնուրույն ընտրել այն խնդիրը, որի վրա ցանկանում են աշխատել, բայց նույնիսկ այդ դեպքում նրանց անհրաժեշտ կլինի հասկանալ, թե որն է իրենց թիրախային լսարանը:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները կարող են շարունակել աշխատանքը համացանցային խաղերում սեքսիզմի խնդրի ուղղությամբ, օրինակ՝ ինքնուրույն հետազոտություն անցկացնելով հասկանալու համար խնդրի իրական ծավալները: Մասնակիցները փոքր խմբերով կարող են ընտրել կոնկրետ առցանց խաղեր և արձանագրել ատելության խոսքի դրվագները:

Մասնակիցները կարող են նաև շարունակել ամենախոստումնալից ռազմավարությունների մշակումը և այնուհետև կիրառեն դրանք: Նրանք կարող են օգտագործել սոցիալական ցանցերում իրենց անձնական էջերը, առցանց ֆորումները կամ այլ հարթակներ, որտեղ կա մեկնաբանություն թողնելու հնարավորություն՝ տեղեկատվությունը տարածելու և հանրությանը իրազեկելու նպատակով: Եթե մասնակիցներն իրենք համացանցային խաղերի մասնակիցներ են, նրանք այս խնդիրը կարող են քննարկել նաև այդ խաղերի այլ առցանց մասնակիցների հետ: Մասնակիցները կարող են նաև մշակել հատուկ հաղորդագրություններ այն դեպքերի համար, երբ նրանք մասնակցում են խաղի և բախվում նման վիրավորանքների հետ: Առաջարկեք մասնակիցներին, որպեսզի պատմեն այն խաղերի մասին որոնցից տեղյակ են և քննարկեք համացանցային խաղերում՝ ատելության խոսքի դրսևորման խնդիրը:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԽՈՒՄԲ 1. ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԽԱՂԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԿԱՆԱՅՔ (ԳԵՅՄԵՐՆԵՐ)

Ձեր խումբը պետք է կենտրոնանա աղջիկ խաղացողների վրա, ընդ որում և՛ նրանց ովքեր արդեն բախվել են վիրավորանքների հետ, և՛ նրանց, ովքեր ունեն նման մտավախություններ:

- Որո՞նք են ձեր հիմնական ուղերձները:
- Ի՞նչ կարող եք անել, որպեսզի համացանցային խաղերի կին մասնակիցները զգան, որ աջակցություն ունեն:
- Ի՞նչ գործողություններ են կարող իրենք իրականացնել:

Մտածե՛ք այն բոլոր առցանց գործիքների օգտագործման մասին, որոնք կարող եք կիրառել կին խաղացողների մոտ համերաշխության զգացումը խթանելու համար

ԽՈՒՄԲ 2. ՓՈՐՁԵՆՔ ԽՈՍԵԼ «ԱՆՊԱՏՎՈՂՆԵՐԻ» ՀԵՏ

Ձեր խումբը կփորձի դիմել նրանց, ովքեր սովորաբար վիրավորում են աղջիկխաղացողներին, կամ նրանց ովքեր հակված են նման պահելաձևի:

- Որո՞նք են ձեր հիմնական ուղերձները:
- Ինչպե՞ս եք դուք կարող համոզել նրանց փոխել իրենց պահելաձևը:
- Ի՞նչ տեղեկություններ են ձեզ անհրաժեշտ:

Մտածե՛ք այն բոլոր առցանց գործիքների օգտագործման մասին , որոնք օգտակար կլինեն ձեր թիրախային խմբի հնարավորինս շատ անդամների դիմելու համար:

ԽՈՒՄԲ 3.ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԴԻՄԵԼ ԳՈԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ձեր խմբի թիրախային խումբը համացանցային խաղերի այն մասնակիցներն են, ովքեր ականատես են լինում մյուս խաղացողների նկատմամբ ատելության խոսքի դրսևորումների, սակայն որևէ կերպ չեն մասնակցում կամ միջամտում:

- Ի՞նչ պետք է նրանք իմանան:
- Ի՞նչ եք դուք ցանկանում, որ նրանք անեն:
- Ինչպե՞ս կարող եք համոզել նրանց անել դա:

Մտածեք այն բոլոր առցանց գործիքների օգտագործման մասին, որոնց միջոցով կկարողանաք հնարավորինս շատ խաղացողների ներգրավել գործողությունների մեջ:

ԽՈՒՄԲ 4. ԴԻՄՈՒՄ ԵՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻՆ

Ձեր խումբը պետք է կենտրոնանա նրանց վրա, ովքեր կկարողանան լուծումներ տալ խնդրին, որովհետև նրանք են քաղաքականություն իրականացնողները կամ ձեր երկրի կառավարության անդամները:

- Որո՞նք են ձեր հիմնական ուղերձները:
- Ինչպե՞ս կարող եք դուք համոզել ձեր թիրախային լսարանին ներգրավվել խնդրի լուծման գործընթացի մեջ:
- Ի՞նչ գործողություններ կառաջարկեիք նրանց:

Մտածե՛ք այն բոլոր այն գործիքների օգտագործման մասին, որոնց միջոցով կկարողանաք ներգրավել ձեր թիրախային խմբի հնարավորինս շատ անդամների:.

ԽՈՒՄԲ 5.ԴԻՄՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻՆ

Ձեր խումբը պետք է կենտրոնանա նրանց վրա, ովքեր ի վիճակի են ուղղակիորեն ազդել խնդրի լուծման վրա, օրինակ՝ կայքերի սեփականատերերը, համացանցի մատակարարները և առցանց հանրույթի կառավարիչները:

- Որո՞նք են ձեր հիմնական ուղերձները:
- Ինչպե՞ս կարող եք դուք համոզել ձեր թիրախային լսարանին ներգրավվել խնդրի լուծման գործընթացի մեջ:
- Ի՞նչ գործողություններ կառաջարկեիք նրանց:

Մտածե՛ք այն բոլոր այն գործիքների օգտագործման մասին, որոնց միջոցով կկարողանաք ներգրավել ձեր թիրախային խմբի հնարավորինս շատ անդամների:

ԽՈՒՄԲ 6. ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Ձեր խումբը պետք է կենտրոնանա հասարակության անդամներին խնդրի լուծման գործընթացում ներգրավելու վրա:

- Որո՞նք են ձեր հիմնական ուղերձները:
- Ի՞նչ եք դուք ուզում, որ մարդիկ անեն:
- Ի՞նչ տեղեկություններ են ձեզ անհրաժեշտ:

Մտածե՛ք այն բոլոր առցանց գործիքների օգտագործման մասին, որոնց միջոցով կկարողանաք մարդկանց դարձնել քարոզարշավի մասնակից:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ









Տողատակ տեքստերի աղբյուրը: http://fatuglyorslutty.com/ *(9 հոկտեմբեր, 2013)*

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 4

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 10-20

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60'

ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆՔ ՓԱՍՏԵՐԸ

Այս դերային վարժության համար մասնակիցները պետք է քաղաքական գործիչների առաջադրանքով «հետազոտեն» նույնասեռականների նկատմամբ ատելության խոսքի տարբեր դրսևորումների հարցը: Նրանք պետք է ուսումնասիրեն առցանց տեղեկատվության արժանահավատությունը և մշակեն ռազմավարություն իրենց գործունեության համար:

ԹԵՄԱՆԵՐ	Համացանցային գրագիտություն, ռասիզմ և խտրականություն, քարոզարշավի ռազմավարություններ, , ժողովրդավարություն և մասնակցություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	4
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Գնահատել համացանցում առկա տեղեկությունների արժանահավատությունը • Ուսումնասիրել մի շարք խնդիրներ, որոնց հետ բախվում են երիտասարդ նույնասեռականներն ատելության խոսքի առցանց դրսևորումների հետևանքով • Ուսումնասիրել սեփական պահելաձևն առցանց բովանդակության առնչությամբ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Համացանցից օգտվելու հնարավորություն • Թղթեր և գրիչներ • Ֆլիպչարտներ և մարկերներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Հավաստիացե՛ք, որ մասնակիցներն ունեն համացանցից օգտվելու հնարավորություն • Նախապատրաստե՛ք՝ Հետազոտողի առաջադրանքների և Դիտորդի ձեւաթուղթ օրինակներ • Կամընտրական՝ նախապես հարցրե՛ք կա՞ն արդյոք կամավորներ դիտորդի դերը ստանձնելու համար: Խմբի գրեթե կեսը պետք է կատարի դիտորդների դերը: Ցույց տվե՛ք նրանց Դիտորդի ձևաթուղթը և հավաստիացե՛ք, որ նրանք հասկանում են, թե կոնկրետ ինչ տիպի տեղեկություններ պետք է ձեռք բերեն և ինչպես պետք է լրացնեն աղյուսակը

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

- Բացատրե՛ք, որ վարժության նպատակն է ուսումնասիրել համացանցի կիրառությունը որպես տեղեկատվական աղբյուր: Հարցրե՛ք, արդյոք հաճա՞խ են մասնակիցներն օգտագործում համացանցը հենց այս նպատակով և արդյոք ունեն «նախընտրելի կայքեր»:
- Բաժանե՛ք նրանց հետևյալ սցենարը և համոզվե՛ք, որ բոլորը հասկանում են առաջադրանքը:

Այն բանից հետո, երբ տեղի ունեցան մի շարք հարձակումներ երիտասարդ նույնասեռականների վրա, մասնավորապես՝ համացանցի որոշ կայքերում և շրջանառվող տեսահոլովակների մեջ, ինչպես նաև ՀԿ-ների իրականացրած լոբբինգի արդյունքում՝ խորհրդարանում նախատեսվում է կազմակերպել քննարկում այս հարցի շուրջ: Կառավարությունը նախապատրաստել է օրինագծի նախագիծ, համաձայն որի նախատեսվում է հատկացումներ անել բյուջեից հոմոֆոբ վերաբերմունքի խնդրի լուծմանն ուղղված կրթական ծրագրերի և երիտասարդ նույնասեռականներին աջակցություն ցուցաբերելու համար: Բոլոր հիմնական ընդդիմադիր կուսակցությունները դեմ են նոր օրինագծին:
Դուք պետք է պատկերացնեք, որ աշխատում եք որպես այդ քննարկման մասնակից՝ քաղաքական գործիչներից մեկի օգնական և պետք է իրականացնեք հետազոտություն: Նա խնդրել է ձեզ իր ելույթի համար նախապատրաստել հակիրճ փաստաթուղթ, որը կներառի այն մի քանի հիմնական կետերը, որ անհրաժեշտ է հնչեցնել քննարկման ժամանակ: Դուք ունեք 20 րոպե հարցի նախնական ուսումնասիրության համար:

- Բացատրե՛ք մասնակիցներին, որ նրանք աշխատելու են 4-ական մասնակիցներից բաղկացած խմբերում, որոնցից 2-ը պետք է կատարեն «հետազոտողների» դերը, իսկ մյուս 2-ը՝դիտարկեն նրանց կողմից կիրառվող «մեթոդաբանությունը»: Հիշեցրե՛ք նրանց, որ յուրաքանչյուր հետազոտություն պետք է իրականացվի հստակ մեթոդաբանության կիրառմամբ: Հարցրե՛ք մասնակիցներին, արդյո՞ք կարող են ներկայացնել կարևոր առաջարկներ հետազոտությունն իրականացնելու համար և գրառե՛ք այդ առաջարկությունները ֆլիպչարտի վրա:
- Եթե դեռ չեք բաժանել դերերը, հարցրե՛ք, թե ով կցանկանա հանդես գալ «դիտորդ»ի դերում: Բաժանե՛ք «Դիտորդի ձևաթղթերը» և հավաստիացե՛ք, որ նրանք հասկանում են առաջադրանքը: Բաշխե՛ք խմբի մյուս մասնակիցների դերերն այնպես, որ կառավարության և տարբեր ընդդիմադիր կուսակցությունների տեսակետները ներկայացնող ենթախմբերում աշխատեն հավասար քանակությամբ մասնակիցներ: Բաժանե՛ք ենթախմբերին առաջադրանքներով քարտերը:
- Ասե՛ք մասնակիցերին, որ հետազոտությունն իրականացնելու համար նրանք ունեն 30 րոպե: Առաջարկե՛ք առաջին 20 րոպեն օգտագործել անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու համար, իսկ մնացած 10 րոպեն թողնել խորհրդարանական իրենց ներկայացուցչի ելույթի հիմնական կետերի շուրջ համաձայնության գալու համար:

- Երբ խմբերը վերջացնեն առաջադրանքը, ասե՛ք նրանց, որպեսզի հեռանան համակարգիչներից և հատկացրեք հավելյալ 5-10 րոպե, որպեսզի դիտորդները կարողանան ներկայացնել իրենց հիմնական դիտարկումները:
- Հրավիրե՛ք հետազոտողներին, որպեսզի ներկայացնեն այն հիմնական կետերը, որ առանձնացրել են իրենց խորհրդարանական ներկայացուցչի ելույթի համար: Սա կարելի է ներկայացնել թվարկելով կետերը. մասնակիցները պետք է պատկերացնեն, որ իրենք իրականում զեկուցում են խորհրդարանական իրենց ներկայացուցչին, այլ ոչ թե իրենք են ելույթ ունենում:
- Յուրաքանչյուր «հետազոտողից» հետո ժամանակ հատկացրե՛ք «դիտորդներին» իրենց արդյունքները ներկայացնելու, ինչպես նաև՝ ներկայացված տեղեկությունների և կիրառված ռազմավարության վերաբերյալ մյուս խմբերի հարցերի համար: Այնուհետև անցե՛ք վերլուծության և գնահատման փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՐՑԵՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ՃԵՊԱԶՐՈՒՅՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Արդյոք հե՞շտ էր ձեզ համար առաջադրանքը: Ի՞նչն էր ամենից բարդը:
- Ինչպե՞ս որոշեցիք, թե որ կայքերից օգտվեք: Որքանո՞վ էր ձեզ անհանգստացնում այդ կայքերի «արժանահավատության» խնդիրը կամ ձեր ընտրած տեղեկությունների «ճշմարտացիությունը»:
- Կետերը նախապատրաստելիս՝ ինչի՞ն տվեցիք նախապատվությունը՝ ձեր ներկայացուցչի դիրքորոշումը հաստատող տեղեկություններ ձեռք բերելուն, թե՝ հարցի վերաբերյալ «անաչառ» տեղեկություններին: Ըստ ձեզ, ինչպե՞ս պետք է վարվի իրական հետազոտողը:
- Արդյոք փնտրե՞լ եք նույնասեռականների նկատմամբ ատելության խոսքի դրսևորման օրինակներ: Եթե կան խմբեր, որ չեն փնտրել, արդյոք չե՞ն կարծում, որ դա տեղին կլիներ:
- Ի՞նչ եք կարծում, ձեր ներկայացուցչին կգոհացնե՞ր կատարված աշխատանքը: Իսկ այն մարդիկ ում նա է ներկայացնում խորհրդարանում, գո՞հ կմնային:

ՀԱՐՑԵՐ՝ ՀԱՄԱՑԱՆՑԸ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Համացանցը հետազոտական նպատակներով օգտագործելու հարցի շուրջ արդյո՞ք որևէ նոր, կարևոր հանգամանք պարզեցիք ձեզ համար: Կցանկանայի՞ք որևէ լրացում անել վարժության սկզբում կազմված նկատառումների ցանկին:
- Ձեզ զարմացրե՞ց այն, որ տարբեր մասնակիցներ ձեռք էին բերել տարբեր տեղեկություններ: Ինչպե՞ս կբացատրեք դա:
- Ինչպե՞ս ենք կարող ճշտել կայքի արժանահավատությունը կամ տեղեկությունների վստահելիությունը: Սովորաբար դուք կիրառու՞մ եք այս մոտեցումները:

ՀԱՐՑԵՐ՝ ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ/ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Արդյո՞ք գտաք խտրականության և վիրավորանքների որևէ օրինակ:
- Ի՞նչ եք կարծում, ձեր ձեռք բերված նյութերի մեջ կային «կեղծ» կամ անարդար տեղեկություններ:
- Ի՞նչ ռիսկեր է իր մեջ պարունակում ցանկացած մարդու համացանցում իր կարծիքն արտահայտելու հնարավորություն ընձեռելը: Կարո՞ղ եք արդյոք առաջարկել միջոցներ, որոնք կօգնեն նվազեցնել կարծիքը որպես «փաստ» ընկալելու վտանգավոր միտումը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Վարժությունն ավելի արդյունավետ կլինի, եթե «դիտորդներին» ՑՈՒՑՈՒՄՆԵՐ տաք նախօրոք: Հնարավորության դեպքում, դուք կարող եք յուրաքանչյուր ենթախմբում ունենալ մեկ «դիտորդ» և ավելացնել խմբերում «հետազոտողների» քանակը:
- Հետազոտողների մոտ չպետք է ձևավորվի կարծիք, որ «դիտորդները» ստուգում են նրանց: Դուք կարող եք բացատրել, որ «դիտորդների» առաջադրանքը հետազոտական տարբեր մեթոդաբանություններ դիտարկելն է և որ այդ առաջադրանքը կատարելու համար կան տարբեր եղանակներ:
- Միգուցե ճիշտ կլինի, որ «հետազոտողները» չտեսնեն «դիտորդների ձևաթղթերը». այդ դեպքում նրանք տեղյակ չեն լինի այն հիմնական չափանիշներից, որոնք կիրառվելու են դիտարկման ժամանակ և արդյունքներն ավելի հետաքրքիր կլինեն: Միևնույն ժամանակ, դա կարող է լարվածություն առաջացնել «հետազոտողների» մոտ: Եթե և՛ «հետազոտողները», և՛ «դիտորդները» տեղյակ լինեն ձևաթղթի բովանդակությունից, սա նրանց հնարավորություն կտա ավելի համագործակցային հարաբերություններ հաստատել միմյանց հետ:
- Վերլուծության և գնահատման ընթացքում կարող եք անդրադառնալ նաև այն հարցին, թե որքանով է հետազոտությունը կողմնակալ դառնում կախված նրանից, թե ինչ արդյունքի ենք «ուզում» հասնել: Մասնավորապես, դուք կարող եք հարցնել մասնակիցներին, թե ինչպես են նրանք վերաբերվում այն տեղեկություններին, որոնց չեն ուզում հավատալ:
- Համացանցում ապատեղեկատվության և գերակայող կողմնակալության վտանգներից մեկն այն է, որ նման տեղեկատվությունը տարածվում է որպես «փաստ»: Պարզե՛ք, միգուցե մասնակիցները նույնպես մասնակցել են նման «փաստերի» տարածմանը համացանցում, և արդյոք նման տեղեկությունները նպաստում են որոշակի խմբի կամ անհատի մասին նախապաշարմունքների տարածմանը:
- Կարող եք օգտագործել Համացանցային գրագիտության մասին օժանդակ տեղեկությունների բաժնում ընդգրկված ստուգացանկը՝ համացանցում տեղադրված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու վերաբերալ մասնակիցների առաջարկությունները հավելելու համար: Բացատրե՛ք, որ հիմնականում այն ինչ մենք տեսնում ենք, պարունակում է «կարծիքի» տարրեր: Կան բազմաթիվ ձևեր

տեղեկություններն այնպես ներկայացնելու, որպեսզի դրանք հավելյալ հիմնավորում դառնան ինչ-որ տեսակետի համար: Օրինակ՝ նույնասեռականներին ուղղված ատելության խոսքի օրինակները չընդգրկելով ստեղծվում է նման խնդրի բացակայության տպավորություն:

- Դուք կարող եք փնտրել տեղեկություններ այն մասին, թե ինչպես բացահայտել համացանցային խարդախությունները և քննարկել մասնակիցների հետ, թե ինչպես են կեղծ լուրերը հրահրում ատելության խոսք:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Որպես հետազոտվող թեմա՝ կարող եք ընտրել այլ «թիրախային խումբ», օրինակ՝ կանայք, ռոմաներ կամ այլ ազգային փոքրամասնություններ, ապաստան հայցողներ և այլն:

Վարժությունը կարող եք անցկացնել նաև առանց դիտորդների, սակայն մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է ստանձնի նաև իր սեփական դիտորդի դերը: Այդ դեպքում դիտորդի ձևաթուղթը մասնակիցներին անհրաժեշտ կլինի ներկայացնել նախքան վարժությունը սկսելը և խնդրել նրանց նշել հետազոտության ժամանակ կիրառվելիք մեթոդները:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները կարող են կատարելագործել առցանց հետազոտություններ անելու նկատառումների ցանկը և ստեղծել ձեռնարկների իրենց սեփական հավաքածուն: Ատելության խոսքի մեծ մասը տարածվում է այն անձանց կողմից, ովքեր անմտորեն կիսում են կարծիքներ, որոնք արտահայտում են կանխակալություն և վնասակար են այլոց համար: Հասարակության տարբեր խմբերի մասին նախապաշարմունքներ տարածելու համար հաճախ պատասխանատու են լրագրողները: Նման լրագրությունը կարող է խրախուսել ընթերցողներին տպավորություն ստեղծելով, որ այդ խմբերի նկատմամբ վիավորանքն «ընդունելի» է:

Եթե ցանկանում եք ձեր խմբում շարունակել ապատեղեկատվություն հաղորդելու ռազմավարությունների հետ կապված աշխատանքը, ապա անցեք հղումով՝

https://mediasmarts.ca/diversity-and-media-toolbox-portal-page https://mediasmarts.ca/break-fake

կամ՝ ծանոթացեք «Մենք կարող ենք: Ատելության դեմ պայքար հակադիր և այլընտրանքային պատումների միջոցով» ձեռնարկին՝

https://www.coe.int/en/web/no-hate-campaign/we-can-alternative

Առաջարկե՛ք մասնակիցներին ներկայացնել իրենց կողմից ամենից շատ օգտագործվող կայքերը առցանց տեղեկություններ գտնելու համար և միասին ստուգեք, թե որքանով անկողմնակալ և վստահելի են այդ կայքերը:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ 1.

Ձեր քաղաքական գործիչը կառավարության անդամ է: Իր ելույթում նա պետք է հստակ կողմ արտահայտվի և սատարի նոր օրինագիծը: Փորձեք համացանցում գտնել այնպիսի տեղեկություններ, որոնք կօգնեն նրան պատրաստվել իր ելույթին: Այնուհետև կազմե՛ք, ըստ ձեզ, ելույթի համար առանցքային՝ շուրջ 5 հիմնական կետերից բաղկացած ցանկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ 2.

Ձեր քաղաքական գործիչն ընդդիմության ներկայացուցիչ է: Նա դեմ է այս խնդրի լուծման համար բյուջեից հատկացումներ անելուն: Փորձեք համացանցում գտնել այնպիսի տեղեկություններ, որոնք կօգնեն նրան պատրաստվել իր ելույթին: Այնուհետև կազմե՛ք, ըստ ձեզ, ելույթի համար առանցքային՝ շուրջ 5 հիմնական կետերից բաղկացած ցանկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ 3.

Ձեր քաղաքական գործիչը խորհրդարանական փոքրամասնության անդամ է: Ձեր կուսակցությունը դեռևս չի որոշել կողմ է, թե՝ դեմ օրինագծին: Փորձեք համացանցում գտնել այնպիսի տեղեկություններ, որոնք կօգնեն նրան կողմնորոշվել և պատրաստվել իր ելույթին: Այնուհետև կազմե՛ք, ըստ ձեզ, ելույթի համար առանցքային՝ շուրջ 5 հիմնական կետերից բաղկացած ցանկ:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԴԻՏՈՐԴՆԵՐ

Ձեր առաջադրանքն է վերլուծել հետազոտողների կողմից կիրառվող մոտեցումները: Փորձե՛ք հնարավորինս շատ տեղեկություններ հավաքել Դիտորդի հարցաթերթիկ-աղյուսակը լրացնելու համար: Դուք կարող եք խնդրել հետազոտողներին, որպեսզի բացատրեն ձեզ թե ինչ են անում կամ ինչու են կիրառում այս կամ այն մոտեցումը՝ աշխատելով շատ չշեղել նրանց բուն աշխատանքից:

ԴԻՏՈՐԴԻ ՁԵՌԱԹՈՒՂԹ

Անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու համար օգտագործված որոնման բառեր	
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՅՑԵԼՎԱԾ ԿԱՅՔԻ ՀԱՄԱՐ	
Կայքի անվանումը	
Կայքում անցկացրած ժամանակը՝ րոպեներով (մոտավոր)	
Կողմնորոշումը (նույնասեռականամետ, հականույնասեռական, չեզոք)	
Ինչ սկզբունքով է ընտրվել այդ կայքը:	
Կայքի «համբավը» - Ինչի՞ց ելնելով է կարելի վստահել այդ կայքում զետեղված տեղեկատվությանը: - Արդյո՞ք խումբը դա ստուգել է:	
Կայքից վերցված տեղեկություններն ունեի՞ն սկզբնաղբյուր կամ հղում: Խումբը դա ճշտե՞լ է:	
Այլ մեկնաբանություններ հետազոտողների կողմից կիրառված մեթոդաբանության վերաբերյալ.	

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 4

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 10-20

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 120’

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԽՈՒՄ

Սա իրավիճակի սիմուլացիոն վարժություն է: Երկու համայնք ունեն արտահայտման ազատության վերաբերյալ հակադիր մոտեցումներ, սակայն, ստիպված են միասին ապրել միևնույն կղզու վրա:

ԹԵՄԱՆԵՐ	Ժողովրդավարություն և մասնակցություն, արտահայտման ազատություն, ռասիզմ և խտրականություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	4
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	120 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Ուսումնասիրել բազմազանության, բազմակարծության և ատելության խոսքի հետ առնչվող հարցեր • Դիտարկել, թե ինչպես է արտահայտման ազատությունը նպաստում ժողովրդավարական հասարակության բնականոն գործունեությանը • Քննարկել արտահայտման անսահմանափակ ազատության առավելությունները և թերությունները • Զարգացնել բանակցային հմտություններ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Թուղթ և գրիչներ: • Տարածք՝ երկու համայնքների հանդիպումների համար (առանձին) • 2 վարող (նախընտրելի տարբերակ)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք երկու կղզիների մասին պատմող տեղեկատվական նյութի օրինակներ • Նախապատրաստե՛ք «Լուծման ենթակա խնդիրներ» առձեռն նյութի օրինակներ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Բացատրե՛ք, որ սա որոշակի իրավիճակի սիմուլացիոն վարժություն է և բաժանե՛ք խումբը երկու համայնքների: «Իքսպրատցիների» համայնքը պետք է ավելի մեծ լինի՝ խմբի գրեթե երկու երրորդը: Մնացած մեկ երրորդը կազմում են «Պաստիկցիները»: Պարզաբանե՛ք, որ վարժության առաջին հատվածում համայնքները պետք է աշխատեն առանձինառանձինև հանդիպեն միմյանց 20 րոպե անց:

2, Խմբերից մեկին պետք է ուղեկցել այլ սենյակ: Յուրաքանչյուր խմբի վարող նախ բարձրաձայն պետք է կարդա համապատասխան համայնքի մասին պատմող նյութը, ապա բաժանի նախապատրաստած օրինակները մասնակիցներին՝ հետագայում օգտագործելու համար:
3, Խմբային քննարկումը սկսե՛ք մասնակիցներին հարցնելով, թե ինչ պատկերացումներ ունեն կղզում ապրելու մասին: Հարցրե՛ք, կցանկանային արդյոք այնտեղ ապրել: Ընդհանուր քննարկմանը որոշ ժամանակ տրամադրելուց հետո խմբերին հղե՛ք հետևյալ հարցերը՝

ՊԱՍՏԻԿՑԻՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Ի՞նչն է ձեզ անհանգստացնում նոր կղզի տեղափոխվելու կապակցությամբ:

ԻՔՍՊՐԱՏՑԻՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Ի՞նչ մտահոգություններ ունեք ձեր կղզի տեղափոխվող ներգաղթյալների մեծ խմբի կապակցությամբ, որոնք պատկերացում չունեն ձեր մշակույթի և ավանդույթների մասին:

4. 20 րոպե անց խմբերը պետք է միավորվեն: Խնդրե՛ք կղզու բնակիչներին ներկայանալ և, ցանկության դեպքում, հանդես գալ հակիրճ հայտարարություններով: Աշխատե՛ք 10 րոպեից ավել չտրամադրել վարժության այս հատվածին:
5. Մոտ 10 րոպե անց մասնակիցներին տեղեկացրե՛ք հետևյալը՝

Անցավ մեկ տարի և առաջ եկան մի շարք խնդիրներ: Համայնքների միջև լարվածությունը գնալով սրվում է և շատերին անհանգստացնում է բուռն սոցիալական հուզումների հավանականությունը: Նախագահը հրավիրել է ձեզ, որպեսզի ստեղծեք աշխատանքային խումբ և փորձեք լուծումներ գտնել այս խնդիրներին:

6. Ողջ համայնքը բաժանե՛ք փոքր աշխատանքային խմբերի, այնպես որ յուրաքանչյուր աշխատանքային խմբում լինի Պաստիկ համայնքի 2 և Իքսպրատ համայնքի 4 ներկայացուցիչ: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք էջ 88-ի խնդիրներից մեկը:
7. Տեղեկացրե՛ք խմբերին, որ խնդրի լուծման համար նրանց հատկացվում է 20 րոպե: Բացատրե՛ք, որ բոլոր առաջարկությունները պետք է դրվեն քվեարկության և ընդունվելու համար արժանանան ենթախմբի անդամների մեծամասնության հավանությանը: Հիշեցրե՛ք նրանց, որ նոր որոշման շուրջ համաձայնության չգալու դեպքում կպահպանվի status quo:
8. 20 րոպե անց միավորե՛ք խմբերը, որպեսզի բոլորը ներկայացնեն իրենց որոշումները: Յուրաքանչյուր խմբին հատկացրե՛ք 2-3 րոպե իրենց որոշման մասին ընդհանուր կետերով պատմելու, ինչպես նաև արձագանքների և հակիրճ պատասխանների համար: Այնուհետև անցե՛ք վերլուծության և գնահատման փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նախ հիշեցրե՛ք մասնակիցներին, որ իրենք այլևս դերեր չեն խաղում և պետք է քննարկեն վարժությունն ընդհանուր առմամբ և փորձեն չվերադառնալ նախորդ քննարկմանը:

- Ի՞նչ կարծիք ունեք վարժության մասին: Ի՞նչը հավանեցիք կամ չհավանեցիք վարժության մեջ:

- Ձեզ համար հե՞շտ էր խաղալ ձեր դերը և հատկապես մնալ դերի մեջ, երբ կղզու բոլոր բնակիչները հավաքվեցին իրար հետ:
- Ի՞նչ կարծիք ունեք բանակցային գործընթացի, ինչպես նաև վարժության վերջում՝ որոշումների ընդունման փուլի մասին: Ի՞նչն էր լուծումներ գտնելու ընթացքում ձեզ համար ամենահետաքրքիրը:
- Ի՞նչ եք կարծում, արդար էր, որ Իքսպրաների համայնքը, լինելով մեծամասնություն, ըստ էության վետոի իրավունք ուներ որևէ որոշման նկատմամբ: Ինչպե՞ս համոզվենք, որ «իրական կյանքում» և՛ մեծամասնության, և՛ փոքրամասնության տեսակետներն ու իրավունքները արդարացիորեն են ներկայացվում:
- Փոխե՞ց արդյոք վարժությունը ձեր տեսակետները: Եթե այո, ապա հատկապես ո՞ր հարցի վերաբերյալ և ինչո՞ւ:
- Ինչ եք կարծում վարժությունն արտացոլու՞մ էր իրականությունը: Միգուցե այն ձեզ հիշեցրե՞ց այսօրվա հասարակության իրական խնդիրները:
- Ի՞նչ եք կարծում, ինչպես պետք է վարվել, երբ մարդիկ անում են վիրավորական են, նեղմիտ և երբեմն նաև վտանգավոր հայտարարություններ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Որպեսզի մասնակիցները հնարավորություն ունենան զգալու, թե ինչպիսին է կյանքն իրենց համայնքներում, երկու կղզիներում ապրելակերպի նկարագրությունները համեմատաբար երկար են: Այդ նկարագրությունները պետք է ընթերցել ոչ թե զուտ որպես տեղեկություններ պարունակող նյութ, այլ որպես պատմվածք:
- Այն աշխատանքային խումբը, որին բաժին կհասնի համացանցում քարոզարշավ անցկացնելու խնդիրը, պետք է կենտրոնանա խնդրի առցանց տարբերակի վրա: Համենայնդեպս, նրանց պետք է ուղղորդել այնպես, որպեսզի ոչ վիրտուալ տարածքում իրականացվելիք գործողություններից բացի, դիտարկեն նաև առցանց տարբերակները:
- Հնարավորություն տվե՛ք մասնակիցներին, որպեսզի իրավիճակի սիմուլացիոն վարժությունն անցկացնեն հնարավորինս ինքնուրույն՝ առանց ձեր ուղղորդման: Հավաստիացե՛ք, որ նրանք հիշում են ժամանակային սահմանափակումների մասին և հասկանում առաջադրանքի էությունը, բայց թույլ տվե՛ք, որ առաջադրանքն իրականացնեն այնպես, ինչպես ճիշտ կհամարեն: Ընդհատեք միայն այն դեպքում, եթե տեսնում եք, որ առաջադրանքը սխալ է հասկացվել, կամ եթե լարվածության աստիճանը և բախումները խանգարում են գործընթացին:
- Մասնակիցների համար օգտակար կլինեն արտահայտման ազատության վերաբերյալ տեղեկությունները: Եթե ժամանակը ների, օգտագործե՛ք տեղեկությունների մի մասը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Եթե ժամանակը սահմանափակ է, կարելի է կրճատել նկարագրությունների հատվածը, իսկ վերջնական բանակցությունների փուլում բոլոր խմբերին քննարկման համար տալ առաջին խնդիրը: Այսպես բանակցություններն ավելի արագ կընթանան:

Եթե խմբերի առաջին (առանձին) հանդիպումների փուլի համար ունեք բավարար ժամանակ, կարող եք հարցնել մասնակիցներին, արդյոք կա՞ որևէ ուղերձ, որ նրանք կուզեին հղել մյուս մասնակիցներին, երբ բոլոր խմբերը միանան: Ուղերձներն այնուհետև կարող են հիմք հանդիսանալ այն համառոտ «ներածությունների» համար, որոնք անցկացվելու են հանդիպման առաջին 10 րոպեների ընթացքում:

Եթե խումբը մեծ է, կարող է առաջանալ «նոր» համայնքն ավելի փոքր խմբերի բաժանելու անհրաժեշտություն , որպեսզի բոլորն ունենան մասնակցելու հնարավորություն: Նոր խմբերից յուրաքանչյուրի մեկ երրորդը պետք է կազմեն պաստիկցիները, իսկ երկու երրորդը՝ իքսպրատցիները: Խմբերը նաև կարող են 1 կամ 2 խոսնակ ընտրել իրենց համայնքի համար:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցներն իրենց խմբի համար կարող են մշակել առաջարկ՝ բանակցությունների արդյունքում ստացված կետերի օրինակով: Այդ առաջարկը կարելի է դնել քվեարկության և օգտագործել որպես վիրտուալ և ոչ վիրտուալ տարածքներում վարքագծի ուղենիշ սկզբունքներ: Մասնակիցները կարող են ուսումնասիրել իրենց երկրի ներգաղթյալների հիմնական խմբերը: Կարող են փորձել հասկանալ, թե որոնք են այն պատճառները, որ դրդել են նրանց տեղափոխվել այլ երկիր և արդյո՞ք նրանք համարում են, որ հասարակության մյուս անդամները հարգում են իրենց իրավունքները և տեսակետները, թե ինչպես են նրանց պատկերում տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցները: Կարող եք հրավիրել նաև տարբեր համայնքների ներկայացուցիչների՝ խմբի հետ զրուցելու համար:

Եթե ձեր երկիրը չի համարվում ներգաղթի երկիր, կարող եք ուսումնասիրել, թե ինչպես են վերավերվում ձեր երկրից արտագաղթածներին ընդունող երկրներում:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՊԱՍՏԻԿ ԿՂԶԻ

Դուք ապրում եք փոքր կղզում, որի սահմանները փակ են, որտեղ արդեն վաղուց ոչ ոք չի ներգաղթում և որը երբեմն այցելում են սակավաթիվ զբոսաշրջիկներ: Ձեր հանրությունը հանգիստ է և խաղաղասեր. խաղաղությունը և բախումների բացակայությունն ամուր ավանդույթներ ունեն այստեղ և համարվում են «ազգային առաջնայնություն»: Սահմանադրության մեջ կա նույնիսկ դրույթ, որը մասնավորապես սահմանում է, որ

Ոչ ոք չունի որևէ մեկին ցավ կամ վիրավորանք պատճառելու իրավունք:

Այս օրենքի իրագործումը լրջորեն վերահսկվում է, և դրա խախտումները պատժվում են օրենքի ողջ խստությամբ: Այն շատ հազվադեպ է խախտվում. շատ ավելի հեշտ է համաձայնել մյուսների հետ: Անհամաձայնությունը պաստիկցիների համար դարձել է տանջալից մի երևույթ, քանի որ այն խռովություն է առաջացնում: Ձեր երկիրն իրեն համարում է ժողովրդավարական երկիր: Ընտրություններն անցկացվում են ամեն տարի և գրեթե բոլորը մասնակցում են քվեարկությանը: Սակայն տարեց տարի ընտրվում են նույն մարդիկ, քանի որ գրեթե չեն քննարկվում որևէ այլընտրանքային քաղաքականություններ:

Ընդհանուր առմամբ, զրույցներում, հանրային ելույթներում և նույնիսկ լրատվամիջոցներում չեն արտահայտվում կարծիքներ, որոնք կտարբերվեին հասարակական ընդունված կարծիքներից, և մարդիկ հիմնականում դեմ չեն նման իրավիճակին, քանի որ արդեն մոռացել են կամ ի վիճակի չեն պատկերացնել այլ՝ տարբերվող գործելաոճեր: Մնացած աշխարհի մասին լուրեր այստեղ գրեթե չեն տարածվում, մյուս մշակույթներում ստեղծված գրականություն չի ընթերցվում և գրեթե չկա որևէ փոփոխություն, քանի որ համարվում է, որ փոփոխությունը նույնպես անհանգստացնող երևույթ է:

Տարիների ընթացքում մարդիկ նկատում էին, թե ինչպես է փոխվում ջրափնյա գիծը. ծովի մակարդակը բարձրանում էր և երկրի շատ տարածքներ, որոնք մինչ այդ բնակեցված էին, այժմ արդեն ջրի տակ են: Սկզբում սա ոչ մեկին չէր անհանգստացնում, քանի որ հողատարածքները շատ էին և ծովափնյա համայնքների բնակիչները պարզապես տեղափոխվեցին երկրի ներքին շրջաններ: Սակայն վերջին տարիներին խնդիրը ձեռք բերեց ավելի մեծ ծավալներ: Որոշ մարդիկ սկսեցին քննարկել սա իրենց մասնավոր զրույցներում, բայց քանի որ սա անհանգստացնող թեմա էր, կառավարությունն այն արգելեց:

Կյանքը շարունակվում էր. հիմնականում հանգիստ, կանխատեսելի և բախումներից ու անհամաձայնությունից զերծ մթնոլորտում, մինչև մի ահավոր օր սաստիկ փոթորիկը ավերեց կղզին: Շինությունները քանդվեցին, զոհվեցին մարդիկ, իսկ տարածքը հեղեղվեց: Երբ ալիքները նահանջեցին, պարզվեց, որ բերքի շատ փոքր մասն էր պահպանվել, իսկ պահպանվածն էլ փչանում էր աղաջրից: Գրեթե բոլոր ենթակառուցվածքները շարքից դուրս էին եկել: Սնունդը սկսեց չբավարարել, սկսեցին տարածվել վարակներն ու

հիվանդությունները, դեղորայքը չէր բավարարում: Կղզում քաոս էր տիրում: Մարդիկ սկսեցին վիճելլուծումներից լավագույնը գտնելու համար

Եվ երբ թվում էր, թե էլ ոչ մի հույս չկա, հարևան՝ Իքսպրատ կղզուց, հաղորդագրություն ստացվեց: Հաղորդագրության մեջ ասվում էր, որ Իքսպրատում խորապես անհանգստացած են բոլոր պաստիկցիների համար և որ պատրաստ են ընդունել բոլոր նրանց, ովքեր ունեն Իքսպրատ տեղափոխվելու ցանկություն: Դուք այն մարդկանց թվում եք, ովքեր որոշեցին տեղափոխվել:

ԻՔՍՊՐԱՏ ԿՂԶԻ

Դուք ապրում եք Իքսպրատ կղզում, որը գտնվում է Խաղաղ օվկիանոսում և որի կողքով է անցնում օվկիանոսը կտրող հնագույն առևտրային ճանապարհներից մեկը: Ձեր կղզու զարգացման հիմնական ուղղություններն ավանդապես եղել են առևտուրը և կապերն այլ երկրների հետ և արդեն մի քանի հարյուր տարի է, ինչ կղզին վարում է «բաց սահմանների» քաղաքականություն: Սա ենթադրում է, որ շատ տարբեր մշակույթներից եկած ճանապարհորդներն ու ներգաղթյալները միշտ եղել են կղզու կյանքի անբաժան մասը: Արդյունքում ձևավորվել է շատ բազմազան բնակչություն, որի տարբեր հատվածներն ունեն տարբեր տեսակետներ, համոզմունքներ և ստեղծել են տարբեր ենթամշակույթներ:

Ձեր ազգային մշակույթը հեշտությամբ ընդունում է այս բազմազանությունը. մարդկիկ մեծ հետաքրքրությամբ են վերաբերվում բոլոր տարբերվող մոտեցումներին, տարատեսակ հավատքներին և գաղափարախոսություններին: Բնականաբար, հաշվի առնելով նման բազմազանությունը, բոլոր գաղափարները կամ գաղափարախոսությունները չէ, որ բոլորին դուր են գալիս: Անհամաձայնությունն ու բախումը Իքսպրատի ապրելաոճի մի մասն են կազմում: Երկու մտածող մարդկանց գրեթե յուրաքանչյուր հանդիպում ենթադրում է մտքերի, համոզմունքների և գաղափարների մանրակրկիտ քննարկում և քննադատություն: Ավելին, գրեթե յուրաքանչյուր նման հանդիպման կամ ընթացքում է արտահայտվում անհամաձայնություն, կամ այն այդպես էլ ավարտվում է՝ առանց կողմերի համաձայնության գալու: Կարելի է ասել, որ անհամաձայնության արտահայտումը վերածվել է ամենասիրելի ազգային զբաղմունքի:

Հենց այս պատճառներից ելնելով կղզում չկան օրենքներ, որոնք կարող են սահմանափակել անձի կամ խմբի մել այլ անձի կամ խմբի մասին արտահայտվելու ազատությունը: Որոշ մարդիկ իսկապես ահավոր կարծիքներ են արտահայտում: Երբեմն դրան հետևում են սարսափելի արարքներ: արդյունքում մարդիկ նաև անում են ահավոր բաներ: «Արարքն» օրենքով պատժելի է, իսկ «խոսքը»՝ ոչ:

Կյանքը Իքսպրատում հետաքրքիր է, դժվար և մշտապես փոփոխվող: Դուք բարձր եք գնահատում մշակույթի հարուստ լինելը և այն հանգամանքը, որ կարող եք ասել ինչ կցանկանաք: Դուք գիտակցում եք, որ անվերջ վեճերը և անհամաձայնությունը միշտ չէ, որ երջանկություն են բերում: Իրականում դուք գտնում եք, որ անհամաձայնությունը երբեմն չափազանց հոգնեցուցիչ է և ցավոտ. միշտ չէ, որ հեշտ է լսել, թե ինչպես են

մարդիկ արտահայտում սխալ գաղափարներ, առավել ևս, երբ դրանք դաժան են: Դուք նկատում եք նաև, որ հասարակության որոշ խմբեր ավելի հաճախ են դառնում դաժան և անհանդուրժողական արտահայտությունների զոհ, քան մյուսները:

Եվ նույնիսկ այդ ամենը հաշվի առնելով, դուք համարում եք, որ չափազանց կարևոր է, որպեսզի բոլորը միշտ ունենան իրենց համոզմունքներն արտահայտելու հնարավորություն:

Մի քամոտ օր, ձեր կղզի լուր եկավ, որ ուժեղ փոթորիկն ավերել է խաղաղ օվկիանոսի մեկ այլ կղզի: Դուք շատ քիչ բան գիտեք այդ կղզու մասին, քանի որ նրանք միշտ մեկուսացած կյանքով են ապրել: Դուք լսել եք, որ այդ կղզու բնակիչները շատ հիմար են և հետամնաց, բայց երբևէ չեք հանդիպել այդ կղզու որևէ բնակչի: Դուք գիտեք, որ այդ կղզի այցելելը գրեթե անհնար է:

Կառավարությունը որոշում է կայացրել՝ քանի որ պաստիկցիները մեծ զրկանքներ են կրել փոթորիկի հետևանքով, կենդանի մնացածներից շատերին հնարավորություն կտրվի տեղափոխվել Իքսպրատ: Նրանց համար տեղ կգտնվի, բայց դա կնշանակի, որ ներկայիս բնակիչները մեծ ջանքեր պետք է գործադրեն նոր հանգամանքներին հարմարվելու համար: Պետք կլինի կիսվել նրանց հետ աշխատանքով և միգուցե չլինի բոլորին բնակարաններով ապահովելու հնարավորություն:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՆԴԻՐ 1.

Համացանցում մեկնարկել և կայծակնային արագությամբ տարածում է գտել «Գտե՛ք պաստկերեն լեզուն» քարոզարշավը: Քարոզարշավի կայքում կան այնպիսի կարգախոսներ ինչպես օրինակ՝

- *Սեղմե՛ք պաստիկ-տիկնիկի փորին, տեսե՛ք՝ թե կծվծվա:*
- *Չկա լեզու, չկա ուղեղ:*
- *Գտե՛ք լեզուն, շահե՛ք սմարթֆոն:*

Մարդկանց խրախուսում են ուղարկել պաստիկցիների լեզուների լուսանկարներ: Կա «լեզուների պատկերասրահ», որտեղ տեղադրված են լուսանկարներ և տեսաֆիլմեր, որոնցում պատկերված է, թե ինչպես են պաստիկներին ստիպում, որպեսզի բացեն իրենց բերանը, լամպով լույս գցում բերանի մեջ, հեռադիտակներով կանգնած կամ լեզուներին մատնացույց անելով՝ նկարվում: Քարոզարշավը հետզհետե ավելի է ահագնանում և արդեն գրանցվել են բազմաթիվ դեպքեր, երբ պաստիկցիները փողոցներում բռնության են ենթարկվել: Պաստիկցիները հիմնականում պատասխանում են, ասելով, որ հրաժարվում են վիրավորական երկխոսության մեջ ներքաշվել այն մարդկանց հետ, ում նրանք չեն հարգում:

ԽՆԴԻՐ 2.

Պաստիկ համայնքից մի երիտասարդ աղջկա հետևից իքսպրատցի տղաների մի խումբ փողոցում գոռգռացել են և վիրավորել ասելով, որ նա «չաղ խոզ» է, «կեղտոտ քած» և որ նա ոչ լեզու ունի, ոչ էլ՝ սեփական խելք: Աղջիկն ահավոր վիճակում է, արդեն երկու շաբաթ է ինչ տնից դուրս չի գալիս և որևէ մեկի հետ չի խոսում: Երեք օր է բան չի ուտում: Ծնողները ծայրահեղ անհանգստացած են:

ԽՆԴԻՐ 3.

Հրապարակվել է մի զեկույց, համաձայն որի պաստիկների շրջանում գործազրկության տոկոսը շատ ավելի բարձր է, քան բնակչության մեջ ընդհանուր առմամբ, խորհրդարանում չկան պաստիկցի ներկայացուցիչներ և շատ քչերն են ղեկավար պաշտոն զբաղեցնում որևէ կազմակերպությունում: Զեկույցում նաև հաշվի են առնվել սոցիալական այլ գործոններ, օրինակ՝ սթրեսը և հոգեկան ու մտավոր հիվանդությունները, կրթական որակավորումները և հանցագործությունները: Բոլոր ցուցանիշներով պաստիկցիները զիջում են հասարակության մնացած բոլոր խմբերին: Պաստիկցիների նկատմամբ վերաբերմունքը հասարակության մյուս անդամների շրջանում նույնպես գլխավորապես բացասական է:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 1

ՄԱՍՆԱԿԻՑ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 10-20

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45’

ԴԻՄԱԿԱՅՈՒՄ ԵՆՔ ԿԻԲԵՐԲՈՒԼԻՆԳԻՆ

Այս վարժությունը կօգնի մասնակիցներին հասկանալ, թե ինչպես կարձագանքեին, եթե հայտնվեին հալածանքների և ահաբեկման հետ առնչվող տարբեր իրավիճակներում: Վարժության ընթացքում նաև կքննարկվեն գործողությունների այլընտրանքային սցենարներ:

ԹԵՄԱՆԵՐ	Կիբերբուլինգ, ժողովրդավարություն և մասնակցություն, համացանցային գրագիտություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	1
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ բուլինգի տարբեր ձևերը, ինչպես նաև վիրտուալ և ոչ վիրտուալ տարածքներում բուլինգի տարբեր տեսակների կապերը • Մշակել բուլինգին, կիբերբուլինգին և ատելության խոսքի առցանց դրսևորումներին դիմակայելու տարբեր ձևեր • Բարձրացնել դիմակայելու և պատասխան տալու կարևորության մասին իրազեկությունը
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• A4 ձևաչափի թղթերի վրա նկարե՛ք 4 նշան և փակցրե՛ք սենյակի տարբեր անկյուններում: Նշանների վրա պետք է գրված լինի՝ –ոչինչ, –արձագանքել ճնշողի գործողություններին, –հայտնել նման վարքագծի մասին, –որևէ այլ բան • Հավաստիացե՛ք, որ մասնակիցները կարող են հեշտությամբ տեղաշարժվել սենյակով մեկ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

- Նախ հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչպես են հասկանում «բուլինգ» բառը: Որպես հուշում խնդրեք մասնակիցներին, որ մտածեն այն բոլոր ձևերի մասին, որոնց միջոցով իրականացվում է բուլինգը:

- Ցույց տվե՛ք նրանց սենյակի անկյուններում փակցված նշանները և բացատրե՛ք, որ դուք նրանց համար բարձրաձայն կընթերցեք զարգացումների սցենարներ: Մասնակիցները պետք է ընտրեն ամենահամապատասխան տարբերակը.
  - ոչինչ չանել,
  - պատասխանել հալածողին/հալածողներին (օրինակ՝ մտնել վեճի մեջ, պատասխանել վիրավորանքներին/հետ հարվածել, կամ որևէ այլ բան. եթե դուք անձամբ չեք ճանաչում հալածողին, ապա այս տարբերակը կիրառելի չէ),
  - հայտնել նման վարքագծի մասին (օրինակ ուսուցչին, ծնողներին, կայքի ադմինիստրատորին կամ այլ որևէ իրավասու մարմնի),
  - որևէ այլ բան (օրինակ՝ մյուսներին ներգրավել քննարկման մեջ, ստեղծել «համերաշխության խումբ» և այլն, ինչպես նաև խնդրել նրանց ներկայացնել իրենց առաջարկները):
- Բացատրե՛ք, որ յուրաքանչյուր սցենարն ընթերցելուց հետո, մասնակիցները պետք է գնան այն անկյուն, որի նշանը ամենից մոտն է այն վարքագծին, որը նրանք կընտրեին: Խնդրեք նրանց, որպեսզի ազնիվ լինեն իրենց տարբերակն ընտրելիս:
- Ընթերցե՛ք առաջին սցենարը և իրենց անկյունն ընտրելու համար մասնակիցներին տվե՛ք ժամանակ: Երբ բոլորն արդեն կկանգնեն իրենց ընտրած անկյուններում, յուրաքանչյուր խմբից մի քանի հոգու խնդրե՛ք բացատրել իրենց ընտրությունը: Այնուհետև ընթերցեք հաջորդ սցենարը: Շարունակե՛ք այնքան ժամանակ, մինչև կզգաք, որ քննարկված իրավիճակների քանակը բավարար է:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերլուծության և գնահատման համար օգտագործե՛ք հետևյալ հարցերը՝

- Ձեզ դուր եկա՞վ վարժությունը: Սցենարներից որի՞ ժամանակ ամենից շատ դժվարացաք պատասխան ընտրելիս և ինչո՞ւ:
- Ի՞նչ եք կարծում, սրանք բոլորն էին «բուլինգի» օրինակներ:
- Դուք ինքներդ երբևէ դարձե՞լ եք կիբերբուլինգի թիրախ կամ ականատես եղե՞լ եք նման իրավիճակի: Ի՞նչ կարող եք ասել վիրտուալ և ոչ վիրտուալ բուլինգի միջև կապի մասին: Արդյոք կա՞ն էական տարբերություններ:
- Վարժությունը ձեզ հնարավորություն տվե՞ց նորովի նայել բուլինգի/կիբերբուլինգի թեմային: Ինչ եք կարծում, ապագայում նման իրավիճակում հայտնվելու դեպքում դուք այլ կերպ կպատասխանե՞ք:
- Ի՞նչ կարող եք անել կիբերբուլինգի դեմ պայքարելու համար:
- Ո՞վքեր պետք է դիմեն գործողությունների ատելության խոսքի առցանց դրսևորումները կանխարգելելու համար: Ինչպիսի՞ն պետք է լինի մեդիա ոլորտի ներկայացուցիչների, ծառայություններ մատակարարողների, ոստիկանության, ծնողների, դպրոցի ղեկավարության և այլ ներգրավված կողմերի դերը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Եթե խումբը շատ մեծ է կամ սովոր չէ մեծ խմբային քննարկումներին, կարող եք կիրառել կախարդական փայտիկի կամ երևակայական խոսափողի հնարը, որպեսզի բոլոր նրանք ովքեր ասելիք ունենան, սպասեն իրենց հերթին:
- Մասնակիցները կարող է ունենան միանգամից երկու տարբերակ ընտրելու ցանկություն, օրինակ՝ պատասխանել հալածողին և հայտնել բռնության/վիրավորանքների մասին: Եթե ստեղծվի նման իրավիճակ, ասե՛ք մասնակցին, որպեսզի ընտրի այն անկյունը, որն, ըստ իրեն, ամենակարևորն է, ապա հնարավորություն տվեք բացատրելու իր դիրքորոշումը:
- Հիշե՛ք, որ մասնակիցներից ոմանք կարող են հենց իրենք ենթարկված լինել բուլինգի, միգուցե նույնիսկ խմբի այլ մասնակիցների կողմից: Դուք պետք է շատ նրբանկատ լինեք տարբեր մասնակիցների իրավիճակների նկատմամբ և զգոն՝ հնարավոր բախումների առումով: Եթե զգում եք, որ ինչոր մեկը չի ցանկանում ներգրավվել, մի՛ ստիպեք:
- Եթե կան մասնակիցներ, որոնք ենթարկվում են բուլինգի, ապա վարժությունը հավանաբար կբացահայտի նրանց խնդիրները և նրանք կգիտակցեն հետագա աջակցության անհրաժեշտությունը: Բացատրեք մասնակիցներին, որ նման աջակցություն կարող եք ցուցաբերել կոնֆիդենցիալ կերպով, կամ տեղեկացրեք նրանց այդ ուղղությամբ զբաղվող այլընտանքային այլ համակարգերի մասին: Նախքան վարժությունը սկսելը կարող եք պարզել տեղական և ազգային նման ծառայությունների առկայությունը, օրինակ՝ թեժ գծեր կամ կազմակերպություններ, որոնք աջակցություն են առաջարկում նման իրավիճակների զոհերին:
- Եթե մասնակիցները տեղյակ չեն, թե ինչ է կիբերբուլինգը, կամ չեն հասկանում դրա քայքայիչ էությունը, դուք կարող եք օգտագործել հավելյալ տեղեկություններ՝ նրանց իրազեկելու համար, ինչպես բուն հարցի, այնպես էլ այլ մարդկանց կողմից կիրառված այլ մոտեցումների մասին: Եթե հնարավոր է ցույց տվեք կապը ատելության խոսքի և բուլինգի միջև (հատկապես երբ այս երկուսը միասին են հանդես գալիս):

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Վարժությունը կարելի է պարզեցնել ընտրության համար թողնելով միայն երկու տարբերակ՝ «Ոչինչ չանել» կամ «Մի բան անել»: Երկու նշաները կարելի է փակցնել սենյակի հակառակ կողմերում, և մասնակիցները կարող են կանգնել երկու նշանները միմյանցից բաժանող գծի երկայնքով՝ իրենց ընտրության համաձայն:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ցանկացած հետագա գործողություն առավել արդյունավետ կլինի, եթե մասնակիցները որոշեն իրականացնել այն խմբով: Դուք կարող եք քննարկել տարբեր ձևեր հետագա գործողություններն իրականացնելու համար, օրինակ՝ բարձրացնել խնդրի մասին իրազեկության մակարդակը (առցանց և իրական կյանքում), ստեղծել համերաշխության խումբ, մշակել հակաբուլինգային քաղաքականություն խմբի/դասարանի/դպրոցի համար կամ սկսել «Ո՛չ առցանց բուլինգին» քարոզարշավը և այլն:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՍՑԵՆԱՐՆԵՐ

Ձեզ անծանոթ համարներից և հասցեներից ստացել եք մի շարք վիրավորական հաղորդագրություններ և էլ. նամակներ: Դրանցից մի մասը պարունակում էին սպառնալիքներ: Տպավորություն կա, որ այդ տողերի հեղինակները Ձեզ ճանաչում են: Ի՞նչ կանեք դուք:

Ձեր դպրոցի աշակերտներից մի քանիսը խմբագրել են ձեր որոշ լուսանկարներ և տեղադրել առցանց՝ զզվելի մեկնաբանություններով: Դուք համոզված եք, որ գիտեք, թե ովքեր են արել դա: Ի՞նչ կանեք դուք:

Ձեր դասարան է եկել օտարերկրացի մի տղա: Ձեր ընկերները ծաղրում են նրան և նրա մասին արդեն սկսել են ռասիստական բնույթի կատակներ տեղադրել սոցիալական ցանցերում: Ձեզ նույնպես անընդհատ ասում են, որպեսզի թվիթերով կամ այլ սոց. ցանցերով տարածեք դա: Ի՞նչ կանեք դուք:

Ձեր համադասարանցիներից ոմանք վիրավորական բամբասանք են տարածում ձեր մասին սոցիալական ցանցերի կայքերով: Շատ երեխաներ հիմա ձեզ հետ չեն խոսում և չեն խաղում: Նույնիսկ Ձեր ընկերներն են սկսում հավատալ այդ ստին: Ի՞նչ կանեք դուք:

Ուսուցիչը դասարանին տեղեկացնում է, որ որոշ երեխաների հալածում են և մի երիտասարդի վրա նույնիսկ հարձակվել են դպրոցից տուն գնալու ճանապարհին: Նա խնդրում է, որպեսզի բոլոր նրանք ովքեր որևէ բան գիտեն այս ամենի մասին դասից հետո առանձին խոսեն իր հետ: Դուք կարծում եք, որ գիտեք թե ով է դա անում, բայց վախենում եք ձայն հանել, քանի որ վերջերս բազմաթիվ հաղորդագրություններ եք ստացել, որտեղ Ձեզ զգուշացնում են, որ ձայն չհանեք: Ի՞նչ կանեք դուք:

Դուք տեսնում եք, որ երեխաներից մեկը, խաղահրապարակում մենակ կանգնած, լաց է լինում: Դուք գիտեք, որ մյուս երեխաները ծաղրում են նրան, քանի որ նա ունի սահմանափակ կարողություններ, և անվանում նրան «հիվանդ» և «անճոռնի խոզ»: Ձեր ընկերները բոլորից շատ են ծաղրում այդ երեխային և հաճախ դա անում են, երբ բոլորդ միասին եք: Ի՞նչ կանեք դուք:

Այս վարժության հիմքում ընկած է «Բուլինգի տեսարաններ» վարժությունը, որն ընդգրկված է Մարդու իրավունքների կրթության «Կողմնացույցիկ« մանկական ձեռնարկում: http://www.eycb.coe.int/compasito

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 2

ՄԱՍՆԱԿԻՑ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 12-20

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45’

ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մասնակիցներն ուսումնասիրում են արտահայտման ազատության գաղափարը մի շարք իրական դեպքերի ուսումնասիրությունների հիման վրա: Նրանք պետք է որոշեն՝ ինչպես վարվել հակասական, վիրավորական կամ հնարավոր վտանգ պարունակող մեկնաբանությունների և հաղորդագրությունների հետ:

ԹԵՄԱՆԵՐ	Արտահայտման ազատություն, ժողովրդավարություն և մասնակցություն, Մարդու իրավունքներ
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	2
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝	12-20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Ուսումնասիրել արտահայտման ազատություն գաղափարը • Հասկանալ, թե ինչո՞ւ է արտահայտման ազատությունը կարևոր ինչպես անհատների, այնպես էլ հասարակության համար • Դիտարկել այն պատճառները, որոնք կարող են հիմք հանդիսանալ արտահայտման ազատությունը սահմանափակելու համար՝ մարդու իրավունքները պաշտպանելու նպատակով, հատկապես այն դեպքերը, երբ խոսքը գնում է ատելության խոսքի մասին
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Ֆլիպչարտ և մարկերներ • Քարտերի օրինակներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք քարտերի օրինակներ (այնպես որ բավարար լինի բոլոր փոքր աշխատանքային խմբերի համար)

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հարցրե՛ք մասնակիցներին, ինչ են հասկանում «արտահայտման ազատություն» ասելով: Գրանցե՛ք պատասխանները ֆլիպչարտի վրա: Այնուհետև սկսե՛ք քննարկում հետևյալ հարցերի շուրջ, եթե մասնակիցները դրանք չեն նշել՝
   - Արդյո՞ք արտահայտման ազատությունը նշանակում է, որ մենք կարող ենք ասել ինչ ցանկանանք:

- Եթե դուք կարծում եք, որ որոշ «արտահայտություններ» պետք է արգելվեն, ինչպե՞ս եք որոշում, թե հատկապես որոնք: Ո՞վ պետք է դա որոշի:
- Բացի բանավոր և գրավոր խոսքից, ի՞նչ այլ ձևերով կարող ենք արտահայտվել (երաժշտություն, թատրոն, նկարներ, շարժումներ և այլն):

2. Այս փուլում մի՛ փորձեք «հանգուցալուծել» խնդիրը: Լսե՛ք կարծիքները և բացատրե՛ք, որ այս հարցերը բավական հակասական են և որ վարժության միջոցով դուք ավելի մանրամասն կուսումնասիրեք դրանք:
3. Հարցրե՛ք արդյոք նրանցից որևէ մեկին երբևէ արգելե՞լ են արտահայտել սեփական կարծիքը՝ լինի դա դպրոցում, տանը կամ հանրային որևէ իրավիճակում: Ինչպե՞ս դուք ձեզ զգացիք այդ պահին: Ինչու՞ էր ձեզ համար կարևոր արտահայտել ձեր կարծիքը:
4. Տրամադրե՛ք նրանց համառոտ տեղեկություններ արտահայտման ազատության մասին: Կարող եք օգտագործել ստորև, կամ ընդհանուր տեղեկություններ բաժնում ներկայացված տեղեկատվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մտքերը կամ կարծիքներն արտահայտելու ազատության իրավունքը մարդու կարևոր իրավունքներից մեկն է և հանդիսանում է մարդու իրավունքների մասին միջազգային իրավունքի մաս: Այս իրավունքը կարևորվում է և՛ որովհետև մտքերը, կարծիքներն ու հաղորդակցվելու կարողությունը մեր մարդկային էության անբաժան մասն են, և՛ քանի որ հաղորդակցությունը և քննարկումները առանցքային դեր ունեն արդյունավետ ժողովրդավարական հասարակություն կառուցելու գործում: Մյուսների հետ կողք կողքի ապրելը և նրանց հասկանալն ուղիղ կախվածության մեջ է ազատ հաղորդակցվելու հնարավորությունից՝ նույնիսկ, եթե երբեմն մենք ստիպված ենք լինում լսել կարծիքներ, որոնց հետ համաձայն չենք:

Այնուամենայնիվ, արտահայտման ազատությունը «բացարձակ» իրավունք չէ, որը կիրառվում է միշտ՝ առանց որևէ սահմանափակումների: Սա մի իրավունք է, որը պետք է հավասարակշռության մեջ լինի մյուսների իրավունքների, կամ հասարակության համընդհանուր շահի հետ: Երբ արտահայտումը ծայրահեղ վնասակար է որոշ անհատների համար կամ կարող է վնաս հասցնել հասարակությանը, ապա այն կարող է սահմանափակվել:

5. Ասե՛ք մասնակիցներին, որ նրանք աշխատելու են փոքր խմբերում (4 5 մասնակից) և քննարկելու են մի շարք իրավիճակներ, երբ մարդիկ առցանց տեղադրում են որևէ բան, որը կարող է վնասել այլ անձանց կամ ոտնահարել նրանց իրավունքները: Ամեն առանձին իրավիճակի համար խմբերը պետք է որոշեն՝ կա՞ արդյոք նյութը հեռացնելու կարիք: Այլ կերպ ասած, արտահայտման ազատությունը պետք է սահմանափակվի, թե՞ ոչ:
   - Եթե որոշեն, որ պետք է հեռացվի, ապա հատկապես ի՞նչը և ինչու՞:
   - Եթե՝ ոչ, ապա ինչու՞: Ի՞նչ այլ միջոցներ է կարելի ձեռնարկել և ո՞վ պետք է դա անի:
6. Մասնակիցներին բաժանե՛ք 4 կամ 5 հոգանոց խմբերի և յուրաքանչյուր խմբին տվե՛ք իրավիճակների օրինակներ: Տրամադրե՛ք նրանց 20 րոպե՝ յուրաքանչյուր օրինակը քննարկելու համար: Նրանք նաև պետք է հիմնավորեն իրենց որոշումները:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հերթով անցե՛ք բոլոր մասնավոր դեպքերի ուսումնասիրություններով և հարցրե՛ք մասնակիցների պատասխանները: Հակիրճ քննարկե՛ք նրանց որոշումների հիմնավորումները: Օգտագործե՛ք հետևյալ հարցերն այլ կարևոր կետեր պարզելու համար՝

- Կային արդյո՞ք իրավիճակներ, երբ դուք չէիք կարողանում ընդհանուր հայտարարի գալ խմբում: Ինչի՞ շուրջ էր անհամաձայնությունը:
- Արդյոք ունե՞ր նշանակություն, թե ով էր պատասխանատու տեղադրված հաղորդագրությունների համար: Նշանակություն ունե՞ր, թե քանի հոգի էր արձագանքել և ինչպե՞ս էին արձագանքել:
- Արդյոք կարողացա՞ք սահմանել ընդհանուր սկզբունքներ՝ համաձայն որոնց կարելի է որոշել, թե երբ է կարելի (կամ անհրաժեշտ) սահմանափակել արտահայտման ազատությունը: Որո՞նք են չափից ավել սահմանափակումներ սահմանելու վտանգները: Որո՞նք են չափից ավել ազատություն թույլ տալու վտանգները:
- Ինչ եք կարծում, կայքը փակելը կամ վիրավորկան հաղորդագրությունները հեռացնելը որքանո՞վ է արդյունավետ ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում:
- Ձեր երկրում որևէ կերպ սահմանափակվու՞մ է այն, թե ինչ մտքեր կարող են արտահայտել մարդիկ առցանց տիրույթում կամ իրական կյանքում: Առցանց արտահայտությունների համար կանոնները նույնն են, թե՞ տարբերվում են:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Երբ մասնակիցները քննարկեն մասնավոր դեպքերի օրինակները, հիշեցրե՛ք, որ նյութերը հեռացնելու որոշում ընդունելու դեպքում, նրանք պետք է որոշեն, թե ինչպես են հեռացնելու նյութերը: Օրինակ՝ կարող են որոշել փակել ողջ կայքը կամ անձնական էջը, կամ հեռացնել մեկ հաղորդագրություն/տեսագրություն, արգելել որևէ կոնկրետ օգտատիրոջ մուտքը (բլոկել) և այլն:
- Արժե մասնակիցներին հիշեցնել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չափազանց լուրջ քայլ է համարում արտահայտման ազատության սահմանափակման յուրաքանչյուր միջոց: Դա կարելի է անել միայն շատ լուրջ հիմնավորումների առկայության պարագայում:
- Կարող եք մասնակիցների հետ դիտարկել, թե որքանով կարևոր էին քննարկումները իրենց սեփական կարծիքը կազմելու համար, և ինչ է դա ցույց տալիս, եթե նայենք դրան արտահայտման ազատության տեսանկյունից:
- Բացատրե՛ք մասնակիցներին, որ մարդու իրավունքների վերաբերյալ օրենսդրությունն այն մասին է, թե ինչպես պետք է իրեն դրսևորի կառավարությունը նման դեպքերում: Համացանցում հաճախ ավելի բարդ է սահմանափակել արտահայտման ազատությունը, ելնելով նրանից, որ համացանցի հիմնական մասը «պատկանում է» մասնավոր ընկերություններին (մասնավոր հոսթինգային մատակարարներ, ընկերություններին պատկանող տեղեկատվական կայքեր և այլն): Ծանոթացե՛ք 5-րդ բաժնում արտացոլված

գլխավոր կետերին, հիմնական տեղեկություններին՝ կապված արտահայտման ազատության հետ կամ՝ համացանցի օգտատերերի համար Մարդու իրավունքների ուղեցույցում ներկայացված «արտահայտման և տեղեկությվության ազատության» բաժնին:

- Նախքան վարժությունն անցկացնելը պարզեք կան արդյոք քննարկվող օրինակների մեջ դեպքեր, որոնք համաձայն ձեր երկրի ներպետական օրենքների՝ օրենք են խախտում:
- Ցանկալի է, որ վարժության վերջում դիտարկեք նաև նման իրավիճակներից այլ ելքերի տարբերակներ: Որոշ առաջարկություններ կարող եք գտնել գլուխ 2ի «Ո՛չ ատելության խոսքին» քարոզարշավի մասին նյութերում: Հիշեցրե՛ք մասնակիցներին, որ վիրավորական նյութը կամ կայքը հեռացնելը կամ փակելը միակ հնարավոր լուծումը չէ: Դա բավական բարդ կլինի իրագործել գործնականում ՝ հաշվի առնելով համացանցում տեղադրվող նյութերի քանակը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Մասնավոր դեպքերը, որ ներկայացված են վարժության մեջ կարող են անցկացվել նաև որպես դերային խաղ: Փոքր խմբերից յուրաքանչյուրը կարող է ընտրել նկարագրվող դեպքերից մեկը և բեմականացնել այն մյուս մասնակիցների համար: Այնուհետև, արդեն մեծ խմբով կարելի է քննարկել, թե որը կլիներ իրավիճակի ամենաճիշտ լուծումը:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Որքանո՞վ են մասնակիցները տեղյակ խորհրդարանում իրենց ներկայացուցչի գործունեությունից: Նրանք կարող են ուսումնասիրել իրենց խորհրդարանական ներկայացուցչի հանրային ելույթները փոքրամասնությունների կամ այլ խոցելի խմբերի մասին և այնուհետև գրեն նրան՝ արտահայտելով իրենց անհամաձայնությունը կամ աջակցությունը: Եթե խմբի բոլոր անդամներն առանձին-առանձին նամակներ գրեն, միգուցե նաև ստանան պատասխան:

Մասնակիցները կարող են նաև ստուգել, թե ինչպես է հնարավոր հայտնել համապատասխան ներպետական մարմիններին ատելության խոսքի առցանց դրսևորման մասին: Համապատասխան աղբյուր է՝https://www.coe.int/en/web/no-hate-campaign/reporting-to-national-bodies

Քննարկե՛ք այն հնարավոր գործողությունները, որոնց կարելի է դիմել, եթե մասնակիցներից որևէ մեկը համացանցում տեսնի ռասիստական հաղորդագրություն: Միասին մշակե՛ք փաստարկներ և կարճ հաղորդագրությունների տեքստեր, որոնք մասնակիցները կարող են օգտագործել, երբ համացանցում հանդիպեն ատելության խոսքի առցանց դրսևորումների օրինակներ:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՍՆԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

1. «Վերականգնենք մեր ազգը» խումբը ստեղծում է կայք, որտեղ գովերգվում են «ավանդական արժեքները»: Այստեղ տեղադրվող հաղորդագրություններից շատերն ունեն ռասիստական բնույթ: Կայքն ունի մեծ թվով այցելուներ և այստեղ տեղի են ունենում թեժ քննարկումներ: Որոշ քննարկումների ընթացքում օգտագործվում են չափազանց վիրավորական արտահայտություններ, սակայն կա մեկնաբանողների մի մեծ հանրություն, որի անդամները դեմ են կայքի ռասիստական գաղափարախոսությանը:
   - Արդյոք պե՞տք է ջնջել/հեռացնել նշվածը: Եթե այո, ապա որքա՞նը և ինչու՞:
   - Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ է կարելի անել:

2. Նիկոլայը քաղաքական գործիչ է և օգտագործում է իր անձնական կայքը ռոմա (գնչուական) համայնքն իր ընտրատարածքից վտարելու կոչեր անելու համար՝ պատճառաբանելով, որ հանցագործությունների բարձր մակարդակի մեղավորները հենց նրանք են: Իր կոչերից հետո ամբողջ երկրով տեղի են ունենում հարձակումներ այս համայնքի ներկայացուցիչների վրա: Լրատվամիջոցների մեծ մասը սկսում են նյութեր հրապարակել, որոնցում պատմում են ռոմաների (գնչուների) կողմից կատարված հանցագործությունների մասին, սակայն որևէ կերպ չեն լուսաբանում նրանց դեմ կատարված հանցագործությունները:
   - Արդյոք պե՞տք է ջնջել/հեռացնել նշվածը: Եթե այո, ապա որքա՞նը և ինչու՞:
   - Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ կարելի է անել

3. Իր անձնական բլոգում Որին տեղադրում է մի ծաղրանկար, որտեղ պատկերված է հայտնի քաղաքական գործիչ, որի ձեռքերից արյուն է կաթում և շուրջ բոլորը դիակներ են: Այս ծաղրանկարի տակ մեկնաբանություններ են թողնում շատերը՝ հիմնականում հավանություն տալով ծաղրանկարին:
   - Արդյոք պե՞տք է ի ջնջել/հեռացնել նշվածը: Եթե այո, ապա որքա՞նը և ինչո՞ւ:
   - Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ կարելի է անել:

4. Էլլան իր բաց անձնական էջով տեսահոլովակ է տեղադրում, որում ծաղրուծանակի են ենթարկում հաշմանդամություն ունեցող անձանց՝ պատկերելով նրանց որպես ամեն ինչից անտեղյակ «այլմորակային» էակներ: Կայքի վիճակագրությունը ցույց է տալիս, որ գրեթե ոչ ոք չի նայել տեսահոլովակը և այցելուները չեն թողել մեկնաբանություններ:
   - Արդյոք պե՞տք է ջնջվեն/հեռացվեն: Եթե այո, ապա որքա՞նը և ինչու՞:
   - Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ կարելի է անել:

5. Լրագրողներից մեկը տեսնում է տեսանյութը (օրինակ 4) և քարոզարշավ սկսում՝ պահանջելով փակել Էլլայի անձնական էջը սոցիալական կայքում: Արդյունքում, հազարավոր մարդիկ դիտում են տեսանյութը: Որոշ մարդիկ գրում են. «սա ամենալավ տեսանյութն է, որ տեսել եմ», «պետք է վերջապես իրատես դառնանք հաշմանդամություն ունեցող անձանց հարցում» և այլն:
   - Արդյոք պե՞տք է ջնջել/հեռացնել նշվածը: Եթե այո, ապա որքա՞նը և ինչու՞:
   - Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ կարելի է անել:

:

6. Շոուբիզնեսի հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Դիտան, առցանց լրատվական կայքում տեղադրում է հոդված, որում ասվում է, որ տրանսգենդեր կանայք «վիրավորանք են մարդկության համար»: Ստեղծվում է կայք, որի նպատակն է «տապալել Դիտային»: Կայքում տեղադրվում են նյութեր նրա անձնական կյանքի մասին բազմաթիվ մանրամասնություններով: Նա սկսում է ստանալ հարյուրավոր՝ անձնական վիրավորանքներ պարունակող էլեկտրոնային նամակներ և թվիթ հաղորդագրություններ, որոնցից մի մասը ներառում է նաև սպառնալիք:
   - Արդյոք պե՞տք է ջնջվի/հեռացվի նշվածը: Եթե այո, ապա որքա՞նը և ինչու՞:
   - Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ է կարելի անել:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 4

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 12-24

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

X ԽՈՒՄԲ

Մասնակիցները պետք է որոշեն, թե Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի որ իրավունքների ոտնահարումների հետ են ամենից հաճախ բախվում երիտասարդ ռոմաները (գնչուները):

ԹԵՄԱՆԵՐ	Ռասիզմ և խտրականություն, Մարդու իրավունքներ, գաղտնիություն և անվտանգություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	4
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	12-24
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Ուսումնասիրել ատելության խոսքի թիրախ դարձած անձանց համար այլ իրավունքների սահմափակման հանգամանքը • Բարձրացնել իրազեկության մակարդակը, այն հարցի շուրջ, թե ինչ իրավունքներ ունեն ռոմաները (գնչուները), և մարդու որ իրավունքների ոտնահարման հետ են նրանք բախվում ամենից հաճախ • Հասկանալ, թե իրավունքների ոտնահարման իրական օրինակներից յուրաքանչյուրում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) որ իրավունքն է խախտվում
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• X խմբի մասին տեղեկատվական քարտեր (մեկական օրինակ յուրաքանչյուր փոքր խմբին) • ՄԻԵԿ (համառոտ տարբերակը) մի քանի օրինակ: Յուրաքանչյուր փոքր խմբին անհրաժեշտ կլինի առնվազն 2 օրինակ • Ֆլիպչարտներ և մարկերներ • Մկրատ և սոսինձ (կամընտրական)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Յուրաքանչյուր խմբի համար նախապատրաստե՛ք ֆլիպչարտներ փակցրե՛ք X խմբի մասին պատմող տեղեկատվական թերթիկը այդ թղթի մեջտեղում

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Բարձրաձայն ընթերցեք X խմբի մասին պատմող նյութը (էջ 103). Բացատրե՛ք, որ նկարագրված օրինակները իրենց երկիրը չունեցող, բայց բազմաթիվ երկրներում բնակություն հաստատած, որոշակի ազգային փոքրամասնության պատկանող մարդկանց

ամենօրյա կյանքից բերված օրինակներ են: Մասնակիցներին հնարավորություն տվե՛ք գուշակել, թե որ փոքրամասնության մասին է խոսքը, այնուհետև ասե՛ք, որ բոլոր օրինակները վերաբերում են ռոմաներին (գնչուներին), որոնք ապրում են Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում:

2. Մի փոքր ժամանակ տրամադրե՛ք խմբին ընթերցված տեքստի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտելու համար: Բացատրե՛ք, որ բերված օրինակների մեծ մասը մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավունքի խախտումներ են և անօրինական են Եվրոպայի բոլոր երկրներում: Անհրաժեշտության դեպքում, հիշեցրե՛ք մասնակիցներին, թե ինչ են մարդու իրավունքներն ընդհանրապես և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ)՝ մասնավորապես: Օգտագործե՛ք էջ 267-ի հավելյալ տեղեկությունները:
3. Բացատրե՛ք, որ մասնակիցներն աշխատելու են փոքր (4-5 մասնակից) խմբերում և օգտագործելու են ՄԻԵԿի ամփոփ տարբերակը, որպեսզի տեքստում նկարագրված օրինակներից յուրաքանչյուրի համար ընտրեն Կոնվենցիայի համապատասխան իրավունքը:
4. Բոլորին բաժանե՛ք ՄԻԵԿ-ի մեկ օրինակ և, եթե կարիք կա հիշեցնելու մասնակիցներին դրա բովանդակությունը, միասին անցե՛ք կոնվենցիայի բոլոր կետերով: Քննարկե՛ք իրավունքների բովանդակության հետ կապված բոլոր հարցերը:
5. Խնդրե՛ք մասնակիցներին բաժանվել փոքր խմբերի՝ յուրաքանչյուր խմբում հինգական մասնակից: Յուրաքանչյուր խմբին տվեք ֆլիպչարտի մեկական թուղթ՝ X խմբի մասին պատմող տեքստով: Հանձնարարե՛ք նրանց, որպեսզի երեխայի պատմած պատմության (X խմբի մասին պատմող տեքստ) ամեն հատվածի կողքը նշեն կապը մարդու այն իրավունքի հետ, որը խախտվել է:
6. Նկարագրված աշխատանքն ավարտելու համար խմբերին հատկացրե՛ք 20 րոպե: Ավարտված աշխատանքով թղթերը փակցրե՛ք պատին և հնարավորություն տվե՛ք մասնակիցներին ծանոթանալ այլ խմբերի աշխատանքներին՝ ուշադրություն դարձնելով ընդհանրություններին ու տարբերություններին:
7. Անցե՛ք «Վարժության քննարկում» փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մասնակիցներին նորից հավաքե՛ք մեծ խմբի մեջ: Վարժությունը վերլուծելու համար օգտագործե՛ք հետևյալ հարցերը՝

- Ձեզ զարմացրե՞ց ռոմա (գնչուական) համայնքի անդամների իրավունքների խախտման հաճախականությունն ու բազմազանությունը: Ի՞նչ եք կարծում, արդյոք նկարագրված բոլոր/որոշ իրավունքների խախտումներն իսկապես տեղի՞ են ունենում այս երկրում:
- Դուք երբևէ լսել կամ ականատես եղե՞լ եք ռոմա (գնչուական) համայնքին ուղղված վիրավորական խոսքի օրինակների: Հանդիպե՞լ եք նման օրինակների առցանց:
- Պատկերացրե՛ք, որ դուք սոցիալական ցանցում տեսնում եք ինչ-որ մեկի վիրավորական մեկնաբանությունը ռոմա (գնչուական) համայնքի ներկայացուցիչների հասցեին: Ի՞նչ կանեք դուք: Ի՞նչ եք կարծում, եթե մյուսներն իրենց անհամաձայնությունն արտահայտեն նման

մեկնաբանությունների հետ կապված կամ դրան ի պատասխան դրական պատմություններ տեղադրեն, կբերի՞ դա արդյոք որևէ դրական փոփոխության:

Օգտագործե՛ք հետևյալ հարցերը հասկանալու համար, թե արդյոք մասնակիցներն ունեն նախապաշարմունքներ ռոմաների (գնչուների) վերաբերյալ:

- ՄԻԵԿ-ի և ՄԻՀՀ-ի հեղինակները գտնում էին, որ մենք երբևէ չպետք է դատապարտենք մարդուն՝ այս կամ այն «խմբին» պատկանելու համար: Համաձա՞յն եք:
- Ինչպե՞ս եք վերաբերվում երեխայի այն մեկնաբանությանը, որ չնայած յուրաքանչյուր համայնքում կան հանցագործներ, սակայն մենք դրա հիման վրա չենք եզրակացնում, որ այդ համայնքի բոլոր ներկայացուցիչներն են հանցագործներ: Ինչու՞ ենք մենք այդպես արտահայտվում «բոլոր ռոմաների (գնչուների)» մասին, եթե մենք չենք ճանաչում «բոլոր ռոմաներին (գնչուներին)»:
- ՄԻԵԿ-ի կազմողները համարում էին նաև, որ անկախ նրանից, թե ինչ արարք է գործել մարդը, կան բաներ, որոնք մենք չենք կարող կիրառել նրա նկատմամբ: Համաձա՞յն եք:
- Ինչպե՞ս դուք ձեզ կզգայիք, եթե անընդհատ բռնությունների ենթարկվեիք համայնքի մյուս անդամների կողմից: Ինչպե՞ս դուք ձեզ կպահեիք:
- Ի՞նչ գիտեք ռոմա (գնչուական) համայնքի կյանքի մասին: Իսկ ի՞նչ գիտեք նրանց խնդիրների մասին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Հավանական է, որ մասնակիցներից շատերը բավական արմատացած նախապաշարմունքներ ունենան ռոմաների (գնչուների) մասին: Աշխատե՛ք խուսափել դրա մասին խոսելուց մինչև խմբերը չավարտեն տեքստի և իրավունքների հետ իրենց աշխատանքը: Օգտագործեք «Վարժության քննարկում» բաժնի հարցերը, վարժությունից հետո դրան անդրադառնալու համար:
- Երբ խմբերը սկսեն աշխատանքը ֆլիպչարտների վրա, բացատրե՛ք նրանց, որ կարող են տարբեր ձևերով ցույց տալ մարդու իրավունքների հետ կապերը: Օրինակ՝ կարող են կտրատել տեղեկատվական թերթիկը կամ քարտերը և փակցնել ֆլիպչարտի համապատասխան հատվածներում: Կամ կարող են մարկերներով գրել համապատասխան հոդվածներ և սլաքներով ցույց տալ կապերը: Եթե վերջանան իրավունքների մասին պատմող քարտերը, ասե՛ք նրանց, որ մնացած կապերը ցույց տալու համար կիրառեն իրենց երևակայությունը: :
- Ռոմա (գնչու) երեխայի մասին պատմվածքը իրական պատմություն չէ, սակայն, այնտեղ նկարագրվող իրավիճակներն արդիական են գրեթե բոլոր եվրոպական երկրներում: Նկարագրված բռնությունների և ոտնահարումների մասին ավելի մանրամասն խոսելու համար կարող եք օգտագործել վերջում տրված հղումները::
- Բացատրե՛ք մասնակիցներին, որ մարդու ոչ բոլոր իրավունքներն են ներկայացված քարտերի վրա, քանի որ ՄԻԵԿ-ն անդրադառնում է միայն մարդու հիմնարար իրավունքներին: Մարդու իրավունքների առավել ծավալուն ցանկին նրանք կարող են ծանոթանալ ՄԻՀՀ-ում:

- Խմբերի կատարած աշխատանքին արձագանքելու համար օգտագործեք էջ 104-ի «Իրավունքներ, որոնք կարող ենք համարել խախտված» աղբյուրը: Հաշվի առեք, որ պատմվածքը ներառում է մի քանի իրավունքի խախտում, որոնցից գրեթե բոլորը կապված են խտրականությունից զերծ մնալու իրավունքի հետ:
- Հիշեցրե՛ք մասնակիցներին, որ մարդու իրավունքների խախտումները մի փոքր տարբերվում են «սովորական» հանցագործություններից. դրանք կիրառվում են կառավարության, կամ պետական ծառայողների (ինչպես օրինակ՝ ուսուցիչները, ոստիկանները կամ բանտի աշխատակազմը) կողմից: Հանրային իշխանության մարմինների ներկայացուցիչները պարտավոր են ոչ միայն չխախտել մարդու իրավունքները, այլ նաև ապահովել, որպեսզի քաղաքացիների իրավունքները չոտնահարվեն այլոց կողմից: Եթե ոտիկանությունը լուրջ չի ընդունում իրավունքների խախտման մասին բողոքը, ապա այն պատշաճ կերպով չի կատարում մարդու իրավունքների պաշտպանության առումով իր ստանձնած պարտականությունները:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Վարժության շրջանակներում Եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) փոխարեն կարող է օգտագործվել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ): :

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հանձնարարե՛ք մասնակիցներին ուսումնասիրել ռոմաների (գնչուների) վիճակն իրենց երկրում: Տարբեր խմբեր կարող են աշխատել տարբեր խնդիրների վրա: Որպես տարբերակ, մասնակիցները կարող են ուսումնասիրել իրենց կողմից հաճախ այցելած կայքերը՝ փնտրելով ռոմաների (գնչուների) մասին բացասական մեկնաբանություններ: Նրանք կարող են ձեռնամուխ լինել գործընթացին՝ կիրառելով «Մենք կարող ենք:Ատելության խոսքի դեմ պայքար հակադիր և այլընտրանքային պատումների միջոցով» ձեռնարկը: Եվրոպայի ողջ տարածքում ռոմաների (գնչուների) անցյալ և ներկա վիճակին ծանոթացնելու համար մասնակիցները կարող են նաև օգտագործել Եվրոպայի խորհրդի պատրաստած տեղեկատվական թերթիկները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել՝ www.coe.int/t/dg4/education/roma/histoCulture_en.asp:

Հակառոմական տրամադրությունների մասին լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերլու համար, կարող եք ծանոթանալ «Հայելիներ» ձեռնարկին, որն անդրադառնում է մարդու իրավունքների ուսուցման միջոցով հակառոմական տրամադրությունների դեմ պայքարին և հասանելի է՝ https://www.coe.int/en/web/youth-roma/mirrors :

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

X ԽՈՒՄԲ

Ես X խմբի երեխա եմ: Դպրոցում ինձ ուղարկեցին սովորելու խնդիրներ ունեցող երեխաների համար հատկացված հատուկ դասարան: Մեզ թույլ չեն տալիս սովորել «սովորական» դասարաններում: Ինձ հաճախ են ծաղրում մյուս երեխաները, որովհետև ես, ինչպես և իմ բոլոր ընկերները, X խմբից եմ: Նրանք ճնշում են նաև իմ ընկերներին: Ուսուցիչներն այդ կապակցությամբ ոչինչ չեն անում, ոմանք էլ նույնիսկ քննադատում են մեզ: Նրանք երբեք չեն պատժվում: Ես գիտեմ, որ երկրներից մեկում բոլոր X Խմբի երեխաներին ուղարկում էին մտավոր խնդիրներ ունեցող երեխաների դպրոցներ:

Մարդիկ չեն ուզում, որ մենք ապրենք իրենց կողքին: Նրանք մեզ նույնիսկ չեն ճանաչում, բայց գոռում են մեզ վրա ու ծեծում միայն նրա համար, թե մենք ով ենք, կամ թե ով ենք իրենց կարծիքով: Մենք ընդամենն իրենց նման երեխաներ ենք: Իսկ ինչպե՞ս մենք պետք է վարվենք, երբ մեզ վրա գոռում են ու ծեծում: Մեզ պետք է դո՞ւր գա նման վարվելակերպը:

Եթե դիմում ենք ոստիկանություն, մեզ հաճախ չեն էլ լսում: Նրանք ասում են, որ երևի մեր մեղքով է եղել, որովհետև մենք բոլորս խնդիր ստեղծող ենք ու խառնակիչ: Բայց իրենք որտեղի՞ց դա գիտեն: Ես կարծում էի, թե դա դատարաններն են որոշում: Ոստիկանները մեզ անընդհատ, առանց որևէ պատճառի փողոցում կանգնեցնում են, ենթադրելով, որ մենք բան ենք գողացել և ասում են, որ պետք է մեզ խուզարկեն: Եղել են դեպքեր, երբ ինձ կանգնեցրել են շաբաթվա մեջ 6 անգամ, բայց ես երբեք ոչինչ չեմ գողացել: Ես լսել եմ, որ մեր համայնքի անդամներին բանտում ծեծի են ենթարկել բանտի վերակացուները: Բայց ինչու՞ չեն պատժում մարդուն, ուրիշին ծեծելու համար: Նույնիսկ բանտի վերակացուները պարտավոր են պահպանել օրենքը:

Անցած ամառ իրար նման հագնված մարդկանց խմբերը, մեր մասին վիրավորական երգեր երգելով, երթով անցան մեր գյուղով: Մենք բոլորս վախեցել էինք և փակվել մեր տներում: Նրանք քարեր էին նետում և ծեծում այն երիտասարդներին, ովքեր փորձում էին իրենց դուրս անել մեր գյուղից: Ոստիկանությունը ոչինչ չարեց...

Կառավարության անդամները հաճախ վիրավորում են մեզ, կարծես թե X խմբի բոլոր անդամներն իրար նման են և բոլորը հանցագործ են: Ո՛չ, դա այդպես չէ: Բոլոր համայնքներում կան մարդիկ, որ օրենք են խախտում: Բայց կառավարությունն այդ համայնքի մնացած բոլոր անդամներին չի վիրավորում, միայն նրա համար, որ այդ համայնքի անդամներից մի քանիսն օրենք են խախտել: Ինչու՞ ոչ ոք ոչ մի լավ բան չի պատմում X խմբի մարդկանց մասին, որոնք բոլորի նման սովորական մարդիկ են:

Հեռուստատեսությամբ և համացանցում մարդիկ մեր մասին ինչ ուզում, ասում են: Ես հոգնել եմ նրանից, որ անընդհատ ինչոր վիրտուալ խմբեր մեզ ասում են, որ կեղտոտ ենք, հիմար կամ շատ ավելի վատ բաներ: Նրանք մեզ ասում են, որ գնանք երկրից, գնանք տուն

ու բոլորի նման աշխատանք գտնենք: Հայրիկս կերազեր աշխատանք ունենալ: Բայց նրան ոչ ոք աշխատանքի չի վերցնում, որովհետև նա X խմբի ներկայացուցիչ է:

Բայց մենք ինչպե՞ս ապրենք: Ինչպե՞ս մենք մեզ պետք է զգանք, երբ բոլորն, առանց մեզ ճանաչելու, զզվելի բաներ են ասում մեր մասին: Շատ դժվար է: Մեկ-մեկ փողոց էլ չեմ ուզում դուրս գալ, որովհետև վախենում եմ, որ կծեծեն կամ կգոռան ինձ վրա:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՄԱՐԵԼ ԽԱԽՏՎԱԾ

Բոլոր օրինակները կապված են խտրականությունից զերծ մնալու իրավունքի հետ (հոդված 13 կամ արձանագրություն 12): Այլ իրավունքներ, որոնք նույնպես կարող ենք համարել խախտված.

Ռոմա երեխաների համար հատուկ դպրոցներ կամ դասարաններ	Արձանագրություն 1, հոդված 2
Երեխաներին քննադատող ուսուցիչներ	Կարող է լինել հոդված 8 (անձնական կյանք). Եթե խախտումը ծանր է, ապա կարող է լինել հոդված 3-ը. Եթե ազդում է կրթության ընթացքի վրա, ապա կարող է լինել նաև արձանագրություն 1, հոդված 2:
Ուսուցիչները չեն «պատժվում»	Եթե որևէ մեկը բողոքները լուրջ չի ընդունում, կարող է լինել հոդված 8-ը (կամ հոդված 3-ը, եթե առավել ծանր դեպք է): Միգուցե նաև արձանագրություն 1, հոդված 2:
Մարդիկ «բղավում» են ռոմաների (գնչուների) վրա, երթով անցնում են նրանց բնակավայրերով	Կարող է լինել հոդված 8-ը, եթե դեպքը առավել ծանր է, ունի կանոնավոր բնույթ և եթե ոստիկանությունը ոչինչ չի ձեռնարկում:
Նրանց ծեծի են ենթարկում	Կարող է լինել հոդված 8-ը, եթե ոստիկանությունը չի արձագանքում բողոքներին: Եթե ծեծն առավել ծանր է կամ ունի հաճախակի բնույթ կարող է նաև լինել հոդված 3-ը:
Ոստիկանությունը չի լսում բողոքները	Հոդված 8 կամ 3, կախված բողոքի առիթ հանդիսացած դեպքի ծանրությունից: Եթե կան մարդու կյանքին սպառնացող վտանգներ, ապա՝ հոդված 2:

Ոստիկանությունը կանգնեցնում է փողոցում և խուզարկում ռոմաներին (գնչուներին)	Կարող է լինել հոդված 5-ը (ազատություն), եթե մարդկանց կանգնեցնում են շատ հաճախ՝ առանց հիմնավոր պատճառի: Նաև հոդված 8-ը (անձնական կյանք):
Բանտի աշխատակիցները ծեծում են ռոմաներին (գնչուներին)	Կարող է լինել հոդված 3-ը, եթե ծեծն առանձնակի դաժանությամբ է եղել: Նաև՝ հոդված 8-ը:
Բանտի աշխատակիցները չեն «պատժվում»	Կարող է լինել հոդված 3-ը, եթե ծեծն առանձնակի դաժանությամբ է եղել: Նաև՝ հոդված 8-ը:
Կառավարության անդամները վիրավորում են ռոմաներին (գնչուներին)	Կարող է լինել հոդված 8-ը, եթե վիրավորանքը ծանր է և ազդեցություն է գործել ռոմաների (գնչուների) նկատմամբ մյուսների վերաբերմունքի վրա:
Վիրավորանքներ համացանցում/ լրատվամիջոցներում	Սա կարող է չհամարվել մարդու իրավունքների խախտում, քանի որ պատասխանատու անձը պետական պաշտոնյա չէ: Իրավունքի խախտումը պետք է ունենա շատ ծանր ձև և ենթադրի տուժողի կողմից պաշտոնական բողոքների ներկայացում, որոնք անտեսված են պետական պաշտոնյաների կողմից:
Աշխատանքի չընդունելը «ռոմա լինելու պատճառով»	Կարող է լինել հոդված 8-ը, հատկապես, եթե մերժողը պետական հաստատություն է:
Փողոց դուրս գալու վախը	Եթե ռոմա երեխաներին իսկապես վտանգ է սպառնում փողոցում և ոստիկանությունը որևէ բան չի ձեռնարկում, ապա դա կարող է լինել հոդված 8-ը կամ 3-ը (կամ 2-ը):

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 3

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ 6+

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑԱՇԱՐ

Վարժությունը մարդու առցանց իրավունքների վերաբերյալ հարցում է: Այն օգնում է մասնակիցներին ճանաչել իրենց առցանց իրավունքները՝ օգտագործելով «Մարդու իրավունքների ուղեցույցը համացանցի օգտատերերի համար»:

ԹԵՄԱՆԵՐ	Մարդու իրավունքներ
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	3
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	6 և ավելի
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ, թե ինչպես են մարդու իրավունքները կիրառվում առցանց • Խթանել պատկերացումը մարդու իրավունքների համընդհանուր բնույթի վերաբերյալ • Մտորել առցանց տիրույթում մարդու իրավունքների պաշտպանության մասին
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Առձեռն նյութեր • Գրիչներ և մատիտներ յուրաքանչյուր խմբի համար • Պատրաստե՛ք առձեռն նյութերի մեկական օրինակ յուրաքանչյուր խմբի համար, մասնակիցների համար տպե՛ք ուղեցույցը, կամ տվեք համակարգիչներով աշխատելու հնարավորություն

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ՄԱՍ (ԱՅՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ԻՐԱՉԵԿՎԱԾ ՉԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

1. Հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչ են նրանք հասկանում՝ մարդու իրավունքներ ասելով: Գրե՛ք ֆլիպչարտի վրա տարբերակներ և անհրաժեշտության դեպքում օգնե՛ք հետևյալ հարցադրումներով. օրինակ՝
    - Ո՞վ կարող է օգտվել մարդու իրավունքներից:
    - Կարո՞ղ եք նշել դրանցից որևէ մեկը:

- Որտեղի՞ց են ծագում մարդու իրավունքները
- Մարդու իրավունքները կիրառվու՞մ են առցանց

2. Ներկայացրե՛ք մարդու իրավունքների հակիրճ ձևակերպումը, օրինակ՝

Մարդու իրավունքները պատկանում են բոլորին և դրանք «օրենքներ են կառավարությունների համար», ինչը նշանակում է, որ կառավարությունները պետք է պաշտպանեն մարդկանց անարդար վերաբերմունքից և բռնությունից: Մարդու իրավունքները շատ կարևոր են, քանի որ պաշտպանում են մեզ և սովորեցնում չխախտել մյուսների իրավունքները:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ

1. Բացատրե՛ք մասնակիցներին, որ վարժությունն իրենից ներկայացնում է առցանց հարցաշար մարդու իրավունքների մասին, և որ այն ներառում է թիմային խաղ՝ առցանց իրավունքների վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերելու համար:
2. Բաժանե՛ք համացանցի օգտատերերի համար մարդու իրավունքների ձեռնարկի պարզեցված տարբերակը կամ տրամադրե՛ք դրա հղումը: Մասնակիցներին ժամանակ տվե՛ք այն ընթերցելու և հարցեր տալու համար, եթե նրանք չեն հասկանա որոշ իրավունքներ:
3. Երբ բոլորը պատրաստ լինեն, բաժանե՛ք մասնակիցներին 2-6 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրամադրե՛ք հարցման թերթիկ:
4. Ասե՛ք մասնակիցներին, որ նրանք կմասնակցեն հարցմանը, որպես խումբ, և որ նրանք պետք է ընտրեն մեկ անձ, ով կգրի պատասխանները հարցաթերթիկում: Ապա ասե՛ք, որ նրանց կհատկացվի մոտավորապես երեսուն րոպե հարցումն ավարտելու համար՝ օգտագործելով ձեռնարկը որպես հարցերի աղբյուր:
5. Հարցումն ավարտելուց հետո, ստուգե՛ք հարցման թերթիկները մասնակիցների հետ միասին և որոշե՛ք, թե որ խումբն է լավագույնը: Ճիշտ պատասխաններն են՝ 1B, 2A and B, 3B, 4C, 5A, 6B, 7B, 8C, 9C, 10B, 11C, 12C, 13A, 14B:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Ո՞ր հարցերն են եղել ամենաբարդը և ինչու՞

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Եղե՞լ են արդյո՞ք որոշ հարցեր առանձնապես բարդ ընկալման համար:
- Ինչ եք կարծում, կարո՞ղ եք «ապրել առանց» այս իրավունքներից որևէ մեկի: Եթե, այո՝ ապա որո՞նք են դրանք:
- Ինչ եք կարծում, այս իրավունքները կիրառելի՞ են ինչպես առցանց այնպես էլ «իրական» աշխարհում: Կարո՞ղ եք բերել օրինակներ, երբ այս իրավունքներից որևէ մեկը կարևոր է նաև առցանց տիրույթում:
- Ըստ ձեզ, պաշտպանվո՞ւմ են արդյոք մարդու իրավունքներն առցանց տիրույթում:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Հակիրճ բացատրե՛ք, որ ատելության խոսքն իրենից ներկայացնում է ատելության ցանկացած «դրսևորում»՝ ուղղված խմբի կամ խմբի անդամների դեմ, որը զզվելի է, վիրավորական և ամենայն հավանականությամբ հանգեցնում է ագրեսիվ ռեակցիաների այդ խմբի անդամների նկատմամբ։ Խնդրե՛ք ներկայացնել մի քանի օրինակ։
- Հարցման մեջ ներառված իրավունքներից որո՞նք են համապատասխանում ատելության խոսքին և ինչու՞։
- Եթե դուք դառնաք ատելության խոսքի առցանց դրսևորման թիրախ, ապա ո՞ր իրավունքների կարիքը կարող եք ունենալ ամենաշատը։
- Ի՞նչ կարելի է անել ատելության խոսքի առցանց դրսևորումներից խուսափելու համար։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Իրավունքների դիտարկման ընթացքում մասնակիցները կարող են աշխատել զույգերով։ Օգտակար կլինի, եթե մանրամասն քննարկվեն իրավունքների նշանակությունները, սակայն դա կարող է պահանջել լրացուցիչ ժամանակ։
- Քննարկման ընթացքում կարող եք կենտրոնանալ մեկ կամ երկու կողմերի վրա՝ այդ հարցերը խորապես ուսումնասիրելու նպատակով։
- Մարդու իրավունքներին համացանցում և համացանցից դուրս կարող եք ծանոթանալ լ 5-րդ գլխում ներառված հիմնական տեղեկություններից։
- Ձեռնարկին առնչվող թեմաների վերաբերյալ՝ առավել մանրամասն տեղեկությունների ծանոթացեք հավելյալ բաժնում։

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խնդրե՛ք մասնակիցներին հրապարակում անել սոցիալական մեդիայում կամ բլոգում, որը վերաբերում է «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկին՝ նրանց շրջապատողների իրազեկությունը բարձրացնելու նպատակով։

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ե՞րբ է հրատարակվել ձեռնարկը:
   A. 1990,
   B. 2014,
   C. 2010:

2. Ինչու՞ է ստեղծվել ձեռնարկը:
   A. որպես գործիք համացանցի օգտատերերի համար,
   B. առցանց տրույթում մարդու իրավունքների մասին իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով,
   C. որպեսզի մարդիկ ավելի շատ ընթերցեն:

3. Ձեռնարկը հիմնվում է՝
   A. Եվրոպական միության Լիսաբոնի պայմանագրի վրա,
   B. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վրա,
   C. լավ գաղափարների ժողովածուի վրա:

4. Ո՞վ պետք է հետևի ձեռնարկի հրահանգներին:
   A. միայն ԵՄ անդամ պետությունները,
   B. աշխարհի բոլոր երկրները,
   C. բոլոր ԵԽ անդամ պետությունները:

5. Ի՞նչ նպատակ է հետապնդում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:
   A. պաշտպանում է մարդու իրավունքները,
   B. բարձարցնում է մարդկանց ինքնավստահությունը,
   C. պատշպանում է միայն չափահասների իրավունքները:

6. Ու՞մ են պատկանում մարդու իրավունքները:
   A. լավ վարքագիծ ունեցող մարդկանց,
   B. բոլորին,
   C. միայն հարկեր վճարող անձանց:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՍ II. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ/ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ/ՀԱՎԱՔՆԵՐԻ, ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ:

7. Առցանց տիրույթում աշխատելիս կամ տարբեր սոցիալական ցանցերից օգտվելիս դուք չեք կարող ենթարկվել խտրականության, հետևյալ հիմքերով՝
   A. աչքի գույն,
   B. սեռ և լեզու,
   C. սմարթֆոնի կամ համակարգչի օգտագործում:

8. Ի՞նչ է նշանակում առցանց արտահայտման ազատություն:
   A. ունենալ արտահայտման ազատություն, բայց միայն գրավոր,
   B. ունենալ արտահայտման ազատություն որոշ ալիքներով,
   C. ունենալ առցանց արտահայտման, տեղեկություններ ստանալու ազատություն:

9. Նշվածներից որո՞նք ներառված չեն արտահայտման ազատության մեջ:
   A. քաղաքական ելույթները,
   B. կրոնական հայացքները,
   C. արտահայտություններ, որոնք հրահրում են խտրականություն, ատելություն կամ բռնություն:

10. Ի՞նչ է նշանակում առցանց մասնակցության իրավունք:
   A. ունենալ ազատություն ընտրելու ցանկացած կայքէջ կամ ծրագիր, սակայն օգտագործել միաժամանակ դրանցից միայն չորսը,
   B. ունենալ ազատություն ընտրելու և/կամ ստեղծելու ցանկացած կայքէջ, ծրագիր կամ այլ ծառայություն՝ նպատակ հետապնդելով ձևավորել, միանալ, մոբիլիզացնել և մասնակցել սոցիալական խմբերում կամ միություններում,
   C. ունենալ ազատություն ընտրելու ցանկացած կայքէջ կամ ծրագիր, սակայն չկարողանալ կազմակերպել առցանց ցույցեր:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՍ III. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ/ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/ԵՐԵԽԱՆԵՐ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ/ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑՆԵՐ

11. Ձեռնարկի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Ի՞նչ է դա նշանակում առցանց տիրույթում:
    A. օրինակ՝ բոլոր երեխաները պետք է անեն իրենց տնային աշխատանքները համակարգչով,
    B. օրինակ՝ բոլորին պետք է հասանելի լինեն առցանց օրաթերթերը,
    C. օրինակ՝ բոլորին պետք է հասանելի լինեն առցանց դասընթացները և թվային կրթությունը:

12. Ո՞վ է ենթակա հատուկ պաշտպանության և առաջնորդության համացանցից օգտվելիս:
    A. բոլորը,
    B. միայն երեխաները և 14-16 տարեկան երիտասարդները,
    C. երեխաները և երիտասարդները:

13. Համացանցի ծառայությունների մատակարարները պետք է՝
    A. տեղեկացնեն մարդկանց, թե ինչպես է հարկավոր հայտնել և բողոքել իրենց իրավունքների խախտումների մասին,
    B. տեղեկացնեն մարդկանց խտրականության հետ կապված դեպքերի քանակը, ,
    C. տեղեկացնեն մարդկանց յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատակիցների թվաքանակը:

14. Նախևառաջ ո՞ր մարմնին է պետք դիմել՝ համացանցում կամ դրա օգտագործմամբ քրեական հանցագործություններից պաշտպանվելու համար:
    A. միջազգային մարմիններին,
    B. ներպետական մարմիններին,
    C. եվրոպական մարմիններին:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 3

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ցանկացած

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45’

ԱՌՑԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այս վարժությունն օգնում է մասնակիցներին մտածել առ այն, թե ինչպես են նրանք օգտագործում համացանցը և ինչպես են մասնակցում առցանց տիրույթում: Մասնակիցները կբացահայտեն և կգնահատեն իրենց առցանց մասնակցության աստիճանը, ինչպես նաև հետագա դերն այս տիրույթում: Մասնակիցները կգնահատեն իրենց դերը առցանց տիրույթում և կծրագրեն, թե ինչ դեր են ցանկանում ունենալ ապագայում: Մասնակիցները կսովորեն նաև, թե ինչպես է պետք արձագանքել ատելության խոսքի առցանց դրսևորումներին և ինչպես է պետք պաշտպանել մարդու իրավունքներն առավել արդյունավետ միջոցով:

ԹԵՄԱՆԵՐ	Համացանցային գրագիտություն, անձնական կյանք և անվտանգություն, Մարդու իրավունքներ
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	3
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	Ցանկացած
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Պարզել մարդու առցանց մասնակցության աստիճանն ու դերը • Մտորել, թե ինչպես է հարկավոր արձագանքել ատելության խոսքին և ինչպես առավել արդյունավետ պաշտպանել մարդու իրավունքներն առցանց տիրույթում • Գիտակցել, թե ինչ վտանգներ կարող են առաջանալ ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ գործողություններ ձեռնարկելիս
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Մեծ ստվարաթղթեր • Ֆլիպչարտներ • Գունավոր գրիչներ/մարկերներ • Կպչուն թերթիկներ • «Մասնակցության սանդուղքի» օրինակներ առձեռն նյութերի համար
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք մեծ քարտեր առցանց դերերով և դրե՛ք դրանք հատակին: Քարտերի վրա կարող եք գրել դերերը, օրինակ՝ ստեղծող, զրուցակից/քննարկող, քննադատ, գաղափարներ համախմբող, սոցիալական ցանցերում ակտիվ, դիտորդ, պասիվ, հանդիսատես և անդամ • Պատրաստե՛ք հարցաթերթիկի պատճեններ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

- Բացատրե՛ք մասնակիցներին, որ քարտերը դրել եք սեղյակի հատակին, և որ բոլոր քարտերը ներառում են տարբեր առցանց դերեր. ստեղծող, զրուցակից/քննարկող, քննադատ, գաղափարներ հավաքող, միացող, դիտորդ, պասիվ, հանդիսատես և անդամ: Բերե՛ք յուրաքանչյուր դերի օրինակներ:
- Խնդրե՛ք մասնակիցներին ընտրել դերաքարտերից մեկը՝ համաձայն նրան, թե ի՞նչ են իրենք "սովորաբար" անում առցանց տիրույթում: Ինչպե՞ս են նրանք տեսնում իրենց առցանց դերը: Ինչպե՞ս են մասնակցում առցանց տիրույթում:
- Տեղերն ընտրելուց հետո, խնդրե՛ք նրանց նայել շուրջբոլորը և ուշադրություն դարձնել, թե որ քարտերն են ընտրել մնացած մասնակիցները: Կարող եք հարցնել նաև, թե մասնակիցներն առցանց տիրույթում ի՞նչ գործողություններ են կատարում:
- Խնդրե՛ք մասնակիցներին կրկին ընտրել քարտեր՝ համաձայն նրան, թե ինչ են նրանք անում համացանցում՝ կապված ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի հետ: Քարտերն ընտրելուց հետո խնդրե՛ք նրանց նայել շուրջբոլորը և ուշադրություն դարձնել, թե որ քարտերն են ընտրել մնացած մասնակիցները: Կարող եք հարցնել նաև, թե մասնակիցներն ի՞նչ գործողություններ են կատարում ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարելու համար:
- Խնդրե՛ք մասնակիցներին կրկին ընտրել քարտեր՝ համաձայն նրան, թե ինչ մասնակցություն կունենան մեկ տարի անց ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում: Քարտերն ընտրելուց հետո, խնդրե՛ք բացատրել, թե ինչու են ընտրել այդ դերը:
- Ձևավորեք 2-4 հոգանոց խմբեր: Խնդրե՛ք խմբերին ընտրել այն գործողությունները, որոնք նրանք կցանկանային կատարել ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում:
- Խնդրե՛ք խմբերին կիսել իրենց գործողություններն այլոց հետ:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ի՞նչ եք մտածում վարժության մասին:
- Արդյոք դժվար էր դրսևորել ձեր դերն առցանց տրույթում: Ի՞նչ բացահայտեցիք Ձեր առցանց վարքագծի մասին:
- Արդյոք դժվա՞ր էր որոշել ձեր դերն ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում:
- Արդյոք դժվա՞ր էր ընտրել դեր ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում: Դժվա՞ր էր մտածել, թե ինչ գործողություններ եք իրականացնելու առցանց տիրույթում:
- Ի՞նչ կարծիք ունեք առցանց մասնակցության այս օրինակների առթիվ: Ինչպիսի՞ն է դրանց կապն «անցանց» մասնակցության հետ: Մարդիկ կարո՞ղ են, արդյոք, մասնակցել առցանց տիրույթում այնպես, ինչպես իրական կյանքում:
- Որքանո՞վ կարևոր է ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրի դիտարկումը: Ինչո՞ւ:

- Որքա՞ն դյուրին է ձեզ համար մտածել առցանց գործողությունների մասին՝ կապված ատելության խոսքի առցանց դրսևորումների հետ։
- Ըստ ձեզ՝ կարո՞ղ եք ազատ մասնակցություն ունենալ առցանց տիրույթում։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Առցանց մասնակցության մասին ավելին կարող եք իմանալ «Ժողովրդավարություն և մասնակցություն»՝ 5.6 գլխում։
- Մարդու իրավունքների մասին ավելին կարող եք իմանալ «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկից, մասնավորապես՝ «Հավաքների, միություններ կազմելու և մասնակցության ազատություն» բաժնից։ Ձեռնարկի մասին լավ կլինի հիշեցնել մասնակիցներին։ համացանցի օգտատերերն ունեն իրենց իրավունքներն առցանց պաշտպանելու կարիք։ Սեփական իրավունքների իմացությունը շատ կարևոր է ցանկացած ոտնձգությունից պաշտպանվելու համար։ Ձեռնարկը հասանելի է հետևյալ հղումով՝
  www.coe.int/en/web/internet-users-rights/guide.

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները կարող են ստեղծել իրենց սեփական «առցանց մասնակցության քարտեզը»՝ այդ տիրույթում առավել ակտիվ լինելու, ինչպես նաև ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարելու համար։

Մասնակիցները կարող են ծանոթանալ հավելյալ տեղեկությունների համացանցի կառավարման ինչպես նաև այն մասին, թե ինչ դեր կարող են ունենալ երիտասարդները համացանցի ձևավորման գործում։

Այս վարժությունը մշակվել է Էջանիշերի հիման վրա, առաջին շրջանային դասընթացի ժամանակ, որն անցկացվել է Բելգիայում, 2014 թվականի հոկտեմբերին։

NO HATE SPEECH MOVEMENT

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Ստեղծողներ

- ստեղծե՛ք բլոգ,
- ստեղծե՛ք ձեր սեփական կայքէջը,
- ներբեռնե՛ք ձեր ստեղծած տեսանյութը,
- ներբեռնե՛ք ձեր ստեղծված ձայնագրությունը/երաժշտությունը,
- գրե՛ք հոդված կամ պատմություն և հրապարակեք,
- նախաձեռնե՛ք հրապարակային բանավեճեր կամ բողոքի խաղաղ ցույցեր,
- սկսեք առցանց քարոզարշավներ

Զրուցակից

- թարմացրե՛ք սոցիալական ցանցում ձեր հրապարակումը,
- հրապարակե՛ք թարմացումները Թվիթերում, Ֆայսբուքում և այլն

Քննադատներ

- արտադրանքի կամ ծառայության մասին հրապարակե՛ք գնահատականներ/կարծիքներ,
- մեկնաբանե՛ք բլոգը,
- ներդրե՛ք ձեր լուման համացանցային ֆորումում,
- ավելացրե՛ք/խմբագրե՛ք վիքիպեդիայի հոդվածները,
- մասնակցե՛ք նախաձեռնությունների, արտադրանքի վերանայմանը,
- գրե՛ք մեկնաբանություններ ներպետական/միջազգային օրենքների վերաբերյալ,
- քննադատե՛ք հրապարակային քննարկումները,
- վերահսկե՛ք և ներկայացրե՛ք հաշվետվություն հանրային իշխանության գործունեության մասին

Գաղափարներ հավաքողներ

- օգտագործե՛ք rss feeds-ը,
- առցանց քվեարկե՛ք կայքէջի համար,
- ավելացրեք «թեգեր» կայքէջում կամ լուսանկարների վրա

Միացողներ

- վարե՛ք ձեր էջը սոցիալական ցանցում,
- այցելե՛ք սոցիալական ցանցերի ային կայքեր

Հանդիսատեսներ

- ընթերցե՛ք բլոգեր,
- ունկնդրե՛ք «պոդքաստներ»,
- դիտե՛ք այլ օգտատերերի տեսագրություններ,
- ծանոթացե՛ք առցանց ֆորումների,
- ծանոթացեք օգտատերերի վարկանիշներին,
- ընթերցեք թվիթներ

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 2

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 14-35

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Մասնակիցները ծանոթանում են համացանցի օգտատերերի համար նախատեսված Մարդու իրավունքների ձեռնարկին: Նրանք պետք է վերլուծեն ձեռնարկի հիմնական դրույթները և բացատրեն դրա կիրառումն առօրյա կյանքում:

ԹԵՄԱՆԵՐ	Մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և մասնակցություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	2
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	14-35
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Մասնակիցների հետ ուսումնասիրել համացանցի օգտատերերի իրավունքները • Ներկայացնել «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկի պարզեցված տարբերակը https://rm.coe.int/translation-cm-rec-2014-6e-armenian/16807c0e26 • Քննարկել ձեռնարկի կիրառման ուղիներն առօրյա կյանքում • Մտորել ձեռնարկը տարածողների դերի մասին
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Ձեռնարկի պարզեցված տարբերակի պատճեն էջ 119 • Թղթեր և գրիչներ՝ նշումներ անելու համար • Ֆլիպչարտի թղթեր և մարկերներ • Տարածք՝ փոքր խմբերի աշխատանքի համար
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Պատճենահանեք ձեռնարկի պարզեցված տարբերակը և բաժանեք մասնակիցներին յոթ փոքր խմբերում աշխատանքի համար

ՑՈՒՅՑՈՒՄՆԵՐ

1. Ներկայացրե՛ք մասնակիցներին «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկը՝ օգտագործելով ստորև տրված նկարագրությունը կամ հակիրճ տարբերակը (էջ 274):
2. Բացատրե՛ք մասնակիցներին, որ նրանք աշխատելու են ձեռնարկի յոթ տարբեր թեմաների շուրջ:
3. Բաժանե՛ք մասնակիցներին յոթ փոքր խմբերի: Տվե՛ք յուրաքանչյուր խմբին պարզեցված ձեռնարկի մեկական թեմա (էջ 119) և խնդրե՛ք ընթերցել:

«Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկը Եվրոպայի խորհրդի կողմից իր 47 անդամ-պետությունների համար ընդունված հանձնարարականների մի մասն է։

Ուղեցույցը դրույթների և սկզբունքների ժողովածու է՝ կապված համացանցում մարդու իրավունքների կիրառման հետ։

Այն հատկապես անհրաժեշտ է հասարակությանը, դասավանդողներին և երիտասարդներին, որպեսզի վերջիններս տեղյակ լինեն առցանց տիրույթում մարդու իրավունքների և ազատությունների, դրանց հնարավոր սահմանափակումների և պաշտպանության հասանելի միջոցների մասին։

Ուղեցույցը չի սահմանում նոր իրավունքներ։ Այն հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, Եվրոպայի խորհրդի այլ կոնվենցիաների և մարդու իրավունքների պաշտպանության այլ գործիքների վրա։

Ուղեցույցը ներկայացնում է, թե մարդու իրավունքները ինչպես կարող են կիրառվել և պաշտպանվել հետևյալ բնագավառներում՝ «հասանելիություն և խտրակաության բացառում», «արտահայտման և տեղեկատվության ազատություն», «միավորման, հավաքների և մասնակցության ազատություն», «գաղտնիություն և անձնական տվյալների պաշտպանություն», «կրթություն և գրագիտություն», «երեխաներ և երիտասարդներ» և «պաշտպանության արդյունավետ միջոցներ»։

Ուղեցույցում ուշադրությունը կենտրոնացած է օգտատերերի, հանրային ծառայողների, համացանցի մատակարարների և առցանց բովանդակության մատակարարների պատասխանատվության վրա առցանց տիրույթում մարդու իրավունքներից օգտվելիս։

4. Խմբերից յուրաքանչյուրին խնդրե՛ք պատրաստել համառոտ ելույթ՝ իրենց ընթերցած թեմայի հիման վրա մարդու իրավունքները ներկայացնելու համար։ Խնդրեք խմբերին չասել իրար, թե ինչի մասին են խոսելու իրենց ելույթում։
5. 15 րոպե նախապատրաստվելուց հետո, խմբերից յուրաքանչյուրին խնդրեք պատրաստել շնորհանդես։
6. Յուրաքանչյուր շնորհանդեսից հետո մի քանի րոպե հատկացրեք հետադարձ կապին։ Խնդրե՛ք մյուս խմբերին գուշակել, թե մարդու որ իրավունքներն էին ներկայացված։
7. Այնուհետև տվե՛ք խմբերին մեկ րոպե և խնդրեք այդ խմբի անդամներին բացատրել, թե ինչ էին ցանկանում արտահայտել ընթերցածի համաձայն։ Գրառե՛ք նրանց տեսակետները ֆլիպչարտի թղթի վրա։
8. Կրկնե՛ք այս ամենը յուրաքանչյուր շնորհանդեսից հետո։
9. Անցե՛ք վերլուծությանն ու գնահատմանը։

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ինչպիսի՞ն էր այս վարժությունը։
- Ի՞նչ նոր տեղեկություններ ստացաք ձեր իրավունքների մասին այս վարժությունից։

- Կա՞ արդյոք, տարբերություն առցանց տիրույթում և իրական կյանքում մարդու իրավունքների միջև:
- Ո՞վ է պատասխանատու առցանց տիրույթում մարդու իրավունքների պաշտպանության համար:
- Ինչպե՞ս կարող ենք պաշտպանել նշված իրավունքներն առցանց տիրույթում: Ի՞նչ կարող ենք անել մենք: Ի՞նչ պետք է անի մեր կառավարությունը: Ի՞նչ պետք է անեն կայքերի տերերը:
- Ձեռնարկի բովանդակությանը ծանոթանալուց հետո ի՞նչ խորհուրդ կտայիք համացանցի այլ օգտատերերին, ատելության խոսքի առցանց դրսևորումներ նկատելու դեպքում:
- Ինչպիսի՞ օգնություն կարող է ստանալ անձը ձեռնարկից՝ ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարելիս:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Ծանոթացե՛ք ձեռնարկի ամբողջական տարբերակին՝ներածական մասին և մասնակիցների հարցերին պատրաստ լինելու նպատակով:
- Խնդրե՛ք մասնակիցներին կենտրոնանալ այն հիմնական գաղափարների վրա, որոնք ցանկանում են ներկայացնել ելույթի ընթացքում:
- Վերլուծելիս ուշադրություն դարձրեք ֆլիպչարտ թղթին, որտեղ ներկայացված կլինեն խմբերի ելույթների արդյունքում նշված հիմնական գաղափարները: Երբ մասնակիցները կքննարկեն առցանց տիրույթում մարդու իրավունքների տարածման հետ կապված իրենց դերերը, խնդրեք նրանց ներկայացնել կոնկրետ օրինակներ այն մասին, թե ինչ կարող են անել երիտասարդներն առցանց տիրույթում իրենց առօրյա գործունեությունն իրականացնելիս:

ԿԻՐԱՌՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Եթե խումբը չունենա ելույթ պատրաստելու ցանկություն, դուք կարող եք խնդրել նրանց նկարել այն, ինչ պատրաստվում են ներկայացնել կամ արտահայտել իրենց գաղափարներն այլ համապատասխան և ստեղծագործ ճանապարհով: Այս վարժությունը կարող եք օգտագործել նաև համացանցից օգտվելիս երիտասարդներին աջակցելու համար: Նրանք կսովորել, թե ինչպես է պետք հրապարակել գրառումները բլոգում, օգտագործել առցանց գործիքները պաստառներ կամ տեսողական նյութ ստեղծելու համար, ստեղծել գիֆ կամ տեսանյութ:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ձեր խմբի հետ միասին կարող եք կազմել հիմնական դրույթների ցանկ առ այն, թե ինչ պետք է իմանան համացանցի օգտատերերն առցանց տիրույթում իրենց իրավունքների մասին:

Կարող եք ստուգել նաև, թե ինչ հաստատություններ ու կազմակերպություններ են գործում ձեր երկրում առցանց տիրույթում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

Վարժության արդյունքում մասնակիցները կարող են մշակել գործողության պլան՝ իրենց ընկերների, դասընկերների և համադպրոցականների շրջանում առցանց տիրույթում մարդու իրավունքների մասին իրազեկությունը բարձրացնելու համար:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

ԽՈՒՄԲ 1

Համացանցի հասանելիություն և խտրականության բացառում

Յուրաքանչյուր ոք պետք է ունենա համացանցի հասանելիություն, առանց գենդերային, տարիքային, ռասայական, գույնի, լեզվի, կրոնական կամ դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, էթնիկական կամ սեռական խտրականության:

Եթե Դուք բնակվում եք գյուղում կամ աշխարհագրական առումով հեռավոր շրջաններում, ունեք ցածր եկամուտ և/կամ հատուկ կարիքներ կամ հաշմանդամություն ունեցող անձ եք, իշխանությունը պետք է ապահովի համացանցից օգտվելու ձեր իրավունքը:

ԽՈՒՄԲ 2

Արտահայտման և տեղեկությունների հասանելիության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի առցանց արտահայտվելու, ինչպես նաև՝ տեղեկություններ ստանալու իրավունք: Այս իրավունքը կարող է սահմանափակվել այն դեպքում, երբ արտահայտումը ներառում է խտրականություն, ատելություն կամ բռնություն: Դուք կարող եք քողարկել ձեր ինքնությունն առցանց տիրույթում, օրինակ՝ օգտագործելով կեղծանուն, սակայն որոշ դեպքերում ձեր ինքնությունը կարող է բացահայտվել իշխանությունների կողմից:

ԽՈՒՄԲ 3

Հավաքների, միություններ կազմելու և մասնակցության ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ առցանց տիրույթում միավորվելու և առցանց խաղաղ բողոքի ակցիա անցկացնելու իրավունք: Դուք կարող եք ընտրել ցանկացած առցանց գործիք ցանկացած սոցիալական խմբի միանալու համար կամ մասնակցել սոցիալական խմբերի կամ հանրային քաղաքականության բանավեճերին:

ԽՈՒՄԲ 4

Գաղտնիություն և անձնական տվյալների պաշտպանություն

Յուրաքանչյուր ոք ունի համացանցում անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունք: Դա ներառում է առցանց տիրույթում ձեր անձնական նամակագրության և շփումների գաղտնիությունը: Անձնական տեղեկությունները կարող են օգտագործվել առցանց միայն այն դեպքում, եթե տվյալ անձը նախօրոք տվել է իր համաձայնությունը:

Պետական մարմինները և մասնավոր կազմակերպությունները պարտավոր են հարգել հատուկ կանոնները և ընթացակարգերը ձեր անձնական տվյալները մշակելիս:

ԽՈՒՄԲ 5

Կրթություն և գրագիտություն

Յուրաքանչյուր ոք ունի առցանց կրթության, մշակույթի և գիտելիք ատանալու իրավունք: Դուք պետք է ստանաք աջակցություն հմտություններ զարգացնելու տեսանկյունից, որպեսզի ըմբռնեք և կիրառեք տարբեր համացանցային , ինչպես նաև ստուգեք ձեր կողմից օգտագործվող տեղեկությունների և ծառայությունների ճշտությունն ու վստահելիությունը:

ԽՈՒՄԲ 6

Երեխաներ և երիտասարդներ

Երեխաները և երիտասարդները համացանցից օգտվելիս ունեն հատուկ պաշտպանության և ուղղորդման իրավունք:

Համացանցից անվտանգ օգտվելու մասին տեղեկություններ դուք կարող եք ստանալ ձեր ուսուցիչներից և ծնողներից:

Դուք ունեք իշխանությունների, համացանցային ծառայությունների և բովանդակության մատակարարների կողմից ձեզ վնաս պատճառող ապօրինի առցանց տեղեկության կամ վարքագծի վերաբերյալ հստակ տեղեկություններ ստանալու իրավունք: , ,

ԽՈՒՄԲ 7

Աջակցություն և օգնություն

Յուրաքանչյուր ոք ունի օգնություն և աջակցություն ստանալու, այդ թվում՝ դատարան դիմելու իրավունք այն դեպքում, երբ առցանց տիրույթում չեն պաշտպանվում իր իրավունքները:

Համացանցային ծառայության մատակարարները (որոնք ապահովում են բովանդակության հասանելիությունը առցանց տիրույթում) պետք է տեղեկացնեն ձեզ ձեր իրավունքների, ինչպես նաև խախտումների դեպքում բողոքարկման ընթացակարգերի մասին:

Ձեր թվային ինքնությունը, համակարգիչը և տվյալները, որոնք պարունակվում են համակարգչում պաշտպանված են ապօրինաբար օգտագործվելուց, գողությունից և այլ խարդախություններից:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 2

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 10-20

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

ԽԱՂԱՆՔ ՆՈՐԻՑ

Այս վարժության հիմքում ընկած է դերային խաղը: Ըստ սցենարի՝ երեխաներից մեկին ճնշումներով ներքաշում են մեկ այլ երեխայի բուլինգի ենթարկելու մեջ: Մասնակիցները պետք է վերաբեմադրեն իրավիճակն այլ արդյունք ստանալու նպատակով:

ԹԵՄԱՆԵՐ	Կիբերբուլինգ, ժողովրդավարություն և մասնակցություն, ռասիզմ և խտրականություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	2
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ, թե ինչպես է գոյանում բուլինգը • Զարգացնել բուլինգի զոհերի նկատմամբ համերաշխության և կարեկցանքի զգացում • Խրախուսել մասնակիցներին քայլեր ձեռնարկել բուլինգի և ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախքան վարժությունը սկսելը՝ ընտրե՛ք 4 կամավոր, նրանք պետք է խաղան կարճ բեմականացում խմբի մնացած մասնակիցների համար (5 րոպեից ոչ ավել), տվե՛ք նրանց սցենարը, որպեսզի նրանք կարողանան նախօրոք պատրաստվել, անհրաժեշտության դեպքում, օգնեք նրանց սկսել բեմականացումը • Հավաստիացե՛ք, որ դուք բավականաչափ տարածք ունեք դերային խաղն իրականացնելու համար

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Բացատրե՛ք մասնակիցներին, որ վարժությունը կսկսվի փոքր բեմականացմամբ: Մինչև բեմականցման մեկնարկելը, ընթերցեք սցենարը: Այնուհետև, ներկայացրե՛ք կամավորներին և ասե՛ք նրանց, որպեսզի սկսեն դերային խաղը:

ՍՑԵՆԱՐ

Ալբերտը հանգիստ և կարծես մի փոքր «տարբերվող» երեխա է: Նա շատ ընկերներ չունի և հաճախ անհանգստանում է, որ դասարանի մյուս երեխաները նրան չեն սիրում: Մեկմեկ նա խեղկատակություն է անում, որպեսզի մյուս երեխաներին ծիծաղեցնի և դա իր մոտ շատ լավ է ստացվում (նույնիսկ, եթե ուսուցիչը միշտ չէ, որ գոհ է նրա վարքից):

Մի օր, դասերից հետո, երբ նրա կատակների վրա հռհռում էր ամբողջ դասարանը, նրան մոտեցան դասարանի ամենահեղինակավոր երկու տղաները՝ Դերեքն ու Ջարեդը: Նրանք երեքով սկսեցին ծիծաղել Ալբերտի վարքագծի վրա, ապա քայլեցին դեպի տուն: Ալբերտը շատ հպարտ էր, քանի որ նրան թվաց, որ իրեն վերջապես ընդունեցին:

2. Այժմ սկսեք դերային խաղը: Դերային խաղից հետո հարցրե՛ք մասնակիցների կարծիքները:
3. Անհրաժեշտության դեպքում օգնեք նրանց հետևյալ հարցերով՝
   - Ինչ եք կարծում, նման սցենարը իրատեսակա՞ն է:
   - Ի՞նչ եք կարծում Ալբերտի վարքագծի մասին:
   - Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս էր իրեն զգում Ահմեդը:
4. Խնդրե՛ք մասնակիցներին, որպեսզի մտածեն, թե ինչպես կվարվեին Ալբերտի փոխարեն: Այնուհետև ասե՛ք նրանց, որ բեմականացումը պետք է կրկնեն, բայց այս անգամ դա կանեն այլ մասնակիցներ և արդյունքը կտեսնեք Ահմեդի (և Ալբերտի) դերերը կատարելուց հետո:
5. Նորից սկսե՛ք դերային խաղը (նույն կամավորների մասնակցությամբ), բայց ընդհատեք նրանց որոշակի տեղում և խնդրեք, որպեսզի խմբի մյուս անդամները ստանձնեն դերերից որևէ մեկը: Դուք կարող եք անել սա մի քանի անգամ, որպեսզի վարժությանը մասնակցեն խմբի ավելի շատ մասնակիցներ::
6. Դերային խաղն ավարտվելուց հետո, խնդրե՛ք մասնակիցներին մտածել, թե իրավիճակը մեղմացնելու համար ինչ կարող էր հրապատրակել Ալբերտը համացանցում առաջին սցենարի վերջում (օրինակ՝թվիթ հաղորդագրություն, անձնական հաղորդագրություն, մեկնաբանություն կամ որևէ այլ բան): Այնուհետև անցե՛ք վարժության քննարկում փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համոզվե՛ք, որ մասնակիցները դուրս են եկել իրենց դերերից, եթե իհարկե մասնակցել են դերային խաղին: հատուկ շեշտե՛ք, որ հետևյալ հարցերին նրանք պետք է պատասխանեն իրենց սեփական դիրքորոշումից ելնելով, այլ ոչ թե այն դերի, որ նրանք խաղում էին:

- Ի՞նչ կարծիք ունեք այս վարժության մասին:
- Որո՞նք էին այն գործոնները, որ ստիպեցին Ալբերտին միանալ ծաղրուծանակին:
- Ձեզ համար անձամբ որքանո՞վ է դժվար դիմակայել նման ճնշումներին իրական կյանքում :
- Եթե սա տեղի ունենար առցանց, արդյո՞ք արդյունքը նույնը կլիներ:Ի՞նչը կլիներ նույնը և ի՞նչը կտարբերվեր:
- Դուք որևէ մեկի անձնական էջում կամ որևէ այլ տեղ համացանցում երբևէ տեսե՞լ եք հաղորդագրություններ, որոնք ուղղված են մարդկանց վիրավորելուն այնպես, ինչպես դա արեց Ալբերտն այս սցենարում:
- Կա՞ արդյոք որևէ բան, որ դուք կարող եք անել, որպեսզի նման հաղորդագրությունները չհայտնվեն առցանց կամ, առնվազն, նվազեցնեք դրանց ազդեցությունը:
- Դուք որևէ նոր բան սովորեցի՞ք այս վարժությունից : Արդյոք այն ստիպե՞ց ձեզ այլ կերպ նայել նվաստացման խնդրին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Նախքան վարժությունն անցկացնելը, համոզվե՛ք, որ դուք տեղյակ եք բոլոր այն հնարավոր լարված իրավիճակներից, որ կարող են առաջանալ խմբի անդամների միջև: Միգուցե կարիք լինի փոփոխել սցենարը, որպեսզի այն որևէ կերպ չարտացոլի խմբի անդամներից որևէ մեկի նկատմամբ ընդգծված բացասական վերաբերմունքը: Մասնավորապես, դուք կարող եք փոխել Ահմեդի ազգությունը, Ալբերտի մեկնաբանությունները կամ աղջիկների կերպարները սցենարի մեջ:
- Ուշադիր եղե՛ք կամավորներ ընտրելիս. աշխատեք ընտրել այնպիսի մարդկանց, որոնք ոչ մի առնչություն չունեն սցենարում շոշափվող խնդիրների հետ: Բացատրե՛ք կամավորներին, որ դերային խաղը պետք է լինի հակիրճ::
- Ժամանակ հատկացրե՛ք այն մարդկանց, ովքեր չունեցան դերային խաղին մասնակցելու և իրենց առաջարկություններով կիսվելու հնարավորություն: Դերային խաղը երեք անգամից ավել կրկնելը ձանձրալի կլինի: Դրա փոխարեն, մասնակիցներին կարելի է խնդրել նկարագրել վերջնարդյունքը փոխելու այլ հնարավոր տարբերակներ:
- Եթե դերային խաղը զգացմունքային բուռն արձագանքներ առաջացնի խմբի մասնակիցների մոտ, օգտակար կլինի մինչև վերլուծության և գնահատման փուլին անցնելն անցկացնել մեկ այլ, կարճ վարժություն՝ մասնակիցներին իրենց դերերից դուրս գալու հնարավորություն տալու համար: Սովորաբար, լիովին բավարար է, եթե նրանք բարձրաձայն ասեն իրենց անունները կամ կատարեն շատ ժամանակ չպահանջող, ֆիզիկական վարժություն:
- Աշխատե՛ք զերծ մնալ դերային խաղի ընթացքում տարբեր վարքագծերի վերաբերյալ ձեր դատողությունները բարձրաձայնելուց. դրա փոխարեն, մասնակիցներին այլ տեսակետ ցույց տալու համար, օգտագործեք հարցեր: Կարևոր է, որպեսզի մասնակիցներն ազատ զգան իրենց և սեփական վերաբերմունքը կամ վարքագիծը նկարագրելիս լինեն հնարավորինս ազնիվ, այդ թվում բարձրաձայնեն այն բարդությունները, որոնց հետ կբախվեին այն դեպքում, եթե որոշեին տեղի չտալ հասակակիցների կամ համադասարանցիների ճնշումներին:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Դերային խաղի փոխարեն, կարելի է սցենարը օգտագործել որպես մասնավոր դեպքի օրինակ, որը կարելի է անցկացնել կամ որպես փոքր խմբերի աշխատանք, կամ մեծ խմբային քննարկում: Երկու դեպքում էլ մասնակիցները պետք է այլ ավարտ մտածեն տրված իրավիճակի համար:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խնդրե՛ք մասնակիցներին մշակել համերաշխություն արտահայտող հաղորդագրություններ բուլինգի և կիբերբուլինգի զոհերին կամ՝ ներկայացնել առաջարկությունների ցանկ այն մարդկանց համար, ում «ստիպում են» միանալ ճնշումներին: Այս հաղորդագրությունները կարող են տարածվել սոցիալական մեդիայի հարթակներում կամ դպրոցական հանրության հաղորդակցական ալիքներով:

Կազմե՛ք գործողությունների պլան այն դեպքերի համար, երբ մասնակիցներն առցանց տիրույթում բախվում են կիբերբուլինգի հետ, լինի դա զոհի, թե՝ ականատեսի կարգավիճակով: Խումբը կարող է կազմել խորհրդանշական պակտ առ այն, որ բուլինգի որևէ դրվագ երբևէ առցանց տիրույթում հանդիպելու պարագայում, նրանք կդիմեն այդ ցանկում նշված միջոցներից մեկին:

Կան բազմաթիվ կազմակերպություններ և կայքեր, որոնք զբաղվում են կիբերբուլինգի հարցով: Հավաստիացե՛ք, որ մասնակիցները տեղյակ են աջացկցության նմանօրինակ համակարգերի մասին, եթե վարժության արդյունքում կառաջանա նման անհրաժեշտություն: Օգտագործե՛ք որոնողական համակարգերը նման տեղական նախաձեռնություններ գտնելու նպատակով կամ ծանոթացե՛ք ընդհանուր տեղեկությունների հետևյալ կայքերում՝ https://www.stopbullying.gov/cyberbullying/what-is-it և https://www.cybersmile.org:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ (ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Նախապատրաստեք փոքր բեմականացում հետևյալ սցենարի հիման վրա: Բեմականացված դրվագը պետք է սկսվի այն պահից, երբ Զարեդը և Դերեքը դասերից հետո մոտենում են Ալբերտին: Որոշեք, թե ովքեր են խաղալու Զարեդի, Դերեքի, Ալբերտի և Ահմեդի դերերը:

- Դերեք, Զարեդ՝ դպրոցի հեղինակավոր տղաներ: Ծաղրը նրանք են սկսում:
- Ալբերտ՝ մի տղա է, ով ընկերներ դժվարությամբ է ձեռք բերում: Նրան նկարագրվող իրավիճակի մեջ ներքաշում են Դերեքն ու Զարեդը:
- Ահմեդ՝ նոր տղա է, ծագումով Եթովպիայից է:

ԱՅՍ ՊԱՀԻՑ ՍԿՍՎՈՒՄ Է ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Դպրոցից տուն գնալու ճանապարհին՝ Դերեքը, Զարեդը և Ալբերտը տեսնում են, որ իրենց առջևից քայլում է Ահմեդը: Ահմեդը ուրիշ երկրից է եկել և վերջերս է տեղափոխվել իրենց դասարան: Մյուս երեխաները ծաղրում են նրան, որովհետև նա լավ չի խոսում այն լեզվով, որով խոսում են դպրոցում, ավելի փոքրամարմին է, քան դասարանի մյուս երեխաները և հնամաշ շորեր է հագնում:

Դերեքն ու Զարեդը արագացնում են քայլերը, որ հասնեն Ահմեդին: Հետո սկսում են վիրավորական բաներ ասել նրան, քաշքշում են պայուսակը և ծաղրելով հարցնում, թե արդյոք Եթովպիայում բոլորն են նրա նման հագնվում և միգուցե ավելի լավ կլիներ, որ նա մանկապարտեզ գնար, եթե չի կարողանում նորմալ խոսել իրենց լեզվով:

Ալբերտը շատ է նեղվում ստեղծված իրավիճակից: Դերեքն ու Զարեդը անընդհատ նայում են նրան և խրախուսում, որ ինքն էլ միանա իրենց և սկսի ծաղրել Ահմեդին: Ի վերջո, Ալբերտն, ըստ իրեն, մի սրամիտ կատակ է անում՝ ասելով, որ եթովպացիներն ապրում են ծառերի վրա և խոսում՝ կապիկների լեզվով: Դերեքին ու Զարեդին դա շատ է զվարճացնում, բայց Ալբերտը տեսնում է, թե որքան է նեղվում Ահմեդը և որքան է վախենում այդ երեք տղաներից:

Երբ Ալբերտը տուն է հասնում, նա իրեն շատ վատ է զգում: Նա շատ լավ գիտի, թե ինչ է նշանակում,երբ մյուս երեխաները քեզ ծաղրում են, իսկ այն ինչ նա ասեց Ահմեդին, շատ ավելի վիրավորական էր, քան իրեն երբևէ ասված որևէ բան: Բայց, մյուս կողմից, այնքան հաճելի էր Դերեքի և Զարեդի հետ միասին ինչոր բանի վրա ուրախանալը. նրանց ընկերությունն ամեն ինչ արժի: Ալբերտը միացնում է համակարգիչը, սոցիալական ցանցում «ընկերանում է» Դերեքի և Զարեդի հետ, որից հետո իր էջի վրա տեղադրում եթովպացիների մասին իր մեկնաբանությունը:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 1

ՄԱՍՆԱԿԻՑ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 10-16

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄՐՑԱՎԱԶՔ

Այս վարժության միջոցով մասնակիցները թիմային խաղի միջոցով ընդհանուր պատկերացում են կազմում մարդու իրավունքների հետ կապված հիմնական սկզբունքների մասին: Մասնակիցները պետք է իրենց թիմի մյուս անդամներին ցանկացած եղանակով, բացի խոսելուց, նկարագրեն տարբեր իրավունքներ:

ԹԵՄԱՆԵՐ	Մարդու իրավունքներ, ռասիզմ և խտրականություն, գաղտնիություն/անվտանգություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	1
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-16
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (ՄԻՀՀ) ընդգրկված իրավունքները • Մտածել վիրտուալ աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության միջոցների մասին • Քննարկել կապը մարդու իրավունքների և ատելության խոսքի առցանց դրսևորումների միջև
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Իրավունքներն արտացոլող քարտերի օրինակներ. մեկական օրինակ յուրաքանչյուր խմբին • Պատասխանների քարտերի օրինկաներ. նախապատրաստեք 5 օրինակ • ՄԻՀՀ (ամփոփ տարբերակ) այնքան օրինակ, որ բոլորին բավարարի: • Ֆլիպչարտներ և մարկերներ (կամընտրական) • Բավականաչափ տարածք, որպեսզի 2 կամ ավելի խմբերը կարողանան աշխատել առանձին, ցանկալի է տարբեր սենյակներում • 2 վարող (նախընտրելի տարբերակ)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Կտրատե՛ք իրավունքների և պատասխանների քարտերը • Կարելի է նաև պատճենահանել «ցուցումներ գաղափարներ հավաքողների համար» թերթիկը կամ գրել այդ ցուցումները ֆլիպչարտի վրա կամ ցույց տալ սլայդով

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (ԱՅՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՉՈՒՆԵՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

1. Հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչ են նրանք հասկանում մարդու իրավունքներ ասելով: Գրե՛ք նրանց արտահայտած կարծիքները ֆլիպչարտի վրա (կամ փակցված թղթի վրա) և, անհրաժեշտության դեպքում, օգնե՛ք նրանց հետևյալ հուշող հարցերով՝
   - Ո՞վ կարող է օգտվել մարդու իրավունքներից:
   - Կարո՞ղ եք նշել մարդու որևէ իրավունք:
   - Ովքե՞ր պետք է ապահովեն մարդու իրավունքների պաշտպանությունը:
   - Ինչպե՞ս են դրանք առաջացել:
   - Կիրառվո՞ւմ են արդյոք մարդու իրավունքներն առցանց տիրույթում:
2. Այժմ, մասնակիցներին տվե՛ք ամփոփ տեղեկություններ մարդու իրավունքների մասին, օրինակ՝

Մարդու իրավունքները հավասարապես պատկանում են ամենքին, և դրանք «օրենքներ են կառավարությունների համար», ինչը նշանակում է, որ կառավարությունները պարտավոր են ապահովել, որպեսզիանհատները չարժանանան անարդար վերաբերմունքի, ծայրահեղ վիրավորանքների և չենթարկվեն բռնության: Մարդու իրավունքները չափազանց կարևոր են, որովհետև դրանք մեզ պաշտպանում են, և սովորեցնում վարվել այնպես, որ չխախտենք այլոց իրավունքները:

ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

3. Բացատրե՛ք մասնակիցներին, որ վարժությունը ներառում է թիմային խաղ՝ հիշեցնելու համար մասնակիցներին այն իրավունքների մասին, որոնք պարունակվում են ՄԻՀՀ-ում: Նկարագրե՛ք խաղի կանոնները և նպատակը (էջ 129) և մասնակիցներին բաժանե՛ք 5-8 հոգանոց թիմերի: Յուրաքանչյուր թիմին բաժանե՛ք հետևյալ նյութերը՝
   - ՄԻՀՀ ամփոփ տարբերակի օրինակներ,
   - պատասխանների 2 քարտ,
   - ցուցումներ «գաղափարներ համախմբողների» համար,
   - կարող եք նաև այս ցուցումները պարզապես գրել ֆլիպչարտի վրա,
   - ֆլիպչարտներ և մարկերներ (կամընտրական):
4. Եթե մասնակիցները չգիտեն ՄԻՀՀ բովանդակությունը, ապա տվե՛ք նրանց ժամանակ հոդվածներին ծանոթանալու և, եթե կան հոդվածներ, որ չեն հասկանում՝ հարցեր տալու համար:
5. Բացատրե՛ք կանոնները (էջ 129) և հավաստիացե՛ք, որ դրանք հասկանալի են բոլորի համար: Այնուհետև սկսե՛ք խաղը:

6. Խաղն ավարտվում է, երբ թիմերից մեկը գուշակում է բոլոր իրավունքները, կամ եթե վերջանում են պատասխանների քարտերը: Խնդրե՛ք մասնակիցներին կիսվել իրենց տպավորություններով և հնարավորություն տվե՛ք հանգստանալ թեժ մրցումից հետո: Օգտագործե՛ք հետևյալ հարցերից մի քանիսը խաղը վերլուծելու համար:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԽԱՂԻ ՄԱՍԻՆ

- Ո՞ր իրավունքները նկարագրելն էր ամենից բարդ: Ինչու՞:
- Ի՞նչ եզրակացությունների հանգեցիք նման հաղորդակցությունից հետո: Ինչու՞ է հաճախ այդքան բարդ իրար հասկանալը: Արդյոք դա տեղեկությունը փոխանցողի, թե՞ ընկալողի մեղքն է: Միգուցե՝ երկուսի՞նը:
- Ի՞նչ զգացողություններ ունեք ձեր թիմի նկատմամբ այժմ: Իսկ հակառակորդ թիմի՞:
- Մտածեք մրցակցային խաղերի մասին. ինչի՞ց ելնելով ենք մենք ընտրում այս կամ այն թիմը: Արդյոք այդ ընտրությունն ունի՞ պատճառ: Կարո՞ղ եք գտնել զուգահեռներ իրական կյանքում:

ԿԱՐԾԻՔՆԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Արդյոք կայի՞ն բարդ ընկալելի իրավունքներ:
- Ինչ եք կարծում, անհրաժեշտ են արդյոք այս բոլո՞ր իրավունքները : Եթե ոչ, ապա որոնցի՞ց կհրաժարվեիք:
- Ինչ եք կարծում, այս իրավունքները պե՞տք է կիրառվեն նաև վիրտուալ աշխարհում: Կարող եք բերել օրինակներ, երբ որոշ իրավունքներ կարևոր են առցանց տիրույթում:
- Ի՞նչ եք կարծում, համացանցում մարդու իրավունքները հարգու՞մ են:

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ

- Հակիրճ բացատրե՛ք, որ ատելության խոսքը, դա խմբի կամ խմբի անդամների նկատմամբ ատելության ցանկացած «դրսևորումն» է, որն ունի վիրավորական բնույթ և կարող է հանգեցնել բռնության այդ խմբի անդամների նկատմամբ: Խնդրե՛ք նրանց բերել օրինակներ պարզաբանելու համար:
- Խաղի մեջ արծարծված ո՞ր իրավունքներն են կիրառելի ատելության խոսքի նկատմամբ: Ինչու՞:
- Եթե դուք դառնայիք ատելության խոսքի առցանց դրսևորման թիրախ, ո՞ր իրավունքների կարիքը կունենայիք:
- Ի՞նչ կարելի է անել ատելության խոսքի առցանց դրսևորումների տարածումը կանխելու համար:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Խաղն ավելի արդյունավետ կանցնի, եթե լինի երկու վարող: Վարողները պետք է հետևեն,

որպեսզի «Բացատրողները» չարձագանքեն պատասխանների «ոչ պաշտոնական» տարբերակներին (օրինակ՝ գլխի շարժումով կամ դեմքի արտահայտությամբ):

- Մասնակիցներն իրավունքները գուշակելու համար կարող են աշխատել զույգերով: Սա կնպաստի, որպեսզի նրանք քննարկեն, թե որն է այս կամ այն իրավունքի իմաստը, բայց նաև կերկարաձգի խաղի համար անհրաժեշտ ժամանակը:
- Երբ «Բացատրողները» մոտենում են նոր իրավունքի քարտ վերցնելու համար հիշեցրեք նրանց, որ պետք է հանձնեն ձեզ օգտագործված կպատասխանների քարտերը: Ստուգե՛ք թե ինչ է գրված այդ քարտերի վրա և անհրաժեշտության դեպքում փոխանցեք նրանց պատասխանների նոր քարտ: :
- Կարծիքների քննարկման ժամանակ, կարող եք ավելի շատ կենտրոնանալ որոշ թեմաների վրա՝ դրանք ավելի մանրամասն ուսումնասիրելու համար: Մի՛ փորձեք հասցնել անդրադառնալ բոլոր հարցերին:
- Որևէ խումբ «ընտրելու» հետ կապված հարցերը կարելի է օգտագործել նաև այլ խմբերի «պատկանելության» հարցը քննարկելու համար, օրինակ՝ որևէ երկրի կամ էթնիկ խմբի:: Կարող եք քննարկել այն զգացական կապվածությունը, որ մարդիկ սովորաբար ունենում են «իրենց» խմբի նկատմամբ: Օգտագործե՛ք այս քննարկումը ռասիզմի և խտրականության հետ կապված հարցերին անդրադառնալու համար:
- Առցանց տիրույթում մարդու իրավունքներին անդրադառնալու համար ժամանակ ունենալու դեպքում, մասնակիցների հետ միասին կարող եք ծանոթանալ Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկին:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Վարժությունը կարող է ենթադրել նկարչություն կամ մնջախաղ , կամ երկուսը միասին, ինչպես նկարագրված է վերը՝ ցուցումների բաժնում:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հանձնարարե՛ք մասնակիցներին համացանցում գտնել լրատվական որևէ նյութ, որը պատմում է մարդու իրավունքների ոտնահարման մասին: Հիշեցրե՛ք նրանց, որ մարդու իրավունքների ոտնահարումը «սովորական» հանցագործություն չէ. դա նշանակում է, որ կառավարությունը թերացել է մարդկանց պաշտպանելու իր պարտականությունը կատարելիս:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԹԻՄԱՅԻՆ ԽԱՂ՝ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Խաղի նպատակը՝ կռահել բոլոր մարդու իրավունքների քարտերը մյուս թիմերից շուտ, կամ խաղի ավարտին ունենալ բոլորից շատ չօգտագործած պատասխանների քարտեր:

Կանոններ՝

- Յուրաքանչյուր թիմից մեկական մասնակից («Բացատրողը») վարողից ստանում է մարդու իրավունքների իր քարտը: Նրանք պետք է քարտի վրա նշված մարդու իրավունքը նկարագրեն իրենց թիմի մյուս անդամներին՝ առանց խոսելու: Նրանք կարող են նկարել, օգտագործել ժեստեր կամ դիմախաղ, բայց չեն կարող օգտագործել որևէ այլ բան հանձնարարված իրավունքը բացատրելու համար:
- Թիմի մյուս անդամներն ունեն ՄԻՀՀ օրինակը և, օգտվելով դրանից, պետք է գուշակեն, թե որ իրավունքն է նկարագրվում: Մինչև «պաշտոնական» պատասխանն արձանագրելը՝ խումբը պետք է քննարկի և համաձայնության գա իրենց տարբերակի շուրջ: Երբ նրանք համաձայնության կգան պատասխանի վերաբերյալ, պետք է գրանցեն այն պատասխանների քարտերի վրա և փոխանցեն «Բացատրողին»: Այնուհետև «Բացատրողը» ասում է, դա ճիշտ է, թե ոչ:
- Յուրաքանչյուր իրավունքի համար կարելի է օգտագործել առավելագույնը 2 պատասխանի քարտ: Դրանից հետո, եթե պատասխանը ճիշտ չէ, այն արձանագրվում է որպես «չգուշակված»: Այնուհետև, հաջորդ «Բացատրողի» հերթն է վերցնել իր իրավունքի քարտը վարողից: Նրանք պետք է հանձնեն նաև օգտագործած պատասխանների քարտերը:

Եթե հենց առաջին պատասխանը ճիշտ է, ապա թիմը ստանում է 2 նոր պատասխանի քարտ: Եթե երկրորդ պատասխանն է ճիշտ, ապա թիմը ստանում է 1 նոր պատասխանի քարտ:

Եթե իրավունքը «չի գուշակվում (2 հնարավորություններից հետո), թիմը չի ստանում հավելյալ պատասխանի քարտ:

- Յուրաքանչյուր իրավունքի քարտ բացատրվում է տարբեր «բացատրողների» կողմից: Երբ թիմի բոլոր անդամները բացատրում են մեկական իրավունքի քարտ, սկսվում է երկրորդ շրջանը:
- Խաղն ավարտվում է, երբ թիմն իր բոլոր իրավունքի քարտերը ճիշտ է գուշակում, կամ եթե որևէ թիմի մոտ վերջանում են պատասխանների քարտերը:

Հիշե՛ք:

- Ոչ բոլոր իրավունքներն են ընդգրկված խաղի մեջ. ՄԻՀՀ-ն ընդգրկում է 30 տարբեր իրավունք, իսկ խաղի մեջ կա ընդամենը 12 իրավունքի քարտ:
- Խաղի սկզբում թիմերից յուրաքանչյուրն ունի 20-ական պատասխանի քարտ: Նրանք պետք է ուշադիր լինեն, որպեսզի չծախսեն պատասխանների բոլոր քարտերը: Եթե նրանց պատասխանների քարտերը վերջանան, նրանք կպարտվեն:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՎԱՔՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք իրավունք չունեք խոսել, երբ գա բացատրելու ձեր հերթը: Կարող եք նկարել և օգտագործել ժեստեր և դիմախաղ՝ ձեզ հանձնարարված իրավունքը թիմին բացատրելու համար: Աշխատեք չօգտագործել այլ պարագաներ:

Եթե ձեր թիմը տա «ոչ պաշտոնական» պատասխան, այսինքն պատասխանը չգրի համապատասխան քարտի վրա, դուք չպետք է արձագանքեք: Դուք կարող եք խրախուսել նրանց, եթե ճիշտ ուղղությամբ են շարժվում, գլխի շարժումով դրական կամ բացասական պատասխան տաք, եթե նրանք հարցեր են տալիս, օրինակ՝ «հիմա հատա՞կն եք ավլում» կամ «բանտու՞մ եք» կամ «դա պաղպաղա՞կ է», բայց ԽՈՍԵԼ ՉԵՔ ԿԱՐՈՂ:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՔԱՐՏ

Պատասխանի քարտ	Պատասխանի քարտ
Այստեղ գրեք ձեր պատասխանը	Այստեղ գրեք ձեր պատասխանը
Պատասխանի քարտ	Պատասխանի քարտ
Այստեղ գրեք ձեր պատասխանը	Այստեղ գրեք ձեր պատասխանը
Պատասխանի քարտ	Պատասխանի քարտ
Այստեղ գրեք ձեր պատասխանը	Այստեղ գրեք ձեր պատասխանը
Պատասխանի քարտ	Պատասխանի քարտ
Այստեղ գրեք ձեր պատասխանը	Այստեղ գրեք ձեր պատասխանը
Պատասխանի քարտ	Պատասխանի քարտ
Այստեղ գրեք ձեր պատասխանը	Այստեղ գրեք ձեր պատասխանը

Պատասխանի քարտ	Պատասխանի քարտ
Այստեղ գրեք ձեր պատասխանը	Այստեղ գրեք ձեր պատասխանը

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՐՏԵՐ

Հոդված 1	**Հոդված 14**
Բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ:	Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և դրանից օգտվելու իրավունք:
Հոդված 2	**Հոդված 18**
Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության:	Յուրաքանչյուր ոք ունի կրոնի ազատություն:
Հոդված 3	**Հոդված 19**
Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:	Յուրաքանչյուր ոք ունի արտահայտման ազատության իրավունք (ասել ինչ ցանկանում են):
Հոդված 5	**Հոդված 20**
Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների:	Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք:
Հոդված 11	**Հոդված 21**
Յուրաքանչյուր ոք ունի անմեղ համարվելու իրավունք, քանի դեռ իր մեղքն օրինական կարգով չի ապացուցվել:	Յուրաքանչյուր ոք ունի ընտրություններին քվեարկելու և իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք:
Հոդված 12	**Հոդված 27**
Յուրաքանչյուր ոք ունի անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունք:	Յուրաքանչյուր ոք ունի իր համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 3

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ՑԱՆԿԱՑԱԾ

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

ԾԱՆՈԹԱՆԱՆՔ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

Մասնակիցները պետք է գտնեն կայքից օգտվելու կանոնները կամ հանրույթի համար մշակված ուղեցույցները և քայլեր ձեռնարկեն այդ կայքին անցանկալի բովանդակության մասին տեղեկացնելու համար: Մասնակիցները նաև քննարկում են նման բովանդակության մասին հայտնելու առավելություններն ու թերությունները, հատկապես հաշվի առնելով, WEB 2.0-ի ընձեռած հնարավորությունները:

ԹԵՄԱՆԵՐ	Քարոզարշավի կազմակերպման ռազմավարություններ, համացանցային գրագիտություն, ժողովրդավարություն և մասնակցություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	3
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	Ցանկացած
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ համացանցում առկա բովանդակությունը կանոնակարգելու որոշ ձևեր, այդ թվում՝ ատելության խոսքի առցանց դրսևորումներն արգելող կանոնները • Ուսումնասիրել որոշ հանրահայտ կայքերից օգտվելու կանոնները և գնահատել դրանց պիտանելիությունը • Քննարկել խախտումների մասին հայտնելու առցանց մեխանիզմների արդյունա վետությունն ատելության խոսքի դեմ պայքարի տեսանկյունից
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Համակարգիչներ և համացանցից օգտվելու հնարավորություն: • Գրիչներ և հարցաթերթիկներ (էջ՝ 138)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք հարցաթերթիկների օրինակներ (էջ՝ 138), ձեզ անհրաժեշտ կլինի մեկական օրինակ յուրաքանչյուր փոքր (4 մասնակից) խմբի համար

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հարցրե՛ք մասնակիցներին, թե ո՞վ է որոշում համացանցում գործող կանոնները: Իսկ կա՞ն արդյոք նման կանոններ: Որտե՞ղ են դրանք գրված:
2. Օգտագործե՛ք էջ 138-ի տեղեկությունները մասնակիցներին բացատրելու համար, որ համացանցում կան կանոններ տարբեր «մակարդակներով». կարող են լինել կանոններ,

որոնք ստեղծել են կայքերի տերերը կամ հոսթինգ մատակարարողները, կան կանոններ, որ սահմանել են երկրների կառավարությունները, և կան կանոններ, որոնք բխում են միջազգային իրավունքից, մասնավորապես՝ մարդու իրավունքներից: Վարժության ընթացքում մասնակիցները կկենտրոնանան առաջին մակարդակի վրա, այն է՝ կայքերի տերերի սահմանած կանոնները:

3. Հարցրեք՝ մասնակիցներից որևէ մեկը երբևէ ծանոթացե՞լ է այն կայքերի «կանոնների» հետ, որ օգտագործում է: Իսկ երբևէ որևէ մեկը գործադրե՞լ է այդ կանոնները, ասենք՝ վիրավորական մեկնաբանության կամ հաղորդագրության մասին կայքի տերերին տեղեկացնելով, եթե նման պահելաձևն արգելված է եղել կայքի կանոններով: Ինչոր մեկը երբևէ հետաքրքրվե՞լ է, թե որքանո՞վ է դա հնարավոր և ինչպե՞ս է պետք անել:
4. Բացատրե՛ք, որ կայքերի օգտատերերի համար կանոնները սովորաբար հայտնի են որպես կայքի «կանոններ և պայմաններ», ինչը ներկայացված է գրեթե բոլոր կայքերում: Կանոններն ու պայմանները բավական օգտակար գործիք են ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում, քանի որ մեծ թվով կայքերի կանոններն ունեն նման վարքագիծն արգելող դրույթ: Խնդիրն այն է, որ մարդիկ արդյունավետորեն չեն գործադրում այդ կանոններն, իսկ կայքերի տերերը հաճախ չեն վերահսկում իրենց կայքի բովանդակությունը՝ սեփական կանոններին և պայմաններին համապատասխան:
5. Մասնակիցներին բաժանե՛ք 4 հոգանոց խմբերի և յուրաքանչյուր խմբին տվե՛ք 138-139 էջերում տրված հարցաթերթիկի օրինակ: Բացատրե՛ք, որ յուրաքանչյուր խումբ պետք է ընտրի հաճախ այցելվող կայք և փորձի լրացնել հարցաթերթիկն այդ կայքի մասին տեղեկությունների հիման վրա: Անհրաժեշտության դեպքում, խմբի հետ արագ անցեք հարցաթերթիկի բոլոր հարցերով, համոզվելու համար, որ մասնակիցները գիտեն, թե ինչ տեղեկություններ են ձեռք բերելու:
6. Տրամադրե՛ք նրանց 20 րոպե՝ առաջադրանքը կատարելու համար, այնուհետև, հավաքե՛ք խումբը վարժության քննարկում փուլին անցնելու համար:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սկսեք հարցաթերթիկի հարցերին հերթով անդրադառնալուց՝ համեմատելով մասնակիցների ձեռք բերված տեղեկությունները:

- Արդյո՞ք կային զգալի տարբերություններ խմբերի ձեռքբերված տեղեկությունների միջև, օրինակ՝ թույլատրված բովանդակության և խախտումների մասին հայտնելու ձևերի միջև:
- Որևէ մեկը գտե՞լ է «կանոնների և պայմանների» «օրինակելի» տարբերակ:
- Արդյոք խմբերից որևէ մեկի գտած «կանոնները և պայմանները» կարելի՞ է համարել բացարձակ ոչ պիտանի, ելնելով նրանից, որ դրանք կամ չեն անդրադառնում ատելության խոսքին, կամ խախտումների մասին հայտնելու ընթացակարգը և կանոնները չափազանց բարդ են:
- Այժմ, երբ դուք արդեն ուսումնասիրեցիք կանոններն ու պայմանները, ի՞նչ եք կարծում, ապագայում կուղարկե՞ք հաղորդագրություն կայքին, վիրավորական մեկնաբանություններ նկատելու դեպքում: Պատասխանը հիմնավորեք:

- Իսկ ի՞նչ կլիներ, եթե ոչ ոք երբևէ չհայտներ վիրավորական հաղորդագրությունների մասին:
- Ի՞նչ եք կարծում, որպես այդ կայքի օգտատերեր դուք կկարողանայի՞ք բարելավել դրա կանոններն ու պայմանները կամ ինչոր կերպ ապահովեիք, որպեսզի դրանց գործադրմանն ավելի խիստ հետևեն: Ինչպե՞ս կանեիք դա:
- Ուրիշ ի՞նչ առաջարկներ կարող եք անել խախտումների մասին հայտնելու գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար: Օրինակ՝ կա արդյո՞ք տարբերություն մի հոգի կհայտնի անցանկալի բովանդակության մասին, թե՝ 1,000 օգտատեր միաժամանակ: Իսկ ի՞նչ կլիներ, եթե այն ընկերությունը, որն օգտագործում է այս կայքը գովազդային նպատակներով, նախազգուշացներ, որ եթե վիրավորական բովանդակությունը չհեռացվի, ապա նա կընդհատի կայքի հետ համագործակցությունը:
- Կարո՞ղ եք առաջարկել ատելության խոսքի առցանց դրսևորումներին հակազդելու այլ մեթոդներ, բացի նման բովանդակության մասին հայտնելու ընթացակարգից:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Նախքան մասնակիցներին ինքնուրույն աշխատանք հանձնարարելը, միգուցե, ավելի ճիշտ կլինի, եթե դուք նրանց հետ միասին կատարեք վարժությունը մեկ օրինակի վրա: Կարող եք ընտրել որևէ կայք և ցույց տալ, թե ինչպես կարելի է գտնել «կայքից օգտվելու կանոններն ու պայմանները», ինչպես նաև անհրաժեշտ դրույթներն արագ գտնելու միջոցները: Հիշե՛ք, որ ոչ բոլոր կայքերն ունեն նման բաժին, իսկ երբեմն այն կարող է ունենալ այլ անվանում, օրինակ՝ հանձնարարականներ օգտատերերի համար» կամ «նյութեր տեղադրելու ուղեցույցեր»: Նման օրինակների հանդիպելու դեպքում մասնակիցները պետք է անեն նշումներ:
- Որպեսզի հավաստիանաք, որ բոլոր խմբերն ուսումնասիրում են տարբեր կայքեր, կարող եք յուրաքանչյուր խմբի համար անձամբ ընտրել կայքեր, կամ մինչև վարժությունը սկսելը տրամադրել նրանց մի քանի որպե որոշելու համար, թե որ կայքն են ընտրում: Համոզվեք, որ մասնակիցները ճիշտ կայքեր են ընտրել, օրինակ՝ սոցիալական ցանց, լուրերի գլխավոր գործակալություն, տեսահոլովակներ շրջանառելու կայք, խաղերի կայք և այլն:
- Տրված հարցաթերթիկի նշումներ բաժինը կարելի է օգտագործել այլ կարևոր փաստեր արձանագրելու համար, օրինակ՝ կա արդյո՞ք հղում գլխավոր էջի վրա, կա արդյո՞ք բողոքների ձևաթուղթ, արդյո՞ք կայքը նշում է, որ կպատասխանի բողոքներին որոշակի նշված ժամանակահատվածում, թե ոչ և այլն:
- Հիշեցրե՛ք մասնակիցներին, որ եթե կանոններն ու պայմանները երկար են, նրանք կարող են արագացնել գործընթացը որոնման բառերի միջոցով, օրինակ՝ «ատելության խոսք», «վիրավորանք», «ռասիզմ» և այլ նման բառեր և արտահայտություններ:
- Միասին հարցաթերթիկին ծանոթանալու փուլը կարող է տևել երկար և որոշ մասնակիցների համար լինել ձանձրալի: Կարող եք, աշխատանքն ավարտելուց հետո նրանց տրամադրել 5 որպե՝ մեկ այլ խմբի հետ միասին արդյունքները համեմատելու համար: Կամ խմբերը կարող են ծանոթանալ միմյանց հարցաթերթիկներին, ընդհանուր քննարկումը սկսելուց առաջ:

- Բացատրե՛ք մասնակիցներին, որ նախքան բողոք ներկայացնելը կարևոր է ծանոթանալ կայքի կանոններին , թեև դա չի նշանակում, որ նրանք չեն կարող բողոքարկել այն, ինչ համարում են վիրավորական, իսկ կայքը պատշաճ ձևով դրան չի անդրադառնում (կամ կանոններն ու պայմանները չունեն նման իրավիճակները կանոնակարգող դրույթներ): Որպես օրինակ, ծանոթացրեք մասնակիցներին Ֆեյսբուք սոցիալական ցանցում տեղադրված սեքսիզմի դեմ քարոզարշավին: Տե՛ս www.bbc.co.uk/news/technology22689522 և www.bbc.co.uk/news/technology22699761.
- Մասնակիցներին հիշեցրե՛ք նաև, որ խախտումների մասին հայտնելը (բողոք ներկայացնելը) ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարելու միակ ռազմավարությունը չէ: Ավելին, լինում են իրավիճակներ, երբ դա նաև տարբերակներից լավագույնը չէ: Նման իրավիճակներում ճիշտ արձագանք գտնելու հարցում կողմնորոշվելու համար կարող եք ծանոթանալ Գլուխ 5-ի քարոզարշավի ռազմավարություններ ենթաբաժնում ներկայացված տարբերակներին:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Մասնակիցները նաև կարող են որոշ ժամանակ տրամադրել իրենց ընտրած կայքերում ատելության խոսքի օրինակներ գտնելու համար: Այդպիսով նրանք որոշ պատկերացում կկազմեն այն մասին, թե որքանով արդյունավետ են գործում կայքի «կանոններն ու պայմանները»: Նրանք կարող են հետազոտել կայքերն՝ օգտագործելով որոնողական բառեր, ինչպես օրինակ՝ «նեգր», «պեդիկ», «քած» և այլ վիրավորական բառեր: Սա մի փոքր ժամանակատար է, բայց օգտակար նյութ կլինի կայքին բողոք ներկայացնելու ընթացակարգը փորձարկելու համար:

Անցանկալի բովանդակության վերաբերյալ կայքին բողոք ներկայացնելը միայն առաջին քայլն է հնարավոր այլ գործողությունների ցանկից: Մեկ այլ տարբերակ է, նման բովանդակության մասին խտրականության հարցերով զբաղվող պետական գործակալությանը կամ ոստիկանությանը հայտնելը: Որպես վարժությունն անցկացնելու այլ տարբերակ մասնակիցներին կարող եք հանձնարարել հետևյալը՝ կայքում վիրավորական բովանդակության վերաբերյալ նախապատրաստել և ներկայացնել բողոք ոստիկանությանը կամ իրավահավասարության հարցերով զբաղվող ձեր երկրի այլ մարմիններին: Որոշ երկրներում գործում են այնպիսի ՀԿ-ներ՝ ինչպես օրինակ՝ INACHը, և ունեն բողոքներ ընդունելու ընթացակարգ: Կարող եք նաև բերել Միացյալ Թագավորությունում գործող True Visionի օրինակը՝ (www.reportit.org.uk):

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե վերը նշված անցկացման այլընտրանքային տարբերակը չեք կիրառում, կարող եք մասնակիցներին հանձնարարել շարունակել վարժության ընթացքում իրենց ընտրած կայքի ուսումնասիրությունը: Նրանք կարող են վերլուծել այդ կայքում տեղ գտած ատելության խոսքի առցանց դրսևորումների օրինակները՝ նշելով նման դրվագների քանակը, թիրախային լսարանը և նկարագրելով այդ դեպքերի ծանրությունը: Եթե նրանք արձանագրեն, որ նման դեպքերը

հաճախակի են, ապա վերլուծությունն ավարտելուց հետո, առաջարկեք նրանց գործողությունների հետևյալ տարբերակները՝

- տեղադրել օրինակները և վերլուծությունը ատելության խոսքը վերահսկող դիտախմբի կայքում (www.nohatespeechmovement.org/hatespeechwatch) և քննարկել այլ ակտիվիստների հետ հնարավոր գործողությունների պլանը,
- վատագույն օրինակները և դրանց վերլուծությունն ուղարկել կայքի տիրոջը՝ օգտագործելով կայքի կանոններն ու պայմանները բողոքն ավելի հիմնավոր դարձնելու համար,
- եթե կայքը պատկանում է սոցիալական մեդիային, կարող են իրենց անձնական էջը բացել այդ կայքում և հանրայնացնել իրենց ուսումնասիրության արդյունքները (օրինակների համար տե՛ս www.nohatespeechmovement.org/hatespeechwatch և https://engb.facebook.com/WOH247,
- դասակարգել օրինակներն ըստ բովանդակության ծայրահեղության աստիճանի (որպես ուղեցույց տե՛ս «Վատագույն տարբերակը» վարժությունը): Այնուհետև տարբեր օրինակների համար սահմանել համապատասխան ռազմավարություններ, օրինակ՝ պատասխանել մեկնաբանությանը կամ նյութին, կամ դրանք տեղադրողին, այն դեպքում, երբ հիմքում ընկած են կեղծ տեղեկությունները,
- ծանոթանալ EULAlyzer կոչվող առցանց գործիքին (www.brightfort.com/eulalyzer.html), որը հնարավորություն է տալիս օգտատերերին արագ ընթերցել կանոններն ու պայմանները՝ ընդգծելով արտառոց ձևակերպումներն ու պայմանները, ինչպես նաև բոլոր այն հիմնական կետերը, որոնց մասին օգտատերերը պետք է տեղեկացված լինեն:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ

Համացանցը հիմնականում պատկանում է մասնավոր ընկերություններին: Նույնիսկ ինչոր մեկի անձնական բլոգը սովորաբար գտնվում է մասնավոր սերվերի վրա: Այն ընկերությունը, որին պատկանում է սերվերը կարող է որոշել սահմանափակել կամ չսահմանափակել այն, թե ինչ է կարելի տեղադրել անձնական բլոգներում: Այն կանոնները, որոնց պետք է հետևեն օգտատերերը, սովորաբար ընդգրկված են «կանոններ և պայմաններ» բաժնում: Դրանք կարող են արմատապես տարբեր լինել տարբեր կայքերի համար: Բացի կանոններից և պայմաններից՝ կարող են նաև լինել կառավարության կողմից սահմանված օրենքներ, որոնք կիրառվում են համացանցի օգտատերերի և կայքերի տերերի նկատմամբ: Որոշ դեպքերում դրանք օրենքներ են, որոնք կանոնակարգում են մասնավոր կյանքի և անվտանգության հետ առնչվող հարցեր կամ ատելության խոսքի ծայրահեղ դրսևորումներին վերաբերող օրենքներ: Նույնիսկ, եթե կառավարությունը չունի հատուկ օրենքներ մարդկանց անվտանգությունն առցանց պաշտպանելու համար, սա հաճախ կանոնակարգվում է մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորող միջազգային օրենսդրությամբ (տե՛ս ստորև բերված օրինակները): Այդիսկ պատճառով համացանցը մեծամասամբ նման է մեծ առևտրի կենտրոնի կամ գիշերային ակումբի: Նույնիսկ եթե չկա օրենք, որն արգելում է ջինս հագնել կամ փնթի տեսք ունենալ, ձեզ միևնույն է կարող են չթողնել մուտք գործել գիշերային ակումբ, որովհետև ըստ կանոնների ջինսով մուտքն արգելվում է: Նույն կերպ կայքերը կարող են մշակել սեփական կանոնները համացանցում իրենց «մասնավոր տարածքի» համար: Սակայն, միևնույն ժամանակ, նրանց կանոնները պետք է համադրելի լինեն այդ երկրի ընդհանուր օրենսդրության հետ:

Օրինակ՝ կառավարությունները պետք է պաշտպանեն մարդկանց ինչպես վիրտուալ, այնպես էլ ոչ վիրտուալ տարածքում:

Կ. ՅՈՒ. ԸՆԴԴԵՄ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ

1999 թ. մարտին առցանց ծանոթությունների կայքում իբր թե 12 ամյա տղայի անունից, տեղադրվել էր հայտարարություն: Այն ներառում էր հղում տղայի կայքին և հայտարարության մեջ ասվում էր, որ նա ցանկանում է ինտիմ հարաբերությունների մեջ մտնել իր տարիքի կամ իրենից մեծ տղայի հետ, որպեսզի «իրեն սովորեցնեն ձևերը»: Տղան տեղեկացավ այդ հայտարարության մասին միայն այն բանից հետո, երբ էլ. նամակ ստացավ հետաքրքրված մի տղամարդուց: Ծառայությունը տրամադրողը հրաժարվեց բացահայտել այն անձի ինքնությունը, ով պատասխանատու էր հայտարարությունը տեղադրելու համար՝ պնդելով, որ դա կհանդիսանա գաղտնիության մասին դրույթի ոտնահարում: Ֆիննական դատարանները վճռեցին, որ ծառայություն մատակարարող ընկերությանը հնարավոր չէր օրենքի ուժով պարտադրել բացահայտել այդ տեղեկությունները:

Գործը հասավ Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եվրոպական դատարանը վճռեց, որ ֆիննական պետությունը թերացել է երեխաներին և այլ խոցելի խմբերին պաշտպանելու իր պարտավորության մեջ: Հայտարարության պատճառով տղան վերածվել էր մանկապիղծների թիրախի և խախտվել էր նրա անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը (Եվրոպական կոնվենցիայի Հոդված 8):

ՕՐԵՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ



ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

1. Որքանո՞վ հեշտ է գտնել «կանոններն ու պայմանները» (այսուհետ՝ Կ և Պ): :

շատ հեշտ	բավական հեշտ	դժվար	շատ դժվար
o	o	o	o

Նշումներ՝

2. Որքանո՞վ հեշտ է Կ և Պ-ն հասկանալը:

շատ հեշտ	բավական հեշտ	դժվար	շատ դժվար
o	o	o	o

Նշումներ՝

3. Որքանո՞վ հասկանալի է տեղեկությունը՝ կապված բողոք ներկայացնելու հետ:

լիովին հասկանալի	բավական հասկանալի	մասամբ հասկանալի	բացարձակապես անհասկանալի
o	o	o	o

Նշումներ՝

4. Որքանո՞վ հասկանալի է տեղեկությունը՝ կապված բողոքը ստանալուց հետո պատասխան գործողությունների հետ:

լիովին հասկանալի	բավական հասկանալի	բավական բարդ է հասկանալը	շատ բարդ է հասկանալը
o	o	o	o

Նշումներ՝

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

5. Արդյոք Կ և Պ-ում կայի՞ն դրույթներ, որոնք վերաբերում էին ատելության խոսքին:

այո	Ոչ	համոզված չեմ/այլ պատասխան
o	o	o

Նշումներ՝ *Եթե կայքում թվարկվում են այլ տեսակի վիրավորանքներ, օրինակ՝ ռասիստական բնույթի վիրավորանքներ, հոմոֆոբ վիրավորանքներ և այլն, ապա կատարեք համապատասխան նշում:*

6. Արդյոք հիշատակվու՞մ է կիբերբուլինգը:

այո	Ոչ	համոզված չեմ/այլ պատասխան
o	o	o

Նշումներ՝

ԱՆՑԱՆԿԱԼԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

7. Արդյոք Կ և Պ-ում հիշատակվո՞ւմ է անցանկալի բովանդակությունը , օրինակ՝ թույլատրվու՞մ է, թե ոչ այդ կայքում պոռնոգրաֆիան:

այո	Ոչ	համոզված չեմ/այլ պատասխան
o	o	o

Նշումներ՝

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ

8. Արդյո՞ք կան կայքում հավելյալ տեղեկություններ այն մասին, թե ինչպիսի բովանդակություն է խրախուսվում այդ կայքում: Օրինակ՝ որևէ հակիրճ հայտարարություն հեշտ հասանելի տեղում, ինչպես օրինակ՝ «Մեր մասին» կամ «Ուղեցույց թույլատրելի նյութերի մասին» բաժիններում կամ որևէ այլ բան:

այո	Ոչ	համոզված չեմ/այլ պատասխան
o	o	o

Նշումներ՝

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 2

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 12-20

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45'

ԱՐՄԱՏՆԵՐ ԵՎ ՃՅՈՒՂԵՐ

Մասնակիցներն ուսումնասիրում են ատելության խոսքի առցանց դրսևորումների պատճառներն ու հետևանքները՝ կիրառելով «խնդիրների ծառ» մեթոդը: Այս վարժությունը կարող է օգտագործվել և՛ որպես «X Խումբը» վարժության շարունակություն, և՛ առանձին:

ԹԵՄԱՆԵՐ	Ռասիզմ և խտրականություն, Մարդու իրավունքներ, քարոզարշավի ռազմավարություններ
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	2
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	12-20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ ատելության խոսքի առցանց դրսևորումների պատճառներն ու հետևանքները • Դիտարկել կապն ատելության խոսքի առցանց և անցանց դրսևորումների միջև • Փնտրել մոտեցումներ ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ՝ ուսումնասիրելով խնդրի արմատները
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Գատախտակին փակցվող թուղթ և մարկերներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք «Ատելության խոսքի ծառ» բոլոր մասնակիցների համար կամ նկարե՛ք այն ֆլիպչարտի վրա

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հակիրճ ներկայացրե՛ք ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդիրը և Եվրոպայի խորհրդի «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական շարժման քարոզարշավը, եթե սա առաջին վարժությունն է, որ դուք անց եք կացնում այդ խմբում: Ատելության խոսքը ներկայացնելու համար օգտագործեք «Վատագույն տարբերակը» վարժության 1 և 2 կետերը: Քարոզարշավի մասին պատմելու համար գլուխ 2-ում ընդգրկված նյութերը::
2. Բացատրե՛ք, որ ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդիրը հասկանալու և դրան արձագանքելու համար, մենք պետք է կարողանանք տեսնել այն որպես մի խնդիր,

որը կապված է բազմաթիվ այլ հարցերի և «իրական» կյանքի հետ: Մասնավորապես, ատելության խոսքի դեմ պայքարելիս, անհրաժեշտ է ուսումնասիրել դրա հիմքում ընկած պատճառները: Հաճախ այդ պատճառներին անդրադառնալը շատ ավելի արդյունավետ է, քան հենց բուն ատելության խոսքի դրվագներին արձագանքելը:

3. Ցույց տվե՛ք մասնակիցներին «ատելության խոսքի ծառը» և բացատրե՛ք, որ խմբային աշխատանքի միջոցով նրանք պետք է փորձեն գտնել ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրի հիմքում ընկած որոշ պատճառներ (ծառի «արմատները»), ինչպես նաև ատելության խոսքի հետևանքները («ճյուղերը»):
4. Բացատրե՛ք, թե ինչպես է պետք աշխատել ծառ-սխեման լրացնելու համար: Ծառի վրա պատկերված յուրաքանչյուր՝ դեպի վեր գնացող, հաջորդական վանդակի բովանդակությունը պետք է պատասխանի «ինչու՞» հարցին: Նույնը վերաբերում է նաև ճյուղերին: Առավել հասկանալի դարձնելու համար, կարող եք ատելության խոսքի մեկ օրինակով ցույց տալ մասնակիցներին, թե ինչպես է պետք լրացնել վանդակները: (տե՛ս Խորհուրդներ վարողներին ենթավերնագիրը):
5. **Արմատները լրացնելիս՝** երբ մասնակիցները սկսելով բուն ատելության խոսքից, հերթով լրացնում են վանդակները դեպի վար, նրանք պետք է պատասխանեն «ինչու՞ է սա տեղի ունենում» հարցին: Արմատները պետք է լրացնեն նկարագրելով հնարավորինս շատ պատճառներ: Ցույց տվե՛ք մասնակիցներին, թե ինչպես կարող է «պատճառն» ունենալ իր սեփական բազմաթիվ պատճառները: Օրինակ՝ հարցրե՛ք նրանց. «Ինչու՞ են բոլորը բացասաբար արտահայտվում» որոշակի խմբերի մասին: Հուշե՛ք, հարցնելով, թե որտեղից ենք մենք «վերցնում» այդ բացասական պատկերացումները որոշակի խմբերի մասին և համարում դրանք ճշմարտություն (որպես օրինակ՝ լրատվամիջոցներից, հասարակական գործիչներից, ընդհանրապես հասարակության մեջ արմատացած նախապաշարմունքներից և անտեղյակությունից):
6. **Ճյուղերը լրացնելիս՝** մասնակիցները պետք է փորձեն հասկանալ ճյուղի հիմքում գրված պատճառի հնարավոր հետևանքները: Հարցրե՛ք նրանց, թե ըստ իրենց ի՞նչ տեղի կունենա ատելության խոսքի թիրախ հանդիսացող անհատի կամ խմբի հետ: Այնուհետև հարցրե՛ք, թե իր հեթին ի՞նչ կարող է հետևել դրան:
7. Բաժանե՛ք մասնակիցներին խմբերի և տվե՛ք նրանց ֆլիպչարտներ, որպեսզի վրան նկարեն իրենց ծառերը: Հանձնարարե՛ք, որպեսզի ծառի «բնի» վրա գրեն հետևյալ տեքստը (կամ որևէ այլ նման տեքստ): Այնուհետև, մասնակիցները պետք է լրացնեն հնարավորինս շատ արմատներ և ճյուղեր: Նրանք պետք է պատկերացնեն, որ ստորև գրված տեքստը հայտնվել է համացանցում:

   «X խմբի անդամները կեղտոտ հանցագործներ են: Նրանք անընդհատ գողություն են անում և ընդհանրապես այստեղ նրանց տեղը չէ: Ստիպե՛ք նրանց, որ հեռանան»:
8. Խմբերին տրամադրե՛ք 15 րոպե ծառը լրացնելու համար: Այնուհետև խնդրե՛ք մասնակիցներին ներկայացնել իրենց աշխատանքի արդյունքները կամ փակցնել «ծառերը» սենյակի պատերին այնպես, որ բոլորը կարողանան ծանոթանալ նրանց աշխատանքներին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Նկատու՞մ եք արդյոք ուշագրավ տարբերություններ խմբերի կազմած «ծառարե» միջև: : Հարցեր ունե՞ք մյուս խմբերին:
- Ձեզ համար հե՞շտ էր գտնել ատելության խոսքի «արմատները»: Նկարագրե՛ք, այն բարդությունները, որոնց հետ բախվեցիք և խմբի անդամների միջև եղած տարակարծությունները:
- Ձեր «արմատների» կամ «ճյուղերի» մեջ կա՞ն այնպիսիք, որ կապված են «իրական» կյանքի հետ: Ի՞նչ եզրակացություն կարող ենք անել ելնելով դրանից՝ ատելության խոսքի առցանց դրսևորումների առումով:
- Վարժությունն օգնե՞ց ձեզ ավելի լավ հասկանալ խնդրի էությունը: Ի՞նչ եք կարծում, որքանով է կարևոր, որ մենք փորձում ենք գտնել ատելության խոսքի առցանց դրսևորումները կասեցնող միջոցներ:
- Այս վարժությունը ձեզ օգնե՞ց այդ առումով: Ինչպե՞ս կարելի է օգտագործել ձեր մշակած «խնդրների ծառը» [ձեր թիրախային խմբի դեմ] ատելության խոսքի դրսևորումների հավանականությունը նվազեցնելու համար:

Որպեսզի վարժությունն ավելի գործնական բնույթ ստանա, կարող եք ընտրել արմատներից մի քանիսը և խմբային մտքի գրոհի միջոցով փորձեք գտնել այդ խնդիրները լուծելու եղանակներ: Օրինակ, եթե մասնակիցներն առանձնացրել են «նախապաշարմունքը» կամ «X խմբի մասին անտեղյակությունը» որպես խնդրի հիմքում ընկած պատճառ, հարցրե՛ք, թե ինչպես կարելի է անդրադառնալ այդ խնդիրներին: Բացատրե՛ք, որ քարոզարշավ ծրագրելիս հաճախ է օգտագործվում «խնդիրների ծառ» մոտեցումը՝ մեծ խնդիրը փոքր խնդիրների բաժանելու և արդեն դրանց լուծման եղանակները որոշելու համար:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- «Խնդիրների ծառը» շատ տարածված մեթոդ է որևէ հարց առավել խորապես ըմբռնելու համար: Շատ ավելի հեշտ է բացատրել, թե այն ինչպես է աշխատում օրինակի հիման վրա, այնպես որ կարող եք ընտրել որևէ այլ օրինակ վարժության էությունը ներկայացնելու համար, ինչպես օրինակ՝ «Երիտասարդներն անբան են և եսասեր: Նրանք պետք է մեկուսացվեն հասարակությունից՝ մինչև մեծանան դառնան նորմալ մարդ»:
- Երբ մասնակիցները սկսեն աշխատանքն իրենց սեփական «ծառերի» վրա, կարող եք տալ նրանց առձեռն նյութի օրինակներ արտատպված A3 թղթի վրա, կամ հանձնարարեք, որպեսզի նկարեն իրենց ծառը մեծ թղթերի վրա: Երկրորդ տարբերակը նրանց կընձեռի արմատներն ու ճյուղերն ավելացնելու առավել շատ հնարավորություն, միևնույն ժամանակ ավելի կբարդացնի հանձնարարությունը, քանի որ սահմանված քանակությամբ վանդակներ լրացնելն ավելի հեշտ է: Հավաստիացե՛ք, որ խմբերը դիտարկում են հետևանքներն ինչպես անհատների, այնպես էլ հասարակության համար:

- Ինչ վերաբերում է այն արտահայտությանը, որի վրա մասնակիցները պետք է աշխատեն, ապա նպատակահարմար է «X խումբը» փոխարինել հասարակության կողմից ամենից շատ թիրախավորվող խմբով: Կարող եք նաև կիրառել կիբերբուլինգի տարբերակը և որպես թիրախ գրել որևէ երևակայական կերպարի անուն:
- Եթե մասնակիցները բաց են թողել որևէ առանցքային պատճառ կամ հետևանք, կարող եք հուշել նրանց, որպեսզի դիտարկեն նաև այդ հարցերը: Կարող եք տրամադրել նաև հետևյալ ցանկը՝ որպես օժանդակ նյութ ծառը նկարելու համար: Այնուհետև նրանք կորոշեն ցանկում նշված գործոնների կամ դերակատարների կապն իրենց խնդրի հետ և դրանց տեղը ծառ-սխեմայի մեջ.
  - լրատվամիջոցներ,
  - քաղաքական/հասարակական գործիչներ,
  - ատելության խոսքի դրսևորումներն իրական կյանքում,
  - X խմբի և հասարակության մյուս շերտերի միջև հաղորդակցության և շփման պակասը,
  - խմբակիցների (հասակակիցներ, ազգակիցներ և այլն) կողմից գործադրվող ճնշումը,
  - խտրականությունը աշխատավայրում,
  - տնտեսական գործոններ,
  - դպրոցներ/կրթություն:
- Մարդու իրավունքների մասին հավելյալ տեղեկություններ կարող եք ձեռք բերել համացանցում՝ «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկի օգնությամբ: Մասնավորապես՝ «Հասանելիություն և խտրականության բացառում» գլխում, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ատելության խոսքի թիրախ դարձած անձանց իրավունքների մասին:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները կարող են ընտրել իրենց իսկ բացահայտած պատճառներից մեկը և մշակել ռազմավարություն դրան անդրադառնալու համար: Այնուհետև, որպես խումբ կարող են ընտրել մեկ առցանց և մեկ ոչ վիրտուալ վարժություն և իրականացնել դրանք:

Առցանց տիրույթում մարդու իրավունքների պաշտպանության մասին ավելին իմանալու համար ծանոթացեք «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի կողմից մշակված աղբյուրներին:

Եթե ձեզ անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ այն մասին, թե ինչ գործողությունների կարելի է դիմել մարդու իրավունքների պաշտպանության համար, ծանոթացեք «Կողմնացույց», Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկին (www.coe.int/compass), որտեղ մի ամբողջ գլուխ նվիրված է այն քայլերին, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել գործողություններ իրականացնելու համար:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԾԱՌ



ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 1

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 10-25

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45’

ՎԱՏԱԳՈՒՅՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Սա ատելության խոսքի առցանց դրսևորումներին վերաբերող ներածական վարժություն է: Մասնակիցները պետք է դասակարգեն նույնասեռականների դեմ ուղղված ատելության խոսքի դրսևորման օրինակները՝ սկսելով «ամենավատերից»:

ԹԵՄԱՆԵՐ	Ռասիզմ և խտրականություն, ժողովրդավարություն և մասնակցություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	1
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-25
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ ատելության խոսքի առցանց դրսևորումների տարբեր տեսակները և գնահատել դրանց ազդեցությունը • Անդրադառնալ հականույնասեռական կարծրատիպերին և նախապաշարմունքներին • Մշակել ատելության խոսքի առցանց տարբեր դրսևորումների պարագայում պատշաճ արձագանքների տարբերակներ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Քարտեր (էջ՝ 150) • Սեղան կամ հարմար տարածք խմբային աշխատանքի ժամանակ քարտերը դասավորելու համար
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք քարտերի մեկական օրինակ յուրաքանչյուր փոքր խմբի համար (45 մասնակից) • Կտրատե՛ք քարտերի տեսքով և խմբերում քննարկման համար ընտրեք 9 կամ 12 քարտ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հարցրե՛ք մասնակիցներին, թե ի՞նչ են հասկանում ատելության խոսքի առցանց դրսևորում ասելով: Պարզեք, արդյոք որևէ մեկը ականատես եղե՞լ է ատելության խոսքի առցանց դրսևորման որևէ դրվագի՝ ուղղված անհատների կամ որոշակի խմբի ներկայացուցիչների դեմ (օրինակ՝ նույնասեռականների, սևամորթների, մահմեդականների, հրեաների, կանանց և այլն): Ի՞նչ են մարդիկ զգում նման դրսևորումների հանդիպելիս: Իսկ ի՞նչ են զգում նման վերաբերմունքի զոհերը:
2. Բացատրե՛ք, որ «ատելության խոսք» սահմանումը ներառում է երևույթների շատ մեծ շրջանակ.

- նախ այն վերաբերում է ոչ միայն «խոսքին»՝ բառի նեղ իմաստով, այլ նաև կարող է օգտագործվել հաղորդակցության այլ ձևերը նկարագրելու համար, ինչպես օրինակ՝ տեսանյութերը, նկարները, երաժշտությունը և այլն,
- երկրորդը, այս եզրույթը կարող է օգտագործվել ինչպես ծայրահեղ վիրավորական և նույնիսկ սպառնալից վերաբերմունքի, այնպես էլ «միանշանակորեն» ագրեսիվ մեկնաբանությունների պարագայում: Հնարավոր չէ համընդհանուր համաձայնության գալ այն հարցի շուրջ, թե կոնկրետ ինչն է ատելության խոսքը, սակայն, կասկած չկա, որ ինչպիսին էլ այն լինի, ենթադրում է մարդու իրավունքների ոտնահարում և վիրավորանք:

3. Բացատրե՛ք մասնակիցներին, որ հաճախ ատելության խոսքին պատշաճ պատասխան տալու համար անհրաժեշտ է կարողանալ գնահատել, թե որքանով ծանր է կոնկրետ դեպքը: Չնայած նրա, որ ատելության խոսքի բոլոր դրսևորումներն էլ «վատն» են, այնուամենայնիվ որոշ օրինակներ փաստում են, որ լինում են նաև «առավել վատ» դեպքեր:
4. Եթե մասնակիցները ծանոթ չեն «շեղանկյուն դասակարգման համակարգին», բացատրեք թե ինչպես է այն աշխատում (սխեման և բացատրությունը տե՛ս «Խորհուրդներ վարողներին» բաժնում): Բացատրե՛ք, որ նրանց կտրվի նույնասեռականների դեմ ուղղված ատելության խոսքի առցանց դրսևորման մի քանի օրինակ, որոնք նրանք պետք է դասակարգեն «ոչ այնքան վատից» մինչև «ամենավատը»: «Ամենավատ» տարբերակները պետք է լինեն այն օրինակները, որ ըստ մասնակիցների ընդհանրապես տեղ չունեն համացանցում:
5. Բաժանե՛ք մասնակիցներին խմբերի և տվե՛ք նրանց քարտերի օրինակները:
6. Տեղեկացրե՛ք նրանց, որ ունեն 20 րոպե քարտերը քննարկելու և դրանք դասակարգելու շուրջ համաձայնության գալու համար: 20 րոպե անց հնարավորություն տվե՛ք, որպեսզի խմբերը ծանոթանան մյուս խմբերի կողմից պատրաստած «շեղանկյուններին»: Այնուհետև, անցե՛ք վարժության քննարկում փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՐՑԵՐ ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Հավանեցի՞ք վարժությունը: Արդյոք հե՞շտ էր գնահատել տարբեր օրինակները:
- Խմբում կային լուրջ տարաձայնություններ: Ձեր և մյուս խմբերի շեղանկյունների միջև նկատեցի՞ք էական տարբերություններ:
- «Ամենավատ» օրինակները զատելիս, կիրառե՞լ եք արդյոք ինչոր չափանիշներ:: Օրինակ՝ հաշվի առե՞լ եք, թե ով է հաղորդագրության հեղինակը կամ քանի հոգի կարող է տեսնել այն:

ՀԱՐՑԵՐ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- Ինչ եք կարծում, նման հայտարարությունները պե՞տք է թույլատրվեն համացանցում, թե՞ ոչ: Ի՞նչ կողմ և դեմ փաստարկներ կարող եք բերել:
- Ի՞նչ եք կարծում, արդյոք ատելություն պարունակող «ամենավատ» արտահայտությունների նկատմամբ պե՞տք է գործեն այլ կանոններ: Կա՞ն արտահայտություններ, որ ընդհանրապես պետք է արգելվեն:
- Եթե համարում եք, որ պետք է արգելվեն, ինչպե՞ս կորոշեք, թե որոնք:
- Ի՞նչ այլ մեթոդներ կարող եք առաջարկել ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարելու համար:
- Իսկ անձամբ դուք ինչպե՞ս կվարվեք ատելության խոսքի առցանց դրսևորման նման օրինակներ տեսնելու դեպքում: ի:

ՀԱՐՑԵՐ ՀՈՄՈՖՈԲԻԱՅԻ ՄԱՍԻՆ

- Ինչու՞ է ատելության խոսքն այդքան հաճախ ուղղվում հենց նույնասեռականների դեմ: Կարո՞ղ եք առաջարկել նախապաշարմունքների դեմ պայքարելու որևէ ելք:
- Ըստ ձեզ, որևէ մեկի նկատմամբ նման վերաբերմունքի արտահայտումը կարո՞ղ է լինել արդարացի ՝ անկախ անձնական հայացքներից:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Դուք պետք է տեղյակ լինեք կան արդյոք խմբում խիստ հականույնասեռական տրամադրություններ, ինչպես նաև կան արդյոք խմբում մարդիկ, ում այս վարժությունը (կամ խմբի մյուս անդամները) կարող են վրդովել: Եթե գտնում եք, որ կա նման ռիսկ, ապա գերադասելի է նախևառաջ կատարել «Փաստերի ստուգում» վարժությունը, որն ընդգրկված է այս ձեռնարկում կամ հետևել որոշ վարժություններին, օրինակ՝ Գենդերը կարևոր է, բոլորը տարբեր՝ բոլորը հավասար:
- «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի մասին հավելյալ տեղեկություններ կարող եք գտնել այս ձեռնարկի 2-րդ գլխում: Ատելությասն խոսքի առցանց դրսևորումների մասին ընդհանուր տեղեկություններն ընդգրկված են այս ձեռնարկի 5-րդ գլխում :
- Մարդու իրավունքների մասին հավելյալ տեղեկություններ կարող եք ձեռք բերել համացանցում՝ «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկից, մասնավորապես՝ «Հասանելիություն և խտրականության բացառում» գլխում, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել խտրականությունը բացառող համացանցից օգտվելու իրավունքի մասին:
- «Շեղանկյուն դասակարգման համակարգը» մեթոդ է, որը կիրառվում է տարբեր իրավիճակներ համեմատելու համար՝ «ամենալավը» և «ամենավատը» (կամ «վատը»

և «ամենավատը») սահմանելու հիման վրա: Քարտերը պետք է դասավորվեն ստորև ներկայացված սխեմայի համաձայն՝ հետևյալ սկզբունքով՝

- «Ոչ այնքան վատը» օրինակը պետք է տեղադրվի սխեմայի ստորին հատվածում (դիրք 1), իսկ «ամենավատը»՝ ամենավերին հատվածում (դիրք 7 առաջին սխեմայում և դիրք 5՝ երկրորդում): Մնացած քարտերը պետք է տեղադրվեն մյուս շարքերում , ընդ որում՝ վերին շարքը նախատեսված է ստորին շարքից ավելի վատ օրինակների համար (4-րդ շարքի քարտերն ավելի վատն են քան 3-րդ շարքինը):

Սովորական շեղանկյուն
(9 քարտերի կիրառմամբ)



«Գեր» շեղանկյուն
(12 քարտերի կիրառմամբ)



- Ատելության խոսքի առցանց դրսևորումների մասին 5-րդ գլխում ընդհանուր տեղեկությունները ներառում են ատելության խոսքի գնահատման հետևյալ «չափանիշները»՝
  - արտահայտության **բովանդակությունը** կամ **տոնայնությունը՝** ներառում է ձևակերպումներում կիրառված լեզվի տեսակը,
  - **հայտարարության հեղինակի մտադրությունը՝** այլ կերպ ասած, արդյոք հեղինակը ցանկանում էր վիրավորել որևէ մեկին,
  - **թիրախ լսարանը՝** այս վարժության դեպքում սա այնքան էլ կիրառելի չէ, քանի որ թիրախ խումբը մեկն է (նույնասեռականները),
  - **արտահայտության համատեքստը՝** այս վարժության մեջ դա կարող է լինել, օրինակ, այն հանգամանքը, որ առաջարկվում է հականույնասեռական օրենսդրություն (քարտ 6) կամ այն փաստը, որ երկրում գերակայում է նույնասեռականների նկատմամբ բացասական վերաբերմունքը,
  - **ազդեցությունը՝** այսինքն, ինչպես կարող է ազդել այդ հայտարարությունն անհատների կամ ողջ հասարակության վրա:

- Երբ մասնակիցները սկսեն քննարկել, թե ինչ կարելի է անել այս օրինակներում նկարագրված իրավիճակներում, կարող եք տրամադրել նրանց որոշ տեղեկություններ արտահայտման ազատության վերաբերյալ: Ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս գլուխ 5, ինչպես նաև «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկը, մասնավորապես՝ «Արտահայտման և տեղեկատվության ազատություն» գլուխը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Շեղանկյունը լրացնելու փոխարեն, դասակարգումը կարելի է անել ուղիղ գիծ մեթոդով: Այսինքն, յուրաքանչյուր շարքում կարող է լինել միայն մեկ քարտ: Սա ավելի բարդ է և կարող է պահանջել ավելի շատ ժամանակ:

- Կարող եք օգտագործել բոլոր 12 քարտերը, բայց դրա համար կպահանջվի ավելի շատ ժամանակ և շեղանկյունը մի փոքր տձև կստացվի: Կամ կարող եք ընտրել 9 քարտ՝ հանելով այն քարտերը, որոնք ըստ ձեզ ձեր խմբի համար հարմար կամ պիտանի չեն: Վերևում պատկերված երկու սխեմաները նախատեսված են նկարագրված բոլոր տարբերակների համար:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Ատելության խոսքի առցանց դրսևորման խնդրի լուծման ուղիների մեթոդները քննարկելիս, մասնակիցներին կարող եք ներկայացնել տալ հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ գործողությունների քարոզարշավի աղբյուրների ժողովածուն, օրինակ՝ «Գործողությունների օր՝ հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ միջազգային օր»:
- Այս թեմաների հետ կապված հավելյալ տեղեկություններ կարող եք ստանալ՝ ծանոթանալով հետևյալ կրթական ռեսուրսին՝ http://ifm-sei.org/publications-2/educational-resources/rainbow-resources/.

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

1. «Կատակ»՝ ընկերոջն ուղարկված անձնական էլ. Նամակից.

Մենք պետք է վերացնենք գեյերին:

2. «Ստորագրահավաք»՝ 1000ից ավել «ընկեր» ունեցող ֆեյսբուքյան էջում.

Դուրս մղենք նույնասեռականներին մեր հանրային կյանքից: Ստորագրե՛ք այստեղ քաղաքական գործիչներին հասկացնելու համար:

3. Մեկնաբանություն նեոնացիստական կայքում, որին կողմ է քվեարկել 576 մարդ.

Հիտլերը ճիշտ էր վարվում գեյերին գազախցիկ ուղարկելով:

4. Հատված նույնասեռականների դեմ երգի կրկներգից: Առցանց տեսահոլովակն ունի 25,000 դիտում.

Ոչնչացնե՛նք գեյերին:

5. Հատված Եվրոպական դատարանի որոշման դեմ՝Էլեկտրոնային թերթի խմբագրականից.

Նույնասեռական լինելը «նորմալ» համարող հասարակությունը հիվանդ է:

6. Մեջբերում՝ նոր օրենքի նախագծի առաջարկի մասին Ներքին գործերի նախարարի հետ հարցազրույցից.

Մենք պետք է կենտրոնանանք նույնասեռականներին բուժելու, այլ ոչ թե նրանց հանդուրժելու վրա:

7. Մեկնաբանություն հոդվածի տակ, որի հեղինակը նույնասեռական է.

Քեզ էլ ****, մորդ էլ ******, հիվանդ ք ******:**

8. Նկարի տակ գրված տեքստ, որի վրա պատկերված է շոուբիզնեսի հայտնի աստղերից մեկը.

Գեյ է, թե՞ մտավոր հետամնաց: Գեյերը հիմնականում մտավոր հետամնաց են:

9. Նույնասեռականներին վտարելու նպատակ ունեցող հանրահայտ կայքում տեղադրված հաղորդագրություն, որին կցված է նաև դպրոցի նկարը և անունը.

Այս մարդը նույնասեռական է: Եվ այդ-քանից հետո, նա երեխաների հետ է աշխատում: Բողոքե՛ք այստեղ:

10. Մեջբերում նույնասեռականների դեմ տեսա-հոլովակից, որտեղ ասվում է, որ նույնասեռական լինելը ծխելուց վտանգավոր է (ՁԻԱՀ-ի պատճառով).

Դու շուտով կմահանաս:

11. Թվիթ հաղորդագրություն, որը մի քաղաքական գործիչ ուղարկել է թվիթերի՝ իր ավելի քան 350,000 հետևորդներին.

Իմ հին դպրոցի նույնասեռականներից որևէ մեկը այդպես էլ որևէ հաջողության չհասավ կյանքում:

12. Ծաղրանկար, որի վրա պատկերված է պոզերով և պոչով նույնասեռականի կարծրատիպային կերպար.

Նույնասեռականները դիվահարված են:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 1

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 12+

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45’

ԵԿԵ՛Ք ԱՐՏԱՀԱՅՏՎԵՆՔ

Վարժության ընթացքում կիրառվում է «ակվարիում-քննարկում» մեթոդը հասարակության որոշակի խմբերի մասին տարածված նախապաշարումները քննարկելու համար: Այս մեթոդի կիրառումը նպաստում է, որպեսզի մասնակիցներն ավելի քննադատաբար մոտենան ընդունված և կայացած համոզմունքներին և մշակեն փաստարկներ ատելության խոսքին արձագանքելու համար:

ԹԵՄԱՆԵՐ	Քարոզարշավի ռազմավարություններ, ռասիզմ և խտրականություն, համացանցային գրագիտություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	1
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	12 և ավելի
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ և մտորել որոշակի խմբերի նկատմամբ ունեցած սեփական նախապաշարմունքների և բացասական կարծրատիպերի շուրջ • Մշակել փաստարկներ և գտնել այլընտրանքային պատասխաններ ատելության խոսքի առցանց դրսևորումներին արձագանքելու համար • Փորձել ավելի լավ հասկանալ և ավելի շատ գիտելիք ձեռք բերել հասարակության կողմից հաճախ սխալ ընկալվող խմբերի մասին և սովորել կիսել այդ խմբի ապրումները
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• 3 աթոռ • Բավականաչափ տարածք, որպեսզի մասնակիցները կարողանան շրջանով նստել և շարժվել • Փոքր թղթեր և գրիչներ • Գլխարկ (կամ որևէ տարա)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Կտրատե՛ք թուղթը փոքր կտորների այնպես, որ բոլոր մասնակիցներին բաժանեք երկուական փոքր թղթիկ (մի քանի հատ պահեք ձեզ մոտ): • Նախապես պարզե՛ք արդյոք խմբում կան մարդիկ, ովքեր պատկանում են «թիրախ խմբերին», եթե կարծում եք, որ բարդություններ կառաջանան, ապա այդ մասնակիցների հետ առանձին խոսե՛ք և բացատրե՛ք վարժության էությունը, բացատրեք նրանց, որ կարող են տեղեկությունների և գաղափարների արժեքավոր աղբյուր դառնալ խմբի համար և համոզվե՛ք, որ նրանք չեն նեղվում վարժությունից • Օգտակար կլինի նաև, նախօրոք նախապատրաստել մի քանի պատասխան, այն իրավիճակների համար, երբ խումբը կանդրադառնա ամենատարածված թյուրըմբռնումներին և մտահոգություններին

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔ

1. Հետևյալ մտացածին հայտարարությունները գրեք ֆլիպչարտի/սլայդի վրա՝ «իրական փաստեր» վերնագրի ներքո, այնպես որ բոլոր մասնակիցները կարողանան կարդալ դրանք: Կարող եք նաև ավելացնել ձեր տարբերակները:

Իրական փաստեր

- Եթե բոլոր ներգաղթյալները վերադառնան իրենց երկրներ, ապա բոլորի համար աշխատանք կլինի:
- Աղջիկները տղաներից վատ են խաղում համացանցային խաղեր:
- Գիտական հետազոտությունները ցույց են տվել, որ եվրոպացիների ուղեղն ասիացիների ուղեղից փոքր է:
- Նույնասեռական լինելը հիվանդություն է, որը կարելի է բուժել:

2. Այժմ, խնդրե՛ք մասնակիցներին արտահայտվել: Մի քանի կարծիք լսելուց հետո, ասե՛ք մասնակիցներին, որ այս պնդումները հորինված են: Իրականում դրանք բոլորը կեղծ են: Այնուհետև խնդրե՛ք, որպեսզի մասնակիցները նորից արտահայտվեն և փորձեն հասկանալ, թե ինչու հավատացին այդ պնդումներին (եթե, իհարկե հավատացել են):
3. Հարցրե՛ք մասնակիցներին, նրանք երբևէ կարդացե՞լ են առցանց որևէ նյութ, որի կեղծ լինելու մասին նախապես իմացել են, կամ կասկածել են, որ այն կարող է կեղծ լինել: Որևէ քայլ ձեռնարե՞լ են այդ կապակցությամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

4. Բացատրե՛ք մասնակիցներին, որ ատելության խոսքի և ռասիստական վերաբերմունքի բազմաթիվ դրվագների հիմքում ընկած է անտեղյակությունը: Մարդիկ հավատում են կամ նրանց ստիպում են հավատալ որոշակի խմբերի մասին ինչոր պնդումների, այն դեպքում, երբ այդ խմբի որևէ ներկայացուցչի հետ անձնական շփում չի եղել: Կամ նրանք կարող են մի ողջ համայնքի մասին կարծիք կազմել այդ համայնքի ընդամենը մեկ անդամի մասին տեղեկությունների հիման վրա: Երբ նման համոզմունքները սկսում են ավելի հանրայնորեն քննարկվել և որևէ մեկը դրանք չի վիճարկում, ապա ժամանակի ընթացքում դրանք սկսում են ընկալվել որպես «փաստ»: Մենք կարող ենք մոռանալ, թե որտեղ ենք լսել այս կամ այն պնդումը, կամ մոռանանք, որ այն լինել կեղծ էր, կամ ընդամենը մեկի կարծիքը և սկսենք հավատալ դրան ինքներս:
5. Բացատրե՛ք մասնակիցներին, որ համացանցում յուրաքանչյուր ոք կարող է շատ կարևոր դեր խաղալ հարցականի տակ դնելով «փաստերը» կամ կարծիքները, որոնց նրանք հանդիպում են: Հարցնելը՝ ինչո՞ւ, կամ բացատրելը՝ ի՞նչու ոչ, ամենակարևոր գործողություններից են, որ մենք բոլորս կարող ենք իրականացնել կեղծ և վնասաբեր գաղափարների տարածումը կանխելու համար: Դա նաև լավագույն ուղին է մեզ համար արժանահավատ տեսակետի հանգելու համար:

6. Բացատրե՛ք մասնակիցներին, որ վարժության ընթացքում դուք կուսումնասիրեք որոշակի խմբերի մասին հասարակության մեջ լայնորեն ընդունված բացասական «փաստերը» և կարծիքները: Մասնակիցներն, օգտագործելով խմբի գիտելիքն ու փորձագիտական գնահատականները, կփորձեն մշակել փաստարկներ և «փշրել» ամենատարածված կարծրատիպերը: Նրանք պետք է դիտարկեն սա որպես ավելի լավ պատկերացում կազմելու և իրենց սեփական գիտելիքն ու փորձագիտական գնահատականը մյուսների հետ կիսելու հնարավորություն:
7. Յուրաքանչյուր մասնակցին բաժանե՛ք երկուական փոքր թուղթ, իսկ մնացած թղթերը դրեք մեկ ընդհանուր կապոցի մեջ: Բացատրե՛ք, որ անհրաժեշտության դեպքում կարող են վերցնել լրացուցիչ թղթեր: Խնդրե՛ք մասնակիցներին, որպեսզի թղթերի վրա գրեն որոշակի խմբերի մասին իրենց լսած այն բացասական կարծիքներն ու «փաստերը», որոնք ցանկանում են քննարկել: Բերե՛ք մի քանի օրինակ՝
   - մարդիկ պետք է ապրեն իրենց սեփական երկրներում և չտեղաշարժվեն աշխարհով մեկ,
   - կնոջ տեղը տունն է. կանայք պետք է դադարեն տղամարդկանցից գործ փախցնելը,
   - ռոմաները (գնչուները) պետք է սկսեն ապրել այն երկրի սովորույթների համաձայն, որտեղ բնակվում են:
8. Ասե՛ք մասնակիցներին, որ անպայման չէ հավատալ այդ պնդումներին. պարզապես պետք է գտնել բոլորի կողմից ընդունված «համոզմունքների» լավագույն հակափաստարկները: Թղթերի վրա պետք չէ նշել հեղինակի անունը: Ավարտելուց հետո թղթերը պետք է տեղադրելգլխարկի կամ այլ տարայի մեջ:
9. Կիսաշրջանով դրեք երեք աթոռ ՝ մասնակիցների դիմաց: Քննարկմանը մասնակցելու են միայն աթոռների վրա նստած մասնակիցները, մյուսները կլինեն դիտորդների դերում:
10. Սկսե՛ք քննարկումը՝ հրավիրելով երեք կամավորների զբաղեցնել աթոռները: Բացատրե՛ք, որ բոլորն ունեն քննարկմանը մասնակցելու հնարավորություն, սակայն ելնելով նրանից, որ միաժամանակ կարող են մասնակցել ընդամենը երեք հոգի, դա նշանակում է, որ որևէ մեկը պետք է զիջի իր տեղը նոր մասնակցին: Յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է միանալ քննարկմանը, պետք է մոտենա խոսնակներից մեկին և ձեռքը դնի նրաուսին: Նրանք կփոխանակեն իրենց տեղերը և առաջին մասնակիցը կզբաղեցնի իր տեղը դիտորդների շարքում:
11. Խրախուսե՛ք մասնակիցներին արտահայտել և՛ իրենց սեփական կարծիքները և՛ բերել այլ կարծիքների օրնակներ: Այս կերպ հնարավոր կլինի բարձրաձայնել նաև հակասական, «քաղաքականապես ոչ կոռեկտ» կամ անպատկերացնելի կարծիքները և թեման կուսումնասիրվի բազմաթիվ տարբեր տեսանկյուններից՝ իր ողջ խորությամբ: Խմբի մյուս անդամներին ուղղված վիրավորական կամ տհաճ մեկնաբանությունները անթույլատրելի են:
12. Խնդրե՛ք, որպեսզի որևէ մեկը հանի գլխարկից ցանկացած թուղթ և սկսե՛ք դրա շուրջ քննարկումը: Շարունակե՛ք քննարկումն այնքան ժամանակ մինչև թեման կսպառվի և փաստարկները կսկսեն կրկնվել: Այնուհետև, երեք նոր կամավորների խնդրե՛ք զբաղեցնել աթոռները և սկսե՛ք նոր քննարկում՝ հետևելով նույն կանոններին:
13. Քննարկե՛ք այնքան հարց, որքան կների ժամանակը: Վերջում հատկացրե՛ք ժամանակ «հանդարտվելու» և ամբողջ վարժությունն ըմբռնելու համար:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հետևյալ հարցերի միջոցով հնարավորություն տվե՛ք մասնակիցներին վերլուծել, թե փոխվեցին արդյոք վարժության արդյունքում իրենց տեսակետները, կամ արդյոք այն «զինեց» մասնակիցներին նախապաշարմունքներին արձագանքելու փաստարկներով:

- Արդյոք պարզե՞ց որևէ մեկն իր համար ինչ-որ նոր բան:
- Որևէ մեկի կարծիքը փոխվե՞ց որոշակի խմբի կամ հարցի վերաբերյալ:
- Զգո՞ւմ եք արդյոք ձեզ ավելի վստահ և պատրաստ նման կանխակալ տեսակետների շուրջ քննարկումներին մասնակցելու համար: Ինչ եք կարծում, ձեզ դա ավելի հեշտ կլինի անել առցանց, թե՞ իրական կյանքում: Պատասխանը հիմնավորեք:
- Ինչպե՞ս կարող եք մասնակցել նմանատիպ քննարկմանը առցանց: Որո՞նք կլինեն նմանություններն ու տարբերությունները:
- Ի՞նչ է կարելի անել, եթե կասկածներ ունեք որևէ տարածված համոզմունքի վերաբերյալ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Դուք պետք է հստակ պատկերացում ունենաք խմբի անդամների՝ տարբեր խմբային պատկանելությունների և իրավիճակի բոլոր նրբությունների մասին, և դրա վերաբերյալ տրամադրեք մասնակիցներին տեղեկություններ, որպեսզի քննարկման ժամանակ հաշվի առնեն բոլոր նման հանգամանքները:
- Կարող են լինել մի շարք հարցեր կամ պնդումներ, որոնց պատասխանները կամ հակա փաստարկները ո՛չ դուք, ո՛չ մասնակիցները միանգամից չկարողանաք գտնել: Գրե՛ք դրանք ֆլիպչարտի վրա և ինքներդ ուսումնասիրե՛ք այդ հարցերը ավելի ուշ, այնուհետև տրամադրելով մասնակիցներին պատասխանները, կամ բաշխեք դրանք մասնակիցների միջև, որպեսզի նրանք ուսումնասիրեն և հետո տեղեկացնեն խմբի մյուս անդամներին:
- Եթե 3 խոսնակներից ոչ մեկը չի կարողանում գտնել որևէ փաստարկ կանխակալ և նախապաշարմունքների վրա հիմնված պնդումների վերաբերյալ, կարող եք միանալ քննարկմանը: Խուսափեք այդպես հաճախ վարվելուց. ժամանակ առ ժամանակ կարող եք ընդհատել քննարկումը և խնդրել խմբի մյուս անդամներին առաջարկել իրենց այլընտրանքային տարբերակները կամ տարբերվող կարծիքները:
- Շատ կարևոր է, որպեսզի քննարկումն ընթանա անկաշկանդ մթնոլորտում, և մասնակիցներն ազատորեն արտահայտեն կամ իրենց սեփական կամ հակասական համարվող, բայց հասարակության մեջ և լրատվամիջոցներում մեծ տարածում ունեցող կարծիքները: Միևնույն ժամանակ պետք է հետևել, որպեսզի քննարկումը չվերածվի բացասական կարծրատիպերի չարամիտ և չարդարացված կրկնության: Հորդորե՛ք մասնակիցներին, որպեսզի խոսելիս ընտրեն այնպիսի տոնայնություն, որ հասկանալի լինի, որ իրենք փորձում են հասկանալ և պարզել հարցերը, իսկ կարծիքներ արտահայտելիս չափազանց նրբանկատ գտնվեն բառերի և ձևակերպումների ընտրության հարցում, նույնիսկ եթե որևէ խմբի մասին բացասական կարծիք են արտահայտում: Անհրաժեշտության դեպքում, կարող եք առաջարկել մի քանի արտահայտություն, որոնք կօգնեն նրանց մտքերը ձևակերպելիս: Օրինակ՝

- «Ես լսել եմ, որ...»
- «Որոշ մարդիկ կարծում են, որ...»
- «Կարո՞ղ եք օգնել ինձ հասկանալ...»
- «Ինչո՞ւ կարող է սխալ լինել այս տեսակետը...»

- Աշխատեք ապահովել, որպեսզի խմբի բոլոր անդամները որևէ փուլում մասնակցեն քննարկմանը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Մասնակիցներից լրացված թերթիկները հավաքելուց հետո, կարող եք նրանց որոշ ժամանակ հատկացնել, որպեսզի քննարկումը սկսելուց առաջ ուսումնասիրեն հարցերից մի քանիսը: Հարցերը/պնդումները կարող եք բաժանել նախօրոք և հանձնարարել, որպեսզի այս հարցերին անդրադառնալու համար մշակեն համառոտ փաստարկներ: Այսպես, բուն քննարկումը կմեկնարկի արդեն ընդհանուր իրազեկության ավելի բարձր մակարդակի հիման վրա:

Այս վարժությունը նաև կարելի է բաժանել վարժությունների շարքի, օրինակ՝ յուրաքանչյուր առանձին վարժության ժամանակ ընտրել հասարակության որևէ կոնկրետ խմբի նկատմամբ նախապաշարմունքների ազդեցությունը: Եվ ամեն անգամ կարող եք կամավորների մի խմբի հանձնարարել տեղեկություններ հավաքել ձեր երկրում քննարկվող խմբի վիճակի մասին:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Մասնակիցները կարող են պատրաստել տեղեկատվական տեսանյութեր, որտեղ ի հակադրություն տարածված համոզմունքների կտրամադրեն այլընտրանքային տեղեկություններ:
- Մասնակիցներին կարելի է հորդորե՛լ, որպեսզի շարունակեն ուսումնասիրել այն հարցերը, որոնց հնարավոր չեղավ ամբողջովին անդրադառնալ քննարկման ընթացքում և հետո կիսվել խմբի մյուս անդամների հետ ուսումնասիրության արդյունքներով:
- Նրանք կարող են կազմել «միֆեր քանդող» ցանկ: Այն կարող է ներառել ատելության խոսքի թիրախ հանդիսացող խմբերի մասին ամենատարածված նախապաշարմունքները՝ դրանք հերքող հակափաստարկների, վիճակագրական տեղեկությունների և լրացուցիչ տեղեկատվության հետ մեկտեղ:
- Կարող եք նաև խմբի հետ մշակել հակափաստարկներ, որոնք մասնակիցները կկարողանան օգտագործել առցանց տիրույթում նախապաշարմունքների կամ ռասիստական արտահայտությունների ականատես լինելու պարագայում: Կարևոր է քննարկելը նաև այն, թե ինչպես կարող են օգտագործել այդ փաստարկներն առցանց՝ հումորի, տեղեկատվության, հղումների և այլ նման ձևերով:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 2

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 20-25

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

Ի՞ՆՉ ԵՆ ՆՐԱՆՔ ՊԱՏՄՈՒՄ

Մասնակիցները փոքր խմբերով վերլուծում են լրատվական մի նյութ՝ ուշադրությունը կենտրոնացնելով այն հարցին, թե ինչ լույսի ներքո են պատկերվում ներգաղթյալները և ներգաղթը: Արդյունքները ներկայացվում են կոլաժի տեսքով:

ԹԵՄԱՆԵՐ	Ռասիզմ և խտրականություն, Մարդու իրավունքներ, արտահայտման ազատություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	2
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	20-25
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Ուսումնասիրել, թե ինչպես են ներգաղթյալները ներկայացվում տպագիր մամուլում և քննարկել, թե ինչպես է դա ազդում նրանց նկատմամբ հասա րակության վերաբերմունքի վրա • Հայտնաբերել ռասիզմի ոչ շատ ակնհայտ դրսևորումները, ինչպես օրինակ՝ «թաքնված» ուղերձներ, ընտրովի լուսաբանում կամ նկարներ և այն, թե ինչպես է այդ ամենը սնուցում ատելության խոսքը • Քննարկել/ուսումնասիրել ներգաղթյալների և ներգաղթի մասին «դրական» հոդվածները
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• 5 տարբեր թերթերի/ամսագրերի երեքական օրինակ (կախված մասնակիցների քանակից) • Մի քանի հատ ֆլիպչարտ • Մարկերներ, սոսինձ, մկրատ • Այնքան տարածք, որպեսզի 4 կամ 5 խումբ կարողանան հանգիստ աշխատել մեծ կոլաժներ պատրաստելու վրա • Համացանցից օգտվելու հնարավորություն (կամընտրական)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Յուրաքանչյուր խմբի համար իրար ամրացրե՛ք/սոսնձե՛ք 4ական ֆլիպչարտ • Բոլոր խմբերին տվե՛ք մարկերներ, սոսինձ, մկրատ և ընտրված տպագիր մամուլի օրինակներ • Յուրաքանչյուր խմբին տվե՛ք էջ 160-ի հարցաթերթիկի օրինակ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչ են նշանակում հետևյալ եզրույթները՝

կարծրատիպ, ռասիզմ, խտրականություն

2. Հակիրճ բացատրե՛ք այդ եզրույթները (անհրաժեշտության դեպքում կարող եք օգտվել էջ 216-220-ի ընդհանուր տեղեկություններից), ընդգծելով հետևյալը՝
   - մարդկանց խմբերի մասին ընդհանրացումները («կարծրատիպերը») հազվադեպ են ճշմարիտ բոլորի համար,
   - Երբ նման ընդհանրացումները մեծ տարածում են գտնում և ընդունվում հասարակության կողմից, դրանք հաճախ օգտագործվում են խտրականությունը, հետապնդումը, վիրավորանքը և շատ ավելի վատ երևույթներ արդարացնելու համար:
3. Հարցրե՛ք մասնակիցներին, կարո՞ղ են թվարկել խմբեր, որոնց վերաբերյալ շրջանառվում են անարդարացի կարծրատիպեր, որոնք էլ, իրենց հերթին, հիմք են դառնում այդ խմբի նկատմամբ խտրական վերաբերմունքի, հետապնդումների և ատելության խոսքի համար: Բացատրե՛ք, որ վարժության ընթացքում դուք կդիտարկեք, թե ինչպես են լրատվամիջոցները սովորաբար ներկայացնում այդպիսի խմբերից մեկին՝ ներգաղթյալներին:
4. Ցույց տվե՛ք մասնակիցներին ձեր ընտրած լրատվամիջոցները և բացատրե՛ք, որ նրանք իրենց խմբային աշխատանքի ընթացքում պետք է վերլուծեն, թե այդ լրատվամիջոցներում ինչպես են ներկայացված ներգաղթյալները՝
   - ընդհանուր առմամբ, դրական լույսի ներքո,
   - ընդհանուր առմամբ, բացասական լույսի ներքո, թե
   - չեզոք:
5. Մասնակիցների հետ անցե՛ք հարցաթերթիկի (էջ 160) կետերով և համոզվե՛ք, որ նրանք հասկանում են, թե հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնեն վերլուծության ժամանակ: Հորդորե՛ք նրանց ներառել ցանկացած այլ տիպի տեղեկություններ, եթե համարեն, որ դրանք առնչվում են հարցին:
6. Բաժանե՛ք մասնակիցներին 5 կամ 6 հոգանոց խմբերի և յուրաքանչյուր խմբին տվե՛ք նույն թերթի կամ ամսագրի 2 կամ 3 օրինակ, գրատախտակին փակցվող թղթերից պատրաստված մեծ պաստառ, գրիչներ, մկրատ և այլն: Բացատրե՛ք, որ նրանք պետք է օգտագործեն հարցաթերթիկը ցանկացած տեսակի կողմնակալությունը բացահայտելու համար և իրենց վերլուծության արդյունքները ներկայացնեն կոլաժի տեսքով: Կարող են կտրատել թերթերը, նշումներ անել և ավելացնել իրենց սեփական նկարներն ու տեքստերը: Պարզաբանե՛ք, որ կոլաժները կցուցադրվեն վարժության ավարտին:
7. Երբ խմբերը ավարտեն աշխատանքը, տեղադրե՛ք կոլաժներն այնպես, որ տեսանելի լինեն և ժամանակ տվե՛ք մասնակիցներին ծանոթանալ մյուս խմբերի աշխատանքներին: Այնուհետև, անցե՛ք «Վարժության քննարկում» փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Խնդրե՛ք մասնակիցներին, որպեսզի կիսվեն վարժության մասին իրենց ընդհանուր տպավորություններով: Օգտակա՞ր էր վարժությունը: Արդյոք կայի՞ն անսպասելի բացահայտումներ: Ի՞նչ կարծիք ունեն լրատվամիջոցներում ներգաղթյալների լուսաբանման վերաբերյալ, և արդյո՞ք նրանք համարում են, որ նման լուսաբանումը արդար է:
- Եթե խումբն իր կոլաժի մեջ դրան չի անդրադարձել, ապա հարցրե՛ք, թե իրենց կարծիքով, ի՞նչ տիպի «դրական» նյութեր պետք է գրվեն, որպեսզի ապահովեն այլընտրանքային տեսակետ: Օրինակ՝ կային դրական հոդվածներ «ոչ ներգաղթյալների» մասին:
- Ինչո՞ւ են մասնակիցները համարում, որ ներգաղթյալներն աշխարհի բոլոր երկրներում դարձել են խտրականության, հետապնդման և ատելության խոսքի թիրախ: Որքանո՞վ էական է այն դերը, որ խաղում են լրատվամիջոցները բացասական կարծրատիպերն էլ ավելի արմատավորելու առումով:
- Մասնակիցները երբևէ հանդիպե՞լ են նմանօրինակ կողմնակալ կամ անհանդուրժող վերաբերմունքի իրենց կողմից այցելած կայքերում:: Խնդրե՛ք նրանց բերել օրինակներ:
- Ի՞նչ ազդեցություն է դա գործում ներգաղթյալների, նրանց ընտանիքների և երեխաների, ինչպես նաև ողջ հասարակության վրա, որտեղ ներգաղթյալներին հասարակության առկա խնդիրներից շատերի համար «մեղավոր» են համարում:
- Կա՞ն արդյոք որևէ միջոցներ, որոնց դիմելով երիտասարդները կարող են խթանել ներգաղթյալների մասին ավելի դրական պատկերացումների ձևավորումը: Նրանք երբևէ հանդիպե՞լ են կայքեր կամ համացանցային էջեր, որտեղ ներգաղթյալները նկարագրվում էին դրական լույսի ներքո:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Աշխատեք ընտրել այնպիսի թերթեր և ամսագրեր, որոնք ներկայացնում են քաղաքական/մշակութային տարբեր տեսակետների լայն շրջանակ: Հավանական է, որ նույնիսկ ներգաղթյալներին ամենից համակրական ձևով անդրադարձող լրատվամիջոցներում կամ նյութերում չնկատվի հասարակության մեջ առկա խիստ բացասական տրամադրությունները վիճարկելու կամ հավասարակշռելու միտում, օրինակ՝ ներգաղթյալների համայնքների կամ անհատների մասին «դրական նորություններ» հաղորդելու միջոցով:
- Հավանական է, որ խմբի անդամներից շատերը կիսեն հրապարակման մեջ արտահայտված բացասական վերաբերմունքը, և համարեն, որ նման վերաբերմունքը արդարացված է: Խրախուսե՛ք մասնակիցներին բարձրաձայնել իրենց կարծիքները, որպեսզի դրանք քննարկվեն խմբի ներսում: Ցանկալի է, եթե նախօրոք փորձե՛ք գտնել մի քանի «դրական հոդված», որոնք կարող էին հրապարակված լինել այդ հրատարակություններում կամ ուսումնասիրեք այն երկրների պայմանները, որտեղից եկել են ներգաղթյալները: Խնդրե՛ք մասնակիցներին պատկերացնել, որ նրանք, պատերազմի պատճառով ավերված Իրաքում կամ Աֆղանստանում բնակվող երիտասարդներ են:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Տպագիր մամուլի փոխարեն վարժությունը կարելի է իրականացնել առցանց մամուլում զետեղված նյութերի հիման վրա: Հնարավոր նյութի քանակը սահմանափակելու համար կարելի է հանձնարարել, որպեսզի մասնակիցներն ընտրեն թերթի միայն առաջին էջի 5 օրվա հրապարակումները: Նույն կերպ կարելի է վարվել նաև հեռուստատեսային նորությունների հետ:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օգնե՛ք մասնակիցներին ստեղծել կայք կամ անձնական էջ սոցիալական ցանցերից մեկում, որտեղ ներգաղթյալների մասին կտեղադրվեն դրական պատմություններ: Նրանք կարող են ուսումնասիրել իրենց բնակավայրում հաստատված ներգաղթյալների համայնքներից մեկը՝ փորձելով հասկանալ, թե ինչպիսին է իրավիճակն իրենց հայրենի երկրում կամ տարածաշրջանում, ներգաղթի պատճառները, ինչպես նաև ծանոթանան նոր երկրում բնակություն հաստատած ներգաղթյալների առօրյա կյանքի պատմություններին: Ուղարկեք հղումն այն թերթերի լրագրողներին, որոնք դիտարկել եք առաջադրանքը կատարելիս, և ասեք նրանց, որ կայքը ոգեշնչվել է իրենց հրապարակման մեջ ներկայացված բացասական պատկերով:

Եթե ունեք համացանցից օգտվելու հնարավորություն, ապա կարելի է դիտարկել հիմնական լրատվական կայքերը և վարժությունը կատարել հենց առցանց: Այս դեպքում, կարող եք նաև բարձրացնել առցանց հոդվածներին կից ֆորումների հարցը, որտեղ օգտատերերը կարող են թողնել մեկնաբանություններ: Երբեմն այդ մեկնաբանություններն ունենում են ռասիստական բնույթ: Կարող եք խմբում քննարկել ընդունելի են նման ֆորումները, թե ոչ, և եթե այո, ապա ինչ պայմաններով:

Վարժությունն անցկացնելու այլ տարբերակ է նաև թիրախ խմբի փոփոխությունը՝ համապատասխանեցնելով այն ձեր համատեքստին:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Կա՞ն արդյոք ներգաղթյալներին պատկերող նկարներ/լուսանկարներ:

- Դրանց մեջ կա՞ն «դրականները»:
- Իսկ «բացասականնե՞րը»:

Թերթի նյութերից քանի՞սն են կապված ներգաղթյալների հետ:

- Կան արդյո՞ք «լավ» նյութեր, որոնք ներգաղթյալներին պատկերում են դրական լույսի ներքո:
- Կա՞ն բացասական նյութեր:

Ինչպիսի՞ բառեր են օգտագործվում ձեր ընտրած թերթում ներգաղթյալներին բնութագրելու համար:

- Դրանք հիմնականում դրական են, բացասական, թե՞ չեզոք:

Կա՞ն բացահայտ ռասիստական պնդումներ:

- Եթե այո, ապա դրանք հասարակական գործիչների հայտարարություններ են, թե՞ լրագրողների կարծիքներ:

Ինչպե՞ս դուք ձեզ կզգայիք, եթե լինեիք ներգաղթյալ և կարդայիք այս թերթը: Կա՞ արդյոք որևէ բան, որ կուզեիք ավելացնել կամ փոխել:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 2

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 20-25

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

ԻՍԿ Ի՞ՆՉ Է ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Մասնակիցներն ուսումնասիրում են ատելության խոսքի օրինակներ և քննարկում դրանց հնարավոր ազդեցությունն անհատների և հասարակության վրա:

ԹԵՄԱՆԵՐ	Մարդու իրավունքներ, ռասիզմ և խտրականություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	2
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-25
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ ատելության խոսքի առցանց դրսևորումների տարբեր ձևերը և դրանց ազդեցությունը զոհերի և հասարակության վրա • Գտնել ատելության խոսքի առցանց դրսևորումներին արձագանքելու հնարավոր տարբերակներ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Ատելության խոսքի օրինակների պատճեններ • Թղթեր և գրիչներ • Ֆլիպչարտներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք ատելության խոսքի օրինակների պատճեններ • Նախապատրաստե՛ք ֆլիպչարտի 2 թուղթ, որոնցից մեկի վերևում գրեք «հետևանքներ զոհերի համար», իսկ մյուսի՝ «հետևանքներ հասարակության համար»

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հարցրե՛ք մասնակիցներին՝ ինչ են հասկանում ատելության խոսքի առցանց դրսևորում ասելով: Հարցրե՛ք, արդյոք որևէ մեկը երբևէ հանդիպել է ատելության խոսքի առցանց դրսևորման օրինակների, որոնք ուղղված էին անհատի կամ որոշակի խմբերի դեմ (օրինակ՝ նույնասեռականների, սևամորթների, մահմեդականների, հրեաների, կանանց և այլն): Ի՞նչ են մասնակիցները զգում նման արտահայտություններ տեսնելիս: Իսկ, ըստ իրենց՝ ի՞նչ են զգում այդ դեպքում նման արտահայտությունների թիրախ հանդիսացող մարդիկ:

   Բացատրե՛ք, որ «ատելության խոսք» եզրույթը ներառում է երևույթների շատ մեծ շրջանակ.

- նախ այն վերաբերում է ոչ միայն «խոսքին»՝ բառի նեղ իմաստով, այլ նաև կարող է օգտագործվել հաղորդակցության այլ ձևերը նկարագրելու համար, ինչպես օրինակ՝ տեսանյութերը, նկարները, երաժշտությունը և այլն,
- երկրորդը, այս եզրույթը կարող է օգտագործվել ինչպես ծայրահեղ վիրավորական և նույնիսկ սպառնալից վերաբերմունքի, այնպես էլ «միանշանակորեն» ագրեսիվ մեկնաբանությունների պարագայում: , :

2. Բացատրե՛ք մասնակիցներին, որ նրանք վերլուծելու են ատելության խոսքի առցանց դրսևորումների իրական օրինակներ՝ փորձելով հասկանալ, թե հատկապես ինչ ազդեցություն են դրանք թողնում ինչպես զոհերի, այնպես էլ ողջ հասարակության վրա:
3. Մասնակիցներին բաժանե՛ք խմբերի և յուրաքանչյուր խմբին տվե՛ք ատելության խոսքի առցանց դրսևորման մեկ օրինակ (էջ 164-167):
4. Հանձնարարեք որպեսզի քննարկեն իրենց տրված օրինակը և պատասխանեն հարցերին: Ասե՛ք, որ առաջադրանքը կատարելու համար ունեն 15 րոպե:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հերթով անդրադարձե՛ք բոլոր օրինակներին և հարցրե՛ք, թե ինչ են պատասխանել խմբերը: Պատասխանները գրանցե՛ք ֆլիպչարտի վրա: Եթե խմբերը տվել են նման պատասխաններ, նշեք դա արդեն գրանցված պատասխանն ընդգծելով կամ պատասխանի կողքը նշելով, թե քանի խումբ է տվել նույն պատասխանը: Երբ բոլոր խմբերը կներկայացնեն իրենց պատասխանները, ևս մեկ անգամ անցե՛ք պատասխանների երկու ցանկերով և հետևյալ հարցերի միջոցով վերլուծե՛ք վարժությունը խմբի հետ:

- Ի՞նչ կարող եք ասել վարժության մասին: Ի՞նչ զգացողություններ ձեզ մոտ առաջացրեցին վերլուծված օրինակները:
- Ատելության խոսքի «հետևանքներից» որո՞նք էին նշել խմբերը բոլորից շատ:
- Ի՞նչ ընդհանրություններ ունեն օրինակներում ներկայացված ատելության խոսքի թիրախ հանդիսացող խմբերը:
- Կայի՞ն արդյոք նմանություններ հետևանքների մեջ՝ չնայած նրա, որ ատելության խոսքի թիրախ հանդիսացող խմբերը տարբերվում են միմյանցից:
- Ինչպիսի՞ն կլինեն հետևանքները, եթե նման վարքագիծը տարածվի առցանց և որևէ մեկը միջոցներ չձեռնարկի խնդրին լուծում տալու համար:
- Ի՞նչ գործիքներ կամ մեթոդներ կարող եք առաջարկել ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարելու համար:
- Ինչպե՞ս պետք է վարվենք առցանց տոհիրույթում նման օրինակների հանդիպելու դեպքում:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ձեռք բերել 2-րդ գլխում, որը վերաբերում է «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավին կամ այցելել հետևյալ կայքը՝ (www.nohatespeechmovement.org). Ատելության խոսքի առցանց դրսևորումների մասին ընդհանուր տեղեկություններին կարող

եք ծանոթնալ Գլուխ 5-ում: Համացանցում մարդու իրավունքների մասին տեղեկությունների համար մասնակիցներին կարող եք ներկայացնել «Մարդու իրավունքների ուղեցույցը համացանցի օգտատերերի համար»:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Եթե ժամանակը թույլ տա, կարող եք հանձնարարել մասնակիցներին համերաշխության ուղերձներ գրել ատելության խոսքի զոհ դարձած անձնաց, որոնց մասին ներկայացված է օրինակներում: , Կարող եք նաև օգտագործել նկարագրված իրավիճակները բացահայտելու համար կապերն ատելության խոսքի և արտահայտման ազատության միջև: Այդ դեպքում, կարելի է մասնակիցների հետ քննարկել յուրաքանչյուր դեպքի համար սահմանափակումների կիրառման նպատակահարմարությունը:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե մասնակիցներն առնչվել են ատելության խոսքի առցանց դրսևորումների հետ, ապա նրանք կարող են դիտարկել այդ դեպքերի հաղորդման միջոցները: Դուք կարող եք մասնակիցների հետ միասին ուսումնասիրել ատելության խոսքի արխիվացված դեպքերը և քննարկել այնտեղ զետեղված օրինակները:

Մասնակիցներն իրենց դպրոցի կամ երիտասարդական կենտրոնի համար կարող են մշակել ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ կանոնադրություն:, ինչպես նաև դպրոցում կազմակերպել «Ո՛չ ատելության խոսքին» խորագրով օր և օգտագործել արդեն գոյություն ունեցող մարդու իրավունքներին նվիրված օրերը՝ խնդրի մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով: Օրինակ՝ մարտի 21-ը, Ռասիզմի և խտրականության դեմ միջազգային օր է. կարելի է օգտագործել այդ առիթն ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ միջոցառումներ կազմակերպելու համար:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՕՐԻՆԱԿ 1.

Մի երիտասարդ սոցիալական ցանցի իր անձնական էջում տեղադրում է ազգայնական կուսակցության ահռելի դրոշ և գրում մեկնաբանություններ, որոնցում մասնավորապես ասվում է. «Ո՛չ իսլամին իմ երկրում՝ պաշտպանե՛ք մեր ժողովրդին»: Նա տեղադրում է նաև կիսալուսնով և աստղով նկարներ, որոնց վրա պատկերված է արգելող նշան: Երիտասարդը տարածում է այս տեղեկատվությունը սոցիալական մեդիայի և իր անձնական էջի միջոցով:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 2.

A-ն գրում է հոդված, որտեղ ոչ միայն ընդգծում է, որ Հոլոքոստը «երբևէ տեղի չի ունեցել», այլ նաև վիրավորական և ռասիստական մեկնաբանություններ է անում հրեա ժողովրդի մասին: A-ն տեղադրում է նյութն իր անձնական բլոգում և մի քանի հակահրեական կայքերում: Բացի այդ, A-ն ներառում է այդ բովանդակությունն առցանց «վիքիներում»՝ ներկայացնելով որպես «գիտական տեղեկություն» Հոլոքոստի մասին:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 3.

Իշխող քաղաքական կուսակցության հետ որոշակի առնչություն ունեցող թերթում, այդ թերթի առաջատար լրագրողներից մեկը գրում է հոդված, որտեղ ռոմաներին (գնչուներին) անվանում է «կենդանիներ» և կոչ է անում ամեն գնով ոչնչացնել նրանց: Թերթի առցանց տարբերակին կից ֆորումի քննարկման ընթացքում բազմաթիվ մարդիկ գրում են մեկնաբանություններ՝ արտահայտելով իրենց իրենց համաձայնությունը:

Թերթը չի փորձում ոչ բացատրել, ոչ էլ ներողություն խնդրել մեկնաբանությունների համար: Համացանցում հայտնվում են այլ հոդվածներ, որոնցում արտահայտվում է նմանօրինակ դիրքորոշում՝ նույնատիպ տոնայնությամբ. այդ հոդվածներին կից ֆորումներում մեկնաբանություններ գրողների թիվն աճում է:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:

- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 4.

Կազմակերպվում է առցանց քարոզարշավ, որի հիմնական ուղերձն այն է, որ երկրում առկա տնտեսական ճգնաժամն առաջացել է ներգաղթյալների և փախստականների մեղքով: Սոցիալական մեդիայի հարթակներում սկսում են շրջանառվել տարատեսակ հաղորդագրություններ. լուսանկարներ, որտեղ փախստականներն ունեն ագրեսիվ տեսք, փախստականներին տարբեր նվաստացուցիչ իրավիճակներում պատկերող նկարներ, ինչպես նաև մեկնաբանություններ այն մասին, որ նրանք գողանում են աշխատատեղերը տեղացիներից: Ապատեղեկատվությունը, ներառյալ՝ կեղծ վիճակագրական տվյալներն, այն մասին, որ ներգաղթյալները հակված են բռնության և խնդիրներ են ստեղծում, հիմնականում տարածվում է սոցիալական մեդիայի միջոցով:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 5.

Նորությունների տարբեր կայքերում շրջանառվում են վիրավորական մեկնաբանություններ, առ այն, որ օտարերկրացիներն իրավունք չունեն ապրել այդ երկրում: Որոշ մեկնաբանություններում կան ոչսպիտակամորթ օտարերկրացիների նկատմամբ բռնության կոչեր:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 6.

Ցանցում հայտնվում են տեսանյութեր, որտեղ ասվում է, որ ԼԳԲՏ մարդիկ «շեղումներ ունեն» և «հիվանդ» են: Նրանք պետք է մեկուսացվեն հասարակությունից, քանի որ խարխլում են ավանդույթներն ու վտանգում ազգի շարունակելիությունը: Տեսանյութերում արվում են «գիտական հետազոտությունների» հղումներ, սակայն հղումները հիմնականում սխալ են մեջբերված կամ ունեն շատ ընտրովի բնույթ: Որոշ տեսանյութերում կան ԼԳԲՏ ընտանիքների և նրանց երեխաների լուսանկարներ:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 7.

Ֆուտբոլային խաղն ընդհատվում է «սևամորթ» խաղացողներից մեկի հասցեին հակառակորդ թիմի երկրպագուների վիրավորական վանկարկումների պատճառով: այդ փաստն արտացոլող տեսանյութը հայտնվում է համացանցում և մեծ տարածում գտնում: Ռասիստական մեկնաբանությունները տարածվում են նաև այլ կայքերով: Երբ ռասիստական դրսևորումների դեմ բողոքի ալիք է բարձրանում, այդ մեկնաբանությունների հետ համաձայնվող մարդիկ պնդում են, որ նրանք դարձել են գրաքննության զոհ:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 8.

Արդեն որոշ ժամանակ է, ինչ համացանցում հայտնվել է կապույտ ջինսերի մի գովազդ: Գովազդում պատկերված է տղամարդկանցով շրջապատված մի կին: Այդ տեսարանն ունի սեքսուալ ենթատեքստ, սակայն, ընդհանուր տպավորությունը, որ այն թողնում է ավելի շատ հիշեցնում է բռնաբարություն և սեռական ոտնձգություններ: Միևնույն երկրում կազմակերպություններից մի քանիսը բողոքի ալիք են բարձրացնում դրա դեմ:

Այս դեպքի մասին լուրը տարածվում է և գրավում ուշադրություն, ինչի արդյունքում հայտնվում են բազմաթիվ մեկնաբանություններ, որոնց մեծ մասն աջակցում է այն դիրքորոշմանը, որ կինն իր է, , որի հետ տղամարդը կարող է խաղալ և նույնիսկ բռնություն գործադրել նրա նկատմամբ: :

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա: Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 9.

Քաղաքական գործիչներից մեկը մեղադրում է մահմեդականներին ՝ պնդելով, որ սպիտակամորթ աղջիկների դեմ գործած հանցագործությունների հիմնական պատճառը նրանք են: Նա իր խոսքը ամրապնդում է

«բոլորին քաջ հայտնի փաստերով» և բերում մի քանի «խոսուն օրինակ»: Հոդվածին կցված տեսանյութը դառնում է բազմաթիվ մեկնաբանությունների առիթ, որոնց մի մասն ունի ռասիստական բնույթ և պարունակում է բռնության կոչեր: Ելույթը մեջբերում են նաև այլ աջակիցներ և ներկայացնում այն, որպես արժանահավատ և հիմնավոր կարծիք:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 10.

Երկու երկրների միջև անցյալում տեղի ունեցած պատերազմական հակամարտության մասին տե սանյութերը շարունակում են մնալ համացանցում: Տեսաֆիլմերի տակ հայտնվում են բազմաթիվ ռասիստական բնույթի մեկնաբանություններ՝ երկրներից մեկի բնակիչների մասին: Երկու երկրների ներկայացուցիչների միջև վիրավորանքները և ռասիստական վերաբերմունքը շարունակվում է բավական երկար ժամանակ:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ՕՐԻՆԱԿ 11.

Առցանց երաժշտական ալիքներից մեկը տարածում է ազգայնական բովանդակությամբ երաժշտություն: Երգերի մի մասը տեղադրվում է նախկինում հակամարտության կողմեր հանդիսացող երկու էթնիկ խմբերի ներկայացուցիչների կողմից: Երգերում հաճախ խրախուսվում է բռնությունը մյուս էթնիկ խմբի ներկայացուցիչների նկատմամբ:

- Նկարագրված օրինակում ովքե՞ր են ատելության խոսքի զոհերը: Ի՞նչ ազդեցություն է գործում ատելության խոսքը նրանց վրա:
- Ի՞նչ ազդեցություն կարող է գործել ատելության խոսքի այս օրինակն այդ համայնքների անդամների, և առհասարակ հասարակության վրա:

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 3

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ *առնվազն 12*

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 60′

ՎԻՐՏՈՒԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Այս վարժության ընթացքում մասնակիցները կտեղեկանան հակառասիստական ոգևորիչ ակցիաների մասին և կփորձեն միասին ծրագրել նմանատիպ առցանց գործողություններ:

ԹԵՄԱՆԵՐ	Քարոզարշավի ռազմավարություններ, ռասիզմ և խտրականություն, Մարդու իրավունքներ
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	3
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	Առնվազն՝ 12
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ համացանցի դերը, որպես մի տարածք, որտեղ երիտասարդները կարող են գործողություններ իրականացնել հանուն հարգանքի և ազատության • Գիտակցել կապը համացանցի թերությունների և համացանցի սահմաններից դուրս առկա միջավայրի միջև երիտասարդների մոբիլիզացման համար՝ հանուն մարդու իրավունքների, արժեքների և սկզբունքների պաշտպանության
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Թղթեր և գրիչներ • Համացանցից օգտվելու հնարավորություն (կամընտրական)
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Այցելեք կազմակերպությունների կայքէջեր, որպեսզի մասնակիցները ծանոթանան այն երիտասարդական հակառասիստական նախաձեռնություններին, որոնք պետք է ուսումնասիրեն վարժության ընթացքում • Մասնակիցների համար նախապատրաստե՛ք առձեռն նյութերի օրինակներ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հարցրե՛ք մասնակիցներին, արդյոք նրանք գիտե՞ն որևէ նախաձեռնությունների կամ գործողությունների մասին, երբ մարդիկ քայլեր են ձեռնարկել ռասիզմի և խտրականության դրսևորումների դեմ իրենց ձայնը բարձրաձայնելու համար: Հակիրճ քննարկե՛ ք նրանց օրինակները:

2. Բացատրե՛ք մասնակիցներին, որ վարժության ընթացքում նրանք ուսումնասիրելու են ռասիզմի դեմ գործողությունների օրինակներ և մտածելու են, թե ինչպես է հնարավոր վերածել դրանք առցանց գործողությունների:
3. Բաժանե՛ք մասնակիցներին փոքր խմբերի (մինչև 5 մասնակից յուրաքանչյուր խմբում) և յուրաքանչյուր խմբին տվե՛ք ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐում ներառված առանձին դեպքերից որևէ մեկը: Հանձնարարե՛ք կարդալ իրենց օրինակը և քննարկել հետևյալ հարցերը.
   - Ո՞ր խնդրի լուծմանն է անդրադառնում ծրագիրը:
   - Ո՞րն է այդ ծրագրի նպատակը:
   - Ի՞նչ մեթոդներ են առաջարկվում ծրագրի շրջանակներում նպատակին հասնելու համար:
4. Խմբերին տվե՛ք 10 րոպե հարցերը քննարկելու համար: Այնուհետև ծանոթացրե՛ք նոր առաջադրանքին. նրանք պետք է քննարկեն, թե ինչպես կարող են կարգավորել նմանատիպ հարցերը, բայց ոչ թե իրական՝ ֆիզիկական տարածքում, այլ համացանցում, ինչպես նաև մտածեն այնպիսի առցանց գործողություններ, որոնք կարտացոլեն օրինակներում նկարագրված՝ ոչ վիրտուալ տարածքում իրականացվածը: Նրանք պետք է անդրադառնան հետևյալ հարցերին.
   - Ո՞ր առցանց մեթոդներով է հնարավոր հասնել նախանշված նպատակին:
   - Որտե՞ղ են սահմանափակվում այն հնարավորությունները, որ տրամադրում է համացանցը կոնկրետ այս դեպքում նախանշված արդյունքներին հասնելու համար:
5. Այս առաջադրանքի համար մասնակիցներին տրամադրե՛ք 20 րոպե, այնուհետև հրավիրե՛ք, որպեսզի ընդհանուր նիստի ժամանակ խմբի մյուս անդամների հետ կիսվեն իրենց գաղափարներով:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վարժության քննարկում փուլի ժամանակ մասնակիցների հետ քննարկե՛ք իրենց աշխատանքի արդյունքները, ինչպես նաև ռասիզմի և խտրականության դեմ պայքարում համացանցի օգտագործման առավելություններն ու թերությունները: Քննարկե՛ք հետևյալ հարցերից մի քանիսը.

- Ի՞նչ եք կարծում, խմբերի առաջարկները կարելի՞ է հաջողությամբ իրականացնել:
- Ի՞նչ եք կարծում, դրանք կնպաստե՞ն նախանշված նպատակին հասնելուն:
- Որո՞նք են համացանցը որպես քարոզչական գործիք օգտագործելու առավելությունները:
- Որո՞նք են առցանց քարոզարշավների թերություններն ու սահմանափակումները:
- Լսե՞լ եք արդյոք այլ առցանց գործիքների կամ նախաձեռնությունների մասին, որոնցով կարող եք աջակցել ներկայացված օրինակների նմանատիպ քարոզարշավներին:
- Ունե՞ք արդյոք տեղեկություններ ռասիզմի և խտրականության դեմ որևէ առցանց քարոզարշավի մասին:
- Ինչպե՞ս կարող եք օգտագործել համացանցը ռասիզմի և խտրականության դեմ քարոզարշավ կազմակերպելու համար:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Եթե մասնակիցների պատկերացումներն ատելության խոսքի և ռասիզմի/խտրականության վերաբերյալ շատ ընդհանուր են, կարող եք սկսել այդ գաղափարների վերաբերյալ մտքերի գրոհից:
- Եթե մասնակիցները դժվարանում են պատկերացնել, թե ինչպես է հնարավոր անցկացնել նկարագրված միջոցառումներն առցանց, բերեք առցանց գործողություններում համացանցի օգտագործման մասին որոշ օրինակներ:
- Քարոզարշավի ռազմավարությունների և համացանցում մասնակցության մասին հավելյալ տեղեկությունները ներկայացված են ձեռնարկի «Ընդհանրուր տեղեկություններ» բաժնում, մասնավորապես՝ 5.6 և 5.7 գլուխներում, ինչպես նաև էջ 115-ում:
- Կարող եք ծանոթանալ «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկին, մասնավորապես՝ «Հավաքների, միություններ կազմելու և մասնակցության ազատություն» գլխին:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Կարող եք փոխել օրինակներն այնպես, որ դրանք արտացոլեն ձեր տեղական կամ ներպետական իրականությունը, ինչպես նաև կարող եք ընտրել ձեր խմբի համար ավելի հարմար օրինակներ: Հիշե՛ք, որ կարևոր է ընտրել տարբեր նախաձեռնություններ, քանի որ այդպես մասնակիցները կտեսնեն, որ գործողությունների դիմելու համար կան տարբեր ձևեր:

Կարող եք նաև վարժությունն իրականացնել «հակառակ» ձևով.. քննարկման համար ընտրեք առցանց գործողությունների օրինակներ և հանձնարարեք մասնակիցներին ձևափոխել դրանք՝ վերածելով իրական աշխարհում իրականացվող գործողությունների:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապվե՛ք ռասիզմի դեմ աշխատանքներ իրականացնող տեղական կազմակերպությունների հետ և հրավիրե՛ք նրանց, որպեսզի պատմեն մասնակիցներին իրենց աշխատանքի ձևի և բովանդակության մասին:

Քննարկե՛ք մասնակիցների հետ, թե իրենց առաջարկած գաղափարներից որոնք կարելի է իրականացնել և խրախուսե՛ք նրանց անել դա: Կարող եք նաև ձեր խմբի համար ստեղծել բլոգ և առաջարկել, որպեսզի մասնակիցներն այնտեղ տեղեկություններ հրապարակեն ռասիզմի զոհ հանդիսացող խմբերի մասին: Սա կնպաստի այդ խմբերի մասին առկա նախապաշարմունքների դեմ պայքարին, ինչպես նաև կբարձրացնի հնարության իրազեկությունը դրանց վնասակար ազդեցության մասին:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՕՐԻՆԱԿ 1. ՌԱՍԻԶՄԸ ՍՊՈՐՏՈՒՄ

«Ասես մղձավանջ լիներ: Մինչև գնալս մտքովս չէր անցնում, որ այդքան կազդվեմ»:

Ֆուտբոլի `22 ամյա երկրպագու

Ֆուտբոլի գերմանացի երկրպագուները ֆուտբոլային խաղերի ժամանակ հաճախ են երգում հակասեմական երգեր: Dem Ball Ist Egal Wer Ihn Tritt (գնդակին մեկ է, թե իրեն ով կխփի) նախաձեռնության նպատակը հենց այս խնդրին անդրադառնալն է, ինչի համար նրանք տարբեր ֆուտբոլային ակումբների երկրպագուների համար կազմակերպում են այցելություններ Աուշվից (Օսվենցիմ)՝ նախկին համակենտրոնացման ճամբար:

Ինչու՞ Աուշվից: Նախաձեռնության համար պատճառ է հանդիսացել երկրպագուների մի երգ, ոտեղ մասնավորապես կար այսպիսի մի տող. «Մենք ստորգետնյա գնացք կկառուցենք Մյոնխենգլադբախից մինչև Աուշվից»: «Աուշվիցի մասին երգն» այժմ մեծ տարածում է գտել ողջ Գերմանիայի տարածքում, և այն կարելի է լսել ֆուտբոլային բոլոր մարզադաշտերում և տարբեր ակումբներում՝ երկրի ողջ տարածքով մեկ:

Կազմակերպությունը սկսել է փորձնական նախագիծ, որտեղ տարբեր ակումբների 18-28 տարեկան երկրպագուներն իրականացրել են եռօրյա ճամփորդություն նախկին կենտրոնացման ճամբարներ, որպեսզի հնարավոր լինի իրականացնել խորացված քննարկումներ հակասեմականության և ռասիզմի մասին ֆուտբոլի բնագավառում: Երկրպագուները մեծապես ազդվել են այս փորձառությամբ և շատերն իրենց փորձով կիսվել հասարակության լայն շերտերի հետ: Պատրաստվել են թռուցիկներ ակումբի վեբ-կայքերում տեղադրելու համար: Այս նախաձեռնությունն ուղեկցվել է լրատվամիջոցների կողմից կազմակերպված լայնածավալ քարոզարշավով:

https://www.amadeu-antonio-stiftung.de/w/files/pdfs/1_living-equality.pdf

ՕՐԻՆԱԿ 2. ՌԱՍԻՍՏԱԿԱՆ ԳՐԱՖԻՏԻ

Կրակովում գտնվող՝ «Այլևս երբեք» ռասիզմի դեմ պայքարող կազմակերպությունը, «Եկե՛ք ներկենք Կրակովի պատերը» խորագրի ներքո՝ կազմակերպել էր ատելություն արտահայտող գրաֆիտիների դեմ ակցիաների շարք: Մեկ տարվա ընթացքում, համագործակցելով տեղական գործընկեր կազմակերպությունների հետ, «Այլևս երբեք» կազմակերպությունը միջոցներ էր ձեռնարկել ակցիաներին հնարավորինս շատ ակտիվիստներ և քաղաքացիներ ներգրավելու ուղղությամբ:

- Երիտասարդները միավորել էին իրենց ջանքերը ռասիստական պաստառները և գրաֆիտին պատերից հեռացնելու և ջնջելու համար:
- Տների սեփականատերերին ներգրավել էին պատերը լվանալու ակցիայի մեջ:
- Դպրոցներում ուսուցիչները և աշակերտները նկարում էին ռասիզմի դեմ գրաֆիտի:

- Լրագրողներին առաջարկվում էր լուսաբանել քարոզարշավը և հրապարակել հոդվածներ տեղական թերթերում և ամսագրերում:

Այսպես՝ բազմաթիվ փոքր ակցիաներ միավորվեցին և դարձան մեծ գործողություն, ինչի արդյունքում հնարավոր եղավ տեղ հասցնել մի շատ կարևոր և զորեղ ուղերձ. «Ազատե՞նք Կրակովն ատելություն արտահայտող գրաֆիտիից»:

http://www.unitedagainstracism.org/wp-content/uploads/2014/05/GraffitiLeaflet_GB.pdf, www.nigdywiecej.org

ՕՐԻՆԱԿ 3. ԿԵՆԴԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Կենդանի գրադարանի գաղափարը մշակվել է Եվրոպայի խորհրդի կողմից: Այս նախաձեռնության նպատակն է վիճարկել նախապաշարմունքներն ու նվազեցնել առկա խտրականությունը: Կենդանի գրադարանն աշխատում է սովորական գրադարանի նման. այցելուները կարող են կատալոգի միջոցով գտնել անհրաժեշտ վերնագիրը, ընտրել գիրքը, որն ուզում են ընթերցել և վերցնել այն որոշակի սահմանված ժամանակով: Ընթերցելուց հետո գիրքը վերադարձվում է գրադարան, որպեսզի մյուս ցանկացողները նույնպես կարողանան այն կարդալ: Ցանկության դեպքում, հետագայում կարող են վերցնել նոր գիրք: : Միակ տարբերությունն այս երկու տիպի գրադարանների միջև այն է, որ կենդանի գրադարանի «գրքերը» մարդիկ են, իսկ ընթերցելը ենթադրում է զրույց այդ «գրքի» հետ: Կենդանի գրադարանը փորձ է՝ վիճարկելու գոյություն ունեցող նախապաշարմունքները երկու հոգու ՝ Գրքի և Ընթերցողի միջև երկխոսության միջոցով: Գրքերը դրանք այն կամավորներն են, ովքեր կամ իրենք են դարձել խտրականության զոհ, կամ ներկայացնում են հասարակության այն խմբերը, որոնք կարող են դառնալ վիրավորանքի, խարանման, նախապաշարմունքների կամ խտրականության զոհ:

«Գրքերը» սովորաբար ունենում են խտրական վերաբերմունքի և հասարակությունից մեկուսացման անձնական փորձառություն, որի մասին պատրաստ են խոսել Ընթերցողների հետ: Ամենակարևորը, Գրքերը ընթերցողներին թույլ են տալիս երկխոսել իրենց հետ այն հույսով, որ իրենց ունեցած փորձն ու տեսակետները կարող են փոխել ընդունված ընկալումներն ու կարծրատիպերը և, արդյունքում, նաև փոխել հասարակության մեջ առկա վերաբերմունքն ու վարքագիծը: Don’t Judge a Book by its Cover (Գրքի մասին շապիկի համաձայն կարծիք մի՛ կազմեք), կարող եք ծանոթանալ այստեղ՝ http://eycb.coe.int

ՕՐԻՆԱԿ 4. ՍԻՐԵ՛Ք ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԱՏԵ՛Ք ՌԱՍԻԶՄԸ

«Մեր երաժշտությունը կենդանի վկայությունն է այն փաստի, որ մշակույթները կարող են խառնվել և խառնվում են»:

Սիրե՛ք երաշժտություն, ատե՛ք ռասիզմը (LMHR/ՍԵԱՌ) նախաձեռնության նպատակն է երաժշտության միջոցով ստեղծել ռասիզմի և ֆաշիզմի դեմ շարժում: Այն ստեղծվել է 2002 թ. այն բանից հետո, երբ նկատվեց ռասիստական տրամադրությունների տարածման միտում,

իսկ ծայրահեղ աջ՝ Բրիտանական ազգային կուսակցությունը (ԲԱԿ), գրանցեց ընտրական հաջողություններ: Կազմակերպությունն օգտագործում է երաժշտական բեմականացումների ուժը՝ բազմազանությունը գովերգելու և մարդկանց ռասիզմի ու ֆաշիզմի դեմ պայքարի մեջ ներգրավելու համար, ինչպես նաև կոչ անելով մարդկանց ընտրությունների ժամանակ քվեարկել ֆաշիստ թեկնածուների դեմ:

ՍԵԱՌ-ը արդեն իրականացրել է հարյուրավոր միջոցառումներ՝ մեծ, բացօթյա փառատոններից մինչև փոքր տեղական ակումբային համերգներ: Նրանց միջոցառումներին մասնակցել են այնպիսի հանրահայտ երաժիշտներ, ինչպիսիք են՝ Ms Dynamite, HardFi, Babyshambles, Akala, Get Cape Wear Cape Fly, Estelle, The View, Lethal Bizzle, Roll Deep, Basement Jaxx: Բազմաթիվ խմբեր, դիջեյներ նույնպես մասնակցել են նրանց միջոցառումներին կամ կազմակերպել իրենց սեփական երաժշտական երեկոները:

https://rm.coe.int/16807023dd

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 1

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ *Ցանկացած*

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 40՛

ԿՐԻ՛Ր ԵՎ ԿԻՍՎԻ՛Ր

Մասնակիցները լրացնում են սխեմա, որի միջոցով ցույց են տալիս իրենց անձնական նախապատվություններն՝ առցանց որոշակի տեղեկություններ տեղադրելու և կիսելու առումով: Այնուհետև քննարկում են, անձնական բնույթի տեղեկություններն առցանց տեղադրելու գործում ավելի զգուշավոր լինելու հարցը:

ԹԵՄԱՆԵՐ	Գաղտնիություն/անվտանգություն, համացանցային գրագիտություն, կիբերբուլինգ
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	1
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	Ցանկացած
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	40 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Հասկանալ, որ առցանց «հարաբերությունները» տարբեր են լինում • Սահմանել անձնական «նշաձող» առցանց տեղեկություններ տեղադրելու և հաղորդակցվելու համար • Բարձրացնել իրազեկությունն առցանց անձնական տվյալների և մասնավոր կյանքի պաշտպանությանը սպառնացող վտանգների վերաբերյալ և սովորել, թե ինչ միջոցներ է պետք ձեռնարկել առցանց տրույթում գաղատնիությունը և մարդու իրավունքները պաշտպանելու համար
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Էջ 177-ի սխեմայի օրինակներ • Ֆլիպչարտներ և մարկերներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	Մասնակիցներից յուրաքանչյուրի համար՝ սխեմայի մեկական օրինակ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հարցրե՛ք մասնակիցներին՝ ինչպես են նրանք պաշտպանում իրենց անձնական տվյալներն ու մասնավոր կյանքը անծանոթների հետ շփվելիս, օրինակ՝ առևտրի կենտրոնում: Անհրաժեշտության դեպքում հղե՛ք հետևյալ հուշող հարցերը:
   - Դուք նույն կերպ եք հագնվում, ինչպես կհագնվեիք լողափ գնալիս:
   - Դուք ձեր բջջայինի համարը ձեր ճակատին գրո՞ւմ եք:
   - Դուք մարդկանց ասու՞մ եք ձեր առցանց տարածք մուտք գործելու գաղտնաբառը:

2. Բացատրե՛ք, որ թեև նման հարցերի պատասխանները «իրական» կյանքի համար ակնհայտ են թվում, առցանց տիրույթում մենք չենք դրսևորում նույն զգուշավորությունը: Հարցրե՛ք մասնակիցներին, ըստ իրենց՝ անձնական տվյալները պաշտպանելու առումով ուշադի՞ր են նրանք առցանց տիրույթում նույնքան , որքան իրական կյանքում: Բացատրե՛ք, որ այս վարժությունը ցույց կտա, թե ինչ տիպի տեղեկություններ ենք մենք պատրաստակամորեն կիսում տարբեր մարդկանց հետ առցանց տիրույթում:
3. Ցուցադրե՛ք կամ նկարեք ֆլիպչարտի վրա էջ 177-ի սխեման և մասնակիցների հետ մի քանի օրինակի վրա դիտարկե՛ք, թե ինչպես է այն աշխատում, որպեսզի մասնակիցներն այնուհետև կարողանան կատարել առաջադրանքը: Բացատրե՛ք, որ պատասխանները պետք է լինեն անհատական, քանի որ տարբեր մարդիկ պատրաստ են կիսել իրենց վերաբերող տարբեր տեղեկություններ: :
4. Տրամադրե՛ք նրանց 15 րոպե առաջադրանքը կատարելու համար: Այնուհետև, խնդրեք քննարկել իրենց սխեման երկուերեք այլ մասնակիցների հետ: Նրանք դա կարող են անել կամ պարզապես սենյակով շրջելով և տարբեր մարդկանց մոտենալով, կամ դուք կարող եք նրանց բաժանել փոքր խմբերի՝ համաձայն ժամանակի/տարածքի և մասնակիցների քանակի:
5. Սխեմաները համեմատելուց հետո, անցե՛ք ընդհանուր խմբային քննարկման:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սկսե՛ք մի քանի ընդհանուր բնույթի հարցերից.

- Կայի՞ն արդյոք որևէ տեղեկություններ, որ դուք պատրաստ չէիք կիսել ոչ մեկի հետ: Ինչու՞:
- Կայի՞ն տեղեկություններ, որ դուք պատրաստ էիք կիսել բոլորի հետ: Քննարկեք այս հարցի կապակցությամբ խմբում առկա տարաձայնությունները, եթե այդպիսիք կան:
- Արդյոք նկատեցի՞ք ձեր և մյուսների սխեմաների միջև տարբերություններ: Կարո՞ղ եք բացատրել այդ տարբերությունները:
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ պետք է զգուշանալ ձեր մասին տեղեկություններն անծանոթներին տրամադրելուց: Ի՞նչ կարող է հետևել դրան:
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ պետք է զգուշանալ «ուրիշների» մասին տեղեկություններ տարածելուց:
- Երբևէ եղե՞լ է, որ ձեր մասին ուրիշները կիսեն որևէ տեղեկություն, որ դուք չէիք ցանկանա: Կարո՞ղ է դա դիտարկվել որպես ձեր՝ մարդու իրավունքների ոտնահարում: Կարո՞ղ է դա օգտագործվել ատելության խոսքի առցանց դրսևորումը տարածելու համար:

Վարժությունը եզրափակե՛ք մասնակիցներին հարցնելով, թե որքանով այն օգնեց նրանց ավելի լավ պատկերացում կազմել իրենց առցանց հաղորդակցության մասին: Ի՞նչ կետեր կարող են առանձնացնել մասնակիցները, որպես նկատառումներ, որոնք պետք է պարտադիր հաշվի առնվեն առցանց տեղեկություններ տեղադրելուց առաջ:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Սխեման լրացնելու արդյունքում ձևավորված իրավիճակներից շատերը կարող են չունենալ «ճիշտ» պատասխաններ, քանի որ մասամբ կախված են անձնական նախասիրություններից: Սակայն, կարևոր է տեղեկացնել մասնակիցներին այլ հնարավոր վտանգների մասին, որ կարող են ի հայտ գալ, եթե անձնական տվյալների առցանց պաշտպանության առումով չձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ: Եթե իրենք ինքնուրույն չբարձրացնեն այդ հարցը, ապա դուք պետք է նրանց զգուշացնեք կիբերբուլինգի և ֆինանսական շահագործման վտանգների մասին: Անձնական տվյալների և մասնավոր կյանքի անվտանգության նկատմամբ անուշադիր վերաբերմունքն էապես մեծացնում է այդ վտանգները: Տե՛ս Գլուխ 5-ը կիբերբուլինգի և գաղտնիություն/անվտանգություն թեմաների վերաբերյալ հավելյալ տեղեկություններին ծանոթանալու համար:
- Վերլուծության և գնահատման ժամանակ, կարող եք նշել, որ առցանց տիրույթում մասնավոր կյանքի պաշտպանությունը կարևոր է մասամբ անվտանգության նկատառումներից ելնելով, բայց նաև անձի անձեռնմխելիության և արժանապատվության տեսանկյունից: Միգուցե, (եթե բախտը մեզ ժպտա) կիսամերկ փողոց դուրս գալով կամ ուրիշների մասին հիմար/չարամիտ մեկնաբանություններ անելով, մենք մեզ ուղղակիորեն չենք վտանգի, սակայն հետո կարող ենք զղջալ դրա համար: Այն բովանդակությունը, որ մենք տեղադրում ենք համացանցում շատ ավելի հարատև է, քան ոչ վիրտուալ կյանքում մեր կատարած քայլերը և հաճախ այդ բովանդակությունը հնարավոր չէ ջնջել:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Չնայած վարժության հիմնական շեշտադրումը անձնական տվյալների և մասնավոր կյանքի պաշտպանությունն է, այնուամենայնիվ կարելի է նաև դիտարկել այլոց մասնավոր կյանքը հարգելու հարցը: Օրինակ՝ կարող եք հարցնել, արդյոք մասնակիցները թույլտվություն վերցնում են ուրիշների մասին տեղեկություններ տեղադրելուց առաջ, և ինչո՞ւ է դա կարևոր: Գլուխ 5ի «Մասնավոր կյանք և անվտանգություն» բաժնի ընդհանուր տեղեկությունները կարող եք օգտագործել այս հարցը մարդու իրավունքների տեսանկյունից դիտարկելու համար:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները կարող են արձանագրել մեկ շաբաթվա ընթացքում իրենց տեղադրած/տարածած տեղեկությունները. ի՞նչ տիպի տեղեկություններ են նրանք տարածել և որքա՞ն մեծ էր նրանց լսարանը: Կարող են չնշել բովանդակությունը բոլոր մանրամասներով, ավելի շուտ կենտրոնանալով նրա վրա, թե ինչ տիպի տեղեկություններ են կիսում սխեմայի մեջ առանձնացված տարբեր խմբերի հետ (ծնողներ, ընկերներ, ուսուցիչներ և այլն): Նրանք կարող են գրանցել, թե ինչ տիպի տեղեկություններ են տարածում իրենց մասին և ինչ տիպի տեղեկություններ՝ այլոց մասին:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Ո՞ՒՄ ՀԵՏ ԿԿԻՍՎԵԻՔ



Շրջանի տեքստային արկղներից յուրաքանչյուրը սլաքների միջոցով կապակցեք աջ հատվածի տեքստերի արկղներին: Օրինակ՝



ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 3

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ *10-20*

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 90′

ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ

Մասնակիցները պետք է վերափոխեն (մտացածին) քարոզարշավի կայքը, որպեսզի կարողանան լուծել տեղական համայնքի կողմից ռասիստական բնույթի մեկնաբանությունների տեղատարափի հարցը:

ԹԵՄԱՆԵՐ	Համացանցային գրագիտություն, քարոզարշավի ռազմավարություններ, ռասիզմ և խտրականություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	3
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10–20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	90 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Քննարկել ռասիզմի խնդրին ուղղված առանցքային ուղերձները • Ուսումնասիրել ռասիզմի և ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ քարոզարշավ իրականացնելու ռազմավարությունները • Զարգացնել ներկայացնելու, համոզելու և առցանց հաղորդակցության հմտություններ
ՆՅՈՒԹԵՐ	• Ֆլիպչարտներ և գունավոր գրիչեր/մարկերներ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Նախապատրաստե՛ք առձեռն նյութերի (էջ 181-182) օրինակներ • Խնդրե՛ք մասնակիցներին, որպեսզի նշեն «լավագույն» և «վատագույն» կայքերի իրենց տարբերակները (կամընտրական) • Համացանցից օգտվելու հնարավորություն (կամընտրական)

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Բացատրե՛ք, որ վարժության ընթացքում մասնակիցները պետք է վերափոխեն դպրոցի կազմակերպած քարոզարշավի կայքը: Ծանոթացրե՛ք նրանց հետևյալ հավելյալ տեղեկություններին.

Ձեր դպրոցը գտնվում է ներգաղթյալների մեծ համայնք ունեցող շրջանում: Դպրոցը հպարտանում է այն աշխատանքով, որ կատարվել է էթնիկ խմբերի միջև բարեկամական հարաբերություններ ստեղծելու առումով և դպրոցի աշակերտների շրջանում շատ հազվադեպ են ռասիզմի դրսևորումները: Սակայն, դպրոցից դուրս հարաբերությունները շարունակում են չափազանց մտահոգիչ լինել:

Ազգային փոքրամասնությունները հաճախ դառնում են մեծամասնություն կազմող «սպիտակ» բնակչության կողմից վիրավորանքների և բռնությունների զոհ, իսկ նեոնացիստական խմբերն ավելի մեծ տարածում են գտնում:

Դպրոցի ղեկավարությունը որոշում է փորձել պայքարել այս խնդրի դեմ՝ սկսելով առցանց քարոզարշավ, որի նպատակն է տեղեկացնել հանրությանը, թե ինչու է այդքան կարևոր ներառել համայնքի բոլոր անդամներին: Շտապ ստեղծվում է կայք, որն ունի ֆորում հանրության անդամների մեկնաբանությունների և հարցերի համար: Սակայն, քանի որ կայքը չէր պահանջում գրանցվել ֆորումում, այն շատ արագ լցվեց մեծ քանակությամբ ռասիստական մեկնաբանություններով:

2. Ցույց տվե՛ք մասնակիցներին «քարոզարշավի էջը» և առաջարկե՛ք, որպեսզի արտահայտեն դրա մասին իրենց կարծիքները: Որպես հուշում կարող եք օգտագործել հետևյալ հարցերը.
   - Որքանո՞վ է հասկանալի քարոզարշավի ուղերձը:
   - Ի՞նչ կարող եք ասել կայքի ընդհանուր տեսքի և տեղեկությունների ներկայացման ձևի մասին:
   - Սա քարոզարշավի համար հաջողվա՞ծ էջ է: Ինչո՞ւ:
3. Բացատրե՛ք, որ վարժության ընթացքում մասնակիցները պետք է ստեղծեն նոր կայք և մտածեն, թե ինչպես է հնարավոր փոխել առցանց ֆորումի քաղաքականությունը, եթե կա նման անհրաժեշտություն: Տվե՛ք մասնակիցներին առաջադրանքների թերթիկը (էջ 181) և բաժանե՛ք նրանց խմբերի (առավելագույնը 6 մասնակից յուրաքանչյուր խմբում):
4. Հարցերը քննարկելու համար մասնակիցներին տրամադրե՛ք 20 րոպե::
5. 20 րոպե անց խմբերից յուրաքանչյուրին տվե՛ք ֆլիպչարտներ և գունավոր գրիչներ: Ասե՛ք, որ նրանք ունեն ևս 15 րոպե իրենց կայքի առաջին էջի նախանմուշը ստեղծելու համար: Առաջարկե՛ք, որպեսզի նրանք բաշխեն առաջադրանքները՝ հանձնարարելով խմբի որոշ անդամներին աշխատել բովանդակության, մյուսներին՝ ձևավորման վրա (տե՛ս Խորհուրդներ վարողներին):
6. Երբ խմբերը կավարտեն աշխատանքը, փակցրե՛ք նրանց «կայքերը» սենյակի պատերին, որպեսզի բոլորը կարողանան ծանոթանալ: Անցե՛ք վերլուծություն և գնահատում փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Առաջադրանքը հե՞շտ էր: Ձեր խմբի համար ի՞նչն էր ամենից դժվարը և ի՞նչ անցավ հաջողությամբ:
- Ձեզ գոհացնու՞մ է ձեր աշխատանքի արդյունքը:
- Որքանո՞վ եք հաշվի առել ձեր թիրախ լսարանը՝ կայքը մշակելիս: Ձեր կողմից ընտրված թիրախ լսարանին դիմելու համար կիրառե՞լ եք արդյոք որևէ հատուկ հնարներ (օրինակ՝ որոշակի ոճով գրելը):
- Դուք կարողացե՞լ եք գտնել ձև կայքի այցելուներին քարոզարշավին ներգրավելու կամ կայքում արտահայտվելու համար: Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ է դա կարևոր:

- Համեմատե՛ք տարբեր խմբերի մշակած ֆորումների քաղաքականությունները: Հարցրեք՝ ինչո՞վ են պայմանավորված նրանց որոշումները: Որո՞նք էին ամենակարևոր նկատառուները:
- Ինչ եք կարծում, ձեր համայնքում կա՞ ռասիզմի խնդիր: (Խնդրե՛ք նշել պատճառները):
- Երբևէ հանդիպե՞լ եք ռասիստական վիրավորանքների համացանցում: Ինչպե՞ս կվարվեք, եթե հանդիպեք:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Աշխատեք գրանցել մասնակիցների տեսակետները, կապված նրա հետ, թե ըստ իրենց՝ ինչն է բացակայում դպրոցի «քարոզարշավի կայքում»: Կարող եք կետերով գրանցել ֆլիպչարտի վրա. թղթի մեջտեղով գիծ անցկացրե՛ք և մի կողմում գրանցե՛ք առավելությունները, իսկ մյուս կողմում՝ թերությունները:
- Եթե կարծիքները տարբեր են, ապա գրանցե՛ք նաև այդ տարբերությունը: Կայքը կարող է մի մասին դուր գալ, մյուսին՝ ոչ: Այդ մասին կարող եք նշել, մասնակիցների կողմից իրենց թիրախ լսարանի շուրջ քննարկելու և սեփական կայքերը ձևավորելու ժամանակ:
- Խմբային աշխատանքի համար կարելի է հատկացնել ավելի շատ ժամանակ: Ձևավորման փուլում, կարող եք նրանց հնարավորություն տալ օգտվել համացանցից այլ՝ «իսկական» կայքերն ուսումնասիրելու համար: Այսպես նրանք կարող են գաղափար կազմել, թե որքան բովանդակություն կարելի է տեղավորել էջում, ինչպես նաև բովանդակությունը ներկայացնելու տարբեր ձևերի մասին:
- Երբ խմբերը սկսեն աշխատել պաստառների վրա, խորհուրդ տվե՛ք, որպեսզի բաշխեն առաջադրանքները խմբի տարբեր անդամների մեջ: Օրինակ՝ մի մասը կարող է աշխատել քարո զարշավի ուղերձը բարելավելու վրա, մյուսները՝ մտածել այլ կայքերի (էջերի) հղումներ առաջարկելու մասին, մի մասն էլ՝ աշխատել բուն ձևավորման վրա: Հիշեցրե՛ք նրանց, որ բովանդակությունն ու ոճը նույնքան կարևոր են որքան ձևավորումը:
- Դուք կարող եք գտնել ավելի շատ տեղեկություններ և օրինակներ շարժման մարտավարությունների վերաբերյալ Բաժին 5.7.-ում:
- Դուք կարող եք ուսումնասիրել «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի կայքէջում առկա աղբյուրները:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Կարող եք փոխել քարոզարշվի ուղղվածությունն՝ ընտրելով այլ խումբ, օրինակ՝ կանայք, հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, կրոնական փոքրամասնություններ, ռոմաներ:

Եթե խմբի անդամներն ունեն լավ SS (Տեղեկատվական Տեխնոլոգիաներ) հմտություններ, ապա վեբ դիզայնը կարող է կատարվել կամ վորդի մշակման ծրագրի կամ անվճար կայքէջի ստեղծման ծրագրի միջոցով: Դա կպահանջի ավելի շատ ժամանակ:

Համաձայն նրա, թե որքան ժամանակ ունեք, կարող եք նաև վարժության ավարտին խնդրել մասնակիցներին թվարկել իրենց ամենասիրելի և ամենաչսիրած կայքերը: Սա կարող է օգնել

նրանց տեսնել նոր նրբություններ, որոնք, ըստ նրանց՝ կարևոր են քարոզարշավի էջը ձևավորելու առումով: Եթե կա ժամանակ, ապա ֆորումի քաղաքականության վերաբերյալ քննարկումը կարելի է սկսել նախքան փոքր խմբերի բաժանվելը: Կարող եք քննարկել և կետերով նշել, թե որոնք են մեկնաբանություն թողնելու համար ֆորումում գրանցվելու պահանջի առավելություններն ու թերությունները:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդյունքներն ամփոփելուց հետո մասնակիցներին տրամադրե՛ք տեղեկություններ Եվրոպայի խորհրդի նախաձեռնությամբ իրականացված՝ «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի մասին և խրախուսե՛ք նրանց օգտագործել քարոզարշավի շրջանակներում մշակված աղբյուրները:

Խմբերի մշակած կայքերի նախագծերը կարող են հիմք ծառայել քարոզարշավի իրական կայք ստեղծելու համար: Անհրաժեշտ կլինի ի մի բերել բոլոր խմբերի առաջարկած գաղափարները, որպեսզի վերջնական արդյունքը լինի արդեն ամբողջ խմբի մշակած աշխատանքը և մասնակիցները, դրանից հետո, կարող են աշխատել կայքի բովանդակության վրա: Սա կարող է լինել երկարաժամկետ ծրագիր և անհրաժեշտ կլինի ներգրավել մարդկանց, որոնք մասնագիտական առումով կկարողանան օգնել բովանդակությունն առցանց տեղադրելու հարցում: Մասնակիցները կարող են ստեղծել նաև իրենց խմբի էջը սոցիալական մեդիայի կայքերից մեկում:

Բացի այդ, մասնակիցները կարող են նաև ուսումնասիրել իրենց սեփական համայնքում տարբեր էթնիկ խմբերի միջև փոխհարաբերությունների ներկա վիճակը: Սա կարելի է սկսել տեղական ՀԿ-ների հետ հանդիպելուց:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԹԵՐԹԻԿ

Քննարկե՛ք հետևյալ հարցերը ձեր խմբում.

1. Ո՞րն է ձեր հիմնական թիրախ լսարանը: Օրինակ՝ երիտասարդները, համայնքի բոլոր անդամները, «սպիտակամորթ» մեծամասնության ներկայացուցիչները, ... աշխարհը:
2. Ո՞րն է ձեր քարոզարշավի նպատակը և ինչպե՞ս մարդիկ կարող են միանալ քարոզարշավին:
3. Ի՞նչ քաղաքականություն եք նախատեսում որդեգրել մեկնաբանություններ տեղադրելու հարցում.
   - պե՞տք է արդյոք գրանցվել մինչև մեկնաբանություն թողնելը,
   - ինչպիսի՞ն է ձեր ֆորումի «քաղաքականությունը». կարո՞ղ են արդյոք մարդիկ գրել ինչ կցանկանան, թե որոշակի մեկնաբանություններ անընդունելի են:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԷՋԸ

ՍԻԴԼՖԻԼԴԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

Մասնակցե՛ք էթնիկական տարբեր խմբերի միջև փոխըմբռնման հետագա խորացմանը և մարդու իրավունքներին նվիրված քարոզարշավին

Ֆորում

Այստեղ դուք կարող եք ասել ինչ կցանկանաք: Մենք հավատում ենք ազատ խոսքին:

Ամենաակտիվ քննարկումները՝

- Ձեզ դու՞ր է գալիս այն, ինչ մենք անում ենք: 7,345 գրառում
- Մաքրե՛ք մեր դպրոցները (ստորագրե՛ք այստեղ) 3,231 գրառում
- Հավաքվե՛ք, գնացե՛ք ձեր տները 3,123 գրառում
- Սպիտակներն ընդդեմ խառը
- կրթական համակարգի 2,898 գրառում
- Շնորհավորում ենք, Սիդլֆիլդ: 1,002 գրառում
- ***եղեք: Մենք ձեզ չէինք կանչել 976 գրառում
- Ինչպե՞ս կարող եք սովորել, եթե ուղեղ չունեք 535 գրառում
- Ծնողների ստորագրահավաքը ընդդեմ ռասիզմի 812 գրառում

Սեղմե՛ք այստեղ բանավեճին մասնակցելու համար:

Մեր բլոգը

Սիդլֆիլդի ավագ դպրոցն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում առողջ կրթական միջավայրում միջմշակութային փոխըմբռնմանը:
Կարդալ ավելին
Սիդլֆիլդի միջանկյալ զեկույցը Ռասայական հավասարության հանձնաժողովի՝ Բարձրագույն կրթական հաստատություններում դրական գործողությունների վերաբերյալ վերջին խորհրդակցության արդյունքներով:
Կարդալ ավելին

Այլ բաժիններ

- Դպրոցի տնօրենի հայտարարությունը
- Տեղական իշխանությունների հայտարարությունը
- Պաշտոնական փաստաթղթեր
- Տնտեսական ցուցանիշներ
- Վիճակագրություն և փաստարկներ

Քարոզարշավի մասին

Մեր քարոզարշավը մշակվել է դպրոցում և համայնքում էթնիկական տարբեր խմբերի միջև փոխըմբռնման հետագա խորացմանը նպաստելու նպատակով: Մենք որդեգրել ենք պրոակտիվ մոտեցում՝ դրական կրթական միջավայր ապահովելու նպատակով բոլոր աշակերտների համար՝ անկախ ռասայական, էթնիկ, կրոնական կամ մշակութային ինքնությունից և պատկանելությունից:
Կարդալ ավելին

ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ՝ 1

ՄԱՍՆԱԿԻՑ-ՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ 10-20

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 35-25’

ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋԵՐ

Վարժությունը երևակայական համացանցային ֆորումում գործելու մասին է: Մասնակիցները պետք է ողջունեն միմյանց՝ որոշակի խմբերի մասին առկա ընդունված կարծրատիպերի հիման վրա: Այս վարժության ընթացքում նրանք պետք է առցանց հաղորդակցության համար ուղղորդող սկզբունքներ մշակեն:

ԹԵՄԱՆԵՐ	Ռասիզմ և խտրականություն, համացանցային գրագիտություն, ժողովրդավարություն և մասնակցություն
ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	1
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ	10-20
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	Մաս I՝ 35 րոպե Մաս II՝ 25 րոպե
ՆՊԱՏԱԿՆԵՐ	• Քննարկել որոշակի խմբերի մասին առկա նախապաշարումները և այդ խմբերի դեմ ուղղված ատելության խոսքը • Դիտարկել վիրտուալ և ոչ վիրտուալ շփումների տարբերությունները • Մշակել ուղղորդող սկզբունքներ առցանց հաղորդակցության համար
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ	• Կպչուն ժապավեն • Թղթեր և գրիչներ (և ֆլիպչարտ կամ որևէ նման բան, ինչին հնարավոր է փակցնել թղթերը) • Մարկերներ • Բավականաչափ տարածք
ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	• Խմբի բոլոր անդամների համար նախապատրաստե՛ք առանձին «պրոֆիլներ» (օգտագործեք էջ 187-ի անձնական էջերի տեղեկությունները կամ կազմե՛ք ինքնուրույն) • Այդ պրոֆիլներից յուրաքանչյուրի նկարագրությունը գրե՛ք առանձին թղթի վրա (A5 չափ) և նախապատրաստե՛ք կպչուն ժապավեն, այդ թղթերը մասնակիցների մեջքին փակցնելու համար • Մասնակիցներից յուրաքանչյուրի համար պատճենահանեք ատելության խոսքի Եվրոպայի խորհրդի սահմանումը (էջ 185) • Ձեզ անհրաժեշտ է այնքան տարածք, որպեսզի մասնակիցները կարողանան անարգել շրջել սենյակով

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՄԱՍ I. ՖՈՐՈՒՄՈՒՄ (15 ՐՈՊԵ)

1. Խնդրե՛ք մասնակիցներին պատկերացնել, որ իրենք ֆուտբոլի (հոկեյի կամ որևէ այլ մարզաձևի) համացանցային ֆորումում են: Բացատրե՛ք, որ բոլորին կտրվի նոր «պրոֆիլ» և նրանք հանդես են գալու հենց այդ անձի դերում: Սակայն, ոչ ոք չի իմանալու, թե ինքը ով է:
2. Բացատրե՛ք մասնակիցներին, որ նրանք պետք է ներկայանան և ողջունեն մյուսներին: Քննարկումը պետք է շատ կարճ լինի. մասնակիցները տրված ժամանակում պետք է ողջունեն հնարավորինս շատ ֆորումի այցելուի:
3. Բացատրե՛ք, որ վարժության նպատակն է ուսումնասիրել հասարակության տարբեր խմբերի մասին առկա ընկալումներն ու նախապաշարմունքները: Այցելուներին հանդիպելիս, մասնակիցները պետք է մտածեն, թե ինչ կարող են ասել մարդիկ (առցանց) յուրաքանչյուրին՝ ինքնության համաձայն, օրինակ՝ սպորտի հարցեր քննարկող ֆորումում ինչ կասեին հաշմանդամություն ունեցող անձին, սևամորթ աֆրիկացուն, տարեց կնոջը և այլն: Անպայման չէ, որ մասնակիցները շփվեն մյուսների հետ իրենց իրական ինքնության դիրքից: Նրանք ավելի շուտ պետք է մտածեն այն կարծիքների մասին, որ գերակայում են համացանցում և փորձեն ներկայացնել այդ կարծիքները: Չար/նենգ մեկնաբանությունները թույլատրելի են. ոչ մեկին չեն մեղադրի վարժության ընթացքում հնչեցրած մեկնաբանությունների համար:
4. Յուրաքանչյուր մասնակցի մեջքին փակցրե՛ք իրենց «պրոֆիլի» նկարագիրը, բայց այնպես, որ նա չտեսնի: Բոլորին տվե՛ք մատիտներ և թղթեր, որպեսզի գրանցեն այն բառերը, որոնցով իրենց ողջունում են և որոնք կապված են իրենց նոր ինքնության հետ:
5. Խնդրեք մասնակիցներին շրջել սենյակով: Հանդիպելու և իրար ողջունելու համար տրամադրե՛ք 10 րոպե: Այնուհետև ասե՛ք մասնակիցներին, որ դադարեցնեն վարժությունը, հանեն իրենց տրված ինքնություններով թղթերը և անցնեն «Վերլուծություն և գնահատում» փուլին:

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (20 ՐՈՊԵ)

Նախքան վերլուծության և գնահատման փուլին անցնելը համոզվե՛ք, որ մասնակիցները դուրս են եկել իրենց դերերից: Սկսե՛ք, խնդրելով որպեսզի բոլորն ասեն իրենց իրական անունները և մի բան իրենց մասին: Այնուհետև անցե՛ք հետևյալ հարցերին.

- Որևէ մեկը կարողացա՞վ գուշակել իր «պրոֆիլի» որևէ ասպեկտ: Խնդրեք, որպեսզի բացատրեն, թե ինչից ելնելով են այդպես կարծում և նշեն ողջունելիս իրենց ասված բառերից մի քանիսը:
- Ով հավանե՞ց և ով չհավանե՞ց վարժությունը: Ինչո՞ւ:
- Խնդրե՛ք մասնակիցներին, որպեսզի ծանոթանան իրենց տրված պրոֆիլներին հետ:
- Արդյոք նրանց զարմացրել են ողջունելիս իրենց ուղղված արտահայտությունները:
- Ինչ եք կարծում, պրոֆիլները մոտ էին իրականությանը: Արդյոք մարդիկ նման տեղեկություններ կհրապարակե՞ն իրենց բաց պրոֆիլի վրա:

- Հե՞շտ էր մյուսներին վիրավորական բառեր ասելը: Կայի՞ն պրոֆիլներ, որոնց մասին վիրավորական արտահայտություն գտնելն ավելի հեշտ էր:
- Ի՞նչ եք կարծում, եթե սա իսկապես տեղի ունենար առցանց, արդյոք ավելի հեշտ չէ՞ր լինի վիրավորկան արտահայտություններ անելը: Այլ կերպ ասած, եթե շփումը չլիներ առերես վիրավորելն ավելի հեշտ կլինե՞ր: Ինչո՞վ է պայմանավորված այդ տարբերությունը:

ՄԱՍ II. ՄՇԱԿՈՒՄ ԵՆՔ ՈՒՂՂՈՐԴՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ (25 ՐՈՊԵ)

1. Ներկայացրե՛ք մասնակիցներին ատելության խոսքի սահմանումը, որը կիրառում է Եվրոպայի խորհուրդը.

«Ատելության խոսքը ներառում է արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խրախուսում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ ագրեսիվ ազգայնականության և էթնոկենտրոնության միջոցով արտահայտվող անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ինչպես նաև ներգաղթյալների և ներգաղթյալների ընտանիքից սերող անձանց նկատմամբ թշնամանքի և խտրականության դրսևորումները»:

(Նախարարների կոմիտե, Եվրոպայի խորհուրդ)

2. Խնդրե՛ք մասնակիցներին արտահայտվել հետևյալ հարցերի շուրջ և բացատրե՛ք, որ դրանք ավելի մանրամասն կքննարկվեն խմբային աշխատանքի ժամանակ.
   - Ի՞նչ եք կարծում, ատելության խոսքն առցանց տիրույթում թույլատրելի պետք է լինի, թե՞ ոչ:
   - Ինչո՞ւ են մարդիկ մյուսների դեմ կիրառում ատելության խոսքի առցանց դրսևորումներ:
   - Ի՞նչ կարող եք առաջարկել դուք, ձեր սեփական հաղորդագրությունները վերահսկելու տեսանկյունից, այնպես, որ դրանք վիրավորական չլինեն մյուսների համար:
3. Բացատրե՛ք, որ մասնակիցներն աշխատելու են փոքր խմբերում (4–5 հոգի) առցանց վարժության համար մի քանի ուղղորդող սկզբունքներ մշակելու նպատակով: Առաջադրանքը կատարելու համար տրամադրե՛ք նրանց 10 րոպե, այնուհետև, միացրե՛ք խմբերը բոլոր առաջարկները քննարկելու համար:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Ցանկանո՞ւմ եք մեկնաբանել որևէ առաջարկ: Արդյոք մյուսները նշե՞լ են ինչոր բաներ, որ դուք մոռացել էինք:
- Ո՞ր ուղղորդող սկզբունքներն են պարտադիր, որպեսզի դրական և ապահով մթնոլորտ ապահովվի ֆորումի բոլոր մասնակիցների համար
- Ի՞նչ եք կարծում, կկարողանա՞ք հետևել ձեր իսկ մշակած ուղղորդող սկզբունքներին:
- Ինչպե՞ս կարող է հանրությունը ներգրավվել ֆորումի կանոնների և ուղղորդող սկզբունքների վերաբերյալ քննարկումներին:

- Հարցրե՛ք մասնակիցներին իրենց իրական փորձի վերաբերյալ՝ ֆորումների և համայնքների հետ կապված: Ինչպե՞ս են պահպանվում, իրագործվում և մշակվում կանոնները նման համայնքներում:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՎԱՐՈՂՆԵՐԻՆ

- Այս վարժության մեջ շատ կարևոր է ինքնությունների ընտրությունը. կարող եք համապատասխանեցնել անունները և պրոֆիլները ձեր խմբին: Երբ բաշխելու լինեք պրոֆիլները, հավաստիացե՛ք, որ որևէ մեկին չեք տվել այնպիսի պրոֆիլ, որը մոտ է իր իրական ինքնությանը:
- Պրոֆիլները բաժանելուց հետո, կարող եք մասնակիցներին ասել իրենց նոր անունները: Որևէ այլ բան նրանց ինքնությունների մասին մի բացահայտեք և հորդորեք, որպեսզի չփորձեն պարզել իրենց պիտակի վրա գրվածը նաև մյուս մասնակիցներից:
- Երբ բացատրելիս լինեք մասնակիցներին, թե ինչ պետք է անեն բուն ֆորումի ժամանակ, խորհուրդ տվե՛ք, որպեսզի բացասական մեկնաբանություններից զատ, օգտագործեն նաև դրական և չեզոք արտահայտություններ: Պարզաբանե՛ք, որ մեկնաբանությունները պետք է հիմնված լինեն միայն պիտակների վրա գրված նկարագրերի վրա և ոչ մի դեպքում, չարտահայտեն իրական մարդու մասին իրենց իմացած տեղեկությունները: Երևի թե օգտակար կլինի, մինչև վարժությունը սկսելը տալ նրանց որոշ օրինակներ.
    - «Ողջու՛յն, սպորտսմեն»
    - «Շատ գեր չե՞ս ֆուտբոլ խաղալու համար»
    - «Լսիր, այ այլմոլորակային, ի՞նչ գործ ունես այստեղ»
- Վարժությունից հետո համոզվե՛ք, որ որևէ մեկն իսկապես չի վիրավորվել կամ նեղացել վարժության ընթացքում իր հասցեին ասված արտահայտություններից: Միգուցե, այս դեպքում ավելի ճիշտ կլինի ուղղակիորեն միջամտել և հարցնել վիրավորական արտահայտության հեղինակին, արդյոք նա իսկապես այդպես է կարծում:
- Լավ կլինի, եթե սենյակում լինեն սեղաններ, որպեսզի մասնակիցները կարողանան գրառումներ անել, եթե դժվարանան դա անել շարժվելու ընթացքում: Նաև կարելի է ընտրել մի քանի դիտորդ, ովքեր չեն մասնակցի վարժությանը, բայց կգրանցեն արտահայտությունները և դրանց արձագանքները:
- Երբ խմբերը կմշակեն իրենց ուղղորդող սկզբունքները, կարելի է դրանք փակցնել սենյակով մեկ, որպեսզի բոլորը կարողանան ծանոթանալ մյուս խմբերի աշխատանքներին:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Վարժությունը կարելի է անցկացնել նաև գրավոր: Այս դեպքում անհրաժեշտ կլինի պատճենահանել «անձնական էջերի» (էջ 187) 3 կամ 4 օրինակ և կտրել դրանք՝ դարձնելով առանձին «պրոֆիլներով» փոքր քարտեր: Յուրաքանչյուրին իր նոր պրոֆիլը տալուց հետո (մեջքին փակցնելով) տվեք նաև հավելյալ 3 կամ 4 պատահաբար ընտրված քարտ: Նրանք պետք է գրեն իրենց ողջույնի տեքստերը դրանց հետևում: Այնուհետև, արդեն գրառումով քարտը կտրվի այդ քարտի վրա նշված «պրոֆիլը» կրող մասնակցին: Այս մեթոդն ավելի լավ կարտացոլի այն հարաբերական անանունությունը, որ մարդիկ ունեն առցանց, սակայն ավելի երկար կտևի:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մասնակիցները կարող են շարունակել աշխատանքը ուղղորդող սկզբունքներ մշակելու ուղղությամբ և ստեղծել մեկ ընդհանուր ուղեցույց ողջ խմբի համար: Ավելի ուշ կարող եք անդրադառնալ ուղղորդող սկզբունքներին և հարցնել, թե ինչպես են կարողանում մասնակիցները պահպանել դրանք:

Եթե որոշակի խմբերի նկատմամբ դուք նկատում եք վառ արտահայտված և արմատացած նախապաշարումներ, կարելի է այդ խնդիրներին անդրադառնալ ավելի թիրախային վարժությունների միջոցով: Ծանոթացեք *Education Pack* (Կրթական փաթեթ) և *Compass* (Կողմնացույց) ձեռնարկներում նախապաշարմունքների և խտրականության խնդիրներին անդրադարձող վարժություններին: Լրացուցիչ տեղեկությունների համար տ՛ես www.coe.int/compass:

ԱՌՁԵՌՆ ՆՅՈՒԹԵՐ

Ալլա(Ի) Տարիքը՝ 19 Լեսբուհի	Պիեր (Ա) Տարիքը՝ 9 Սիրում է համացանցային խաղեր	Միգել (Ա) Տարիքը՝ 16 Մաթեմատիկայի ազգային չեմպիոն
Ստեֆան (Ա) Տարիքը՝ 33 Ֆուտբոլի մարզիչ	Հուգո (Ա) Տարիքը՝ 21 Վենեսուելայից է	Քրիս (Ա) Տարիքը՝ 43 Ճանապարհային ոստիկան
Դաֆնա (Ի) Տարիքը՝ 65 Ունի իր սեփական բիզնեսը	Ամլին (Ա) Տարիքը՝ 27 Սոմալիից է	Սոնյա (Ի) Տարիքը՝ 33 Գործազուրկ
Հանս (Ա) Տարիքը՝ 23 Ռոմա	Սլավա (Ա) Տարիքը՝ 26 Վարսավիր	Լիզա(Ի) Տարիքը՝ 30 Խոհարար
Ռեբեկա (Ի) Տարիքը՝ 28 Ունի որոշակի մտավոր խնդիրներ	Յոհան (Ա) Տարիքը՝ 31 Եհովայի վկա	Ստեֆի (Ի) Տարիքը՝ 12 Խուլ է
Լիանա (Ի) Տարիքը՝ 13 Խաղում է դպրոցի ֆուտբոլի հավաքականում	Ռիկարդո (Ա) Տարիքը՝ 72 Նույնասեռական	Սեմ (Ա) Տարիքը՝ 21 Պրոֆեսիոնալ թենիսիստ
Դեվիդ (Ա) Տարիքը՝ 26 Պատերազմի վետերան (հաշմանդամություն ունեցող անձ)	Լեոն (Ա) Տարիքը՝ 29 Իմամ (մահմեդական հոգևորական)	Զոուի (Ա) Տարիքը՝ 37 Աշխատում է բարեգործական կազմակերպությունում

ԳԼՈՒԽ 5

ՀԱՄԱՏԵՔՍՏ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ՝ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

5.1 Ատելության խոսքի առցանց դրսևորումներ 189
5.2 Մարդու իրավունքներ 199
5.3 Արտահայտման ազատություն 207
5.4 Ռասիզմ եվ խտրականություն 215
5.5 Անձնական կյանք եվ անվտանգություն 221
5.6 Ժողովրդավարություն եվ մասնակցություն 227
5.7 Քարոզարշավի ռազմավարություններ 235
5.8 Համացանցային գրագիտություն 240
5.9 Կիբերբուլինգ 252
5.10 Եվրոպայի խորհուրդը և ատելության խոսքի առցանց դրսևորումները 258

5.1 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

« (...) Ատելության խոսքը ներառում է արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խրախուսում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ ագրեսիվ ազգայնականության և էթնոկենտրոնության միջոցով արտահայտվող անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ինչպես նաև ներգաղթյալների և ներգաղթյալների ընտանիքից սերող անձանց նկատմամբ թշնամանքի և խտրականության դրսևորումները»:

(Եվրոպայի խորհուրդ, Նախարարների խորհուրդ, Քաղաքականության հանձնարարական No. (97) 20

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ատելության խոսքը հազվադեպ կարելի է բնութագրել միանշանակ գնահատականներով: Կարծիքները տարբեր են ինչպես դրա դասակարգման, այնպես էլ լուծման եղանակների վերաբերյալ: Տարակարծությունները մասամբ պայմանավորված են նրանով, որ այս երկու հարցերը հիմնականում միասին են դիտարկվում. եթե որևէ արտահայտություն դասակարգվում է որպես ատելության խոսք, ապա թվում է, թե դա ինքնըստինքյան ենթադրում է դրա դեմ ուղղված որոշակի գործողություն: Իսկ եթե այդպիսի գործողություն նախատեսված չէ, ապա մենք համարում ենք, որ դա ընդունելի է կամ, առնվազն, հանդուրժելի: Սա նշանակում է, որ այն սահմանումը, որ մենք կիրառում ենք պետք է մեզ հուշի, թե երբ է գործելու ժամանակը:

Կան մարդիկ, ովքեր դեմ են ատելության խոսքի դեմ գործողություններ ձեռնարկելուն, քանի որ համարում են, որ դա արտահայտման ազատության անընդունելի սահմանափակում է: Դրանից ելնելով՝ նրանք կիրառում են «ատելության խոսք» ձևակերպումը միայն դրա ամենածայրահեղ դրսևորումների նկատմամբ, օրինակ՝ երբ նման արտահայտությունը պարունա կում է սպառնալիք մարդու կյանքին կամ անվտանգությանը:

Այս ձեռնարկի շրջանակներում կիրառվում է Եվրոպայի խորհրդի սահմանումը, որը երևույթների շատ ավելի լայն շրջանակ է ներառում ատելության խոսք ձևակերպման մեջ: Այս ձեռնարկում որդեգրված մոտեցումների տրամաբանությունը հուշում է, որ սահմանմանը համապատասխանող ցանկացած դրսևորման առնչությամբ անհրաժեշտ է «ձեռնարկել որևէ գործողություն»: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ որևէ բան ձեռնարկելը չպետք է նշանակի խոսքի սահմանափակում կամ դրա արգելում. կան արձագանքելու բազմաթիվ այլ ձևեր: Քարոզարշավի

ռազմավարության մասին տեղեկատվությունն առավել մանրակրկիտ է արտահայտում նշված հարցը:

Այս գլխի վերջին բաժնում ներառված են ատելության խոսքի դրսևորումները դասակարգելու և գնահատելու մոտեցումներ: Սակայն, մինչև դրան անցնելն, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչու է պետք պայքարել ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ, և արդյոք կա նման անհրաժեշտություն: Ըստ որոշ կարծիքների՝ «համացանցը կարող է ինքնուրույն կարգավորել այս խնդիրները» և, որ առնվազն այս տիրույթում պետք է թույլ տալ որպեսզի խոսքը դրսևորվի անարգել:

Եվրոպայի խորհրդի ատելության խոսքի սահմանումը ներառում է «արտահայտման բոլոր ձևերը», այլ կերպ ասած՝ ոչ միայն բուն խոսքը, այլև նկարները, տեսանյութերը և առցանց գործունեության այլ ձևերը: Հետևաբար, կիբերատելությունը ևս ատելության խոսքն է:

ԻՆՉՈ՞Ւ Է ՊԵՏՔ ՊԱՅՔԱՐԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆԵՂԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ Է

Բառերը նեղացնում և վիրավորում են: Վիրավորում և նեղացնում է նաև ատելությունը: Ատելության խոսքը լուրջ խնդիր է և կարող է դիտարկվել որպես մարդու իրավունքների ոտնահարում: Ատելության խոսքի առցանց դրսևորումը դրա ոչ վիրտուալ դրսևորումներից նվազ մտահոգիչ խնդիր չէ, սակայն, այն շատ ավելի դժվար է բացահայտվում, և դրա դեմ շատ ավելի բարդ է պայքարելը:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄՆՈՒՑՈՒՄ Է ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատելության խոսքը վտանգավոր է ոչ միայն որովհետև ինքնին արդեն իսկ վնաս է հասցնում, այլ նաև կարող է բերել մարդու իրավունքների ավելի լուրջ ոտնահարումների, ներառյալ՝ ֆիզիկական բռնությունը: Եթե ատելության խոսքի առցանց դրսևորումը չվերահսկվի և չստանա արձագանք, ապա այն իր հերթին կազդի ոչ վիրտուալ տարածքի վրա՝ ավելի շատ հրահրելով ռասայական լարումները և խտրականության ու վիրավորանքների այլ տեսակները: Ատելության հնարավոր վնասների վտանգը մեծանում է նաև վիրտուալ աշխարհում դրա արագ տարածվելու հատկության հաշվին:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՉՈՒՏ «ԲԱՌԵՐ» ՉԵՆ

Քանի՞ ձևով մարդիկ կարող են “ատել” առցանց: Երգի, տեսագրության, թվիթի, մուլտի, կառավարվող պատկերի ձևով...

Համացանցը հնարավորություն է տալիս արագ և տարբեր ձևաչափերով հաղորդակցվելու համար, այդ թվում՝ սոցիալական մեդիայի և առցանց խաղերի միջոցով: Այդ շփումը հաճախ անանուն է: Ատելությունը

առցանց կարող է արտահայտվել տեսանյութերի և լուսանկարների, ինչպես նաև դրա ամենից տարածված «տեքստային» տարբերակներով: Տեսալսողական տարբեր ձևաչափերով կամ դրանց համադրությամբ արտահայտված բովանդակությունը շատ ավելի մեծ ազդեցություն է թողնում մարդկանց գիտակցական և ենթագիտակցական պատկերացումների վրա:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽԸ ԵՎ՝ ԱՆՀԱՏՆԵՐՆ ԵՆ՝ ԵՎ ԽՄԲԵՐԸ

Ատելության խոսքի առցանց դրսևորումների թիրախը կարող են լինել որոշակի խմբեր: Սովորաբար դրանք այն խմբերն են, որոնք այս կամ այն պատճառով արդեն իսկ խոցելի են, ինչպես օրինակ՝ ապաստան հայցողները, կրոնական փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք: Միևնույն ժամանակ, հետզհետե շատանում են նաև անհատների դեմ ուղղված ատելության դրսևորումները: Երբեմն դա ունենում է ճակատագրական ավարտ, ինչպես կիբերբուլինգի որոշ հայտնի օրինակների դեպքում, երբ նման վերաբերմունքի արդյունքում զոհերն ինքնասպանություն են գործում: Ատելության խոսքը սպառնում է նաև այն անհատների անվտանգությանն ու ինքնավստահությանը, որոնք իրենց համարում են թիրախ խմբերի անդամներ:

> *Առցանց ասե՞լ եք ինչ-որ բաներ, որ իրական կյանքում չէիք ասի:*
>
> *Իսկ եթե ենթադրեիք, որ ձեր ինքնությունը անհայտ կմնա, կասե՞իք:*

ՀԱՄԱՑԱՆՑԸ ԴԺՎԱՐ Է ՎԵՐԱՀՍԿԵԼ

Ատելության խոսքի առցանց դրսևորումն ավելի շատ են հանդուրժում, քան դրա ոչ վիրտուալ տարբերակը և այն շատ ավելի քիչ է վերահսկվում: Նման վարքագիծ դրսևորողների համար շատ ավելի հեշտ (և անվտանգ) է իրենց վիրավորանքները հասցնել առցանց, որովհետև այդպես նրանք կարող են թաքնվել իրենց անհայտ ինքնության դիմակի հետևում:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԽՈՐՆ ԵՆ

Այն վերաբերմունքը և սոցիալական լարումները, որոնք ատելության խոսքի առցանց դրսևորման պատճառ են դառնում, խորը արմատներ ունեն հասարակության մեջ և սովորաբար նույնն են, ինչ իրական կյանքում ատելության խոսքինը: Փորձելով լուծումներ գտնել ատելության խոսքիառցանց դրսևորումների դեմ՝ մենք նաև նպաստում ենք իրական կյանքում արտահայտվող ատելության դրսևորումների նվազեցմանը:

ՀԱՄԱՑԱՆՑԸ ԿՂԶԻ ՉԷ

Առցանց ակտիվությունն ահռելի ծավալների է հասնում և ժամանակակից հասարակության բնորոշիչ հատկություններից մեկն է, սակայն այն չպետք է դիտարկվի որպես մի հարթություն, ուր չպետք է գործեն նորմալ, մարդկային վարքագծի կանոններ: Մարդկանց վիրտուալ գոյությունը սերտորեն կապված է նրանց «իրական» գոյության հետ: Նրանց կյանքի այս երկու ոլորտները միմյանցից անջատ չեն. ընդամենը վիրտուալ աշխարհը դարձել է «իրական» աշխարհի կարևոր

մասերից մեկը: Ատելության խոսքի առցանց դրսևորումը հաճախ հետևանքներ է ունենում ամենօրյա կյանքում. մարդիկ, զգացմունքները, փոխազդեցությունները և դինամիկան նույնն են և՛ առցանց, և՛ իրական կյանքում:

ՀԱՄԱՑԱՆՑԸ ԴԵՌ ԵՐԻՏԱՍԱՐԴ Է

Շատ առումներով՝ մեր պատկերացումները և գիտելիքը վիրտուալ աշխարհի մասին շատ ավելի թերի են, քան իրական կյանքի մասին: Եվ կարևոր է, որ սա հավասարապես վերաբերում է նաև օրենքներին և կանոնակարգերին, որոնք սովորաբար ստեղծվում են անընդունելին և ընդունելին սահմանելու համար: Առցանց գործունեությունը պետք է դիտարկվի նույն համընդհանուր արժեքների լույսի ներքո, որոնցով մենք առաջնորդվում ենք իրական կյանքում: Բացի այդ, այդ գործունեությունը պետք է կանոնակարգվի միևնույն օրենսդրությամբ. մասնավորապես՝ այն պետք է ենթարկվի մարդու իրավունքները երաշխավորող արդեն գոյություն ունեցող օրենքներին:

ՀԱՄԱՑԱՆՑԸ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ

Որոշ ֆորումներ և կայքէջեր ունեն իրենց սեփական «մշակույթը»:

Ինչպե՞ս կարող են երիտասարդները ստեղծել իրենց սեփական համացանցային մշակույթ:

Համացանցը կլինի այնպիսին, ինչպիսին այն կդարձնեն մարդիկ՝ ո՛չ ավել, ո՛չ պակաս: Եվ ինչպես իրական հասարակության մեջ, այնպես էլ՝ համացանցում գերակայող են դառնում վարքագծի այն տեսակները, որոնք «ընդունելի» են, այսինքն ձեռք են բերում նորմի կարգավիճակ: Մենք պետք է կարողանանք ձևավորել առցանց վարքագծի «ընդունելի» տեսակների տեսլական: Ավելին, պետք է աշխատենք անել այնպես, որպեսզի ընդունված դառնա հենց այդ տեսլականին համապատասխանող վարքագիծը՝ դուրս մղելով անցանկալի դրսևորումները: Սա նշանակում է, որ մենք՝ որպես քաղաքացիներ և

երիտասարդներ, պետք է շահագրգռված լինենք մասնակցել համացանցի կառավարման, ինչպես նաև թույլատրելին և անթույլատրելին որոշելու գործընթացներին:

ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՍՊԵԼ

Ատելության խոսքի առցանց դրսևորումը տարածվում և ծավալվում է մի կողմից՝ քանի որ թերագնահատվում է մարդկանց վրա դրա կործանարար ազդեցությունը, մյուս կողմից՝ առցանց սոցիալական հաղորդակցության մասին շրջանառվող երկու հիմնական առասպելների՝ անպատժելիության և անանունության շնորհիվ: Առցանց ցանկացած գործողության հեղինակին կամ միջնորդին վաղ թե ուշ հնարավոր է հայտնաբերել. ամեն ինչ կախված է այն բանից, թե իրավապահ մարմինները, որքանով հետևողական կլինեն: Այնուամենայնիվ, այդ թյուր պատկերացումը, թե հնարավոր է ատելություն պարունակող բովանդակություն տեղադրել կամ ուրիշի տեղադրած նյութը տարածել՝ առանց հետք թողնելու, նպաստում է նման վարքագծի դրսևորմանը, և իրավիճակն այլ կլիներ, եթե օրինազանցն իմանար, որ իր ինքնությունը բացահայտվելու է: :

Անանունության հետ գալիս է նաև անպատժելիության զգացումը: Ատելության խոսք տարածողները, միգուցե տեղյակ են, որ իրենց գործողություններն օրինական չեն, անարդար են կամ անբարոյական, սակայն, համոզված են, որ իրենց ոչինչ չի սպառնում: Անպատժելիությունը նույնպես առասպել է, քանի որ իրականում, անդամերկրներից շատերում ատելության խոսքը կարող է բավարար հիմք լինել մեղադրանքներ ներկայացնելու համար:

Ե՛վ անանունության, և՛ անպատժելիության առասպելներին անհրաժեշտ է արձագանքել և նպաստել դրանց մասին ճշմարիտ պատկերացումների ձևավորմանը:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

ՎԱՏ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ, ԱՎԵԼԻ ՎԱՏ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ

Ատելության խոսքին արձագանքելիս անհրաժեշտ է գիտակցել, որ այն ունի որոշակի աստիճանակարգ: Չնայած ատելության բոլոր արտահայտություններն էլ որոշ առումով բացասական երևույթ են, այնուամենայնիվ, դրանց որոշ տարատեսակները կարող են լինել մյուսներից վատը, օրինակ՝ եթե դրանք ավելի վիրավորկան են, ազդում են մարդկանց ավելի մեծ խմբերի վրա, ավելի սուր արձագանք են առաջացնում, վնաս հասցնելու ավելի մեծ հավանականություն ունեն և այլն:

Ատելության խոսքին արձագանքելիս անհրաժեշտ է սա հաշվի առնել, քանի որ արձագանքը փոխվում է արտահայտված ատելության աստիճանի համաձայն: Ատելության խոսքի պատշաճ պատասխանը չպետք է լինի արտահայտման ազատությունը չափից ավել սահմանափակող, բայց պետք է լինի համաչափ այն վնասին, որ պատճառում է (կամ կարող է պատճառել): Հետևյալ ցանկը ներառում է որոշ կարևոր չափանիշեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել՝ դրսևորումներից յուրաքանչյուրը գնահատելիս:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ատելության որոշ արտահայտություններ ավելի ծայրահեղ են, ներառում են խիստ վիրավորական բառեր և երբեմն կարող են պարունակել նաև գործողության կոչ: Ատելության խոսքի աստիճանակարգի մյուս ծայրում թեթև վիրավորանքներն են և ընդհանրացումները, որոնք որոշակի խմբերին կամ անհատներին ներկայացնում են վատ լույսի ներքո (և կարող են կեղծ լինել):

Արտահայտման ազատության և այն սահմանափակելու օրինական պատ ճառների մասին հավելյալ տեղեկությունները տե՛ս էջ 208-ում:

Միայն բովանդակության և տոնայնության հիման վրա հետևյալ արտահայտությունները կարելի է պայմանականորեն դասակարգել այսպես.

Ներգաղթյալները պատմականորեն վատ ազդեցություն են ունեցել:

Հաշմանդամություն ունեցող անձինք «քամում են» պետությունը:

Նեգրը մարդ չէ՝ կենդանի է:

*Դու **** պոռնիկ ես: Ես քեզ վաղը բռնաբարելու եմ:*

վիրավորական կամ սպառնալից

Գործնականում շատ դժվար է առանձնացնել բովանդակությունն ու տոնայնությունը ընդհանուր համատեքստից: Այս արտահայտությունների դասակարգումը կարող է փոխվել՝ այլ գործոններ (ստորև) հաշվի առնելու դեպքում: Օրինակ՝ ներգաղթյալների մասին մեկնաբանության ազդեցությունը կարող է շատ ավելի վնասակար լինել հենց այն պատճառով, որ խոսքը չափավոր է:

ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ՝ հատկապես առցանց, մարդիկ արտահայտվում են՝ առանց ինչպես հարկն է մտածելու: Լինում է այնպես, որ մենք վիրավորում ենք որևէ մեկին առանց նման մտադրություն ունենալու, հետո զղջում և նույնիսկ հետ ենք վերցնում մեր խոսքերը: Բերված օրինակներում՝ երկու արտահայտություններն էլ անհանդուրժող են և վիրավորական, սակայն դրանցից մեկն ասվել է հենց վիրավորելու նպատակով: Այս երկու դեպքերի արձագանքը պետք է տարբերակված լինի:

«Կատակ»՝ ընկերոջը գրված անձնական էլ.նամակից

Գեյերին պետք է ոչնչացնել

Գրվել է ինչ-որ մեկի ֆեյսբուքյան էջին՝ իմանալով, որ այդ անձը նույնասեռական է

Վատ **Ավելի վատ**

ԹԻՐԱԽՆԵՐ ԿԱՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԹԻՐԱԽՆԵՐ

Կան խմբեր և անհատներ, որոնք ավելի խոցելի են քննադատության տեսակետից: Դա կարող է պայմանավորված լինել մասնավորապես այն բանով, թե ինչպես են նրանց վերաբերվում հասարակության մեջ ընդհանրապես, ինչպես են նրանց ներկայացնում լրատվամիջոցները կամ, միգուցե, որովհետև որոշ անձնական հանգամանքներից ելնելով, նրանք այնքան էլ չեն կարողանում պաշտպանվել: Օրինակ՝ մահմեդականներին ուղղված վիրավորական մականունը կարող է ունենալ շատ ավելի վատ ազդեցություն այն երկրներում, որտեղ բնակչության մեծամասնությունը

մահմեդականներ չեն. նույն տրամաբանությամբ, քրիստոնյաներն ավելի վտանգված են զգում իրենց, երբ իրենք են փոքրամասնությունը: Համարվում է, որ երեխաները հատուկ ուշադրության և պաշտպանության կարիք ունեն գրեթե բոլոր հասարակություններում:

Ատելության խոսքը հիմնականում ուղղված է այս բաժնի սկզբում բերված սահմանման մեջ ներառված խմբերի դեմ, սակայն, ատելության խոսքի թիրախ կարող է դառնալ ցանկացած մարդ, նույնիսկ եթե նա չի մտնում թվարկված անհանդուրժողականության թիրախ խմբերից որևէ մեկի մեջ:

Հետևյալ օրինակը ցույց է տալիս, թե ինչպես է կարող տարբեր խմբերի մասին ասված նույն արտահայտությունն ունենալ բոլորովին այլ ազդեցություն: Երկրորդը կարող է ունենալ շատ ավելի վատ ազդեցություն: :

Քաղաքական գործիչները ժլատ, փողասեր չարագործներ են:

Բոլոր հրեաները ժլատ, փողասեր չարագործներ են:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ատելության խոսքի կոնկրետ դրսևորման համատեքստն այն պատմական և մշակութային հանգամանքներն են, որոնք շրջապատում են ատելության տվյալ արտահայտությունը: Այն կարող է ներառել նաև այլ գործոններ, ինչպես օրինակ՝ թիրախ լսարանը, առկա լարվածությունը և նախապաշարմունքները, արտահայտության հեղինակի «հեղինակությունը» և կարգավիճակը, և այլն:

Տեղադրվել է 16 ամյա մի երիտասարդի անձնական բլոգում, որը շատ քչերն են ընթերցում :

Վարչապետի ելույթի ձայնագրությունը, որը տեղադրվել է բոլոր խոշոր լրատվամիջոցների կայքերում

Ներգաղթյալները պատմականորեն վնասակար ազդեցություն են ունեցել:

Ներգաղթյալները պատմականորեն վնասակար ազդեցություն են ունեցել:

Վատ → **Ավելի Վատ**

ԻՐԱԿԱՆ ԿԱՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Ատելություն պարունակող արտահայտությունը գնահատելիս և դրա հնարավոր արձագանքը որոշելիս՝ ամենակարևոր նկատառումներից մեկը դա այն իրական կամ հնարավոր ազդեցությունն է, որ այդ արտահայտությունը կարող է ունենալ անհատների, խմբերի կամ ընդհանրապես հասարակության վրա: Այն, թե ինչպես է արտահայտությունն իրականում ազդել անհատի կամ խմբի վրա հաճախ ավելի կարևոր է, քան այն, թե ինչ են մյուսները կարծում դրա ազդեցության մասին: Օրինակ, եթե երեխային չափազանց անհանգստացնում են ինչոր մեկնաբանություններ, որոնք այդ մեկնաբանությունների հեղինակները բնութագրում են որպես «ընկերական» կատակներ՝ պատճառվող իրական ցավը շատ ավելի կարևոր է, քան նրանց «սեփական կարծիքն ազատ արտահայտելու» իրավունքը:

ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ, ԿԻԲԵՐԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մարդու իրավունքների և մարդու իրավունքները երաշխավորող օրենսդրության վերաբերյալ հավելյալ տեղեկությունները տե՛ս գլուխ 5.2-ում:.

Չնայած, որ այս ձեռնարկի հիմնական շեշտն իրավական միջոցների վրա չէ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել ատելության խոսքի որոշ իրավական արգելքներ, որոնք տարածվում են նաև առցանց տիրույթի վրա.

- Համաձայն **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի** 20-րդ հոդվածի՝ «Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որը ներառում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով»:
- Համաձայն **Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի** 4-րդ հոդվածի՝ ռասայական խտրականություն տարածող կամ հրահրող որևէ քարոզչական գործունեություն անօրինական է:
- **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի** 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտման ազատությունը, սակայն հնարավորություն է տալիս այն սահմանափակել «այլոց հեղինակությունը կամ մարդու իրավունքները պաշտպանելու համար», ինչպես նաև մի շարք այլ պատճառներով: Այս հոդվածը հնարավորություն է տալիս անդամ պետություններին իրենց երկրներում արգելել ատելության խոսքի որոշակի դրսևորումներ:

Դուք գիտե՞ք, թե ձեր երկրում ատելության խոսքի որ տեսակներն են արգելված:

- Համաձայն կոնվենցիայի 17-րդ հոդվածի արգելվում է ցանկացած գործողություն, որի «նպատակն է [կոնվենցիայով նախատեսված] որևէ իրավունքի կամ ազատության չարաշահումը»: Այս հոդվածը նաև կիրառվում է ատելության խոսքի որոշ տարատեսակների նկատմամբ կառավարությունների կիրառած արգելքներն օրինականացնելու համար:

Եվրոպայի խորհրդի կողմից մշակված՝ այս հարցի հետ առնչվող, ևս մեկ միջազգային իրավունքի գործիք է Կիբերհանցագործությունների մասին կոնվենցիան (նաև հայտնի է որպես Բուդապեշտի

կոնվենցիա, 2001թ)։ Կիբերհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան այս հարցը կարգավորող միակ պարտավորեցնող միջազգային փաստաթուղթն է։ Այն ծառայում է որպես ուղեցույց՝ Կիբերհանցագործությունների դեմ յուրաքանչյուր երկրում համապարփակ ներպետական օրենսդրության մշակման համար, ինչպես նաև միջազգային համագործակցության ձևաչափ՝ պայմանագիրը ստորագրած անդամպետությունների համար։

Կիբերհանցագործությունների մասին կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրությունը վերաբերում է համակարգչային համակարգերի միջոցով ռասիստական կամ այլատյացության բնութագիր ունեցող արարքները քրեականացնելուն (2003) և կամընտրական արձանագրություն է, որը կարող են ստորագրել Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունները։ Այն սահմանում է «ռասիստական և այլատյացական նյութը» որպես «գրավոր նյութ, որևէ նկար կամ գաղափարներ և տեսություններ ներկայացնող որևէ այլ ձևաչափ, որը խրախուսում, խթանում և հրահրում է ատելություն, խտրականություն կամ բռնություն անձի կամ անձանց խմբերի նկատմամբ՝ ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ծագման կամ ազգային, էթնիկ կամ կրոնական պատկանելության հիման վրա, եթե որպես շարժառիթ օգտագործվել է հիշյալ գործոններից որևէ մեկը»։ Արձանագրությունն անդամ պետություններից պահանջում է որոշակի միջոցներ ձեռնարկել, որոնց նպատակն է ռասիստական կամ այլատյացության բնույթ ունեցող գործողությունների արգելումը և քրեականացումը։ Կիբերհանցագործությունների հարցերով զբաղվող Կոմիտեն Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների ներկայացուցիչներին պարբերաբար հրավիրում է՝ անդամպետություններում կոնվենցիայի կիրառման և աջակցության միջոցառումների շուրջ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով։

2014 թվականին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունեց «Համացանցի օգտատերերի համար Մարդու իրավունքների ուղեցույցը» (CM/Rec(2014)6)։ Ուղեցույցը ներառում է տեղեկություններ առ այն, թե գործնականում համացանցի համատեքստում ինչ են նշանակում իրավունքներն ու ազատությունները, ինչպես պետք է հիմնվել և օգտագործել դրանք, և ինչպես գնահատել միջոցները։ Ուղեցույցը ներկայացնում է ընդհանուր տեղեկություններ, թե ինչպես են կիրառվում խտրականության արգելման ու արտահայտման ազատության պահանջներն առցանց տիրույթում։ 5.2 բաժնում կարող եք ծանոթանալ հավելյալ տեղեկությունների՝ մարդու առցանց և անցանց իրավունքների մասին։ 5.3 բաժնում կարող եք տեղեկանալ, թե ինչպես է կիրառվում արտահայտման ազատությունը համացանցում։ Ուղեցույցին ծանոթանալու համար անցե՛ք հետևյալ հղումով՝ www.coe.int/en/web/internet-users-rights/guide։

ՌԱԵՀ-ը (Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով) ԵԽ մարմին է, որը 2015 թվականին ընդունել է Ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարականը, որի առաքելությունն ատելության խոսքի դեմ պայքարն է։ Այս հանձնարարականի մեջ ՌԱԵՀ-ը կոչ է անում հանրության ներկայացուցիչներին արագ արձագանքել ատելության խոսքին, աջակցել լրատվամիջոցների ինքնակարգավորմանը, բարձրացնել ատելության խոսքի վտանգավոր հետևանքների մասին տեղեկացվածությունը, բացառել ֆինանսական և այլ աջակցությունը

քաղաքական կուսակցությունների կողմից, որոնք ակտիվ օգտագործում են ատելության խոսք, քրեականացնել դրա առավել վտանգավոր դրսևորումները՝ հարգելով արտահայտման ազատությունը։ Հանձնարարականն ընդգծում է, որ ատելության դեմ միջոցները պետք է լինեն լավ հիմնավորված, համարժեք, ոչ խտրական և չօգտագործվեն արտահայտվելու կամ հավաքների իրավունքները սահմանափակելու համար, ոչ էլ ճնշեն պաշտոնական մարմիններ, քաղաքական ընդդիմության կամ կրոնական հավատքների նկատմամբ քննադատությունը։ Ներկայացնում ենք հանձնարարականի հղումը. https://www.coe.int/en/web/european-commission-against-racism-and-intolerance/recommendation-no.15

5.2 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով:
Հոդված 1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Մարդու իրավունքներն առնչվում են ատելության խոսքի հետ մի շարք ձևերով: Իրավական տեսանկյունից մարդու մի շարք իրավունքներ կապված են ինչպես ատելության խոսքի որոշ տեսակների, այնպես էլ դրանք արգելելու և սահմանափակելու փորձերի հետ: Արժեքների տեսանկյունից՝ ատելության խոսքի գրեթե բոլոր դրսևորումները բխում են ռասիստական կամ խտրական վերաբերմունքից, իսկ դրանք երկուսն էլ մարդու իրավունքների տեսանկյունից մտահոգիչ խնդիրներ են: Ինչ վերաբերում է կրթությանը, դրա լայն իմաստով, ապա այս դեպքում էլ մարդու իրավունքներն առաջարկում են ատելության խոսքը հասկանալու և դրա դեմ առցանց պայքարելու ամենաարդյունավետ ձևաչափերից մեկը:

Այս բաժնում ընդգրկված են որոշ ընդհանուր տեղեկություններ մարդու իրավունքների հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքները երաշխավորող և պաշտպանող օրենսդրության, ինչպես նաև այն հարցի շուրջ, թե ինչպես է հնարավոր կիրառել մարդու իրավունքներն ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում: Մի քանի կոնկրետ իրավունքներ, որոնք ուղղակիորեն կապված են ատելության խոսքի առցանց դրսևորման հետ ներկայացված են այլ բաժիններում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնական փաստեր

- Մարդու իրավունքները միջազգայնորեն ընդունված չափորոշիչներ են, որոնց հիմքում ընկած են աշխարհի բոլոր կառավարությունների կողմից համաձայնեցված մի շարք համամարդկային արժեքներ:
- Մարդու իրավունքների հիմքում ընկած է այն գաղափարը, որ բոլոր մարդիկ արժանի են հարգանքի և որ ոչ ոք չպետք է ենթարկվի անմարդկային տառապանքների: Այս առումով բոլոր մարդիկ հավասար են. նրանց արժանապատվությունը պետք է դիտարկվի որպես հիմնարար արժեք:
- Մարդու իրավունքները սահմանվել են միջազգային իրավունքի համաձայն՝ աշխարհի բոլոր կառավարությունների համար պարտավորություններ ստեղծելով: Կառավարությունները

պարտավոր են ապահովել յուրաքանչյուր մարդու հիմնական կարիքները, ներառյալ՝ անձի արժանապատվության պաշտպանությունը:

- Մարդու իրավունքները չեն ապահովում վնասև ցավ պատճառելուց զերծ կյանք: Դրանք ստեղծում են բազային, նվազագույն չափորոշիչներ, որոնք սահմանում են, թե ինչ է անհրաժեշտ մարդուն՝ արժանապատիվ ապրելու համար:
- Մարդու գրեթե բոլոր իրավունքները կարող են սահմանափակվել որոշակի հանգամանքների պարագայում, եթե դա անհրաժեշտ է մյուսների իրավունքները, կամ ամբողջ հասարակությունը պաշտպանելու համար: Որոշ իրավունքներ, օրինակ՝ կյանքի իրավունքը և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքից ազատ ապրելու իրավունքը չեն կարող սահմանափակվել որևէ պարագայում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ

Մարդու իրավունքները ներմուծվել են տարբեր իրավական համակարգերի մեջ՝ կառավարությունների համար տարբեր մակարդակներում պարտավորություններ ստեղծելով: Մարդու իրավունքների հիմնական գործիքները և դրանցով կարգավորվող մի շարք իրավունքներ ներկայացված են էջ 203ի դիագրամում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) մշակել է մարդու իրավունքների մի շարք համաձայնագրեր, որոնք սահմանում են կառավարությունների պարտականությունները անհատների նկատմամբ: Դրանցից ամենակարևորներն են.

- **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր** (ՄԻՀՀ). ՄԻՀՀը ստեղծվել է 1948 թվականին Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Այն ընդունվել է աշխարհի բոլոր կառավարությունների կողմից և ներառել այն բոլոր հիմնական իրավունքներն ու սկզբունքները, որոնք այնուհետև արտացոլվել են մարու իրավունքների մասին բոլոր համաձայնագրերում:
- **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն** (ICCPR/ ՔՔԻՄԴ) ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1966թ.: Այն ընդլայնել է ՄԻՀՀ-ում սահմանված իրավունքները, որոնք արտացոլված են էջ 203-ի դիագրամում:
- **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրն** (ՏՍՄԻՄԴ) ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից ՔՔԻՄԴ-ի հետ միաժամանակ: Այս դաշնագիրն անդրադառնում է ՄԻՀՀ-ի մյուս իրավունքներին (տե՛ս էջ 203-ի դիագրամը):

Եվրոպական բոլոր կառավարությունները համաձայնել են հարգել, պաշտպանել և իրագործել մարդու իրավունքների միջազգային հռչակագրում ներառված իրավունքները: Նրանք նաև

ստորագրել են մարդու իրավունքների մասին բազմաթիվ այլ միջազգային համաձայնագրեր, ներառյալ՝ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Մարդու իրավունքների եվրոպական շրջանակը ստեղծվել է Եվրոպայի խորհրդի կողմից, որի մշտադիտարկումն իրականացնում է Եվրամիության հետ միասին: :

Եվրոպական մակարդակում գործող երկու հիմնական համաձայնագրերը, բաժանում են ՄԻՀՀ-ում ներառված իրավունքները նույն կերպ, ինչպես վերընշված երկու միջազգային դաշնագրերում. ընդ որում՝ հարկ է նշել, որ եվրոպայի խորհրդի համաձայնագրերն ավելի շուտ են ընդունվել.

- **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան** ընդունվել է 1953 թվականին և ներառում է գրեթե նույն իրավունքները, ինչ ՔՔԻՄԴ-ը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հիմնադրվել է 1959 թվականին՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի պահանջների կատարումը վերահսկելու նպատակով:
- **Եվրոպական սոցիալական խարտիան** ընդունվել է 1961 թվականին և գրեթե նույնությամբ ներառում է ՏՍՄԻՄԴ-ում սահմանված իրավունքները: Այս իրավունքները վերահսկում է Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովը, որը քննում է կառավարությունների (իսկ երբեմն նաև արհմիությունների և ՀԿ-ների) ներկայացրած հաշվետվությունները:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Բազմաթիվ երկրներում մարդու իրավունքների պաշտպանության պահանջները ներմուծվել են նաև ազգային օրենսդրության մեջ: Նման դեպքերում մարդու իրավունքների հնարավոր խախտումները քննում են ազգային դատարաններում:

Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՆՔ ՄԵՆՔ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Մարդու իրավունքներն առնչվում են ատելության խոսքին մի շարք տարբեր պատճառներով.

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Ատելության խոսքի դրդապատճառներից են բացասական կարծրատիպերը՝ համաձայն որոնց, որոշ խմբեր կամ անհատներ դիտարկվում են որպես ստորադաս, տարբերվող և հարգանքի ոչ արժանի: Մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների համաձայն, բոլոր մարդիկ հավասար են և հավասարապես կարող են օգտվել իրավունքներից: Խտրականության բացառումը հիմնարար սկզբունք է: Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ձևավորումը, ճանապարհներից մեկն է, որը կապահովի, որպեսզի ատելության խոսքի հիմքում ընկած վերաբերմունքը չունենա բարգավաճելու հնարավորություն: :

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Ատելության խոսքի ամենածայրահեղ դրսևորումներն ինքնին արդեն խտրականություն են և մարդու իրավունքների ոտնահարում: Ատելության խոսքն օտարում, մարգինալացնում և խարխլում է այն մարդկանց արժանապատվությունը, ովքեր արդեն իսկ խոցելի են այս կամ այն պատճառով: Այն

դեպքում, երբ ատելության խոսքն ուղղված է կոնկրետ անձի դեմ, ինչպես օրինակ կիբերբուլինգի պարագայում, այն կարող է խախտել նաև անձնական կյանքի իրավունքը և դառնալ անմարդկային ու ստորացուցիչ վերաբերմունքի պատճառ: Բացի այդ, ատելության խոսքը խարխլում է նաև այն մարդկանց ինքնավստահությունը, արժանապատվությունը և նույնիսկ անվտանգությունը, որոնք իրենց համարում են ատելության խոսքի թիրախային խմբեր:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Եթե ատելության խոսքին չի հետևում արձագանք, այն էլ ավելի է նպաստում մարդու իրավունքների հետագա խախտումներին. բացասական կարծրատիպերը սրընթաց տարածում են գտնում հասարակության մեջ, խմբերը հետզհետե ավելի են մեկուսանում և մարգինալացվում, մեծանում է անջրպետն ու բախումները հասարակության տարբեր խմբերի միջև , իսկ վիրավորանքներն ու սպառնալիքները ավելի են սաստկանում, քանի որ նախորդ փորձը անպատիժ էր մնացել: Վատագույն զարգացումների դեպքում զուտ «խոսքերը» վերածվում են ֆիզիկական բռնության: Ատելության խոսքը կարող է հանգեցնել ատելության հիմքով հանցագործությունների, որոնց պարագայում գործ կունենանք արդեն անձի ապահովության և անվտանգության հետ առնչվող մարդու իրավունքների հետ: Ատելության հիմքով հանցագործությունները, այդ թվում՝ ցեղասպանությունը, միշտ ուղեկցվում են ատելության խոսքով: Իհարկե ոչ բոլոր դեպքերում է ատելության խոսքին հետևում հանցագործություն, սակայն ատելության հիմքով հանցագործությունը միշտ ներառում է ատելության խոսք:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ատելության խոսքի դեմ պայքարելու համար ձեռնարկվող գործողությունները կարող են խախտելմարդու որոշ իրավունքներ, քանի որ արտահայտման ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, այնպես ինչպես մտքի, խղճի և դավանանքի ազատությունը: Նրանք, ում հաճախ մեղադրում են «ատելություն» տարածելու մեջ վկայակոչում են հենց այս իրավունքները:

Մարդու իրավունքների պատշաճ ըմբռնումը կարող է օգնել այս ակնհայտ հակասությունը լուծելու հարցում: Ատելության խոսքի դեմ պայքարում հիմնական մարտահրավերներից է պահպանել հավասարակշռությունն արտահայտման ազատության և այլ իրավունքների միջև, որոնք կարող են խախտվել ավելի բռնի ձևով:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Մարդու իրավունքների մասին իրազեկվածության բարձրացումն ինքնին հզոր գործիք է ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում: Այս տեսանկյունից անհրաժեշտ է զարգացնել երիտասարդների գիտելիքներն ու հմտությունները, մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը կիրառելով ատելության խոսքի հետ կապված մարտահրավերներին դիմակայելու

համար: Այդ մոտեցումը ոչ միայն նպաստում է այլոց նկատմամբ համապրումի և հարգանքի ձևավորմանն, այլ նաև խթանում ակտիվ մասնակցությունը և անհատական ներգրավվածության զգացումը:

Մարդու իրավունքների մասին հավելյալ տեղեկությունների կարող եք ծանոթանալ «Կողմնացույց» ձեռնարկի 4-րդ գլուխում (www.coe.int/compass):

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՑԱՆՑԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

- Մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը միշտ ավելի կարևոր են, քան մասնավոր կազմակերպությունների կողմից սահմանված կանոններն ու կարգավորումները:
- Համացանցում մարդու իրավունքների տեսանկյունից յուրաքանչյուր ոք պետք է պաշտպանված լինի ապօրինի ոտնձգությունից և հետապնդումներից:
- Յուրաքանչյուր ոք, ում իրավունքներն ու ազատությունները խախտվել են համացանցում, ունի օգնության և օժանդակության իրավունք:

Համացանցը հիմնականում «պատկանում» և վերահսկվում է մասնավոր ընկերությունների կողմից: Սա ավելի է բարդացնում մարդու իրավունքների պաշտպանությունը, քանի որ մարդու իրավունքները իրականում «կանոններ են կառավարությունների», այլ ոչ թե մասնավոր ընկերությունների համար: Եթե առևտրի կենտրոնը կամ մասնավոր գիշերային ակումբը որոշի արգելել մարդկանց ջինսերով մուտք գործել , բողոքել կամ տեղեկություններ տարածել այլ ընկերության մասին, որոնք բոլորն էլ «արտահայտման» տարատեսակներ են, դուք չեք կարող վկայակոչել արտահայտման ազատությունը և դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Նույն կերպ մասնավոր ընկերությունները, հիմնականում, կարող են սահմանել կանոններ, որոնց մարդիկ պետք է հետևեն, երբ օգտագործում են համացանցի այն հատվածը, որ իրենց է պատկանում: Եթե մարդկանց դուր չեն գալիս այդ կանոնները, նրանք կարող են բողոքել, թեև ծայրահեղ պատժամիջոցն այս դեպքում, ընդամենը իրենց ծառայություններից հրաժարվելն է:

Սակայն, սա չի նշանակում, որ աշխարհի այն ոլորտները, որոնք պատկանում են մասնավոր ընկերություններին, այդ թվում համացանցը, չեն ենթարկվում մարդու իրավունքներից բխող օրենսդրությանը: Մարդու իրավունքները կառավարություններին պարտավորեցնում են ստանձնել (նվազագույնը) երկու տեսակի պարտականություն.

1. Մարդու իրավունքները սահմանափակում են կառավարություններ որոշ իրավունքներ օրինակ՝ կառավարությունները իրավունք չունեն արգելել քաղաքական այլախոհությունը, թույլ տալ խոշտանգումներ/ներգրավվել խոշտանգումների մեջ կամ զրկել որևէ մեկին ազատությունից՝ առանց հիմնավոր պատճառների:

2. Մարդու իրավունքները պարտավորեցնում են կառավարություններին ակտիվ գործողությունների դիմել իրավունքների պատշաճ պաշտպանությունն ապահովելու համար: Սա կարող է նշանակել հակախտրականության օրենքների ընդունում, որպեսզի բռնի արարքները հետապնդվեն և պատժվեն և զոհերը ստանան պատշաճ պաշտպանություն:



Այլ կերպ ասած՝ կառավարությունը պարտավոր է ապահովել, որպեսզի «մասնավոր» տիրույթները չհանգեցնեն մարդու իրավունքների խախտումներին: Առկա է դատական գործերի աճող միտում, որոնք կապված են համացանցում մարդու իրավունքների խախտումների հետ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում հաստատել է, որ պետությունները պարտավոր են պատշպանել անձանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները համացանցում: Հատկապես՝ արտահայտման ազատությունը, երեխաների և երիտասարդների պաշտպանությունը, բարքերի և այլոց իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի ռասիզմի, այլատյացության և խտրականության այլ դրսևորումների դեմ պայքարելու միջոցով: Ավելին, մասնավոր և հանրային տիրույթների միջև տարբերությունն աղոտ է և ունի քննարկման կարիք: Ոչ բոլոր կայքերն ունեն մասնավոր տերեր, սակայն այդ դեպքում նույնպես, հանրային պատասխանատվության հարցը մնում է արդիական: Արդյո՞ք սոցիալական ցանցը, որը միավորում է 500 միլիոն մարդ, լիովին մասնավոր ոլորտ է: «Ո՛չ ատելության խոսքին» շարժումը Եվրոպական

խորհրդի երիտասարդ ներկայացուցիչների կողմից կոչված է դիտարկել համացանցը որպես հանրային տիրույթ այնպիսի շահերով, որոնք դասվում են էլեկտրոնային բիզնեսի շահերից շատ ավելի վեր։

Հիշե՛ք: Միայն այն հանգամանքը, որ առկա են համեմատաբար ավելի քիչ "օրենքներ", որոնք կարգավորում են համացանցում արտահայտման իրավունքը, չի նշանակում, որ մարդկանց խրախուսվում է ասել և անել այն, ինչ նրանք կամենում են։ Համացանցը կլինի այնպիսին, ինչպիսին կնախընտրեն այն տեսնել օգտատերերը, և երիտասարդները նույնքան հնարավորություն ունեն ազդելու այդ գործընթացի վրա, որքան մյուսները։

5.3 ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Հոդված 19

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Արտահայտման ազատությունն առանցքային կարևորություն ունի մարդու իրավունքները պաշտպանելու և ատելության խոսքի արմատախիլ անելու համար: Չնայած վիրավորանքի և ատելության արտահայտման բոլոր ձևերն էլ տհաճ են, և դրանցից շատերը կարող են ունենալ նաև ռասիստական բնույթ, ատելության արտահայտումը սահմանափակող կամ արգելող որևէ փորձ ձեռնարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կողմերի իրավունքները: Սա ներառում է նաև «ատելություն» արտահայտողների իրավունքները:

Սա կարող է տարօրինակ թվալ, սակայն մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը գրեթե միշտ ենթադրում է գտնել հավասարակշռությունը կողմերի տարբեր իրավունքների միջև: Որքան էլ մենք չսիրենք բռնացող, օրինազանց մարդկանց, կամ նրանց, ովքեր իրենց խոսքերով իրական վնաս են հասցնում մյուսներին, մարդու իրավունքների պաշտպանությունը տարածվում է նաև նրանց վրա:

Ազատ խոսքը կամ արտահայտման ազատությունը համարվում է մարդու հիմնարար իրավունք երկու հիմնական պատճառներով. նախ՝ որովհետև այն կարևոր է անհատների, երկրորդը՝ հասարակության, նրանց արժանապատվությունը պաշտպանելու և ժողովրդավարական հասարակություն ձևավորելու համար:

Առանց արտահայտման ազատության ժողովրդավարությունը չի կարող գործել, իսկ առանց ժողովրդավարության՝ մարդու իրավունքները չեն կարող լինել պաշտպանված:

Արտահայտվելու ազատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային հիմնասյուներից է եւ նրա առաջընթացի, ինչպես նաև յուրաքանչյուր անհատի ինքնադրսևորման հիմնական նախապայմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան. գործ՝ Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. U.K.):

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Առօրյա խոսքի մեջ մարդիկ սովորաբար կիրառում են «ազատ խոսքի» իրավունք արտահայտությունը: Իրականում, արտահայտման ազատությունը ներառում է արտահայտման բոլոր ձևերը, այդ թվում՝ գրավոր խոսքը, պատկերները, բեմականացումները, տեսանյութերը, երաժշտությունը և այլն: Այդիսկ պատճառով, այս իրավունքը հատկապես կարևոր է հենց առցանց գործունեության առումով, քանի որ առցանց տեղադրվող որևէ բան ինքնին արդեն իսկ «արտահայտում» է և կարող է կարգավորվել այս իրավունքով:

ԻՆՉՈ՞Ի Է ԿԱՐԵՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՄԱՐԴ ԼԻՆԵԼՈՒ ԷԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է

Մարդկանց մտքերը, կարծիքները և համոզմունքները նրանց ինքնության կարևոր բաղկացուցիչն են: Եվ երբ որևէ մեկին թույլ չեն տալիս ինքնաարտահայտվել, դրանից տուժում է նրա անհատականությունը և ասես սեղմվում, փոքրանում նրա ինքնությունը: Մարդու իրավունքներն, ըստ էության, դա մեր սեփական կյանքի նկատմամբ անձնական վերահսկողության՝ ինքնավարության պահպանումն է:

Մարդկանց արտահայտման ազատությունը սահմանափակելը նվազեցնում է նաև հասարակության կյանքին մասնակցելու նրանց հնարավորությունները: Մասնակցությունը՝ որպես սոցիալական փոխազդեցության ձև, ինքնին մարդու հիմնական իրավունքն է և կարևոր է ժողովրդավարության ու քաղաքացիության համար:

ՈՐՈՎՀԵՏԵՎ ԿԱՐԵՎՈՐ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բանավեճն ու քննարկումները ժողովրդավարական հասարակության կարևոր մասն են կազմում: Գաղափարները ծնվում և ձևավորվում են մյուսների հետ դրանք կիսելու, հղկելու, այլ գաղափարների հետ միացնելու, այլ մեկնաբանությունների տեսանկյունից դրանց նայելու միջոցով: Ստեղծագործականությունը և «ճշմարտությունը» կախված են գաղափարների փոխանակումից, իսկ գաղափարների «ազատ» փոխանակումը, հարստացնում է հասարակությունը:

Բանավեճը և քննարկումները նաև միջոց են մարդկանց միջև հաղորդակցությունը բարելավելու համար: Մենք սկսում ենք հասկանալ մյուսներին, երբ լսում ենք նրանց գաղափարները, որոնց հետ կարող ենք և համաձայն չլինել, սակայն դա մեզ օգնում է գտնել միասին ապրելու ընդհանուր ձև, որը հնարավորություն է տալիս ապահովելու խաղաղ համակեցությունը: Սա կարևոր է նաև համախմբված հասարակության տեսանկյունից: Այսպիսով, արտահայտման ազատությունը կարևոր է և՛ հասարակության, և՛ անհատների զարգանալու ու բարգավաճելու հնարավորությունների տեսանկյունից: Արտահայտվելու իրավունքը սահմանափակելու համար անհրաժեշտ են շատ լուրջ և հիմնավոր պատճառներ:

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՕՐԵՆՔԸ

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ



Սխեման ցույց է տալիս արտահայտման այն տեսակները, որոնք կարող են սահմանափակվել կամ պետք է սահմանափակվեն՝ համաձայն մարդու իրավունքների մասին միջազգային իրավունքի: Համաձա՞յն եք այս սահմանների և սահմանափակումների հետ: Ի՞նչ եք կարծում, արտահայտման ազատությունը պե՞տք է ավելի շատ (քիչ) սահմանափակվի:

Չնայած ազատ խոսքը պաշտպանելու հիմնավոր պատճառներին՝ մարդու իրավունքների մասին համաձայնագրերը նաև սահմանում են, որ խոսքն ինքնին լինելով «արարք», ունի մյուսներին վնաս պատճառելու հատկություն, և կարող է նաև վտանգել ողջ հասարակությանը: Այս պատճառներից ելնելով՝ արտահայտման ազատությունն այն իրավունքներից է, որը որոշակի հանգամանքներում կարող է/պետք է սահմանափակվի: Պետք է կարողանալ գտնել հավասարակշռություն մարդկանց՝ իրենց մտքերն արտահայտելու հնարավորություն տալու և մյուսների իրավունքները պաշտպանելու կամ հասարակությանն ավելի մեծ մտանգներից պաշտպանելու միջև: ՄԻՀՀ հոդված 19-ը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 10-ը (ՄԻԵԿ) պաշտպանում են արտահայտման ազատությունը: Հոդված 10-ը սահմանում է այն պայմանները, որոնք պետք է առկա լինեն, եթե կառավարությունը ցանկանում է սահմանափակել ազատ խոսքը կամ պատժել մարդկանց անընդունելի արտահայտումների համար: Հակառակ դեպքում, ցանկացած սահմանափակում կհամարվի խախտում: Այնուամենայնիվ, այդ պայմանները որոշակի ճկունության հնարավորություն

են տալիս՝ դրանք ավելի լայն մեկնաբանելու տեսանկյունից, ինչը նշանակում է, որ տարբեր երկրներ կարող են գտնել իրենց մտահոգություններին անդրադառնալու ամենապատշաճ եղանակը:

Ի՞ՆՉ Է ԱՍՎՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ

Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

ՄԻԵԿ, հոդված 10, պարբերություն 1

Նախ և առաջ, Կոնվենցիան սահմանում է, որ արտահայտման ազատությունը կարևոր է և պետք է պաշտպանվի:

Բացի այդ, ըստ Կոնվենցիայի՝ արտահայտման ազատությունն իր մեջ ներառում է՝

- սեփական կարծիք ունենալու ազատությունը,
- «առանց պետության միջամտության» տեղեկություններ ստանալու ազատությունը,
- «առանց պետության միջամտության» տեղեկություններ տարածելու ազատությունը:

Երրորդը՝ որոշակի հանգամանքներում, եթե կա «հասարակության համար հրատապ անհրաժեշտություն» հոդված 10-ը հնարավորություն է տալիս որոշակիորեն սահմանափակել արտահայտման ազատությունը: Սակայն, ցանկացած սահմանափակում պետք է անհրաժեշտ լինի՝ որոշակի սոցիալական կարիքներից ելնելով, և պետք է համաչափ լինի այդ կարիքին, այլ կերպ ասած՝ չպետք է լինի անհամաչափ:

ՀՈԴՎԱԾ 10

Ֆերեթն ընդդեմ Բելգիայի

Նախընտրական քարոզարշավի ժամանակ տարածվում էին թռուցիկներ, որոնցից մի մասը պարունակում էր հետևյալ կոչերը. «Ոտքի՛ կանգնեք Բելգիայի իսլամացման դեմ», «Դադարեցրե՛ք կեղծ ինտեգրացիոն քաղաքականությունը» և «ՏՈՒՆ ուղարկեք ոչ եվրոպացի աշխատանք փնտրողներին»: Սա պատճառ հանդիսացավ, որպեսզի բելգիական խորհրդարանի պատգամավոր և Ազգային Ճակատ **(Nationaal Front)** կուսակցության նախագահը դատապարտվի ռասայական խտրականություն հրահարելու մեղադրանքով:

Նա բողոք ներկայացրեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան, պնդելով, որ ոտնահարվել է իր արտահայտման ազատության իրավունքը: Դատարանը վճռեց, որ արտահայտման ազատությունը չի ոտնահարվել: Դատարանը նաև որոշեց, որ նրա ուղերձը, հաշվի առնելով, որ այն շրջանառության մեջ էր մտել նախընտրական քարոզարշավի ժամանակ, ակնհայտորեն պարունակում էր ռասայական ատելություն հրահրելու հատկանիշներ:

«Համաչափության» պահանջը նշանակում է, որ գրաքննությունը, որը համարվում է ընդհանուր սահմանափակում, համատեղելի չէ մարդկանց ազատ արտահայտվելու իրավունքի հետ:

Իրավիճակները պետք է գնահատվեն, հաշվի առնելով դրանց բոլոր հանգամանքները, և այն դեպքերում, երբ դա հնարավոր է, արտահայտումը պետք թույլատրվի: Անհրաժեշտ է գտնել այլընտրանքային մեթոդներ այն մարդկանց պաշտպանելու համար, ում վրա կարող են վնասակար ազդեցություն թողնել որոշակի՝ առանձին վերցված դեպքեր:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ (ՄԻԵԿ), ՀՈԴՎԱԾ 17

Բացի արտահայտման ազատության իրավունքից, ՄԻԵԿ-ում կա նաև հոդված, որի համաձայն՝ արգելվում է որևէ գործողություն «որն ուղղված է այս Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության անտեսմանը»: Սա կարող է ներառել նաև ատելության խոսքի (և ատելության խոսքի առցանց դրսևորումների) ծայրահեղ դեպքերը:

Հոդված 17-ը նշանակում է, որ որոշակի խմբերի նկատմամբ բռնության կոչերով հանդես եկող որևէ անձ չի կարող վկայակոչել արտահայտման ազատության իրավունքը: Չկա այնպիսի իրավունք, որը կընձեռի մարդկանց նկատմամբ բռնություն կիրառելու կամ սպանելու կոչ անելու հնարավորություն:

ՀՈԴՎԱԾ 17

Նորվուդն ընդդեմ Միացյալ Թագավորության

Միացյալ Թագավորության քաղաքացիներից մեկը դատապարտվել էր կրոնական խմբի նկատմամբ թշնամանք դրսևորելու համար: Նա իր պատուհանին էր փակցրել մի մեծ պաստառ, որի վրա պատկերված էր Բրիտանիայի Ազգային կուսակցության մեծ դրոշը, այրվող «երկվորյակ աշտարակները» և գրված էր «Իսլամը պետք է կորչի Մեծ Բրիտանիայից. պաշտպանե՛նք բրիտանացի ժողովրդին» կոչը, ինչպես նաև կիսալուսնի և աստղի խորհրդանշանները՝ արգելող նշանի տակ: Նա բողոք էր ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պնդելով, որ ոտնահարվել է իր արտահայտման ազատության իրավունքը: Եվրոպական դատարանը վճռել էր չբավարարել նրա հայցադիմումը՝ գտնելով, որ նմանօրինակ ընդհանուր, ագրեսիվ հարձակումը մի ամբողջ կրոնական խմբի վրա, կապելով այդ խումբը ահաբեկչության ամենավատ օրինակներից մեկի հետ, անհամատեղելի է Կոնվենցիայով հռչակված և երաշխավորվող արժեքների հետ, մասնավորապես՝ հանդուրժողականության, սոցիալական խաղաղության և խտրականության բացառման և, որ հայցվորը չի կարող պաշտպանվել հոդված 10-ով (արտահայտման ազատություն):

Գարոդին ընդդեմ Ֆրանսիայի

«Ժամանակակից Իսրայելի միֆերը» գրքի հեղինակը դատապարտվել էր Ֆրանսիայում՝ մարդկության դեմ հանցագործությունները ժխտելու, մարդկանց մի ամբողջ խմբին, տվյալ դեպքում՝ հրեական համայնքին, հանրայնորեն զրպարտելու և ռասայական ատելություն հրահրելու մեղադրանքով: Նա պնդում էր, որ խախտվել է իր արտահայտման ազատության իրավունքը: Եվրոպական դատարանը մերժել էր հայցադիմումը՝ համարելով, որ հայցվորի մեկնաբանությունները հավասարազոր էին Հոլոքոստի ժխտման, և նշել էր, որ հստակորեն

պարզված և հաստատված պատմական իրադարձությունների ճշմարտացիությունը վիճարկելը գիտական կամ պատմական հետազոտություն համարվել չի կարող. իրական մտադրությունը Նացիոնալ սոցիալիստական ռեժիմի արդարացումն էր և զոհերին պատմական փաստերի խեղաթյուրման մեջ մեղադրելը: Այդպիսով, նրա գործողություններն ակնհայտորեն անհամատեղելի էին այն հիմնարար արժեքների հետ, որոնք խթանում է Եվրոպական կոնվենցիան: Դատարանը կիրառել էր հոդված 17-ը (իրավունքների չարաշահման արգելում) և որոշել, որ հայցվորը չէր կարող վկայակոչել հոդված 10-ը (արտահայտման ազատություն):

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԿԻՐԱՌՈՒՄ ՀՈԴՎԱԾ 10-Ը

Կան իրավիճակներ, երբ կառավարությունները պարտավոր են սահմանափակել արտահայտման ազատությունը (եթե այն վնաս է հասցնում), սակայն, հոդված 10-ը վկայակոչող՝ Եվրոպական դատարան ներկայացվող հայցադիմումները սովորաբար չեն վերաբերում նրան, որ կառավարությունները թերա ցել են նման իրավիճակներում իրենց պարտականությունները կատարելիս: Հակառակը՝ դրանք հիմնականում վերաբերում են այն դեպքերին, երբ, որոշակի խմբերին կամ անհատներին պաշտպանելու հիմնավորմամբ, կառավարությունը դիմել է գործողությունների՝ սահմանափակելով արտահայտման ազատությունը, և երբ այդ սահմանափակումը ենթադրաբար անհամաչափ է: Արտահայտման ազատության իրավունքը կարևոր է ատելության խոսքի տեսանկյունից, քանի որ, նախ՝ օգնում է մեզ հասկանալ, թե ինչու անհանդուրժողականության որոշ (թեթև) ձևեր, այնուամենայնիվ, պետք է «հանդուրժվեն» ժողովրդավարական հասարակության մեջ և, նաև, քանի որ այդ իրավունքը ինչոր չափով սահմանում է, թե ինչ է կարելի ասել, իսկ ինչը՝ ոչ:

Ատելության խոսքի զոհերն, իրենց մտահոգությունները ներկայացնելիս, պետք է փոր ձեն հիմնավորել դրանք այլ հոդվածներով, օրինակ՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքը կամ անձնական կյանքի իրավունքը:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՑԱՆՑԸ

Մարդու իրավունքների նկատմամբ վիրտուալ աշխարհում հարգանքի ձևավորումը դեռևս զարգացման փուլում է, և ատելության խոսքի առցանց դրսևորման խնդիրը ավելի հրատապ է դարձնում այս հարցի շուրջ բանավեճի և քննարկումների անհրաժեշտությունը: Եվրոպայի խորհուրդը հրատարակել է համացանցի օգտատերերի համար մարդու իրավունքների ուղեցույցը՝ օգնելու հասկանալ նրանց իրենց առցանց իրավունքները: Ուղեցույցը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վրա և հիշեցնում է, որ մարդու իրավուքները կիրառվում են առցանց և անցանց: Ուղեցույցը մանրամասն բացատրում է նաև թե ինչպես են ազատ արտահայտման իրավունքն ու տեղեկատվությունը կիրառվում համացանցում: Մարդու իրավունքները և համացանցը (էջ 200-201) բաժնում կարող եք ծանոթանալ հավելյալ տեղեկությունների վիրտուալ տարածքում մարդու իրավունքները պաշտպանող օրենքների կիրառման մասին: Ինչ վերաբերում է արտահայտման ազատությանը, ստորև ներկայացված են որոշ առանցքային հարցեր:

ՀԱՄԱՑԱՆՑԻ «ՈՉ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ» ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ծառայություններ տրամադրողների և ամենամեծ տարածում ունեցող սոցիալական ցանցերի և որոնողական համակարգերի կայքերը գտնվում են ԱՄՆ-ում կամ իրավական տեսանկյունից ավելի քիչ վերահսկողական մեխանիզմներ ունեցող երկրներում: ԱՄՆ-ի դիրքորոշումն արտահայտման ազատության նկատմամբ տարբերվում է Մարդու իրավունքների մասին եվրոպական օրենքներում արտացոլված մոտեցումներից, մասնավորապես այն մեկնաբանություններից, որ այս օրենքներին տալիս է Եվրոպական դատարանը: Արտահայտման ազատությունը սահմանափակելը համաձայն ԱՄՆ օրենքների շատ ավելի դժվար է, նույնիսկ եթե արտահայտությունն ակնհայտորեն ռասիստական է կամ պարունակում է բռնության կոչեր: Սա նշանակում է, որ հեշտ չէ հեռացնել ատելություն տարածող այն կայքերը, որոնց սերվերները տեղակայված են ԱՄՆ-ում, իսկ ատելություն քարոզողներին միշտ չէ, որ հնարավոր է հետապնդել դատական կարգով:

ԿԻԲԵՐՏԱՐԱԾՔԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համացանցն ահռելի տարածք է, որի մեծ մասն ուղղորդվում է օգտատերերի պահանջներով և ցանկություններով և ենթակա չէ արտաքին վերահսկողության կամ կառավարման: Նույնիսկ երբ կա որևէ կայք հեռացնելու հիմնավոր պատճառ, (օրինակ՝ եթե այդ կայքը բռնություն է քարոզում որոշակի համայնքի նկատմամբ) կայքի սեփականատերերի կամ կառավարիչների համար համեմատաբար հեշտ է այն վերաստեղծել նոր տեղում և նորից տեղադրել նույն բովանդակությունը:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Շատերը համարում են, որ համացանցի ամենամեծ առավելությունն այն է, որ մարդիկ հեշտությամբ կարող են հաղորդակցվել: Ավելի խիստ վերահսկողությունն ու գրաքննությունը միգուցե արդյունավետ լինեն վիրտուալ տարածքում ատելության խոսքի ծավալը նվազեցնելու առումով, սակայն, նման համակարգի ներմուծումը բացասական ազդեցություն կունենա այն տեսանկյունից, որ կսահմանափակի համացանցը մարդկանց համար արդեն ծանոթ ձևով օգտագործելու հնարավորությունը և կթուլացնի համացանցի կարևորագույն դերը ՝ որպես բանավեճի և քննարկումների ազատ հարթակ:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ. ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ

Այն հանգամանքը, որ կայքերը հիմնականում անհատների կամ մասնավոր ընկերությունների «սեփականություն» են համարվում, նշանակում է, որ եթե չլինեն ատելության խոսքի դրսևորումներին և բռնության կոչերին արձագանքելու մասին օրենքներ, նրանք կկարողանան թույլատրել ցանկացած բովանդակություն՝ ըստ իրենց ցանկության: Մարդու իրավունքները օրենքներ են, որոնց պետք է հետևեն կառավարությունները. մասնավոր ընկերությունները պետք է ենթարկվեն միայն այն օրենքներին, որոնց անհրաժեշտությունը կորոշի կառավարությունը:

Իհարկե, մասնավոր ընկերությունները ենթարկվում են նաև «շուկայական օրենքներին» և հենց իրենց ծառայություններից օգտվողների ճնշումներն են, որ կարող են բերել նրանց որդեգրած

քաղաքականությունների փոփոխությունների: Այդիսկ պատճառով, չափազանց կարևոր է, որպեսզի երիտասարդներն ատելության խոսքի առցանց դրսևորումների վերաբերյալ իրենց տեսակետներն ու դիրքորոշումը կարողանան հասցնել նրանց, ովքեր պատասխանատու են իրենց կողմից օգտագործվող կայքերի համար: Միևնույն ժամանակ, հաջողված առցանց քարոզարշավների փորձը, ինչպես օրինակ՝ 2013թ. մի շարք ՀԿների կողմից իրականացված քարոզարշավը, որի նպատակն էր հեռացնել ֆեյսբուքից այն բովանդակությունը, որն արդարացնում էր կանանց նկատմամբ բռնությունը, ցույց տվեց, որ համացանցում մասնավոր և հանրային տարածքների միջև սահմանները հետզհետե ավելի աղոտ են դառնում: Ավելին, նման քարոզարշավները ցույց են տալիս, որ պետությունները չեն կարող ապավինել միայն ինքնակարգավորման վրա: Առցանց տարածքը նույնպես հանրային տարածք է:

5.4 ՌԱՍԻԶՄ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ռասայական խտրականություն» հասկացությունը նշանակում է ռասայական, մաշկի գույնի, դասակարգային, ազգային կամ էթնիկ ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների։

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայի 1-ին հոդված

ԿԱՊԸ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԵՏ

Ատելության խոսքը գրեթե միշտ ռասիստական կամ խտրական վերաբերմունքի արդյունք է: Բացի այդ, ինքնին այն միշտ ունի խտրական բնույթ:

Խտրականությունը միշտ դիտարկվում է որպես հավասարության «հականիշ»: Համաձայն մարդու իրավունքների մասին օրենքի՝ բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ: Երբ որևէ մեկի իրավունքները ոտնահարվում են միայն այն պատճառով, թե ինչպես են նրանց վերբերվում այլ մարդիկ կամ ինչպես են իրենք նրանց տեսնում, դա խտրականություն է: Որևէ մեկին առցանց կամ իրական կյանքում վիրավորելը, որովհետև նա «օտար» է, հաշմանդամություն ունեցող անձ, նույնասեռական, կին կամ նմանատիպ որևէ այլ պատճառով համարվում է խտրականություն:

Խտրականությունը հաճախ ունի ռասիստական բնույթ: Երբ ատելության խոսքը թի րախավորում է որևէ մեկին «ռասայական» պատկանելության, ազգային կամ էթնիկ ծագման հիմքով սա միաժամանակ և՛ խտրականության, և՛ ռասիզմի օրինակ է:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատելության խոսքին պետք է անդրադառնալ ոչ միայն այն ժամանակ, երբ այն արդեն արտահայտվում է, այլ դեռևս ձևավորման փուլում, այլ կերպ ասած՝ վերաբերմունքի մակարդակում: Ատելության խոսքը սնվում է ռասիստական վերաբերմունքից և բացասական կարծրատիպերից և ավելի մեծ ծավալներ ընդունում՝ իր հերթին ավելի խորացնելով բացասական կարծրատիպերն

ու վերաբերմունքը: Եթե ատելության խոսքը չստանա պատշաճ արձագանք, ապա այն հետադարձ ազդեցություն կունենա հասարակության վրա՝ ավելի արմատա վորելով բացասական կարծրատիպերը և բարձրացնելով հետագայում վիավորական դրսևորումների ի հայտ գալու հավանականությունը, այդ թվում՝ նաև ֆիզիկական բռնությունը: Բազմիցս արձանագրվել է, որ մարդու իրավունքների լայնածավալ խախտումներին, որոնց թվին են պատկանում օրինակ՝ ցեղասպանությունը կամ էթնիկ զտումները, հաճախ նախորդում կամ ուղեկցում է ատելության խոսքը:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

Կարծրատիպերը որոշակի խմբերի մասին տարածված համոզմունքներն են կամ պատկերացումները, որոնք կարող են լինել դրական կամ բացասական (կամ չեզոք): Չնայած նրա, որ որոշ դեպքերում կարծրատիպերն օգտակար են, այնուամենայնիվ, եթե դրանք՝ առանց որևէ համապատասխանեցումների կիրառվում են անհատների նկատմամբ կամ եթե դրանցից ելնելով ձևավորվում է որոշակիորեն տարբերվող վերաբերմունք կամ վարքագիծ, ապա կարծրատիպերը կարող են վնաս հասցնել: Կարծրատիպերն ընդհանրացումներ են և չեն կարող հավասարապես ճիշտ լինել բոլոր առանձին դեպքերի համար: Կարծրատիպերի օրինակներ են՝ «տղամարդիկ ավելի ուժեղ են, քան կանայք», «ֆուտբոլիստներն ավելի արագ են վազում, քան մյուս մարդիկ», «բոլոր կարապները սպիտակ են» և այլն:

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐ

Նախապաշարմունքը կարծրատիպի տարատեսակ է, որն իր մեջ պարունակում է գնահատական կամ կարծիք: Չեզոք համարվող բազմաթիվ կարծրատիպեր իրականում պարունակում են կարծիքի տարր: Օրինակ՝ «կանայք համակարգչային խաղեր լավ չեն խաղում» արտահայտությունը, թվում է, թե փաստի արձանագրում է, բայց իրականում սա կանանց տեխնիկական կարողությունների գնահատականն է:

Նույնիսկ երբ թվում է, թե կարծրատիպը կամ նախապաշարմունքը դրական է, այն գրեթե միշտ ունի բացասական երանգ: «Ավստրալացիներն աշխարհի ամենամեծահոգի մարդիկ են» պնդումը դրական է ավստրալացիների համար, բայց այն նաև կարծիք է պարունակում, որ մյուս երկրների մարդիկ այդքան մեծահոգի չեն: «Աֆրիկացիներն ուժեղ են սպորտի մեջ» արտահայտությունը կարող է մեկնաբանվել նաև «Աֆրիկացիները միայն սպորտի մեջ են ուժեղ»: Ազգայնականությունն ու հայրենասիրությունը կարող են իրենց էությամբ դրական լինել, սակայն, դրանք հեշտությամբ կարող են վերածվել ռասիզմի:



ՌԱՍԻԶՄ

Երբ կարծրատիպի հիմքում ընկած է որևէ մեկի մաշկի գույնը կամ ազգային կամ էթնիկ ծագումը, անկախ դրական կամ բացասական լինելուց, միևնույն է կարող է ռասիստական լինել: Ռասիզմը գաղափարախոսություն է, որը ենթադրում է խտրական և վիրավորական վերաբերմունք որոշակի մարդկանց նկատմամբ՝ նրանց երևակայական «ստորադասության» հիման վրա: Անհրաժեշտ է շեշ տել, որ «ռասան» այժմ համարվում է ոչ թե կենսաբանական, այլ սոցիալական դասակարգում: Չեն բացահայտվել այնպիսի ֆիզիկական կամ գենոտիպային հատկանիշներ, որոնք հատուկ են մեկ «ռասային» և բացակայում են մյուսներում:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ որոշակի խմբի նկատմամբ բացասական վերաբերմունքի արդյունքում այդ խումբն անկարող է կամ ավելի քիչ է կարող օգտվել իր մարդու իրավունքներից, դա համարվում է խտրականություն:

Խտրականությունն ինքնին, մարդու իրավունքների ոտնահարում է և կարող է լինել կամ ռասիստա կան վերաբերմունքի արդյունք, կամ ռասիստական բնույթ չունեցող, սակայն, անմիջական զոհերի և հասարակության համար՝ իրենց հետևանքների առումով, նույնքան բացասական նախապաշար մունքների հետևանք:

ՄԻԱՎՈՐԵԼՈՎ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ խմբի կամ անձի դեմ ապօրինի գործողություններն են, որոնց հիմքում ընկած են նրանց ինքնության վերաբերյալ ձևավորված նախապաշարմունքները:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ՝ բացասական արտահայտություն է անձի կամ խմբի մասին, որի հիմքում հաճախ ընկած են նախապաշարմունքներ, և որոնք տարածում են, հրահրում, խրախուսում կամ արդարացնում ռասայական ատելությունը և անհանդուրժողականությունը: Առանձին վերցրած դրվագները կարող են լինել կամ չլինել հանցանք՝ կախված տվյալ երկրի օրենքներից և արտահայտության համատեքստից:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ցանկացած, այդ թվում ոչ ռասայական բնույթի նախապաշարմունքների արդյունքում անարդար վերաբերմունքն է:

ՌԱՍԻԶՄԸ՝ «ռասսայի», էթնիկ պատկանելության կամ դրանց հետ առնչվող ցանկացած այլ բնորոշման հիման վրա նախապաշարմունքն է, որի արդյունքում հաճախ դրսևորվում է անարդար վերաբերմունք:

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔԸ՝ հիմնականում բացասական գնահատական պարունակող ընդհանրացումն է այլ մարդկանց կամ սոցիալական խմբերի մասին:

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ՝ ընդհանրացումներ են մարդկանց խմբերի մասին, որոնք կարող են պարունակել կամ չպարունակել գնահատական:



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը և հավասար ու անօտարելի իրավունքներն աշխարհում ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբան

Ամեն ոք ունի այս Հռչակագրում բերված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ խտրության՝ հիմնված ցեղային, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի վրա:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 2

Խտրականությունը, ինչպես և ռասիզմը, մարդու իրավունքների խախտում է և արգելված է մարդու իրավունքների մասին գրեթե բոլոր հիմնարար փաստաթղթերով: Որոշ խմբեր կարող են խտրականությունից պաշտպանված լինել նաև հատուկ ազգային կամ միջազգային օրենքներով:

Որո՞նք են ձեր երկրում հակախտրականության գործող օրենքները: Արդյոք ձեր կառավարությունը ստորագրե՞լ է ՄԻԵԿ-ի 12-րդ արձանագրությունը:

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի

(ՄԻԵԿ) հոդված 14-ն արգելում է ցանկացած խտրականություն կապված ցանկացած իրավունքի հետ և Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունները պարտավոր են հետևել տրված պահանջին:

- Բազմաթիվ անդամ-պետություններ ստորագրել են խտրականության արգելքների ավելի լայն շրջանակ ներառող ՄԻԵԿ արձանագրությունը ((կամընտրական) Արձանագրություն 12): Այն արգելում է խտրականությունը բոլոր օրենքների տեսանկյունից, այլ ոչ միայն նրանց, որ կապված են Կոնվենցիայում ներառված իրավունքների հետ:
- Կան նաև մարդու իրավունքների մասին այլ համաձայնագրեր, ինչպես՝ եվրոպական, այնպես էլ ՄԱԿի մակարդակներում, որոնք անդրադառնում են որոշակի խմբերի նկատմամբ խտրականության դրսևորումներին, քանի որ այդ խմբերն ավելի խոցելի են, ինչպես օրինակ՝ կանայք, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, տարբեր ազգային և էթնիկ խմբերի ներկայացուցիչները:
- Բազմաթիվ երկրներ ունեն նաև ազգային օրենքներ, որոնք որոշակի կամ բոլոր խմբերին պաշտպանում են խտրականությունից:

5.5 ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԵՏ

Ատելության խոսքը նյութականանում է այն ժամանակ միայն, երբ մարդիկ կարծում են, որ ինչ-որ բան գիտեն թիրախ խմբի կամ անհատի մասին: Բացարձակապես անհայտ մարդիկ չեն դառնում ատելության խոսքի թիրախ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ «անանունությունը» նույնականացվում է որոշակի «անձնական/մարդկային» հատկանիշների հետ: Բազմաթիվ խմբերի համար, իրենց ինքնության մասին առանցքային բնորոշումների բացահայտ ներկայացումը՝ հեշտությամբ վերածում է նրանց ատելության խոսքի թիրախների: Այսպես լինում է կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, էթնիկ փոքրամասնությունների և այլ խմբերի ներկայացուցիչների դեպքում: Եթե որևէ մեկը պատկանում է նման թիրախային խմբի, իրենց մասին տեղեկությունների առցանց տիրույթում և իրական կյանքում բացահայտումը կարող է բերել անվտանգության հետ կապված խնդիրների:

Մասնավոր կամ անձնական տեղեկությունները կարող են վտանգավոր լինել կիբերբուլինգի և ատելության խոսքի առցանց դրսևորումների տեսանկյունից: Բազմաթիվ մարդիկ իրենց մասին անձնական տեղեկություններ են հրապարակում առցանց, այդ թվում՝ անձնական լուսանկարներ, տեղեկություններ հարաբերությունների, բնակության կամ ուսումնառության վայրերի մասին: Եթե նրանք դառնան կիբերբուլինգի թիրախ, նման տեղեկությունները կարող են օգտագործվել նրանց վնաս պատճառելու համար:

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԸ ՎԻՐՏՈՒԱԼ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Համացանցը հանրային տարածք է, այնպես, ինչպես փողոցը կամ առևտրի կենտրոնը. Մեր «շուրջը» կան մարդիկ, ովքեր տեսնում են, թե ինչ ենք մենք անում: Միևնույն ժամանակ, վիրտուալ աշխարհում կյանքն ունի որոշակի հատկություններ, որոնց պատճառով մասնավոր կյանքի պաշտպանությունն ավելի բարդ է, քան փողոցում:

Փողոցում մենք հիմնականում տեղյակ ենք, որ այլ մարդիկ մեզ տեսնում են կամ կարող են տեսնել: Ինչ վերաբերվում է համացանցին, ապա այստեղ շատ ավելի բարդ է գիտակցելը, որ մեզ «նայում են» և դրանից էլ բարդ է հասկանալ, թե ինչ կարող ենք անել այդ «հայացքներից» պաշտպանվելու համար: Անտեղյակությունը հաճախ մարդկանց խոցելի է դարձնում ինչպես ֆիզիկական, այնպես էլ

հոգեբանական սպառնալիքների և շահագործման առումով: Նվաստացնողների, ահաբեկողների, սպառնացողների կամ շահագործողների համար շատ ավելի հեշտ է իրականացնել այդ ամենը, եթե նրանք կարողանան տեղեկություններ հայթայթել իրենց «զոհերի» մասին: Հետևաբար, մասնավոր կյանքի պաշտպանության խնդիրները հատկապես կարևոր են կիբերբուլինգի տեսանկյունից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

- Երիտասարդները պետք է հիշեն, որ համացանցը հանրային տարածք է, որտեղ մարդիկ կարող են տեսնել, թե իրենք ինչ են անում և թե իրենք ինչպիսին են, նույնիսկ այն ժամանակ, երբ իրենց թվում է, թե դա այդպես չէ:
- Համացանցն ունի իր վտանգները. կան մարդիկ, ովքեր կարող են օգտագործել անձնական տվյալները կամ տեղեկությունները հանցագործության կամ վնաս պատճառելու նպատակով: Երիտասարդները պետք է փորձեն նվազեցնել դրա հավանականությունը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով:
- Այն ամենն, ինչը հայտնվում է համացանցում, մնում է այնտեղ ընդմիշտ: Երիտասարդները պետք է գիտակցեն դա և մտածեն, արդյոք նրանք հետագայում չեն զղջա իրենց մասնավոր կյանքի մանրամասներն այսօր հրապարակելու համար:
- Երիտասարդները պետք է սովորեն հարգել մյուսների մասնավոր կյանքն ու անվտանգությունը: Սա ոչ միայն նշանակում է, որ նրանք չպետք է վիրավորական կամ վնաս հասցնող վարքագիծ դրսևորեն, այլ նաև պետք է ուշադիր լինեն, երբ տարածում են այլ մարդկանց վերաբերող տեղեկություններ, որոնք կարող են օգտագործվել վերջիններիս վնաս հասցնելու համար:
- Կան մարդու իրավունքների պաշտպանության որոշակի միջոցներ, որոնք կիրառելի են այն իրավիճակներում, երբ այլ մարդիկ կամ օգտագործում են մեր մասին անձնական տեղեկությունները, որի իրավունքը մենք նրանց չենք տվել, կամ մեր մասին առցանց տեղադրում են տեղեկություններ, որոնք վտանգում են մեր անձնական կյանքի անձեռնմխելիությունը:
- Կան բազմաթիվ կազմակերպություններ և պետական հաստատություններ, որոնք կարող են օգնել նման իրավիճակներում՝ հատկապես, երբ խոսքը գնում է երիտասարդների մասին: Երիտասարդները պետք է չվարանեն և տեղեկացնեն համապատասխան հաստատություններին, եթե նրանց վիրավորում կամ շահագործում են առցանց:
- Անանունություն չկա: Առցանց կատարվող որևէ գործողության հեղինակին հնարավոր է հայտնաբերել: Չկա նաև անպատժելիություն. կիբերբուլինգի և ատելության խոսքի առցանց բազմաթիվ դրսևորումներ պատժվում են օրենքով:

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ, ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

Հոդված 8, Մաս 1, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

1. Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության, կամ իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության:
2. Երեխան նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի կողմից պաշտպանության իրավունք ունի:

Հոդված 16, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անձնական կյանքի իրավունքը պաշտպանված է մարդու իրավունքների մասին մի շարք համաձայնագրերով: «Անձնական կյանք» հասկացությունն, ըստ մարդու իրավունքների մասին օրենքների՝ շատ ավելին է քան ընդամենը անձնական տարածքը և ներառում է մարդու անձնական կյանքի այն ոլորտները, որոնք առավել կարևոր են նրա ինքնության և արժանապատվության տեսանկյունից: Կյանքի այս ոլորտները պետք է ազատ լինեն պետական մարմինների միջամտությունից, և պետությունը պետք է պաշտպանի մեզ նաև այլ անձանց միջամտությունից: Հոդված 8ը վկայակոչող հայցադիմումների մեծ մասը քննելիս՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջնորդվում է անձի «ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության» գաղափարով: **Սա վերաբերում է նաև առցանց տիրույթում կյանքին և հարաբերություններին:**

Կառավարությունները պարտավոր են ապահովել, որպեսզի մարդիկ կարողանան հանգիստ ապրել իրենց կյանքով՝ առաջնորդվելով իրենց անձնական նախասիրություններով, առանց ստիպելու նրանց համապատասխանել բոլորի համար միանման կաղապարներին կամ հետապնդելու նրանց մյուսներից տարբերվող պահանջմունքներ ունենալու համար: Կարևորն այն է, թե ինչպես են կառավարության գործողությունները կամ թերացումներն անդրադառնում անհատների վրա. մեր անձնական կյանքը մեր անձնական խնդիրն է:

Միևնույն ժամանակ, անձնական կյանքի իրավունքը «բացարձակ» իրավունք չէ, այլ կերպ ասած՝ պետական մարմինները պետք է հավասարակշռեն մեկ անձի անձնական կյանքի իրավունքը հասարակության այլ պահանջների կամ այլ անհատների իրավունքների հետ: Թեև հազվադեպ, սակայն լինում են իրավիճակներ, երբ պետական մարմինների կողմից մարդկանց անձնական տվյալների օգտագործումը կարող է արդարացված լինել, եթե դա արվում է այլ

անձանց պաշտպանելու համար: Երբեմն, կառավարությունը կարող է որոշել չպաշտպանել որևէ մեկի անձնական կյանքի իրավունքը՝ կամ որովհետև վտանգն այդ անձի համար էական չէ, կամ որովհետև մյուսները դրա համար շատ բարձր գին են վճարում:

Այս երկու կողմերի միջև հավասարակշռված լուծում գտնելը հեշտ չէ: Կոպլանդն ընդդեմ Միացյալ Թագավորության գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետք է որոշեր, թե արդյոք իր աշխատակիցների բոլոր էլ.նամակները և հեռախոսային խոսակցությունները վերահսկելու մասին որոշում կայացնելով, բարձրագույն կրթական հաստատությունը ոտնահարել է հոդված 8-ը: Դատարանը որոշեց, որ մասնավոր կյանքի իրավունքը ոտնահարվել էր:

Կ. Յուն ընդդեմ Ֆինլանդիայի գործում դատարանը վճռել էր, որ երեխայի անձնական կյանքը և անվտանգությունն ավելի կարևոր էին քան այն մարդու անձնական կյանքի իրավունքի պաշտպանությունը, ով այդ երեխայի անունից կեղծ հայտարարություն էր հրապարակել:

Առհասարակ, ինչպես և մարդու բոլոր մյուս իրավունքների պարագայում, անհատների անձնական կյանքը և արժանապատվությունը պետության կամ այլ կողմերի միջամտությունից պաշտպանելու բեռը պետական մարմինների վրա է: Սա հավասարապես վերաբերում է և՛ վիրտուալ, և՛ ոչ վիրտուալ տիրույթներին:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Գաղտնիությունն «անձնական կյանքի» առանձնահատուկ բաղադրիչներից մեկն է և նույնպես պաշտպանված է ՄԻԵԿ-ի հոդված 8-ով: Գաղտնիությունը տարածվում է մեր ֆիզիկական, սոցիալական և զգայական կյանքի այն ոլորտների վրա, որոնք մենք չենք ցանկանում կիսել հանրության հետ: Եվ եթե մենք չենք տալիս մեր հստակ արտահայտված թույլտվությունը, կամ եթե չկան՝ այլ մարդկանց իրավունքները պաշտպանելու նպատակով պայմանավորված հիմնավոր պատճառներ, ապա, այն անձնական տեղեկությունները, որ մենք ցանկանում ենք գաղտնի պահել, պետք է մնան գաղտնի:

Որևէ մեկը կամ որևէ հաստատություն չունեն իրավունք մեր անձնական կյանքի մասին իմանալ այն, ինչ մենք չենք ցանկանում բացահայտել:

Սակայն, համացանցի ֆորումների և կայքերի նախնական կարգավորումները միշտ չէ, որ հասկանալի են կամ այնպես են մշակված, որ նախևառաջ ապահովեն օգտատերերի տվյալների գաղտնիությունը: Տվյալների պահպանումը (թե՛ ներկայացված, և թե՛ պահպանվող տվյալները) և դրանց մշակումը նույնպես անձնական գաղտնիությունը հարգելու կարևոր տարր է: Որպեսզի կարողանանք ապահովել մեր անձնական տվյալների գաղտնիությունն, անհրաժեշտ է լինել զգոն և ուշադիր, և ընդհանուր պատկերացում ունենալ հնարավոր վտանգների մասին:

Դրա հետ կապված Եվրոպայի խորհուրդը 2016 թվականին ընդունել է անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում ֆիզիկական անձանց պաշտպանության մասին

Կոնվենցիայի արդիականացված տարբերակը (Կոնվենցիա 108+)։ Եվրոպական միությունն ընդունել է ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգը (GDPR)՝ նպատակ ունենալով անձանց հնարավորություն տրամադրել վերահսկելու իրենց անձնական տվյալները, հեշտացնելու կառավարող միջավայրը միջազգային բիզնեսի համար և միասնականացնել դրույթները՝ կապված անձնական տվյալների մշակման հետ։ Կիրառվելով այն իրավիճակների նկատմամբ, երբ տվյալների հսկողը, մշակողը կամ տվյալների առարկան (անձնական) գտնվում են Եվրոպական միության և Եվրոպայի տնտեսական տարածքում, GDPR-ն մեծ ազդեցություն ունի գլոբալ մակարդակում։ Կանոնակարգի համաձայն, մարդիկ պետք է տան իրենց համաձայնությունը տվյալների մշակման համար և կարողանան ետ վերցնել այդ համաձայնությունը ցանկացած ժամանակ։ Բացի այդ, Կանոնակարգը սահմանում է իրավունք տվյալներ և տեղեկություններ ստանալու առ այն, թե ինչպես են մշակվում և տարածվում այդ տվյալները, տվյալների փոխանցումը պահանջելու իրավունք և իրավունք՝ մերժելու անձնական տեղեկությունների տրամադրումը ստուգման, վաճառքի կամ այլ՝ ծառայությունների հետ չկապված նկատառումներով, ինչպես նաև՝ տվյալները վերացնելու իրավունք, երբ անձինք կարող են պահանջել վերացնել իրենց անձնական տվյալները տարբեր հիմքերով, երեսուն օրվա ընթացքում։ Թե Եվրոպայի խորհրդի 108+կոնվենցիան և թե GDPR-ը սահմանում են պահանջներ, որոնց համաձայն տվյալներ մշակողները պետք է նախատեսեն անձնական տվյալների պաշտպանության պայմաններն արտադրանք/ծառայություն ստեղծելու գործընթացում և ապահովեն անձնական տվյալների բարձր մակարդակի պաշտպանություն։

Անձնական տվյալների գաղտնիության հետ կապված հարցերը կարևոր են նաև առցանց որոշակի բովանդակություն տարածելու տեսանկյունից։ Երիտասարդները պետք է գիտակցեն, որ կարևոր է ինչպես իրենց, այնպես էլ մյուսների անձնական տվյալների գաղտնիությունը։ Լուսանկարներ, տեսանյութեր, հաղորդագրություններ և այլ տեղեկություններ տարածելու դյուրինությունը կարող է բերել անփութության և վնաս պատճառել մյուսներին։ Հիմնական ուղերձը, որ երիտասարդները պետք է հասկանան այն է, որ մեկ այլ անձի հետ ուղղակիորեն կապված նյութը կարելի է տարածել միայն, եթե այն արդեն հանրային տիրույթում է (և վնասակար կամ վիրավորական չէ) կամ եթե այդ անձը տվել է իր թույլտվությունը նյութը տարածելու համար։

Անհրաժեշտ է նաև նշել, որ առցանց հաղորդակցության ժամանակ նյութն իրականում երբեք գաղտնի չէ։ Էլեկտրոնային նամակները կամ ցանցում տեղադրված որևէ այլ նյութ գրեթե միշտ հասանելի են մյուսների համար։ Եվ եթե որևէ նյութ արդեն տեղադրվել է, ապա այն այլևս հնարավոր չէ ամբողջությամբ հեռացնել վիրտուալ տարածքից։

Թույլ գաղտնաբառերի կամ անվտանգության միջոցների ոչ ադեկվատ կիրառման պատճառով՝ օգտատերերի անձնական էջերի «գաղտնի» տարածքում կամ էլեկտրոնային փոստարկղում տեղադրված նյութը կարող է հասանելի դառնալ ուրիշների համար։ Նույնիսկ ուժեղ գաղտնաբառերն ամբողջությամբ չեն ապահովագրում հակերների կամ պետական անվտանգության գործակալությունների ներխուժումից։ Երիտասարդները պետք է իրազեկված լինեն այս բոլոր վտանգների մասին և սովորեն աչալուրջ ու պատասխանատու վերաբերմունք ցուցաբերել իրենց անձնական կյանքի այն մանրամասները պաշտպանելու համար, որ նրանք չեն ցանկանում կիսել

մյուսների հետ: Նրանք պետք է իմանան նաև, որ եթե ձեռնարկել են անվտանգությունն ապահովելու բոլոր անհրաժեշտ միջոցները, սակայն ինչոր մեկին, այնուամենայնիվ, հաջողվել է ձեռք բերել իրենց անձնական տվյալներից օգտվելու հնարավորություն, ապա այդ գործողությունը համարվում է ապօրինի է և ոտնահարում է նրանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Կիբերբուլինգի մասին բաժնում ներկայացված են որոշ նախազգուշական միջոցներ, որ երիտասարդները կարող են ձեռնարկել, որպեսզի թույլ չտան, որ իրենց անձնական կյանքին վերաբերող տվյալները հայտնվեն հանրային տիրույթում:

5.6 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՀԵՏ

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարության և ատելության խոսքի միջև կապը կարող է դիտարկվել երկու տարբեր տեսանկյուններից: Տպավորություն է ստեղծվում, թե ժողովրդավարությունն ավելի հավանական է դարձնում ատելության խոսքի ի հայտ գալը, կամ, թերևս, դժվարացնում դրա դեմ պայքարը: Սա ավելի լավ ընկալելու համար պատկերացրեք խիստ գրաքննությամբ՝ ոչ ժողովրդավարական հասարակություն. տեսականորեն, նման հասարակության մեջ կարող է հնարավոր լինել ատելության խոսքի առցանց և անցանց դրսևորումների կանխարգելումը: Այն ամենն, ինչ կհամարվի մյուսների համար վիրավորական, կարող է պարզապես արգելվել, և ցանկացած խախտում պատժվել օրենքի ողջ խստությամբ: Սակայն, արտահայտման ազատության բացակայության պատճառով, նման հասարակությունը կունենա բազմաթիվ այլ թերություններ:

Ժողովրդավարական հասարակությունում, որտեղ մարդիկ ազատ են իրենց կարծիքներն արտահայտելու առումով, հավանականությունը մեծ է, որ մենք կլսենք կարծիքներ, որոնց հետ կարող ենք համաձայն չլինել: Դրանց մի մասը կնյարդայնացնի, մի մասը կլինի կոպիտ և անհանգստացնող, մի մասն էլ կարող է հատել թույլատրելիի սահմանը՝ լինելով խիստ վիրավորական և նույնիսկ վտանգավոր: Սահմանափակ ծավալներով ատելության խոսքը, մեր կարծիքներն ազատորեն արտահայտելու հնարավորության անխուսափելի հետևանքն է, որն անհրաժեշտ է հաշվի առնել: Չկա կատարյալ ժողովրդավարություն:

ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միևնույն ժամանակ, ժողովրդավարության և ազատ խոսքի առավելություններից մեկն էլ հենց այն է, որ ատելության խոսքի դեմ պայքարելու համար այն մեզ տալիս է արդյունավետ գործիքներ, որոնք նպաստում են մյուս իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այնպես որ, եթե հարցին նայենք այս տեսանկյունից, ապա ատելության խոսքի դեմ՝ մարդու իրավունքները չոտնահարելով պայքարելու միակ իրատեսական հնարավորությունն առաջարկում է հենց ժողովրդավարությունը:

Պատշաճ կերպով գործող ժողովրդավարական համակարգերում, որտեղ մարդիկ ակտիվ դերակա տարություն ունեն բոլորի կողմից արժևորվող իրավունքներն ու ազատությունները

պաշտպանելու գործում, ատելության խոսքից հասարակության պաշտպանական մեխանիզմները կարող են շատ ավելի կատարելագործված և համապարփակ լինել, քան խիստ գրաքննության կիրառման պարագայում: Եթե ատելության խոսքի «վերահսկումը» և դրա վատագույն դրսևորումներին լուծումներ տալը չդիտարկվի բացառապես որպես կառավարության կամ համացանցի «ոստիկանության» խնդիր, և եթե «վերահսկողությունը» վերածվի սեփական և մյուսների վարքագիծը վերահսկելու, հնարավոր կլինի պահպանել արտահայտման ազատությունը, միևնույն ժամանակ պաշտպանելով մարդկանց վիրավորանքից:

Ատելության խոսքին արդյունավետ արձագանքը կախված է ժողովրդավարական հասարակության առավելությունները, մարտահրավերները և պահանջները գիտակցելու խորությունից, և այն մարդկանց ակտիվ մասնակցությունից, ովքեր ստեղծում են այդ հասարակությունը: Հմտություններից շատերը, որ անհրաժեշտ են արդյունավետ գործող ժողովրդավարության համար, նաև այն հմտություններն են, որոնք անհրաժեշտ են ատելության խոսքի դեմ պայքարելու համար, իսկ բազմազանության և ժողովրդավարական երկխոսության արժեքի գիտակցումը կօգնի նախապատրաստել մասնակիցներին անհանդուրժողականության կամ ատելության տարբեր դրսևորումներին:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

(1) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել իր երկրի կառավարմանը՝ անմիջաբար կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով:

(3) Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իրավազորության հիմքը...

Հոդված 21, ՄԻՀՀ

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա(ՄԻԵԿ), Արձանագրություն 1, Հոդված 3:

Չնայած այն հանգամանքին, որ մարդու իրավունքների մասին համաձայնագրերը միանման պարտավորություններ են ստեղծում աշխարհի բոլոր կառավարությունների համար, սա չի նշանակում, որ այդ բոլոր երկրների օրենսդրությունները և կառավարման համակարգերը նույնպես պետք է միանման լինեն: Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքն ապահովելու համար մարդու իրավունքները տրամադրում են մի շարք տարբեր համակարգեր և եղանակներ:

Միևնույն ժամանակ, ՄԻՀՀ-ի հոդված 21-ը (և ՄԻԵԿ-ի 1-ին լրացուցիչ արձանագրությունը) սահմանում են, որ ոչ բոլոր կառավարման համակարգերն են ընդունելի: Պետությունները

պարտավոր են ապահովել, որպեսզի օրենսդիրները լինեն «ժողովրդի կամքն» արտահայտող ներկայացուցիչներ: Այլ կերպ ասած, մարդու իրավունքների հետ համատեղելի է միայն ժողովրդավարական համակարգը:

Սա մեծապես պայմանավորված է, մարդու իրավունքների հիմնարար արժեքների համար ինքնավարության և մասնակցայնության կարևորությամբ:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարման ժողովրդավարական համակարգը հնարավորություն է տալիս նրանց, ովքեր ուղղակիորեն ներգրավված չեն օրինաստեղծ գործունեության մեջ, որոշակի վերահսկողություն ունենալ այն օրենքների նկատմամբ, համաձայն որոնց պետք է ապրեն: Կապը մարդու իրավունքների հետ ակնհայտ է, քանի որ մարդու իրավունքների էությունը հենց հնարավորությունն է կարողանալ պահպանել անձի ինքնավարությունը, ինչը նշանակում է չենթարկվել կամայական միջամտությունների և ստիպված լինել ապրել մի համակարգի ներքո, որը նպաստավոր չէ մեր հիմնարար պահանջների բավարարման համար:

Այնուամենայնիվ, չնայած իր բոլոր առավելությունների, ժողովրդավարությունը՝ որպես կառավարման համակարգ շատ ավելի խստապահանջ է, քան կառավարման այլ ձևերը: Այն ունի սահմանված պահանջներ, թե ինչ պետք է անենք, և ինչը պետք է հանդուրժենք, ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորենք, եթե համաձայն չենք որոշակի որոշումների կամ դիրքորոշումների հետ: Սա հավասարապես վերաբերում է ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ առանձին անհատների կողմից իրականացվող որոշումներին և գործողություններին: Ժողովրդավարական համակարգի շրջանակներում մենք բոլորս ինչոր չափով «պատասխանատու ենք» համակարգի աշխատանքի համար:

Հետևյալ ցանկը ներառում է այն հիմնական հմտությունները և իրազեկության ոլորտները, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարության արդյունավետ գործունեության համար: Թվարկված կետերից յուրաքանչյուրը կարևոր է նաև ատելության խոսքին անդրադառնալու համար:

ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը չի կարող ներկայացնել ժողովրդի կամքը, եթե «ժողովուրդը» այն չի արտահայտում: Մենք կարող ենք ունենալ ներկայացուցչական կառավարություն միայն այն պարագայում, եթե բոլորս արտահայտենք մեր ցանկությունները: Սա բնականաբար չի սահմանափակվում միայն ընտրությունների ժամանակ քվեարկելով, այլ նաև ենթադրում է, որ մենք պետք է արձագանքենք նոր նախաձեռնություններին, տեղեկացնենք խորհրդարանի անդամներին կամ այլ պաշտոնյաներին, երբ որևէ բան մեզ չի բավարարում, հանդես գանք փոփոխությունների առաջարկներով, լոբինգ իրականացնենք ավելի լավ պաշտպանության համար, պահանջենք

ավելի բաց համակարգ և այլն: Եթե քաղաքացիների դիրքից ժողովրդավարության համար կարևոր է մասնակցությունն, ապա կառավարությունը պարտավորություն ունի ապահովել, որպեսզի մարդկանց տեսակետները լինեն լսելի: Այդ նպատակից ելնելով՝ պետք է երաշխավորվի արտահայտման ազատությունն, առնվազն այն չափով, որը չի խարխլի այլ հիմնարար իրավունքները կամ վտանգ չի ներկայացնի անձանց խմբերի կամ առանձին անհատների համար:

Մասնակցությունը կարող է իրացվել ինչպես անցանց, այնպես էլ՝ առցանց: Քաղաքացիների համար համացանցը դարձել է նշանակալի գործիք ժողովրդավարական հասարակությունների կառուցման և ամրապնդման գործում ակտիվ դերակատարություն ունենալու համար: Անգամ առանց տանից դուրս գալու մարդիկ կարող են մասնակցել քաղաքական բանավեճերի, օրենսդրության մշակման, ստորագրահավաքների, քաղաքական գործիչներին վերահսկելու և առցանց արշավներ վարելու հարցերում:

Յուրաքանչյուր մարդ՝ դիտորդից մինչև հեղինակ, կարող է կարևոր դեր կատարել առցանց մասնակցության տեսանկյունից:

ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրենց անունից ընդունված որոշումներին արձագանքելու համար մարդիկ նաև պետք է տեղեկացված լինեն այդ որոշումների, ինչպես նաև այն ձևերի մասին, որոնց միջոցով նրանք կարող են բարձրաձայնել իրենց վերաբերմունքն այդ որոշումների նկատմամբ: Սա նույնպես պարտավորություններ է ստեղծում ինչպես անհատների, այնպես էլ կառավարությունների համար, մասնավորապես՝ կառավարությունները պետք է ապահովեն տեղեկությունների հասանելիությունը, ինչը նաև բացատրում է, թե ինչու է տեղեկացված լինելու իրավունքն առանցքային՝ արտահայտման ազատության տեսանկյունից: Իսկ անհատներն, իրենց հերթին, պետք է օգտվեն տեղեկությունների հասանելիությունից և պարտադրեն իշխանություններին հրապարակել բոլոր այն մանրամասները, որոնք չէին հրապարակվել:

Ոլորտներից մեկը, որտեղ հասարակության տեղեկացվածությունն առավել կարևոր է՝ մարդու իրավունքների մասին իրազեկության բարձրացումն է: Մարդու իրավունքների դիտարկումն այն հարցը չէ, որը պետք է թողնել միայն մարդու իրավունքների «արհեստավարժ» ակտիվիստներին կամ դրանց նկատմամբ հարգանքը միշտ վստահել կառավարություններին: Յուրաքանչյուր անհատ պետք է պատկերացում ունենա մարդու իրավունքների հիմնական չափանիշների մասին և իր մասնակցությունը ցուցաբերի դրանց պաշտպանությունն ապահովելու գործում:

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկայացուցչական կառավարություն չի նշանակում, որ բոլոր անհատների բոլոր ցանկություններն ու պահանջները բավարարված են: Մարդու իրավունքները, որպես օրենք նախատեսում են մեզանից յուրաքանչյուրի հիմնական կարիքները, սակայն, ակնհայտ է, որ միշտ կլինեն բազմաթիվ տարակարծություններ կապված ոչ միայն տարբեր կարիքների, այլ

նաև դրանք բավարարելու լավագույն ուղիների հետ: Ժողովրդավարական հասարակությունը ենթադրում է անհամաձայնության առկայություն: Դժվար է որոշել, թե որտեղ պետք է վերջանա մեր «հանդուրժողականությունը», երբ հարցը վերաբերում է այն որոշումներին, որոնց հետ համաձայն չենք: Սակայն, երբ նժարի վրա են մարդու իրավունքները, «հանդուրժողականությունը» ցանկալի չէ և մեղավորները պետք է ենթարկվեն պատասխանատվության: Միևնույն ժամանակ, կլինեն բազմաթիվ առիթներ և բազմաթիվ հրապարակայնորեն արտահայտված տեսակետներ, որոնք մեզ կարող են չգոհացնել և որոնք մենք ի վերջո պետք է հանդուրժենք: Այս հավասարակշռությունը գտնելու հարցը ավելի մանրամասն քննարկվում է արտահայտման ազատությանը վերաբերող բաժնում:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Իրական» կյանքում մեր գոյությունը կանոնակարգվում է տարբեր մակարդակների կանոններով և օրենքներով: Մի շարք կանոններ են սահմանված աշխատավայրերում կամ այն «տարածքներում», որոնք կառավարվում են մասնավոր ընկերությունների կողմից: Տեղական և պետական իշխանությունները սահմանում են ավելի ընդարձակ օրենքներ և կանոնակարգեր, իսկ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունները, ինչպիսիք են՝ Միացյալ ազգերը կամ Եվրոպայի խորհուրդը կարող են սահմանել կանոններ կամ սկզբունքներ, որոնք կիրառվում են հենց կառավարությունների նկատմամբ:

Մարդկային կենսագործունեության տարբեր տեսակներն աստիճանաբար ավելի ու ավելի շատ են տեղափոխվում առցանց, և այդ գործընթացին զուգահեռ առաջանում է հարց , թե ինչ «կանոններով» պետք է կարգավորվի այս գործընթացը: Յուրաքանչյուր կայքէջ ունի իր սեփական և՛ ընդհանուր, և՛ վարքագծի կանոնները, նույնը վերաբերում է նաև հոսթինգ տրամադրող ընկերություններին. սրանք կարելի է համեմատել իրական կյանքում մասնավոր ոլորտները կանոնակարգող կանոնների հետ: Որոշ կառավարություններ ստեղծել են նաև օրենքներ, որոնք կանոնակարգում են առցանց գործունեությունը և կան նաև միջազգային իրավունքի մաս հանդիսացող կարգավորումներ, մասնավորապես, մարդու իրավունքներին առնչվող, որոնք տարածվում են նաև համացանցի վրա: Սակայն, հետզհետե ավելի ու ավելի ենք գիտակցվում, որ համացանցի օգտատերերին՝ իրենց առցանց գործունեության ընթացքում պատշաճ կերպով պաշտպանելու համար անհրաժեշտ է ընդհանուր սկզբունքների և կանոնակարգերի առկայությունը: Սկզբունքների և դրանց ներդրման միջոցների հարցը նկարագրված է, որպես «Համացանցի կառավարում»:

Համացանցի կառավարումը հատկապես կարևոր է ատելության խոսքի առցանց դրսևորումների առնչությամբ, քանի որ որոշ երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, ակտիվորեն պաշտպանվում է արտահայտման ազատությունը::Ելնելով նրանից, որ կայքէջերից շատերի հոսթինգն իրականացվում է ԱՄՆ-ում, դա կարող է վերածվել շատ բարդ մարտահրավերի, նույնիսկ այն դեպքում, երբ ատելության առցանց խոսքը դրսևորվում է ամենասուր և վիրավորական ձևերով:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ

Համացանցը պաշտպանելը և պահպանելն՝ առանց դրա գործունեությանը «վնասելու» ... չափազանց կարևոր է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 10-ի և 11-ի առցանց իրականացման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, ազատության հետ մեկտեղ առաջանում է նաև քաղաքացիներին պատշաճ կերպով տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը, նրանց հնարավորություն տալով պատասխանատվությամբ օգտվել համացանցի միջոցով իրենց տրամադրվող ծառայություններից: Որպեսզի մարդիկ կարողանան վստահել համացանցին, հարգանքն իրենց անձնական տվյալների և անձնական տարածքի նկատմամբ պետք է լինի պարտադիր պայման...

Եվրոպայի խորհրդի համացանցի կառավարման ռազմավարությունից

Եվրոպայի խորհուրդը լրջորեն զբաղվում է համացանցի կառավարման հարցով: 2007թվականին Նախարարների կոմիտեն հանդես է գալիս հանձնարարականով, որտեղ մասնավորապես սահմանվում էր՝ «մարդկանց իրավացի ակնկալիքն է, որ համացանցի ծառայությունները լինեն հասանելի և մատչելի, ապահով, վստահելի և շարունակական» (ՆԿ/Քաղաքական հանձնարարական(2007)16Ln): 2012 թվականին Եվրոպայի Խորհրդի 47 անդամ պետություններն ընդունում են համացանցի կառավարման առաջին ռազմավարությունը, որի նպատակն է «պաշտպանել և խթանել մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը և ժողովրդավարությունն առցանց տիրույթում»: 2016 թվականին ընդունվում է համացանցի կառավարման նոր ռազմավարություն 2016-2019 թթ. համար, որի նպատակն է առցանց տիրույթում զարգացնել ժողովրդավարություն, պաշտպանել համացանցի օգտատերերին և ապահովել մարդու իրավունքներին նկատմամբ հարգանքն ու պաշտպանությունը: Մասնավորապես, ռազմավարությունը բնորոշվում է մի շարք հիմնական գործողություններով և գործընթացներով, որոնք նպատակ ունեն պաշտպանել համացանցի օգտատերերի գաղտնիությունը և անվտանգությունը և իրավունք տալ նրանց ու ներգրավել համացանցի կառավարման երկխոսությանը՝ որպես շահագրգիռ անձանց:

Եվրոպայի խորհուրդը խրախուսում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ այնպիսի վերաբերմունքը, որը հավասարապես գործում է թե անցանց, և թե առցանց: 2014 թվականին Նախարարների կոմիտեն ընդունեց «Համացանցի օգտատերերի համար Մարդու իրավունքների ուղեցույցը»: Ուղեցույցը ներառում է տեղեկություններ առ այն, թե ինչպես պետք է օգտագործվեն մարդու իրավունքները և ազատությունները համացանցում: Այն մատնանշում է նաև պաշտպանության հնարավոր միջոցներ իրավունքների խախտման դեպքում: 2018 թվականին կազմակերպությունն ընդունում է ուղղորդող սկզբունքներ՝ թվային միջավայրում երեխաների իրավունքները հարգելու, պաշտպանելու և պահպանելու վերաբերյալ (Հանձնարարական CM (2018)7)՝ տրամադրելով անդամ պետություններին հիմնարար կանոններ՝ վերանայելու իրենց

օրենսդրությունը, քաղաքականությունը և բոլոր ոլորտներում գործող միջոցները: Ուղղորդող սկզբունքները համատեղ նախագծի արդյունք են և առաջարկում են ապահովել համատեղ մեխանիզմներ երեխաների և երիտասարդների համար:

ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԴԵՐԸ

Օգտատերերի դերը նույնպես առանցքային նշանակություն ունի համացանցի գործունեությունը սահմանելու համար: «Ժողովրդավարական» համացանց ունենալու համար անհրաժեշտ է «առցանց քաղաքացիներից» բաղկացած օգտատերերի հանրույթ, որը կմասնակցի հաղորդակցության նորմերն ու կանոնները սահմանելու գործընթացին, ինչպես նաև կներազդի համացանցի գործելու կերպը որոշելու վրա: Նման գործունեության հաջող օրինակ է, ՀԿ-ների և քաղաքացիների շարժումը, որի շնորհիվ հնարավոր դարձավ կանխել Եվրախորհրդարանի կողմից Հակակեղծարարական առևտրի համաձայնագրի (ACTA) ընդունումը, որը մտավոր սեփականության իրավունքները խստացնող միջազգային պայմանագիր էր: Համաձայնագիրն ուներ հակառակորդներ և չընդունվեց այն հիմքով, որ կարող էր վտանգել բազմաթիվ քաղաքացիական ազատություններ և մարդու իրավունքներ:

ՈՒՂԵՐՁՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Համացանցի կառավարմանը երիտասարդների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար կարևոր են հետևյալ սկզբունքները.

- Համացանցի օգտատերերն ավելին են պարզապես սպառողներից: Նրանք ունեն ազդեցություն և կարող են ակտիվացնել այն՝ խաղալով ավելի ակտիվ դեր համացանցում մարդու իրավունքները պաշտպանելու ուղիները որոշելու հարցում: Դա կարող է արվել քարոզարշավի միջոցով, ինչպես նաև այն հարցի պարզաբանմամբ, թե ինչպես են երիտասարդները, որպես համացանցի օգտատերեր, վերաբերվում միմյանց առցանց:
- Մարդու իրավունքներն անհրաժեշտ են համացանցի օգտատերերին առցանց պաշտպանված լինելու համար: Սեփական իրավունքների մասին տեղեկացված լինելը և դրանց ցանկացած չարաշահումը կանխելը կարևոր է այդ պաշտպանվածությունն ապահովելու համար:
- Համացանցը մի տարածք է, որի անընդհատ փոփոխվող կառուցվածքը դեռևս չկարգավորված դաշտ է: Այն կարող է հնարավորություն տալ մարդու իրավունքների ոտնահարման համար, բայց միևնույն ժամանակ կարող է նաև հանդիսանալ իրենց ավելի արդյունավետ պաշտպանելու նպատակով՝ համայնքները մոբիլիզացնելու գործիք:
- Երեխաներին և երիտասարդներին, ինպես նաև այլ օգտատերերին անհրաժեշտ է աջակցություն կրթական ծրագրերի միջոցով՝ համացանցն ավելի արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություններ ձեռք բերելու նպատակով:

- Երեխաները և երիտասարդները պետք է հատուկ պաշտպանված լինեն համացանցից օգտվելու ընթացքում իրենց ֆիզիկական, մտավոր և բարոյական բարօրության նկատմամբ ոտնձգություններից:.
- Չնայած այն հանգամանքին, որ համացանցի ձևավորման մեջ առանցքային դեր են խաղում հզոր տնտեսական և քաղաքական ուժերը, նրանք, ովքեր օգտագործում են համացանցը պետք է հաստատեն առցանց աշխարհը հանրային տարածքի վերածելու իրենց իրավունքը, ընդ որում՝ այնպիսի հանրային տարածքի, ուր կգործեն մարդու իրավունքների սկզբունքները և արժեքները:
- Ժողովրդավարական քաղաքացիության մասին սովորելու հետ մեկտեղ՝ երեխաները և երիտասարդները պետք է նաև կարողանան իմանալ և հասկանալ, թե ինչպես է կառավարվում համացանցը և ովքեր են դա իրականացնում: Համացանցի կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև այն եղանակները որոնցով երիտասարդները կարող են արդյունավետ կերպով ներգործել համացանցի, կամ առնվազն դրա հանրային հատվածի կառավարման վրա, այսպիսով չափազանց կարևոր են:

5.7 ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրոպայի խորհրդի «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական շարժման քարոզարշավը տրամադրել է լավագույն պրակտիկայի և ուսուցման մի շարք օրինակներ՝ կապված քարոզարշավի ռազմավարությունների և գործողությունների հետ: Քարոզարշավն ավարտվել է, թեև , կարևոր է, որ ատելության խոսքի դեմ նախաձեռնությունները շարունակվեն: Կան մի շարք ուղիներ, որոնցով դուք և ձեր ընկերները կարող եք աշխատել ատելության խոսքի դեմ պայքարելու համար և շարունակել քարոզարշավի ժառանգությունը: Ընթերցեք աղբյուրների Ժողովածուն, որը ձևավորվել է քարոզարշավի ընթացքում. https://www.coe.int/en/web/no-hate-campaign/compendium-of-resources

Ցանկը դասակարգված է ըստ հետևյալ թեմաների՝

1. կրթություն և իրազեկության բարձրացում,
2. գործողություններ արդեն գոյություն ունեցող ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ,
3. մյուսների մոբիլիզացում,
4. համերաշխության արտահայտում զոհերին կամ հիմնական թիրախ խմբերին,
5. երկարաժամկետ ռազմավարությունների մշակում:

Այս թեմաները հաճախ համընկնում և խաչվում են, իսկ այն դեպքերում, երբ չեն համընկնում կարող եք ավելի ուժեղացնել վարժությունն՝ այլ բաժիններից նյութեր ավելացնելով:

Օրինակ՝

- Ուղղակիորեն արձագանքել ատելության խոսքին՝ այլընտրանքային տեքստ ներկայացնելով, ինչը կունենա նաև ուսուցողական նշանակություն: Եթե այդ այլընտրանքային տեքստը կամ երկխոսությունը հանրայնացվի սոցիալական մեդիայի միջոցով, սա իր հերթին կարող է մոբիլիզացնել ուրիշներին:
- Ատելության խոսքի առցանց դրսևորման խնդրի մասին իրազեկությունը բարձրացնելու նպատակով իրականացվող գործողությունը նույնպես ատելության խոսքի զոհերին համերաշխություն հայտնելու ազդեցիկ միջոց է: Այն կարող է անցկացվել նաև որպես ստորագրահավաք՝ կոչ անելով քաղաքական գործիչներին ներգրավվել խնդրի լուծմանը:
- Ատելության խոսքի կոնկրետ դեպքի առնչությամբ իրավասու մարմիններին հաղորդագրություն ներկայացնելը, և, այնուհետև, կայքի կառավարիչների պատասխանի

վերաբերյալ բլոգում հրապարակում գրելը, կարող է մյուսներին ստիպել ավելի ուշադիր լինել նման օրինակների նկատմամբ և ներկայացնել իրենց բողոքները:

Ստորև ներկայացված ցանկն ամբողջական չէ և կարող է դիտարկվել որպես հնարավոր նոր գաղափարների աղբյուր: Ձեր խումբը, վստահաբար, կկարողանա դա անել: Առաջարկությունների մի մասը կարող է կիրառելի չլինել բոլոր իրավիճակներում: Օրինակ՝ մեկնաբանության կամ հաղորդագրության վերաբերյալ բողոք ներկայացնելը որոշ դեպքում կարող է լինել չափազանց խիստ արձագանք: Նման իրավիճակներում, շատ ավելի ճիշտ կլինի պարզապես հաղորդագրության հեղինակին դիմելը՝ խնդրելով փոխել մեկնաբանության ոճը կամ ընդհանրապես հեռացնել այն: Որոշ դեպքերում, վիրավորական մեկնաբանություն տեղադրած անձի հետ ուղղակի հաղորդակցության մեջ մտնելը կարող է ճիշտ չլինել: Ամենապատշաճ և արդյունավետ արձագանքն ընտրելու համար միշտ պետք է ինչպես հարկն է կշռադատել ընտրությունը:

Դուք կարող եք օգտագործել ձեռնարկում զետեղված հավելյալ վարժությունները և խրախուսել ձեր ընկերներին կամ խմբին ներգրավվելու գործընթացին:

- Հավաստիացե՛ք, որ ձեր ընկերները և խումբը ներգրավված են վարժություններ ընտրելու և ծրագրելու գործընթացում: Հավանականությունը, որ նրանք կմասնակցեն շատ ավելի մեծ կլինի, եթե նրանք ինքնուրույն ընտրեն հիմնական հարցերն ու մեթոդները:
- Հիշեցրե՛ք նրանց, որ ստեղծագործական մոտեցումով կազմակերպված միջոցառումներն ավելի շատ ուշադրություն են կարող գրավել. համացանցում մարդկանց ուշադրությունը գրավելը նման է ամբոխի մեջ տարբերվելուն:
- Հիշեցրե՛ք, որ տեղեկատվությունը կարելի է տարածել նկարների, տեսանյութերի, երաժշտության, ինչպես նաև միայն բառերի միջոցով: Ուղերձի ձևը հաճախ նույնքան կարևոր է, որքան բովանդակությունը:
- Չ՛մոռանաք թերթել աղբյուրների ժողովածուն ոգեշնչվելու համար (https://www.coe.int/en/web/no-hate-campaign/compendium-of-resources):

ՀՆԱՐԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

- Օգտագործե՛ք բլոգներ և սոցիալական լրատվության հարթակներ՝ բարձրացնելու համար տեղեկացվածությունն առ այն, թե ինչ կարող են մարդիկ անել, եթե դարձել են ատելության խոսքի զոհ կամ եթե ականատես են եղել այդպիսի դեպքերի:
- Աշխատե՛ք խոսել մարդու իրավունքների «բառապաշարով»: Տարածեք տեղեկություններ այն իրավունքների մասին, որոնք պաշտպանում են մեզ համացանցում և, թե ինչպես են մարդու իրավունքները կապված ատելության խոսքի առցանց դրսևորումների հետ:

- Ստեղծե՛ք «միֆերից ձերբազատվելու» թերթիկ խմբերի համար, որոնք հաճախ են դառնում ատելության խոսքի թիրախներ: Գրառում արե՛ք դրա մասին սոցիալական լրատվության հարթակում կամ պատրաստե՛ք բրոշյուռներ անցանց տարածելու համար:
- Տարածե՛ք այն կայքերը և հաղորդագրությունները, որոնք ներկայացնում են ամենից հաճախ թիրախ դարձող խմբերի դրական հատկանիշները:
- Պատմե՛ք այն մարդկանց մասին, ովքեր եղել են ատելության խոսքի առցանց դրսևորման զոհ: Օգտագործե՛ք այդ մեթոդն այս խնդրի մասին տեղեկություններ տարածելու, ինչպես նաև ատելության խոսքի թիրախ դարձած մարդկանց նկատմամբ համապրումի զգացում ձևավորելու նպատակով:
- Ստեղծե՛ք ձեր սեփական կայքը կամ անձնական էջը սոցիալական ցանցում: Օգտագործե՛ք այն թիրախ խմբերի մասին, արժանահավատ աղբյուրների կիրառմամբ այլընտրանքային տեղեկություններ տարածելու համար:
- Կազմակերպե՛ք անցանց ակցիաներ, ուսուցողական դասընթացներ կամ իրազեկման բարձրացման միջոցառումներ: Դրանք կարող են նվիրված լինել՝
  - ատելության խոսքի հիմնական խնդրին առցանց տիրույթում և իրական կյանքում,
  - որոշակի թիրախ խմբերի մասին առկա նախապաշարմունքներին,
  - ատելության խոսքը հաղթահարելու մեթոդներին առցանց և անցանց տիրույթում,
  - ատելության խոսքի ազդեցությանը,
  - սեփական գործողությունների, ինչպես նաև այլ մարդկանց արարքների համար պատասխանատվություն ստանձնելու անհրաժեշտությանը,
  - այլ երիտասարդական խմբերի նախաձեռնություններին, ներառյալ՝ «Ո՛չ ատելության խոսքին» շարժմանը,
  - որևէ այլ բանի:

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԱՐԴԵՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ

- Խմբագրե՛ք Վիքիպեդիայի կամ այլ ազատ բովանդակությամբ կայքերի այն հոդվածները, որոնք պարունակում են ոչ ադեկվատ կամ կեղծ տեղեկություններ ատելության խոսքի ամենահիմնական թիրախ խմբերի մասին:
- Մեկնաբանություններ թողե՛ք այն կայքերում, որտեղ կա ոչ ճշգրիտ, կողմնակալ կամ ռասիստական բովանդակություն: Հարցեր կամ բողոքներ ուղարկե՛ք անհանդուրժողականություն կամ ռասիստական մոտեցումներ արտահայտող հաղորդագրությունների հեղինակներին:
- Փորձե՛ք հաղորդակցվել վիրավորական բովանդակության հեղինակների հետ, ցույց տվե՛ք նրանց, թե ինչպես է իրենց վարվելակերպն ազդում մյուսների վրա:

- Խրախուսե՛ք մյուսներին անտեսել «տրոլներին», եթե նրանք վիրավորական վարքագիծ են դրսևորում:
- Կիրառե՛ք առցանց բողոքներ ներկայացնելու մեխանիզմները կամ ընթացակարգերը կայքերի տերերին ատելության խոսքի օրինակների մասին նախազգուշացնելու համար:
- Հայտնե՛ք ատելության խոսքի դեպքերի մասին համապատասխան ազգային համակարգի կամ այլ լրատվական ցանցերի միջոցով:
- Հայտնե՛ք ատելության խոսքի դեպքերի մասին համապատասխան առցանց մեխանիզմների միջոցով:
- Հայտնե՛ք ատելության խոսքի դեպքերի մասին կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք աշխատում են խնդրի վրա, ծանոթացե՛ք քարոզարշավի կայքէջին, որտեղ կարող եք գտնել տեղեկություններ ատելության խոսքի մասին սոցիալական լրատվության հարթակներին տեղեկացնելու (https://www.coe.int/en/web/no-hate-campaign/reporting-on-social-media-platforms) և իրավասու ներպետական մարմինների մասին (https://www.coe.int/en/web/no-hate-campaign/reporting-to-national-bodies):
- Բոյկոտե՛ք ատելություն տարածող կայքերը, և մյուսներին էլ կոչ արե՛ք հետևել ձեր օրինակին:
- Հավաքե՛ք տեղեկություններ ձեր երկրում գրանցված ատելություն տարածող կայքերի մասին: Ուղարկե՛ք այդ տեղեկությունները խորհրդարանի ներկայացուցիչներին:

ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

- Կոչ արե՛ք մյուսներին դատապարտել կամ հայտնել ատելության խոսքի մասին, համերաշխություն արտահայտել զոհերին կամ ներգրավվել այլ գործողությունների մեջ:
- Օգտագործե՛ք սոցիալական մեդիան օգտակար կայքերին և քարոզարշավի հետաքրքիր նա խաձեռնություններին մարդկանց ներգրավելու համար:
- Հանրայնացրե՛ք ատելության խոսքը որոշակի կայքերից հաջողությամբ հեռացնելու մասին պատմությունները:
- Բարձրացրե՛ք իրազեկությունը «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի մասին: Դրե՛ք շարժման հղումը ձեր անձնական էջում կամ ավելացրե՛ք շարժման խորհրդանիշը ձեր էլեկտրոնային ստորագրությանը:
- Կազմակերպե՛ք ուսուցողական կամ իրազեկման բարձրացման դասընթացներ ամենատարածված թիրախ խմբերի ներկայացուցիչների համար: Բացատրե՛ք նրանց, թե ինչպես կարող են պաշտպանել և իրենց, և մյուսներին ներգրավվելով քարոզարշավին:
- Այլ բաժիններից որևէ գործողություն իրականացնելիս՝ տարածե՛ք դրա մասին տեղեկատվությունը ինչպես վիրտուալ, այնպես էլ ոչ վիրտուալ գործողությունների միջոցով:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԶՈՀԵՐԻՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՄԲԵՐԻՆ

- Անձնական հաղորդագրություններ ուղարկե՛ք այն անհատներին, ովքեր հանրայնորեն դառնում են ատելության խոսքի թիրախ: Հայտնե՛ք նրանց ձեր համերաշխությունը և բացատրե՛ք, թե ինչ են կարող անել:
- Օգնե՛ք ցրել հիմնական թիրախ խմբերի մասին տարածված նախապաշարմունքները կամ կեղծ գաղափարները: Այլընտրանքային բովանդակություն ստեղծեք և, հնարավորություն ունենալու պարագայում, հանրայնացրեք այն:
- Տեղեկացրե՛ք երիտասարդներին իրենց իրավունքների և այն մեթոդների մասին, որ նրանք կարող են օգտագործել իրենց պաշտպանելու համար:
- Կազմակերպե՛ք հանրային ակցիա՝ ի համերաշխություն ատելության խոսքի թիրախ խմբերի:
- Տեղեկացրե՛ք հանրությանը քաղաքական կամ հասարակական գործքիչների կամ լրատվամիջոցների կողմից արված ռասիստական կամ խտրական արտահայտությունների մասին: Բացատրություններ պահանջեք նրանցից:
- Աշխատե՛ք ատելության խոսքի հիմնական թիրախ հանդիսացող խմբերի ներկայացուցիչների հետ: Խրախուսե՛ք նրանց մասնակցել քարոզարշավին:

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կազմակերպե՛ք ձեր սեփական քարոզարշավը տեղական մակարդակում կամ համացանցում, պատրաստեք քարոզարշավի տեսահոլովակ, երգ կամ որևէ զվարճալի միջոցառում և տեղադրեք առցանց:
- Կազմակերպե՛ք ատելության խոսքի առցանց դրսևորման կամ դրա հետ կապված որոշակի կայքէջերի քաղաքականության դեմ առցանց ստորագրահավաք:
- Կապվե՛ք առցանց կազմակերպությունների հետ, որոնք նույնպես զբաղվում են այս խնդրով, բացատրեք նրանց, թե ինչում է ձեր գործունեության էությունը և պարզեք, թե ինչպես եք կարող ներգրավվել իրենց աշխատանքներին:
- Կապվե՛ք ռասիզմի և խտրականության կամ հարակից այլ հարցերով զբաղվող տեղական կազմակերպությունների հետ: Իրազեկե՛ք նրանց ատելության խոսքի առցանց դրսևորումների խնդրի վերաբերյալ և կոչ արեք միանալ քարոզարշավին:
- Անցկացրե՛ք հետազոտություն՝ դիտարկելով կամ այս խնդրի տարբեր դրսևորումները մեկ կայքում, կամ թե ինչպես է այն ազդում որոշակի խմբերի վրա: Ուղարկե՛ք արդյունքները ատելության խոսքը վերահսկող դիտախմբին, այդ խնդրով զբաղվող ՀԿներին, քաղաքական գործիչներին կամ այլ ազդեցիկ մարդկանց:
- Կոչ արե՛ք կառավարության պաշտոնյաներին անդրադառնալ այս խնդրին. Կապվե՛ք խորհրդարանում ձեր ներկայացուցչի հետ:

5.8 ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Համացանցային գրագիտությունը դա առցանց տեղեկատվական և հաղորդացական բովանդակություն ստեղծելու, այն հասկանալու և քննադատելու, և դրանից օգտվելու կարողությունն է:

Սոնիա Լիվինգսթոն, «Համացանցային գրագիտություն. Երիտասարդների բանակցությունները նոր առցանց հնարավորությունների վերաբերյալ»:[1]

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Համացանցը, Եվրոպայի երիտասարդների համար երևի թե, տեղեկություններ ստանալու հիմնական աղբյուրն է: Երբեմն, այն կիրառվում է ուղղակիորեն որպես տեղեկագիր, իսկ երբեմն տեղեկությունները ստացվում են միջնորդավորված՝ «սոցիալիզացվելու» կամ այլ գործունեության ընթացքում: Երկու դեպքում էլ, կարևոր է, որպեսզի օգտատերերը կարողանան հասկանալ, վերլուծել, գնահատել և ստուգել ինչպես բացահայտ տեղեկություններն, այնպես էլ թաքնված ուղերձները: Սա առավել առարկայանում է, երբ խոսքը վերաբերում է ատելության առցանց դրսևորումներին արձագանքելուն:

Այն գիտելիքներն ու հմտությունները, որ անհրաժեշտ են երիտասարդներին տեղեկություններ գտնելու և վերլուծելու համար, մեդիա գրագիտության ոլորտներից մեկն է, իսկ եթե խոսքը վերաբերում է առցանց աշխարհին, ապա համացանցային գրագիտության:

Սակայն, համացանցային գրագիտությունն ավելին է, քան զուտ տեղեկություններ հավաքելն ու վերլուծելը: Կան բազմաթիվ այլ հմտություններ և գործիքներ, որոնք հատկապես կարևոր են, երբ երիտասարդներին պետք է պատրաստել ատելության խոսքի առցանց դրսևորումներին արձագանքելու համար: Դրանց թվին են պատկանում մասնավորապես այն հմտությունները, որոնք կապված են համացանցի ավելի տեխնիկական ոլորտի կամ որոշակի բովանդակություն տեղադրելու և տարածելու խնդրի հետ:

Հիմնական կետերը (հիմնված է «Մարդու իրավունքների ուղեցույց համացանցի օգտատերերի համար» ձեռնարկի վրա).

[1] *Digital Youth, Innovation, and the Unexpected (2008), MIT Press*

- երեխաները և երիտասարդ օգտատերերը պետք է ունենան համացանցից անվտանգ օգտվելու հնարավորություն՝ գաղտնիության պատշաճ նախատեսմամբ,
- երեխաները և երիտասարդները պետք է վերապատրաստվեն և տեղեկատվություն ստանան ուսուցիչներից, մանկավարժներից և ծնողներից,
- երեխաներին և երիտասարդներին պետք է տրամադրվեն իրենց տարիքին և հանգամանքներին համապատասխան տեղեկություններ՝ ապօրինի բովանդակության և վարքագծի տարբեր տեսակների վերաբերյալ:

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր ոք համացանցից օգտվելիս ընտրում է իր առցանց գործունեության համար անհրաժեշտ մեթոդներն ու կանոնները: համացանցի օգտատերերը ձեռք են բերում այնքան «համացանցային գրագիտություն», որպեսզի կարողանան անարգել «նավարկել» և բավարարել իրենց հիմնական պահանջները: Սակայն, եթե երիտասարդների առջև խնդիր է դրվում ոչ թե վերարտադրել արդեն առկա «վատ» երևույթները կամ կրկնօրինակել վատ սովորությունները, որոնց արդյունքում ի հայտ են գալիս ատելության խոսքի առցանց դրսևորումները, և նրանք պետք է սովորեն վիճարկել և պատշաճ պատասխան տալ նման դրսևորումներին, ապա նրանց անհրաժեշտ է համացանցային գրագիտության ավելի բարձր մակարդակ: Այս բաժնում ներկայացված ցանկերում ներառված են այդ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ առավել օգտակար հմտությունները և գիտելիքի ոլորտները:

ԳՈՐԾԻՔՆԵՐ՝ ՏԱՐԲԵՐ ԴԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Անհրաժեշտ է նշել, որ ատելության խոսքի առումով երիտասարդները տարբեր ժամանակ հայտնվում են տարբեր դերերում: Դերերից յուրաքանչյուրը պահանջում է հմտությունների իր շարքը, ինչն անհրաժեշտ է հաշվի առնել ցանկացած կրթական միջոցառում իրականացնելիս:

ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐ/ԴԻՏՈՐԴՆԵՐ

Երբ ականատես ենք դառնում որոշակի չափով մյուսներին վնաս հասցնող բովանդակության, մենք դառնում ենք այդ երկխոսության մասնակիցներից մեկը: Մենք կարող ենք անտեսել այդ բովանդակությունը, կարող ենք ինքներս էլ տարածել այն, կամ կարող ենք որոշել արտահայտվել դրա դեմ: Այս ձեռնարկի վարժությունների մեծ մասը միտված են երիտասարդներին պասիվ «տեսնում եմ, բայց ոչինչ չեմ անում» դիրքից տանել դեպի խնդրի կապակցությամբ որևէ պատշաճ ձևով արձագանք տալը: Սրա համար անհրաժեշտ են սթափ դատողության և քննադատական վերլուծության հմտություններ, ինչպես նաև հնարավոր գործողությունների մասին տեղեկացվածություն:

ԶՈՀԵՐ

Այն մարդկանց, ովքեր կամ ուղղակիորեն են դառնում ատելության խոսքի թիրախ, կամ պատկանում են այն խմբերից մեկին, որոնք հանդիսանում են ռասիստական կամ վիրավորական արտահայտությունների կամ կիբերբուլինգի հիմնական թիրախ, անհրաժեշտ են իրենց պաշտպանելու և ատելության դրսևորումներին արձագանքելու համար ռազմավարություններ: Նրանց նաև պետք են հմտություններ և գիտելիք, որոնք կօգնեն խնդրին անդրադառնալու համար, օրինակ՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, վիրավորական վարքագծի մասին հայտնելու, մյուսներին դրա դեմ պայքարելու կոչ անելու և նման այլ գործողությունների համար:

«ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂՆԵՐ» ԵՎ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՍԵՐՄԱՆՈՂՆԵՐ»

Այս խմբի մեջ են մտնում նրանք, ովքեր կամ տարածում են ատելության խոսքի առցանց դրսևորումներ կամ հավանական է, որ դա կանեն՝ սեփական պատումը ստեղծելով կամ ուրիշներինը տարածելով: Պետք է հիշենք, որ ինչպես ատելության խոսքն է հնարավոր բաժանել նվազ կամ առավել վնասակարի,այնպես էլ մարդկանց, որ այն տարածում են հնարավոր է դասակարգել որպես ավելի մեծ կամ փոքր վտանգ ներկայացնողների: Նրանք ովքեր տարածում են ինչոր չափով ռասիստական բովանդակություն, նույնպես նպաստում են խնդրի ծավալմանը, նույնիսկ եթե նրանց գործողությունն անօրինական չէ և չի պարունակում բռնության ուղղակի կոչեր: Ինչպիսին էլ այն լինի, այն առաջին քայլն է վիրավորական և վնասաբեր դրսևորումների շղթայում: Շատերը նպաստում են ատելության խոսքի առցանց դրսևորումների տարածմանը ընդամենը տարածելով այն բովանդակությունը, որի վնասաբեր, վիրավորական կամ կեղծ լինելը չեն գիտակցում: Սրանից խուսափելու համար անհրաժեշտ է կարողանալ ճանաչել նախապաշարմունքն ու կողմնակալությունն առցանց բովանդակության մեջ և ավելի պատասխանատու վերաբերմունք ցուցաբերել ցանկացած պատում ստեղծելիս կամ մյուսների հետ այն կիսելիս::

ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐ ԵՎ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

«Ո՛չ ատելության խոսքին» քարոզարշավը դիտարկում է բոլոր երիտասարդներին և համացանցի բոլոր օգտատերերին որպես քարոզարշավի պոտենցիալ մասնակիցներ: Նպատակներից մեկն այն է, որ ատելության խոսքի դրսևորումների պասիվ դիտորդները նույնպես արձագանքեն և միանան աշխարհի բոլոր ծայրերում գտնվող այն մարդկանց, ովքեր իրենց ձայնն են բարձրացնում ատելության խոսքի դեմ: Համացանցում քարոզարշավ իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի հմտություններ, ներառյալ հանրայնացնելը, խթանելը, աջակիցներ ներգրավելը և տարբեր՝ այլընտրանքային ուղերձներ և տեքստեր տարածելը:

ՀԱՄԱՑԱՆՑԸ ՈՐՊԵՍ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑ

Հետևյալ ցանկը ներառում է համացանցային գրագիտության այն ոլորտները, որոնք առնչվում են այս ձեռնարկում զետեղված վարժություններին և քարոզարշավին: Այս ոլորտների մասին

ավելի խորքային պատկերացում կազմելը կօգնի երիտասարդներին ավելի գործուն դեր խաղալ քարոզարշավում: Սա նաև կօգնի նրանց փոխել իրենց սեփական առցանց վարքագիծը:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում նախևառաջ անհրաժեշտ է ատելության խոսքը բացահայտելու ունակություն: Սա ենթադրում է, որ մենք պետք է պատկերացում ունենանք այն մասին, թե որոնք են դրա բաղադրիչները և կարողանանք գնահատել դրա հնարավոր հետևանքները, սակայն բացի այդ, անհրաժեշտ է ունենալ նաև թաքնված ուղերձները, ոչ բացահայտ կանխակալությունն ու նախապաշարմունքները ճանաչելու կարողություն:



ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առցանց տեղեկատվությունը ահռելի ծավալների է հասնում, և երիտասարդներին անհրաժեշտ են հմտություններ, որպեսզի նրանք սովորեն ընկալել տեսածը միայն վերլուծելու և հասկանալու մի ջոցով: Սա հատկապես վերաբերում է կեղծ տեղեկություններին կամ առանց հիմնավոր աղբյուրների տեղեկատվությանը, որը սնում է որոշակի խմբերի դեմ տարածված նախապաշարմունքները: Օգտատերերը պետք է կարողանան գտնել փաստարկներում առկա հնարավոր սխալները և գիտակցեն փաստերը ստուգելու և «մյուս կողմին լսելու» կարևորությունը, առնվազն այն դեպքերում, երբ այդ ամենը կարող է որևէ մեկին վնաս հասցնել:



Օգտակար խորհուրդներ. ստուգում ենք փաստարկները:

- Պնդումների հիմքում կան հիմնավոր աղբյուրներ, թե՞ դրանք հիմնված են«ողջախոհության» վրա:
- Արդյո՞ք նշված աղբյուրներն այդ ոլորտում ճանաչված և հեղինակավոր են:
- Փաստարկները համոզիչ և տրամաբանական են, թե՞ հնարավոր են նաև այլ եզրահանգումներ:
- Փաստարկների հիմքում «փաստեր» են, թե՞ դրանք վկայակոչում են զգացմունքները, ավանդական համոզմունքները կամ միայն հնարավոր արդյունքները:
- Հնարավո՞ր է ստուգել ներկայացված «փաստերը» կամ փաստարկները:
- Արդյո՞ք կան ընդհանրացումներ անձանց կամ խմբերի մասին:
- Այդ ընդհանրացումները ունե՞ն ռասիստական կամ խտրական բնույթ:
- Արդյո՞ք հնարավո՞ր են այլ տեսակետներ, և արդյո՞ք դրանք ցույց կտան, որ փաստարկներն անհիմն են:
- Արդյո՞ք պնդումներն օգտագործում են «ad hominem» փաստարկներ, այլ կերպ ասած փաստարկներ, որոնք հակառակորդին վիրավորում են ոչ թե նրա համար, թե նրանք ինչ են ասում, այլ թե նրանք ով են:
- Արդյո՞ք փաստարկն ավելի համոզիչ է ներկայացման ոճի հաշվին, օրինակ՝ արտահայտիչ պատկերների կամ մուլտիմեդիայի կիրառման շնորհիվ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ

Աղբյուրներ որոնելը և որոնման արդյունավետ միջոցների իմացությունը «փաստերը ստուգելու» և

«մյուս կողմին լսելու» կարևոր տարրերն են: Մարդկանց մեծամասնությունը գիտի՝ ինչպես օգտագործել որոնողական համակարգերը, բայց շատ ավելի քչերն են, որ պատկերացում ունեն, թե ինչպես են աշխատում այդ համակարգերը և ինչպես է հնարավոր լրացուցիչ գործիքների օգնութամբ բարելավել որոնումը և ստանալ որոնման այլ արդյունքներ:

Խորհուրդներ տեղեկությունների որոնման համար

- Աշխատե՛ք օգտվել տարբեր որոնողական համակարգերից:
- Աշխատե՛ք արգելափակել քուքիները և մաքրել որոնման նախորդ պատմությունը՝ մինչև նորը սկսելը: Սովորաբար այս կերպ արդյունքն այլ է լինում, որովհետև որոնողական համակարգերից շատերը ցույց են տալիս այն, ինչ իրենց «կարծիքով», օգտատերն ուզում է տեսնել (հիմնվելով նրա վրա, թե ինչ արդեն «գիտեն» օգտատիրոջ մասին):
- Իրականացրե՛ք մի քանի որոնում տարբեր որոնողական բառերով, նույնիսկ եթե մեկ հարց եք հետազոտում:
- Փորձե՛ք ավելի բարդ որոնում իրականացնել, օրինակ՝ սահմանափակեք որոնումը միայն մեկ կայքով, այնպես որ որոշակի բառեր պարունակող բովանդակությունը չհայտնվի արդյունքներում կամ օգտագործեք «և» որոնողական բառը, որը կօգնի որպեսզի բոլոր որոնվող բառերը ներառված լինեն: Յուրաքանչյուր որոնողական համակարգ ունի ցուցումներ, որտեղ այս ամենը նկարագրվում է:
- Ստուգե՛ք կայքերի արժանահավատությունը, նախքան որոնման արդյունքի միջոցով անհրաժեշտ բովանդակությունը գտնելը:
- Հիշեք «քողարկված» կայքերի մասին: Նման կայքերը որոնողական համակարգը նույն կերպ է ներկայացնում, մինչդեռ իրականում դրանք այլ տիպի բովանդակություն են պարունակում: Այս կայքերը հաճախ օգտատերերին մոլորեցնելու նպատակ են հետապնդում և տրամադրում այնպիսի «գիտելիքներ», ինչն իրականում գաղափարապես կողմնակալ տեղեկատվություն է:

ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Մարդիկ առցանց կարող են տեղադրել գրեթե ամեն ինչ: Հաշվի առնելով առցանց տեղեկատվության ծավալները և համացանցի գլխավորապես չկանոնակարգված բնույթը՝ բավական հեշտ է կարծիքը ներկայացնել որպես «փաստ» և կեղծ պնդումներ անել՝ առանց բացահայտվելու վտանգի: Ատելության խոսքի շատ դրսևորումներ պատահական ականատեսին կարող են թվալ հիմնավորված և փաստարկված տեսակետներ: Բացի փաստերը և փաստարկները քննադատական մտածողության հմտությունների օգնությամբ ստուգելուց, ատելության խոսքի հնարավոր դրսևորումները ճանաչելու համար երիտասարդներին կարող է օգնել նաև ստուգելը, թե ինչ տեսակի կայքում է զետեղված տեղեկատվությունը և դրա հեղինակի հեղինակությունը:

Կան հազարավոր կայքեր, որոնք քարոզում են ռասիզմ կամ խտրականության այլ ձևեր: Նման «ատելություն տարածող կայքերը» հաճախ փոխկապակցված են և կարող են մյուս կայքերի հեղինակությունն օգտագործել իրենց ռասիստական պնդումները հիմնավորելու համար: Բազմաթիվ ռասիստական կայքեր այսօր շատ ավելի քողարկված են և կարող են նույնիսկ թաքցնել իրենց ռասիստական բնույթը՝ պնդելով, թե խթանում են «ազգային արժեքները», մինչդեռ իրականում հանդես գալ ռասիստական հայտարարություններով: Ստուգելու որոշ հիմքային մեթոդներ կարող են օգնել հասկանալ, թե որքանով արժանահավատ են կայքերը:

Օգտակար խորհուրդներ: Ստուգում ենք արժանահավատությունը:

- Վստահելի է արդյո՞ք կայքը որպես տեղեկությունների և կարծիքների աղբյուր: Կա՞ն արդյոք դրա հետ կապված այլ կայքեր:
- Պա՞րզ է, թե ովքեր են կայքի սեփականատերերը կամ հեղինակները: Ինչո՞ւ է նրանց կարելի վստահել:
- Ինչպե՞ս է կայքը ձևակերպում իր նպատակը:
- Ի՞նչ եք կարծում, ելնելով տեղադրությունից, հեղինակի ինքնությունից կամ նրանից, թե ինչպես է կայքը ձևակերպում իր առաքելությունը՝ կարո՞ղ է այն լինել կողմնակալ:
- Արդյո՞ք կայքում ներկայացված են մեկից ավելի տեսակետներ:
- Որքա՞ն հաճախ է այն թարմացվում և կա՞ արդյոք այնտեղ թարմ բովանդակություն:
- Կարո՞ղ եք գտնել նմանօրինակ բովանդակություն այլ (արժանահավատ) կայքերում:
- Կա արդյո՞ք հնարավոր շահերի բախում, օրինակ ՝ կապված առևտրային շահերի կամ քաղաքական կողմնորոշման հետ:
- Նշված են արդյո՞ք կայքում տեղ գտած տեղեկությունների աղբյուրները և հղումները::
- Արդյո՞ք կայքն ունի ռասիստական կամ խտրական բովանդակության վերաբերյալ քաղաքականություն:
- Ինչպե՞ս է կայքը վարվում նման բովանդակության կամ դրա հետ կապված բողոքների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Բոլորի համար հեշտ հասանելի առցանց բովանդակություն ստեղծելու հնարավորությունները բազմաթիվ առավելություններ ստեղծեցին «սովորական» օգտատերերի համար, բայց դրա հետ մեկտեղ առաջ բերեցին նաև պարտավորություններ: Ատելության խոսքի տեսանկյունից՝ այդ պարտավորություններից ամենակարևորներից է առցանց տեղեկություններ տեղադրելու ժամանակ ուշադիր լինելը. հենց այստեղ է, որ օգտատերերը գիտակցաբար կամ անգիտակցաբար հեշտությամբ կարող են տարածել ատելություն:

Քարոզարշավի նպատակներից ելնելով՝ կան նաև այլ կարևոր նկատառումներ կապված առցանց նյութեր հրապարակելու հետ: Հաջողության հասնելու համար քարոզարշավը պետք է ունենա ազդեցիկ ուղերձներ, որոնք կգրավեն մեծ քանակությամբ մարդկանց և կլինեն հասկանալի:

Երիտասարդները պետք է տեղյակ լինեն մեծ քանակությամբ մարդկանց իրենց ուղերձները հասցնելու տեխնիկական հնարավորությունների մասին, մասնավորապես սոցիալական մեդիայի միջոցով, և դա պետք է անեն այնպես, որպեսզի այդ ուղերձները լինեն այնքանով համոզիչ, որ մյուսները նույնպես շարունակեն տարածել դրանք: Մուլտիմեդիայի արդյունավետ օգտագործումը կարող է օգնել լուրջ ուղերձն ավելի գրավիչ և հանրամատչելի դարձնելուն:

Օգտակար խորհուրդներ բովանդակություն տարածելու համար

- Հավաստիացե՛ք, որ ձեր տարածած բովանդակությունը զերծ է կողմնակալությունից, նախապաշարմունքներից, ռասիզմից և ատելությունից:
- Հավաստիացե՛ք, որ տեղեկությունը, որը տարածում եք արժանահավատ է և որ դուք ապատեղեկատվություն չեք տարածում:
- Մի՛ տարածեք որևէ բան այլ մարդկանց մասին, եթե դա կարող է վտանգել նրանց անձնական կյանքի գաղտնիությունը կամ անվտանգությունը: Եթե վստահ չեք՝ միշտ հարցրեք:
- Ուշադիր եղե՛ք այնպիսի տեղեկատվություն տարածելիս, որը կարող է պաշտպանված լինել հեղինակային իրավունքով:
- Որևէ կայքում նյութեր տեղադրելիս՝ ստուգե՛ք կայքի կանոններն ու պայմանները: Դրանք կարող են սահմանափակումներ ունենալ այն տիպի տեղեկատվության համար, որ դուք ցանկանում եք տեղադրել և կարող են նաև իրավունքներ ձեռք բերել ձեր տեղադրած բովանդակության կամ ձեր անձնական տվյալների նկատմամբ:
- Մտածե՛ք, արդյո՞ք մյուսները կարող են չարաշահել ձեր տեղադրած տեղեկությունները և օգտագործել դրանք կեղծ պատկեր ստեղծելու կամ ուրիշներին վնասելու համար: Հավաստիացե՛ք, որ ձեր տեղադրած նյութը լինի միանշանակ և տարընթերցումների տեղիք չտա:
- Հիշե՛ք, որ համացանցում տեղադրված նյութը կարող է հեշտությամբ սխալ ընկալվել և վիրավորել որևէ մեկին, եթե չեն ընտրված հստակ ձևակերպումներ: Փորձե՛ք կարդալ այն ինչ տեղադրել եք՝ դրան ուրիշի աչքերով նայելով:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Համացանցում գործողությունները կանոնակարգող քաղաքականությունների և օրենքների մասին ավելի լավ տեղեկացված լինելը կարող է նպաստել օգտատերերի սեփական վարքագիծը կարգավորելուն և առանցքային դեր ունի ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարում: Հետևաբար, համացանցի կառավարման գործընթացներին մասնակցելը և դրանց, ինչպես նաև համացանցի օգտարերերի վրա այդ գործընթացների ազդեցության մասին պատկերացում ունենալը, համացանցային գրագիտության, և առհասարակ ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասն է կազմում: համացանցի առանցքային դերը քաղաքացիության և մասնակցության ժամանակակից ձևերի ձևավորման մեջ ի ցույց է դնում, որ համացանցի կառավարումը չպետք է վերապահվի միայն մասնավոր հատվածին և փորձագետներին:

ՕՐԵՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ



Համացանցը հիմնականում պատկանում է մասնավոր ընկերություններին: Նույնիսկ ինչ-որ մեկի անձնական բլոգը սովորաբար գտնվում է մասնավոր սերվերի վրա: Այն ընկերությունը, որին պատկանում է սերվերը կարող է որոշել սահմանափակել կամ չսահմանափակել այն, թե ինչ է կարելի տեղադրել անձնական բլոգներում: Այն կանոնները, որոնց պետք է հետևեն օգտատերերը, սովորաբար ընդգրկված են «կանոններ և պայմաններ» բաժնում: Դրանք կարող են արմատապես տարբեր լինել տարբեր կայքերի համար: Բացի կանոններից և պայմաններից՝ կարող են լինել նաև կառավարության կողմից սահմանված օրենքներ, որոնք կիրառվում են համացանցի օգտատերերի և կայքերի տերերի նկատմամբ: Որոշ դեպքերում դրանք օրենքներ են, որոնք կանոնակարգում են մասնավոր կյանքի և անվտանգության հետ առնչվող հարցեր կամ ատելության խոսքի ծայրահեղ դրսևորումներին վերաբերող օրենքներ: Նույնիսկ, եթե կառավարությունը չունի հատուկ օրենքներ մարդկանց անվտանգությունն առցանց պաշտպանելու համար, սա հաճախ կանոնակարգվում է մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորող միջազգային օրենսդրությամբ:

Օրինակ՝ Կառավարությունը պետք է պաշտպանի իր քաղաքացիների անվտանգությունն ինչպես վիրտուալ այնպես էլ ոչ վիրտուալ աշխարհում

Կ. Յու. ընդդեմ Ֆինլանդիայի

1999 թ. մարտին առցանց ծանոթությունների կայքում, իբր թե 12 ամյա տղայի անունից, տեղադրվել էր հայտարարություն: Այն ներառում էր հղում տղայի կայքին և հայտարարության մեջ ասվում էր, որ նա ցանկանում է ինտիմ հարաբերությունների մեջ մտնել իր տարիքի կամ իրենից մեծ տղայի հետ, որպեսզի «իրեն սովորեցնեն ձևերը»: Տղան տեղեկացավ այդ հայտարարության մասին միայն այն բանից հետո, երբ էլ.նամակ ստացավ հետաքրքրված մի տղամարդուց: Ծառայություն տրամադրողը հրաժարվեց բացահայտել այն անձի ինքնությունը, ով պատասխանատու էր հայտարարությունը տեղադրելու համար՝ պնդելով, որ դա կհանդիսանա գաղտնիության մասին դրույթի ոտնահարում: Ֆիննական դատարանները վճռեցին, որ ծառայություն մատակարարող ընկերությանը հնարավոր չէր օրենքի ուժով պարտադրել բացահայտել այդ տեղեկությունները:

Գործը հասավ Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Եվրոպական դատարանը վճռեց, որ ֆիննական պետությունը թերացել է երեխաներին և այլ խոցելի խմբերին պաշտպանելու իր պարտավորության մեջ: Հայտարարության պատճառով տղան վերածվել էր մանկապիղծների թիրախ և խախտվել էր նրա անձնական և ընտանեկան կյանքի անձեռնամխելիության իրավունքը:

(Եվրոպական կոնվենցիայի Հոդված 8)

Այդիսկ պատճառով, համացանցը մեծամասամբ նման է մեծ առևտրի կենտրոնի կամ գիշերային ակումբի: Նույնիսկ եթե չկա օրենք, որն արգելում է ջինս հագնել կամ փնթի տեսք ունենալ, ձեզ միևնույն է կարող են չթողնել մուտք գործել գիշերային ակումբ, որովհետև ըստ կանոնների՝ ջինսով մուտքն արգելվում է: Նույն կերպ կայքէջերը կարող են մշակել սեփական կանոնները համացանցում իրենց «մասնավոր տարածքի» համար: Սակայն, միևնույն ժամանակ, նրանց կանոնները պետք է համադրելի լինեն այդ երկրի օրենքների հետ: Մարդու համընդհանուր և անօտարելի իրավունքները գերակայում են համացանցի օգտատերերի համար մասնավոր հատվածի ցանկացած ներկայացուցչի կողմից սահմանված ընդհանուր դրույթների և պայմաններին:

Ինչ է սա նշանակում օգտատերերի համար

Երիտասարդները պետք է տեղյակ լինեն այն կայքերի օրենքներին և քաղաքականություններին, որ նրանք օգտագործում են, հատկապես այն, թե ինչպես են դրանք առնչվում ատելության խոսքի առցանց դրսևորումների հետ: Հաճախ, ատելության խոսքի դեմ կարելի է պայքարել հենց այդ կայքի ուղեցույցերին և բողոքներ ներկայացնելու ընթացակարգերին հետևելու միջոցով: Եթե դրանք բավարար չեն, ապա, քարոզարշավի մասնակիցները կարող են վիճարկել կայքի քաղաքականությունը:

ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼԸ



ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՎ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ

Ատելության խոսքի դրվագի մասին հայտնելը դրա դեմ պայքարելու միակ եղանակը չէ: Կարևոր է, որպեսզի երիտասարդները տեղեկացված լինեն խնդրի նկատմամբ այլ մոտեցումների մասին նույնպես, և կարողանան գնահատել, թե առանձին դեպքերում արձագանքներից որը կլինի առավել արդյունավետ: Ստորև բերված առաջին սխեման ցույց է տալիս ատելության առանձին դրսևորումների որոշ արձագանքների տեսակներ: Քարոզարշավի ռազմավարություններ բաժնում ավելի մանրամասն քննարկվում են նաև խնդրին այլ մոտեցումների օրինակներ:

Երբ որոշում ենք, թե որ ռազմավարությունը կամ արձագանքը ընտրենք ամեն առանձին դեպքում, ամենապատշաճ պատասխանը պետք է պայմանավորված լինի դեպքի լրջությամբ: Կողմնակալության կամ նախապաշարմունքի «թեթև» օրինակի դեպքում ամենաճիշտը կլինի ուղղակիորեն կապվել դրանց հեղինակի հետ և ցույց տալ նրան իր արտահայտության հնարավոր վտանգները, իսկ եթե ատելության խոսքի դեմ քարոզարշավի կայքում հայտնվում է մշտական «տրոլ», ապա ամենաճիշտը կլինի նրան ընդհանրապես անտեսելը: Նկարագրվածի հակառակ իրավիճակում, այսինքն երբ գործ ունենք ատելություն քարոզող կայքի հետ, որը հրահրում է բռնություն որոշակի խմբի դեմ, կարող է կարիք լինել հայտնել դրա մասին ոստիկանությանը:

Պատշաճ պատասխանն ընտրելիս ամենակարևոր նկատառումը, որ պետք է հաշվի առնենք այն է, թե ինչ ազդեցություն է կարող ունենալ տվյալ արտահայտությունը կամ ամբողջ կայքը: Ստորև ներկայացված սխեմայում ներառված են մի շարք հարցեր, որ անհրաժեշտ է հաշվի առնել այդ ազդեցությունը գնահատելիս:





ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Երիտասարդները պետք է տեղյակ լինեն առցանց լինելու հնարավոր վտանգների մասին և պետք է ձեռնարկեն անվտանգության միջոցներ իրենց անձնական տվյալները և մասնավոր կյանքը չվտանգելու համար: Կան նաև որոշ միջոցներ, որ նրանք կարող են ձեռնարկել, որպեսզի նվազեցնեն իրենց՝ կիբերբուլինգի զոհ դառնալու հավանականությունը: Դրանցից մի մասը նկարագրվում է կիբերբուլինգի մասին բաժնում:

5.9 ԿԻԲԵՐԲՈՒԼԻՆԳ

“... կիբերբուլինգ նշանակում է ցանկացած էլեկտրոնային հաղորդակցություն, ներառյալ, բայց ոչ միայն, այն, որի համար դրդապատճառ են հանդիսացել աշակերտի իրական կամ ենթադրյալ ռասայական պատկանելությունը, մաշկի գույնը, կրոնական պատկանելությունը, ազգային, դասային կամ էթնիկ ծագումը, սեռական կողմնորոշումը, ֆիզիկական, մտավոր, հոգեբանական կամ ուսումնառության հետ կապված որևէ հատուկ կարիքները կամ խնդիրները, գենդերային ինքնության և արտահայտման, կամ այլ տարբերվող անձնական հատկանիշները, կամ վերը նշված խմբերից որևէ մեկին պատկանող անձի հետ կապը, եթե գրավոր, բանավոր կամ ֆիզիկական գործունեությունը կամ էլեկտրոնային հաղորդակցությունը նպատակ ունեն՝

(I) ֆիզիկական վնաս պատճառել աշակերտին կամ նրան պատկանող ունեցվածքին, կամ

(II) էապես ազդել աշակերտի կրթական հնարավորությունների վրա, կամ

(III) լինեն այնքան ծայրահեղ, երկարատև կամ համատարած, որ ստեղծեն ճնշող և սպառնալից կրթական միջավայր, կամ

(IV) էապես խոչընդոտել դպրոցի բնականոն գործունեությանը»:

Արձագանքում ենք կիբերբուլինգին: Գործողությունների գործիքաշարք (Զրպարտության դեմ Լիգա) Responding to Cyberhate, Toolkit for Action (Anti-Defamation League)

Բուլինգը տեղի է ունենում, երբ որևէ մեկը կամ անձանց մի խումբ կանխամտածված դրսևորում է թշնամական կամ վիրավորական վարքագիծ մեկ այլ անձի նկատմամբ: Սովորաբար նման վերաբերմունքն արտահայտվում է տևական ժամանակ. զոհն անընդհատ ենթարկվում է նվաստացման: Կիբերբուլինգի պարագայում այդ նույն թիրախավորումը տեղի է ունենում առցանց կամ էլեկտրոնային տարբերակով: Կիբերբուլինգի ժամանակ գործի են դրվում էլ.նամակները, արագ հաղորդագրությունները, զրուցասենյակները (chat room), փեյջերները, բջջային հեռախոսները կամ տեղեկատվական տեխնոլոգիայի այլ սարքեր: Ազդեցությունն անհատի վրա նվազ ճնշող չէ իրական կյանքում նվաստացումից: Կիբերբուլինգը բուլինգի ձևերից մեկն է: Կիբերբուլինգի դեպքերին շատ ավելի բարդ է արձագանքելը, քանի որ համացանցը ոչ վիրտուալ հաղորդակցության համեմատ շատ ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում անանուն հաղորդակցության համար: Այն կարող է լինել շատ ավելի սևեռուն լ, կամ շատ ավելի համառորեն սևեռուն, քանի որ տեղի է ունենում նույնիսկ այն ժամանակ, երբ նվաստացնողը ֆիզիկապես ներկա չէ: Երբ նվաստացնողն իմանում է,

թե ինչպես կարող է կապվել իր «զոհի» հետ, բուլինգը դառնում է մշտական և անխուսափելի: Հենց այս պատճառով է, որ երիտասարդները պետք է իրազեկված լինեն իրենց անձնական տվյալները տրամադրելու վտանգների մասին:

ԿԻԲԵՐԲՈՒԼԻՆԳԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Կիբերբուլինգը լուրջ և մշտական խնդիր է երիտասարդների համար: Այն կարող է բերել մշտական վարկաբեկման և նույնիսկ դառնալ ինքնասպանության պատճառ: Մի շարք տարբեր հետազոտություններ ցույց են տվել, որ այս խնդիրը ազդում է մեծ թվով դեռահասների վրա՝

- 2014 թվականի զեկույցի “EU Net Children Go Mobile” համաձայն, 9-16 տարեկան 3500 երեխաների 12%-ը ենթարկվել է կիբերբուլինգի:[1]
- 2011 թվականի զեկույցի “EU Kids Online” համաձայն, 9-16 տարեկան 25,142 երեխաների 6%-ը ենթարկվել է առցանց բուլինգի (եվրոպացիների շրջանում), իսկ 3%-ն ինքն է իրականացրել բուլինգ:[2]
- Կիբերբուլինգի զոհ դարձած երեխաներն ավելի են հակված կիբերբուլինգ իրագործելու, քան այն երեխաները, որոնք չեն ենթարկվել բուլինգի:[3]
- Կիբերբուլինգի հետազոտության կենտրոնի կողմից ԱՄՆ-ում հրապարակված 2019 թվականի տվյալների համաձայն, 12-17 տարեկան երեխաների 37%-ն իրենց կյանքի ընթացքում առնվազն մեկ անգամ դարձել են կիբերբուլինգի զոհ, մինչդեռ 15%-ն ընդունել է, որ հենց իրենք են այլ անձանց ենթարկել կիբերբուլինգի: Նշված տվյալների համաձայն, կիբերբուլինգի ամենատարածված ձևերն են՝ կոպիտ և վնասաբեր մեկնաբանությունները և զրպարտության տարածումն առցանց տիրույթում:[4]

Ավանդական բուլինգը և կիբերբուլինգը սերտ կապված են միմյանց հետ. նրանք, ովքեր ենթարկվել են բուլինգի դպրոցում, բուլինգի են ենթարկվում նաև առցանց տիրույթում, իսկ նրանք, ովքեր դպրոցում բուլինգի են ենթարկում ուրիշներին, դա անում են նաև առցանց:

ԿԻԲԵՐԲՈՒԼԻՆԳԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Առհասարակ, կիբերբուլինգն ինչպես և բուլինգը նվաստացման տեսակ է և բազմաթիվ նման դեպքեր կարող են պաշտպանվել մարդու տարբեր իրավունքներով: Ավելի «թեթև» դեպքերում, հաճախ սա կանոնակարգվում է մասնավոր կյանքի իրավունքով, որն էլ վկայակոչվում է: Ավելի ծանր դեպքերն առնչվում են անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքից ազատ լինելու իրավունքին, իսկ երբեմն նաև կյանքի իրավունքին:

Անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքը կարող է ներառել նաև սեռական բռնությունը, հոգեբանական ճնշումները և շահագործումը: Ինչ վերաբերում է կյանքի իրավունքին, ապա սա կապված է և այն դեպքերի հետ, երբ իրական կյանքում բուլինգը վտանգ էպարունակում զոհի կյանքի համար, և այն դեպքերի, երբ տանջանքն այնքան անտանելի է, որ զոհը որոշում է ինքնասպանություն գործել:

Ո՞ՐՆ Է ԿԻԲԵՐԲՈՒԼԻՆԳԻ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԸ

Կիբերբուլինգն անհատի դեմ ուղղված ուժերի հարաբերակցությունն է, մինչդեռ ատելության խոսքը, սովորաբար, մարդկանց խմբերի դեմ ուղղված բռնության և թշնամանքի կոչերն են: Սակայն, զոհի տեսանկյունից երկուսն էլ բռնության և նվաստացման տեսակներ են: Ատելության խոսքը և կիբերբուլինգն օգտագործում են նույն առցանց խողովակները: Դրանք հաճախ ուղղված են այն անհատների դեմ, ովքեր իրենց ծագման, հաշմանդամության, էթնիկ պատկանելության կամ նմանատիպ այլ պատճառներով տարբերվող են համարվում: Երկու դեպքում էլ գործ ունենք վիրավորական և ճնշումների նպատակ հետապնդող հաղորդակցության հետ: Շատ դեպքերում, կիբերբուլինգը և ատելության խոսքը միասին են հանդես գալիս, և սա չափազանց վատ է անդրադառնում անհատների և խմբերի վրա: Օրինակ՝ բուլինգի համար դրդապատճառ կարող են հանդիսանալ անձի գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշումը կամ էթնիկ ծագումը: Միևնույն ժամանակ, ատելության խոսքի դեմ պայքարում երիտասարդների տոկունությունը կարող է օգնել նրանց ուժեղ լինել նաև կիբերբուլինգի ժամանակ: Համացանցային գրագիտությունը չափազանց կարևոր է, քանի որ այն օգնում է երիտասարդներին ըմբռնել համացանցում ծավալվող գործընթացները և պաշտպանել իրենց վիրավորանքներից կամ կարողանալ արձագանքել, երբ դրանց ականատեսն են դառնում:

ՍԵՓԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Երիտասարդները պետք է տեղեկացված լինեն, որ ստորև թվարկվող վարքագծի տեսակներն անընդունելի են և կարող են լինել անօրինական: Նույնիսկ մեկ՝ առանձին դրվագը կարող է դառնալ վիրավորանքի տևական արշավի սկիզբ կամ ավելի ծայրահեղ դրսևորումների նախանշան: Երիտասարդները պետք է կարողանան ճանաչել նախազգուշական ազդակները և խոհեմությամբ արձագանքել նման վիրավորական դրսևորումների դրվագներին: Նրանք պետք է իմանան, թե ինչպիսի նախազգուշական միջոցներ է կարելի ձեռնարկել, երբ սպառնալիքներն իրական են թվում: Նրանք նաև պետք է տեղեկացված լինեն, որ գոյություն ունեն կազմակերպություններ, որոնք կարող են աջակցել և խորհրդատվություն առաջարկել, կամ օգնել, եթե առաջանա ավելի «պաշտոնական» քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն, այդ թվում նաև իրավական:

«Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի ազգային կոմիտեներից մի քանիսը տրամադրում են տեղեկություններ թեժ գծերի մասին, որոնց միջոցով կարելի է տեղեկություններ հաղորդել իրավապահ մարմիններին: Օրինակ՝ Ինսեյֆ (In Safe network) ցանցը երիտասարդներին տրամադրում է տեղեկություններ և խորհրդատվություն բողոք արձանագրելու կամ օգնության դիմելու վերաբերյալ. տե՛ս www.saferinternet.org. Ինսեյֆը (InSafe) «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի եվրոպական գործընկեր՝ Եվրոսքուլնեթի ծրագրերից մեկն է:

ԱՌՑԱՆՑ ԲՌՆՈՒԹՅԱՆ/ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

- սպառնալիքներ, սադրող, ռասայական կամ էթնիկ վիրավորանքներ ուղարկելը,
- նույնասեռականներին ուղղված վիրավորանքներն ու հալածանքը, գենդերային բնույթ ունեցող վիրավորանքներ կամ խտրականության այլ ձևեր,

- զոհի համակարգիչը համակարգչային վիրուսով վարակելու փորձը,
- փոստարկղը վիրավորական նամակներով հեղեղելը,
- անձի մասին՝նրան կամ նրա հեղինակությանը վնասելու նպատակով, կեղծ տեղեկություններ տեղադրելը կամ տարածելը,
- որևէ մեկին առանձնացնելը և բոլորին այդ մեկին վիրավորելու կամ ծաղրելու կոչ անելը,
- այլ մարդու անունից կեղծ կամ անհավատալի բաներ ասելը,
- որևէ մեկի նկարները, հատկապես՝ ոչ այնքան պատեհ իրավիճակներում, տարածելը՝ առանց այդ մարդու թույլտվության,
- որևէ մեկի նամակներն առանց իր թույլտվության տարածելը,
- մյուսներին ճնշելը, որպեսզի ինչոր մեկին համայնքից (վիրտուալ կամ ոչ վիրտուալ) դուրս հանեն,
- որևէ մեկին հետևողականորեն վիրավորական, չարակամ կամ տհաճ հաղորդագրություններ ուղարկելը:

ԱՌՑԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ.ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե ստանում եք վիրավորական հաղորդագրություններ կամ սպառնալիքներ կարող եք դիմել ստորև ներկայացված գործողություններին: Յուրաքանչյուր առանձին դեպք տարբեր է և կարևոր է, որպեսզի երիտասարդները սովորեն խելամտորեն ընտրել իրենց պատասխան գործողությունները: Միշտ օգտակար կլինի դեպքը քննարկել վստահելի մարդկանց հետ:

- Մի՛ պատասխանեք: Հաճախ, հենց դրան էլ սպասում է վիրավորանքի հեղինակը: Երբեք մի՛ փորձեք պատասխան տալ, քանի որ դա ընդամենը ավելի կթեժացնի իրավիճակը:
- Կիսվեք վստահելի մարդկանց հետ, խորհուրդ հարցրեք նրանցից:
- Հայտնե՛ք խնդրի մասին երիտասարդների առցանց անվտանգությամբ զբաղվող կազմակերպություններից որևէ մեկին (տե՛ս էջ 267-268):
- Հայտնե՛ք անցանկալի վարքագծի մասին կայքի սեփականատիրոջը/հոսթինգ տրամադրողին:
- Արգելափակե՛ք/հայտնե՛ք անցանկալի անձանց կամ իրենց ոչ պատշաճ պահող մարդկանց:
- Փոխե՛ք ձեր էլ. հասցեն կամ բջջային հեռախոսի համարը, եթե դրանցից որևէ մեկը օգտագործվում է ձեզ թիրախավորելու համար:
- Անհրաժեշտության դեպքում, հայտնե՛ք անցանկալի վարքագծի մասին ոստիկանությանը կամ կապվեք փաստաբանի հետ: **Առցանց վիրավորանքներն անօրինական են, եթե ծանր հետևանքներ են ունենում որևէ մեկի առողջության, անվտանգության կամ հոգեկան հանգստության համար:**
- Միշտ պահե՛ք ստացված վիրավորական հաղորդագրությունները, ներառյալ՝ դրա հեղինակի էլ.հասցեն կամ անձնական էջը: Այս փաստերը ձեզ կարող են պետք գալ, եթե լինի պաշտոնական բողոք ներկայացնելու կարիք:

ԱՌՑԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կրթական ոլորտի աշխատակիցները, ծնողները և ընդհանրապես մարդիկ, ովքեր աշխատում են երիտասարդների հետ կարող են ձեռնարկել միջոցներ նրանց կիբերբուլինգից պաշտպանելու համար, ինչի համար պետք է՝

Վիրավորանքներ հասցնելու հնարավորությունների սահմանափակում

- Պարբերաբար ստուգե՛ք և թարմացրե՛ք սոցիալական ցանցերում ձեր անձնական և գաղտնիության կարգավորումները:
- Մի՛ տվեք ձեր տվյալները, օրինակ՝ բջջայինի համարը, էլ հասցեն կամ բնակության հասցեն անծանոթ մարդկանց:
- Մի՛ կիսվեք ձեր մասին անձնական տեղեկություններով անծանոթ մարդկանց հետ (օրինակ՝ առցանց զրուցասենյակներում, որտեղ անծանոթների հանդիպելու հավանականությունը շատ մեծ է):
- Մտածե՛ք և նկատի առե՛ք, թե որոնք են ձեր կողմից օգտագործվող «տարածքում» ընդունված վարքագծի կանոնները և ինչ տեսակի մարդիկ են այն օգտագործում: Ինչպես և իրական կյանքում, որոշ տեղեր ավելի մեծ ռիսկեր են պարունակում ձեր անվտանգության համար, քան մյուսները: Այնպես որ, առցանց աշխարհում մենք պետք է արձագանքենք՝ ելնելով համատեքստից:
- Հարգե՛ք «էթիկետը» (էթիկայի կանոնները համացանցում): Մյուսների հետ առցանց վարվե՛ք այնպես, ինչպես կցանկանայիք, որ վարվեին ձեզ հետ:
- Ինչպես հարկն է պաշտպանե՛ք ձեր անձնական էջերը և էլ. հասցեները: Դուրս եկեք էջից, եթե օգտագործում եք հանրային օգտագործման համակարգիչ և պարբերաբար փոխե՛ք գաղտնաբառերը:
- Եթե հանդիպում կամ ենթարկվում եք առցանց վիրավորանքների, հայտնե՛ք այդ բովանդակության կամ մեկնաբանությունների հոսթինգն ապահովող ցանցերին կամ ոստիկանության հատուկ այդ հարցերով զբաղվող բաժիններին կամ ձեր երկրի՝ արդարադատությունն ապահովող ծառայություններին: (Խորհուրդների համար տե՛ս www.saferhամացանց.org):

- մշակեն ակտիվ մոտեցումներ, քննարկեն վտանգները երիտասարդների հետ և հնարավորինս աջակցեն նրանց դրանցից խուսափելու հարցում, պատրաստ լինեն նման քննարկումների համար, բերեն օրինակներ դասարանից և չխուսափեն այս հարցերը բարձրացնելուց, խթանեն դպրոցում կիբերբուլինգի դեմ հետևողական քաղաքականության իրականացումը,
- տեղեկանան վիրտուալ և ոչ վիրտուալ ատելության խոսքի միջև առկա կապի մասին, այս երկուսը հաճախ փոխկապակցված են,

- երեխաներին աջակցեն՝ տեղեկացնելով նրանց և քննարկելով այս հարցը նրանց հետ, անհրաժեշտ հմտություններ չունենալու դեպքում կապվեն համապատասխան կազմակերպությունների և զոհերի աջակցության կենտրոնների հետ, երիտասարդների համար տեսանելի վայրերում տեղադրեն տեղեկատվություն այն կոնտակտային տվյալներով, որ նրանց կարող են օգտակար լինել, եթե օգնության կարիք ունենան,
- օգնեն ծնողներին՝ իրազեկելով նրանց կիբերբուլինգի գոյության մասին և տեղեկացնելով, թե ինչպիսի գործողությունների կարող են նրանք դիմել:

5.10 ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքում մարդու իրավունքների ամենաառաջատար կազմակերպություններից մեկն է և ներառում է 47 անդամ պետություն: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ-պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ECHR), որն իրենից ներկայացնում է միջազգային պայմանագիր՝ ուղված մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը:

Եվրոպայի խորհրդի աշխատանքը ժողովրդավարության առումով առավելապես հիմնված է կրթության վրա. կրթություն դպրոցներում և շարունակական՝ ոչ ֆորմալ կրթություն ժողովրդավարության կայունության նպատակով: Մարդու իրավունքների ուսուցումը, ինչպես նաև՝ ժողովրդավարական քաղաքացիության կրթությունը կազմում են այն ամենի կարևորագույն մասը, որը մենք պետք է վերահսկենք՝ ժողովրդավարական պետությունները կայուն պահելու համար:

Եվրոպայի Խորհրդի երիտասարդության հարցերով բաժինը 2013-2017 թթ. իրականացրել է «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավը ՝ հատուկ ուշադրություն դարձնելով քաղաքացիական ոգու զարգացմանն ու մարդու իրավունքների ուսուցմանը՝ որպես երիտասարդների մոտ ատելության խոսքը ճանաչելու և մարդու իրավունքներն առցանց տիրույթում պաշտպանելու ունակության զարգացման միջոց:

Ատելության խոսքի առցանց դրսևորումներին վերաբերող՝ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող աշխատանքներն ընթանում են չորս հիմնական ուղղություններով.

1. խնդրի հանդեպ իրավական մոտեցումներ՝ օգտագործելով ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը,
2. քաղաքականության գործիքների ստեղծում՝ համացանցի կառավարման ոլորտում տարվող աշխատանքների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ուղղված՝ մի շարք հանձնարարականների և ոլորտի քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերի միջոցով,
3. մշտադիտարկում՝ ռասիզմի և խտրականության դեմ եվրոպական հանձնաժողովի և Մարդու իրավունքների հանձնակատարի կողմից իրականացվող աշխատանքի միջոցով,
4. կրթություն և կարողությունների զարգացում հասարակության տարբեր անձանց համար, այդ թվում՝ լրագրողների, ՀԿ ակտիվիստների, ուսուցիչների և երիտասարդների համար:

Ատելության խոսքի առցանց դրսևորումները սերտորեն կապված են մի շարք հարցերի հետ, ինչը նշանակում է, որ այս հարցը ներառվել է նաև մի շարք այլ ոլորտների նախաձեռնությունների մեջ:

Դրանցից մի քանիսը ներկայացված են ստորև:

Երեխաների իրավունքներ	Փոքրամասնությունների պաշտպանություն	Դատավորների վերապատրաստում
Կիբերհանցագործությունների դեմ պայքար	Կիբերհանցագործությունների դեմ պայքար և երեխաների պաշտպանություն	Մեդիագրագիտություն
Արտահայտման ազատություն	Բազմակարծիք հասարակության ձևավորման խթանում	Մեդիակրթություն
Հակառասիստական քաղաքականություն	Միջմշակութային երկխոսության խթանում	Ուսուցիչների վերապատրաստում
Երիտասարդական քաղաքականութուն	Երիտասարդների մասնակցություն	Ոչ ֆորմալ կրթություն և երիտասարդական աշխատանք

Այս ցանկը արտահայտում է մի շարք մտահոգություններ և խնդիրներ, որոնք ունեն որոշակի կապ ատելության խոսքի առցանց դրսևորման հետ: Այն նաև ցուցանիշ է առ այն, որ խնդիրը կարող է լուծվել բազում կողմերից՝ օգտագործելով մեթոդների հզոր բազմազանություն:

Հետևյալ հակիրճ տեղեկությունը ներառում է աշխատանքի միայն այն բնագավառները, որոնք ամենակարևորն են կամ ունեն ավելի ուղիղ կապ ատելության խոսքիառցանց դրսևորումների դեմ պայքարի հետ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան վավերացվել է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների կողմից: Այն պաշտպանում է մի շարք քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, ներառյալ՝ մասնավոր կյանքի իրավունքը, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից պաշտպանությունը: Եվ չնայած այն հանգամանքին, որ կոնվենցիան նաև պաշտպանում է արտահայտման ազատությունը, այս իրավունքը կարող է սահմանափակվել, երբ արտահայտումը կարող է վնասել մյուսներին կամ ողջ հասարակությանը:
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պատասխանատու է Եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավունքները պաշտպանելու համար: Այս դատարանի նախադեպային իրավունքն ապահովել է «ատելության խոսքի» մեկնաբանություն, որի շնորհիվ վիրավորանքների ամենածայրահեղ դեպքերը չեն պաշտպանվում արտահայտման ազատության իրավունքով:
- Եվրոպայի խորհրդի կողմից մշակված կիբերհանցագործությունների դեմ Կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունն այս թեմային վերաբերող միակ՝ պարտավորություններ

ենթադրող, միջազգային փաստաթուղթն է: Այն ուժի մեջ է մտել 2004թ հուլիսին և պարունակում է ուղղորդող սկզբունքներ բոլոր այն կառավարությունների համար, որոնք ցանկանում են մշակել կիբերհանցագործությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ օրենսդրություն:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

- Եվրոպայի խորհրդի համացանցի կառավարման ռազմավարության (2001) մեջ ուրվագծված են մի շարք առանցքային ոլորտներ, որոնք մշակվել են ապահովելու համար համացանցի հետագա զարգացումը և որպես անվտանգ տարածք ձևավորումը, որտեղ պաշտպանված է արտահայտման ազատությունը և որն ապահովում է տեղեկատվության հասանելիությունը:
- Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն և Խորհրդարանական վեհաժողովը սահմանել են մի շարք հանձնարարականներ՝ ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ուղղությամբ տարվող քաղաքականության համար: Դրանց թվին է պատկանում՝
    - Քաղաքականության հանձնարարական CM/Rec(1997)20 ատելության խոսքի վերաբերյալ:
    - Քաղաքականության հանձնարարական CM/Rec(2009)5, որը սահմանում է երեխաներին վտանգավոր բովանդակությունից ու վարքագծից պաշտպանելու միջոցներ և նպաստում ակտիվ մասնակցությանն առցանց տիրույթում:
    - Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված Քաղաքականության հանձնարարական CM/Rec(2018)7, որի նպատակն է հարգել, պաշտպանել և իրացնել երեխայի իրավունքները թվային միջավայրում: Հանձնարարականը ներառում է երեխաներին վտանգավոր բովանդակությունից ու վարքագծից պաշտպանելու միջոցներ և նպաստում ակտիվ մասնակցությանն առցանց տիրույթում:
    - «Համացանցի օգտատերերի համար Մարդու իրավունքների ուղեցույցը» հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպական խորհրդի այլ կոնվենցիաների և գործիքների վրա, որոնք կապ ունեն մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ասպեկտների հետ: Ուղեցույցը համացանցի օգտատերերին հնարավորություն է ընձեռում սովորել առցանց մարդու իրավունքների, դրանց հնարավոր սահմանափակումների և նման սահմանափակումների համար հասանելի միջոցների մասին: Ուղեցույցը տրամադրում է տեղեկություններ առ այն, թե ինչ են նշանակում իրավունքներն ու ազատությունները համացանցի համատեքստում, ինչպես է հնարավոր դրանց վրա հիմնվել և համապատասխանաբար կիրառել:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

- Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ/ECRI) Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների հարցերով զբաղվող մարմիններից մեկն է: Հանձնաժողովի կազմի մեջ են անկախ փորձագետներ, ովքեր հրապարակում են մշտադիտարկման հաշվետվություններ, այդ թվում՝ ատելության խոսքի խնդրին վերաբերող: ՌԱԵՀ-ն անդրադարձել է ատելության խոսքին նաև իր քաղաքականության հանձնարարականում՝ կապված ատելության խոսքի դեմ պայքարի հետ (Քաղաքականության հանձնարարական թիվ 15): ՌԱԵՀ-ը վերահսկում է խնդիրը՝ երկրներում իրականացվող մշտադիտարկման և թեմատիկ հաշվետվությունների միջոցով:
- Մարդու իրավունքների հանձնակատարը հատուկ ընդգծել է, որ ատելության խոսքը մտահոգություն առաջացնող խնդիր է մարդու իրավունքների տեսանկյունից (օրինակ՝ ռոմա գնչուների, փախստականների և ապաստան հայցողների առնչությամբ): Հանձնակատարը նաև կոչ է արել միջոցներ ձեռնարկել ատելության խոսքի դեմ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Եվրոպայի խորհրդի Թվային քաղաքացիության կրթական ծրագիրը նպատակ ունի զարգացնել երեխաներին ուսուցման միջոցով և օգնել թվային հանրությանը նրանց ակտիվ մասնակից դարձնելու համար անհրաժեշտ կարողունակություններ ձեռք բերելու գործում:
- «Wild Web Woods» («Ցանցի մութ անտառները») խաղը առցանց գործիք է երեխաների համար, որն օգնում է նրանց սովորել իրենց առցանց անվտանգությունը պաշտպանելու հիմնական մեթոդները:
- «Համացանցային գրագիտություն» ձեռնարկը առցանց ուսուցողական գործիք է ծնողների, ուսուցիչների և երիտասարդների համար, որի նպատակն է զարգացնել համացանցն օգտագործելու նրանց հմտություններն ու կարողությունները:
- Եվրոպայի խորհրդի երիտասարդության բաժինը կազմակերպում է մարդու իրավունքների ուսուցողական ծրագիր երիտասարդական կազմակերպությունների և ակտիվիստների համար: Ծրագրում կարևոր տեղ են զբաղեցնում հակառասիստական աշխատանքը և միջմշակութային երկխոսությունը: Ակտիվիստների և այն ուսուցիչների համար, ովքեր մասնագիտանում են մարդու իրավունքների ոլորտում, կազմակերպվել են բազմաթիվ ուսուցողական դասընթացներ, ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում: Ստեղծվել են բազմաթիվ ուսումնական նյութեր, ինչպես օրինակ՝ «Կողմնացույց» („Compass“), «Կողմնացույցիկ» („Compasito“) և «Գենդերային Հարցեր» („Gender Matters“) ձեռնարկները:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՅԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ատելության խոսքի առցանց դրսևորումների վերաբերյալ հետազոտություն և «Ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ելակետեր» վերնագրով հրապարակում: Վերջինս անդրադառնում է երիտասարդների համար ատելության խոսքի հետևանքներին և հանգամանքներին և նկարագրում՝ խնդրին անդրադարձող մի շարք ծրագրեր և քարոզարշավներ:
- Ատելության խոսքին վերաբերող հետազոտություն, որն անցկացվել է 2012 և 2015 թթ, որի նպատակն է եղել վերլուծել ատելության խոսքի երիտասարդների կողմից ընկալումը և այն ազդեցությունը, որն ունի այն նրանց վրա:
- Եվրոպական երիտասարդական հիմնադրամը դրամաշնորհներ է տրամադրել երիտասարդական կազմակերպություններին՝ ատելության խոսքի առցանց դրսևորումների վերաբերյալ ծրագրեր իրականացնելու նպատակով:
- Առցանց ակտիվիստների համար ուսուցողական դասընթացներ:
- Աշխատարաններ և սեմինարներ քարոզարշավի ակտիվիստների և կազմակերպիչների համար:
- Ուսումնական սեսիաներ միջազգային երիտասարդական կազմակերպությունների հետ:

ՈՐՏԵ՞Ղ Է ՀՆԱՐԱՎՈՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն գործերը, որոնք վերաբերում են ատելության խոսքին
https://www.echr.coe.int/Documents/FS_Hate_speech_ENG.pdf

Արտահայտման ազատության և համացանցի կառավարման առթիվ Եվրոպայի խորհրդի կատարած աշխատանքի դիտարկում
https://www.coe.int/en/web/freedom-expression/home

Թվային քաղաքացիության կրթական ծրագիր
https://www.coe.int/en/web/digital-citizenship-education/home

«Կողմնացույց» ՝ Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ www.coe.int/compass

Համացանցային գրագիտության ձեռնարկ www.coe.int/t/dghl/standardsetting/internetliteracy/Source/Lit_handbook_3rd_en.swf

Համացանցի օգտատերերի համար Մարդու իրավու նքների ուղեցույց
www.coe.int/en/web/internet-users-rights/guide.

Ատելության խոսքի վերաբերյալ ձեռնարկ, Անն Վեբեր, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ, 2009 թվական
http://icm.sk/subory/Manual_on_hate_speech.pdf

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Գ. Մաշերոնի և Ա. Քուման (2014): Ցանցի երեխաները հեռանում են. Վերջնական հաշվետվություն, Արդյունքներ D6.4&D5.2. Միլան. Educatt
2. ԵԽ-ի երեխաներն առցանց տիրույթում. բացահայտումներ, մեթոդներ, հանձնարարականներ, LSE հրատարակություն, (2014):
3. Կիբերբուլինգ երիտասարդների շրջանում, ուսումնասիրություն LIBE հանձնաժողովի համար, Ներքին քաղաքականության գլխավոր տնօրինություն , 2016, հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2016/571367/IPOL_STU(2016)571367_EN.pdf
4. Կիբերբուլինգի հետազոտական կենտրոն, կիբերբուլինգի տվյալներ 2019, հասանելի է հետևյալ հղումով՝ https://cyberbullying.org/2019-cyberbullying-data

ԳԼՈՒԽ 6
ՀԱՎԵԼՎԱԾ

6.1 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 265
6.2 Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան եվ նրա արձանագրությունները 267
6.3 Ատելության խոսքի առցանց դրսեվորումների խնդրին անդրադառնալու այլ ռեսուրսներ..... 271
6.4 Համացանցի օգտատերերի համար մարդու իրավունքների ուղեցույց..... 274
6.5 «Էջանիշեր» ձեռնարկի հիման վրա մշակված արհեստարանների օրինակներ 277

6.1 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՌՉԱԿԱԳԻՐ

(ԱՄՓՈՓ ՏԱՐԲԵՐԱԿ)

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով:

1. Յուրաքանչյուր ոք ունի այս Հռչակագրում բերված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ խտրության՝ հիմնված ցեղային, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի վրա:
2. Յուրաքանչյուր ոք ունի ապրելու, ազատության ու անձի անձեռնմխելիության իրավունք:
3. Ոչ ոք չունի իրավունք վարվել ձեզ հետ ստրուկի պես, ինչպես և դուք չունեք իրավունք ուրիշների հետ վարվել ստրուկի պես:
4. Ոչ ոք չպետք է ենթարկվի կտտանքների, դաժան, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի:
5. Ամեն ոք իրավունք ունի ճանաչվել որպես իրավասուբյեկտ:
6. Բոլորը հավասար են օրենքի առջև. Այն պետք է բոլորի նկատմամբ կիրառվի նույն կերպ:
7. Ամեն ոք ունի իր իրավունքների արդյունավետ վերականգնման իրավունք, եթե խախտվում են նրա հիմնական իրավունքները:
8. Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական կալանքի, բանտարկության կամ արտաքսման իր երկրից:
9. Յուրաքանչյուր ոք ունի արդար և հրապարակային դատավարության իրավունք:
10. Յուրաքանչյուր ոք պետք է համարվի անմեղ, քանի դեռ մեղավոր չի ճանաչվել:
11. Յուրաքանչյուր ոք ունի մասնավոր կյանքի (ներառյալ տան և ընտանեկան կյանքի) նկատմամբ հարգանքի իրավունք:
12. Յուրքանչյուր ոք ունի պետական սահմաններում ապրելու և ազատորեն տեղաշարժվելու իրավունք:
13. Յուրաքանչյուր ոք ունի այլ երկիր գնալու և պաշտպանություն խնդրելու իրավունք, եթե ենթարկվում է հետապնդումների կամ կա հետապնդումների ենթարկվելու վտանգ:
14. Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:
15. Յուրաքանչյուր ոք ունի ամուսնանալու և ընտանիք ունենալու իրավունք:
16. Յուրաքանչյուր ոք ունի սեփականություն ունենալու իրավունք:
17. Յուրաքանչյուր ոք ունի դավանանքի ազատություն (ներառյալ, բայց ոչ միայն, կրոնը):

18. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու և տեղեկություններ տալու և ստանալու իրավունք:
19. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների և միություններ կազմելու իրավունք:
20. Յուրաքանչյուր ոք ունի իր երկրի կառավարության մաս կազմելու իրավունք, որը պետք է ընտրվի ազատ և արդար ընտրությունների միջոցով:
21. Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ապահովության իրավունք:
22. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի աշխատել արդարացի վարձատրության դիմաց և անվտանգ պայմաններում:
23. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի արհեստակցական միությանը միանալու իրավունք:
24. Յուրաքանչյուր ոք ունի հանգստի և ժամանցի իրավունք:
25. Յուրաքանչյուր ոք ունի այնպիսի կենսամակարդակի իրավունք, որը պատշաճ է իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահությունը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները:
26. Յուրաքանչյուր ոք ունի կրթության, այդ թվում՝ անվճար միջնակարգ կրթության իրավունք:
27. Յուրաքանչյուր ոք ունի իր համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:
28. Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ու միջազգային այնպիսի կարգերի իրավունք, որոնց առկայությամբ սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները լիովին իրագործելի են:
29. Յուրաքանչյուր ոք պետք է հարգի այլոց իրավունքները, համայնքը և հանրային սեփականությունը:
30. Որևէ մեկը չունի իրավունք այս Հռչակագրի որևէ իրավունք օտարելու:

6.2 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

ՆԱԽԱԲԱՆԻ ԱՄՓՈՓ ՏԱՐԲԵՐԱԿ

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն աշխատում են խաղաղության և միասնականության հասնելու ուղղությամբ՝ հիմնվելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա: Այս Կոնվենցիայով նրանք անում են իրենց առաջին քայլը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի բազմաթիվ իրավունքները գործի դնելու ուղղությամբ:

ՀՈԴՎԱԾ 1 - ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐԳԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետություններն ապահովում են յուրաքանչյուրի անձի այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայում:

ՀՈԴՎԱԾ 2 - ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք ունեք կյանքի իրավունք:

ՀՈԴՎԱԾ 3 - ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՈՒՄ

Ոչ ոք երբեք իրավունք չունի ձեզ վնասելու կամ խոշտանգելու: Նույնիսկ անազատության մեջ մարդկային արժանապատվությունը պետք է հարգվի:

ՀՈԴՎԱԾ 4 - ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԳԵԼՈՒՄ

Արգելվում է որևէ մեկի հետ ստրուկի պես վարվելը կամ նրանց աշխատել հարկադրելը:

ՀՈԴՎԱԾ 5 - ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք ունեք ազատության իրավունք: Եթե ձեզ ձերբակալում են, դուք ունեք պատճառն իմանալու իրավունք: Եթե ձեզ ձերբակալել են, դուք ունեք ողջամիտ դատավարության իրավունք կամ մինչև դատավարությունն ազատ արձակվելու իրավունք:

ՀՈԴՎԱԾ 6 - ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք ունեք ողջամիտ ժամկետում անաչառ և անկախ դատարանի կողմից արդար դատաքննության իրավունք: Եթե ձեզ մեղադրում են հանցագործություն կատարելու մեջ, դուք անմեղ եք, մինչև չապացուցվի ձեր մեղավորությունը: Եթե դուք չունեք բավարար միջոցներ, դուք իրավունք ունեք ունենալ պետության կողմից վճարվող դատապաշտպան:

ՀՈԴՎԱԾ 7 - ԱՌԱՆՑ ՕՐԵՆՔԻ ՊԱՏԺԻ ԲԱՑԱՌՈՒՄ

Դուք չեք կարող դատապարտվել այն հանցանքի համար, որն իրականացնելիս այն չի համարվել քրեական հանցագործություն:

ՀՈԴՎԱԾ 8 - ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՐԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք ունեք ձեր անձնական և ընտանեկան կյանքի, բնակավայրի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

ՀՈԴՎԱԾ 9 - ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Դուք ունեք մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Դուք ունեք իրավունք տանը կամ հրապարակավ ձեր կրոնը դավանելու և, ցանկության դեպքում, այն փոխելու իրավունք:

ՀՈԴՎԱԾ 10 - ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Դուք ունեք իրավունք պատշաճ պատասխանատվությամբ ասելու կամ գրելու այն ինչ մտածում եք, ինչպես նաև մյուսներից տեղեկություններ ստանալու և տրամադրելու իրավունք: Սա ներառում է նաև մամուլի ազատությունը:

ՀՈԴՎԱԾ 11 - ՀԱՎԱՔՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Դուք ունեք խաղաղ հավաքների մասնակցելու իրավունք, ինչպես նաև միություններ ստեղծելու կամ դրանց միանալու իրավունք, ներառյալ արհեստակցական միությունները:

ՀՈԴՎԱԾ 12 - ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք ունեք ամուսնանալու և ընտանիք ունենալու իրավունք:

ՀՈԴՎԱԾ 13 - ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Եթե ձեր իրավունքները ոտնահարվել են, դուք կարող եք պաշտոնապես բողոք ներկայացնել այդ կապակցությամբ դատարաններին կամ այլ պետական մարմիններին:

ՀՈԴՎԱԾ 14 - ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ

Դուք ունեք այս բոլոր իրավունքներից առանց որևէ խտրականության օգտվելու իրավունք՝ անկախ ձեր մաշկի գույնից, սեռից, լեզվից, քաղաքական կամ կրոնական համոզմունքներից և ծագումից:

ՀՈԴՎԱԾ 15 - ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄ

Պատերազմի կամ այլ արտակարգ իրավիճակի ժամանակ կառավարությունը կարող է ձեռնարկել միջոցառումներ, որոնք կարող են հակասել ձեր իրավունքներին, սակայն միայն ծայրահեղ

անհրաժեշտության դեպքում: Նույնիսկ այդ պարագայում, կառավարություններն չունեն ձեզ խոշտանգումների ենթարկելու կամ կամայականորեն սպանելու իրավունք:

ՀՈԴՎԱԾ 16 - ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Կառավարությունները կարող են սահմանափակել օտարերկրացիների քաղաքական գործունեությունը, նույնիսկ եթե սա հակասի Հոդվածներ 10, 11 կամ 14-ի պահանջներին:

ՀՈԴՎԱԾ 17 - ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ

Այս Կոնվենցիայի որևէ դրույթ չի կարող օգտագործվել այնպես, որ վնասի սույն Կոնվենցիայով սահմանվող իրավունքներն ու ազատությունները:

ՀՈԴՎԱԾ 18 - ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Այս Կոնվենցիայի իրավունքների մեծ մասը կարող է սահմանափակվել ընդհանուր իրավունքի հիման վրա, որը կիրառելի է բոլորի նկատմամբ: Նման սահմանափակումները թույլատրելի են միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

19-51 ՀՈԴՎԱԾՆԵՐ

Այս հոդվածները բացատրում են, թե ինչպես է աշխատում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:

ՀՈԴՎԱԾ 34 - ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ

Եթե Կոնվենցիայով սահմանված՝ ձեր իրավունքները խախտվել են անդամ երկրներից որևէ մեկում, դուք նախ պետք է դիմեք բոլոր իրավասու ազգային ատյաններին: Եթե այդ եղանակով՝ ձեզ համար խնդիրը չլուծվի, ապա կարող եք դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան Ստրասբուրգ:

ՀՈԴՎԱԾ 52 - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Եթե Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պահանջի, կառավարությունը պարտավոր է բացատրել, թե ինչպես են Կոնվենցիայով սահմանված իրավունքները պաշտպանվում ազգային օրենսդրությամբ:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1, ՀՈԴՎԱԾ 1- ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Դուք ունեք սեփականություն ունենալու և ձեր գույքից օգտվելու իրավունք:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1, ՀՈԴՎԱԾ 2 - ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք ունեք դպրոց հաճախելու իրավունք:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1, ՀՈԴՎԱԾ 3 - ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք ունեք ձեր երկրի կառավարությունը գաղտնի քվեարկության միջոցով ընտրելու իրավունք:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4, ՀՈԴՎԱԾ 2 - ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Եթե դուք երկրում գտնվում եք օրինական կարգով, դուք ունեք երկրի սահմաններում ցանկացած տեղ գնալու և ցանկացած տեղ բնակվելու իրավունք:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6, ՀՈԴՎԱԾ 1 - ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Դուք չեք կարող դատապարտվել մահվան կամ մահապատժի ենթարկվել պետության կողմից:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7, ՀՈԴՎԱԾ 2 - ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դուք կարող եք դիմել վերադաս դատական ատյանի, եթե դատապարտվել եք հանցագործության համար:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7, ՀՈԴՎԱԾ 3 - ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԽԱԼ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Դուք ունեք փոխհատուցման իրավունք, եթե ձեզ դատապարտել են հանցագործության համար, սակայն պարզվել է, որ դուք անմեղ եք:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12, ՀՈԴՎԱԾ 1 - ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԳԵԼՈՒՄ

Դուք չեք կարող խտրականության ենթարկվել պետական իշխանությունների կողմից, օրինակ՝ ձեր մաշկի գույնի, սեռի, լեզվի, քաղաքական կամ կրոնական համոզմունքների կամ ծագման պատճառով:

6.3 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԽՆԴՐԻՆ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Եթե ունեք ժամանակ և ցանկանում եք ավելի շատ բան սովորել ատելության խոսքի առցանց դրսևորումների մասին, ինչպես նաև պատկերացում կազմել, թե ինչ այլ կրթական նյութեր եք կարող օգտագործել ձեր խմբում, ստորև ներկայացված են որոշ ռեսուրսներ, որոնցից կարելի է սկսել: Այս ցանկով չեն սպառվում գոյություն ունեցող բոլոր նյութերը. սրանք ընդամենն առաջարկներ են, թե ինչպես կարող եք շարունակել նոր նյութերի ձեր որոնումները:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

- **«Կողմնացույց» („Compass“)** ՝ երիտասարդների շրջանում Մարդու իրավունքների կրթության ձեռնարկ, **«Կողմնացույցիկ»** („Compasito“)՝Մարդու իրավունքների կրթության ձեռնարկ երեխաների համար և մարդու իրավունքների կրթության, ինչպես նաև հակառասիստական կրթության այլ կրթական ռեսուրսներ երիտասարդների համար

  www.coe.int/compass

- **«Մենք կարող ենք» (We Can!)՝** գործողություններ ընդդեմ ատելության խոսքի հակադիր և այլընտրանքային պատումների միջոցով ձեռնարկում դրսևորվում են կոմունիկատիվ և ուսումնական մոտեցումներ և գործիքներ երիտասարդների և այլոց իրավունքների համար, որով ակտիվիստները կարող են մշակել իրենց սեփական հակադսիր և այլընտրանքային պատումները: Այն լրացնում է «Էջանիշեր» ձեռնարկը

  https://www.coe.int/en/web/no-hate-campaign/we-can-alternatives1

- **«Համացանցային գրագիտության ձեռնարկ»՝** առցանց կրթական ռեսուրս ծնողների, ուսուցիչների և երիտասարդների համար համացանցն օգտագործելու հմտությունները զարգացնելու համար:

  www.coe.int/t/dghl/standardsetting/internetliteracy/Source/Lit_handbook_3rd_en.swf

- **«Ցանցի մութ անտառները»** (Wild Web Woods) ՝ երեխաների համար նախատեսված առցանց խաղ համացանցում իրենց անվտանգությունը պաշտպանելու հիմնական կանոնները սովորելու համար:

  www.wildwebwoods.org/popup_langSelection.php

- **«Ատելության խոսքի մասին ձեռնարկ»,** հեղինակ՝ Անն Վեբեր, Եվրոպայի խոսրհրդի հրատարակություն, Ստրասբուրգ 2009թ:

- **«Ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ելակետեր»** ՝ երեք հետազոտություն ատելության խոսքի խնդրի շուրջ և այդ խնդրի դեմ պայքարելու եղանակների մասին, Գավան Թիթլի, Էլլի Քին և Լազլո Ֆյոլդ, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ 2012 թ.:
- **Եվրոպայի խորհրդի՝ մեդիային և արտահայտման ազատությանը նվիրված հիմնական էջը՝**

  www.coe.int/t/dghl/standardsetting/media/Themes/Education_en.asp
- **Թվային քաղաքացիության կրթական ծրագիր** Թվային քաղաքացիության կրթական ծրագիրը կոչված է խրախուսել երեխաներին ուսուցման և օգնել թվային հանրությանը նրանց ակտիվ մասնակից դարձնելու համար անհրաժեշտ կարողունակություններ ձեռք բերելու գործում:

  https://www.coe.int/en/web/digital-citizenship-education/digital-citizenship-education-project
- **Մարդու իրավունքների ուսուցման Եվրոպական ծրագիր իրավաբանների համար (HELP):**

  Օգնում է իրավաբաններին բարելավել իրենց ունակությունները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն և համաձայնեցված կիրառել Եվրոպական հիմնարար իրավունքների չափանիշները՝ առցանց և անցանց դասընթացների միջոցով: Որոշ առցանց դասընթացներ նաև հանրամատչելի են:

  http://help.elearning.ext.coe.int/
- **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի փաստերի թեմատիկ նյութեր** (այդ թվում՝ նաև ատելության խոսքի վերաբերյալ)՝

  www.echr.coe.int/ECHR/EN/Header/Press/Information+sheets/Factsheets
- **Նախարարների կոմիտեի կողմից՝ մեդիա ոլորտի վերաբերյալ ընդունված քաղաքականության հանձնարարականների, որոշումների և հռչակագրերի ցանկ՝**

  www.coe.int/t/dghl/standardsetting/media/doc/cm_EN.asp

ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ *INSAFE* ԵՎ *INHOPE*

- **INSAFE և INHOPE** նախաձեռնությունները միասին գործում են Եվրոպայում «ապահով համացանցային կենտրոնների» միջոցով՝ ապահովելով իրազեկության բարձրացում, խորհրդատվություն և աջակցություն: Նախաձեռնության շրջանակներում գործում է Թեժ գիծ, որը հանրությանն առաջարկում է անանուն կերպով համացանցային նյութի մասին հայտնելու միջոցներ՝ ներառյալ երեխաների նկատմամբ սեռական բռնության նյութերը, որոնք նրանք համարում են ապօրինի:

  https://www.betterinternetforkids.eu/web/portal/policy/insafe-inhope
- **Ինսեյֆի հաջողված փորձի ուղեցույց՝** դեռահասների համար նախատեսված ռեսուրսների հետազոտություն, ամբողջական հաշվետվություն:

  https://www.betterinternetforkids.eu/web/portal/practice/awareness/detail?articleId=199791

- **Teachtoday-ը** պորտալ է, որտեղ զետեղված են տեղեկություններ և խորհուրդներ դպրոցների համար նոր տեխնոլոգիաները դրական, պատասխանատու և անվտանգ կերպով օգտագործելու վերաբերյալ:

  https://www.teachtoday.de/en/

- **MediaSmart-ի** կայքէջը ներառում է բազում կրթական վարժություններ, ընդհանուր տեղեկություններ և գործիքներ համացանցի օգտագործման մասին:

www.mediasmarts.ca

- **«Ցանց, որ մենք ցանկանում ենք ունենալ» („Web We Want“)՝** 13-ից 16 տարեկանների համար նախատեսված ձեռնարկ, որը մշակվել է երիտասարդների կողմից և օգնությամբ, և վերաբերում է համացանցային գրագիտությանը:

  http://webwewant.eu

- **Եվրոպական դպրոցական ցանց (European Schoolnet)՝** եվրոպական 30 կրթության նախարարությունների ցանց, որն ուսուցիչներին և աշակերտներին առաջարկում է գիտելիքահեն հասարակության և համացանցի օգտագործման վերաբերյալ ռեսուրսներ:

  www.eun.org

- **Վերգելանդի եվրոպական կենտրոնը (European Wergeland Centre)** առաջարկում է մարդու իրավունքների կրթության համար կրթական տարբեր ռեսուրսներ:

  www.theewc.org

- **Զրպարտության դեմ լիգայի (Anti-Defamation League)** գործիքաշարքը ներառում է առաջարկներ կիբերատելության դեմ գործունեություն իրականացնելու համար:

  www.adl.org/assets/pdf/combating-hate/ADL-Responding-to-Cyberhate-Toolkit.pdf

- **INACH՝ Կիբեր ատելության դեմ միջազգային ցանցը** միավորում և օժանդակում է կազմակերպություններին, որպեսզի դրանք կարողանան խթանել համացանցում հարգանքը, պատասխանատվությունը և քաղաքացիությունը՝ կիբերատելության դեմ պայքարելու և առցանց խտրականության մասին իրազեկությունը բարձրացնելու միջոցով:

  www.inach.net

6.4. ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(Ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2014 թվականի ապրիլի 16-ին՝ Նախարարների տեղակալների 1197-րդ նիստում)

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

ՁԵՐ ԱՌՑԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ
Համացանցից օգտվելու իրավունք և խտրականության անթույլատրելիություն • Դուք պետք է ունենաք համացանցի մատչելիության իրավունք: • Համացանցում շփվելիս դուք չպետք է ենթարկվեք գենդերային, ռասսայական, գույնի, լեզվի, կրոնական , տարիքային, սեռական կամ այլ խտրականության:	• Տրամադրել Ձեզ հնարավորություն օգտվելու համացանցից, եթե Դուք ապրում եք գյուղում աշխարհագրական առումով հեռավոր շրջաններում, ունեք ցածր եկամուտ կամ հաշմանդամություն ունեցող անձ եք: • Արձագանքել առցանց խտրականությանը և տրամադրել պաշտպանություն ու աջակցություն:
Արտահայտման և տեղեկատվության ազատություն • Դուք ունեք առցանց ինքնարտահայտվելու իրավունք՝ բացառությամբ արտահայտությունների, որոնք պարունակում են խտրականություն, ատելություն կամ բռնություն: • Դուք ունեք տեղեկություն ստանալու իրավունք: • Դուք ունեք տեղեկություններ ստեղծելու, կրկին օգտագործելու և կիսելու իրավունք ՝ հարգելով մտավոր սեփականությունը, ներառյալ՝ հեղինակային իրավունքը: • Դուք կարող եք օգտագործել առցանց կեղծանուն, սակայն որոշ դեպքերում այն կարող է բացահայտվել:	• Սովորեցնել Ձեզ, թե ինչպես է անհրաժեշտ բողոքել կամ հայտնել խախտումների մասին: • Արձագանքել Ձեր բողոքներին: : • Բացահայտել որևէ մեկի ինքնությունը առցանց տիրույթում հանցագործությունների կամ մարդու իրավունքների խախտումների դեպքում:

Հավաքների, միությունների և մասնակցության ազատություն • Դուք ունեք այլոց հետ համացանցի միջոցով միավորվելու իրավունք ։ • Դուք ունեք առցանց խաղաղ ցույցեր անցկացնելու իրավունք: • Դուք կարող եք ընտրել ցանկացած առցանց գործիք ցանկացած սոցիալական խմբի միանալու կամ ցանկացած քաղաքական բանավեճի մասնակցելու համար:	• Տրամադրել Ձեզ առցանց մասնակցության գործիքներ: • Հաշվի առնել Ձեր կարծիքը:
Անձնական կյանքի և տվյալների պաշտպանություն • Համացանցում Դուք ունեք անձնական և ընտանեկան կյանքի իրավունք: • Դուք պետք է իմանաք, որ համացանցից օգտվելիս Ձեր անձնական տվյալները պարբերաբար ենթարկվում են մշակման: • Ձեր անձնական նամակագրության և շփումների գաղտնիությունն առցանց պետք է հարգեն նաև աշխատանքի վայրում:	• Հարգել որոշակի կանոններ և ընթացակարգեր Ձեր անձնական տվյալները մշակելիս: • Ստանալ Ձեր համաձայնությունը՝ կապված ձեր անձնական տվյալների մշակման հետ: • Պաշտպանել Ձեզ ապօրինի հետապնդումից կամ գաղտնալսումից: • Տրամադրել Ձեզ աջակցություն տվյալների պաշտպանության ծառայությունների միջոցով:
Կրթություն և գրագիտություն • Դուք ունեք կրթության և գիտելիքներ ստանալու իրավունք: • Դուք պետք է հնարավորություն ունենաք զարգացնելու հմտություններ տարբեր համացանցային գործիքներ հասկանալու համար՝ Ձեր կողմից օգտագործվող տեղեկության և ծառայությունների ճշգրտությունն ու վստահելիությունը ստուգելու նպատակով:	• Տրամադրել Ձեզ հնարավորություն ստանալու կրթություն և մշակութային, գիտական ու ակադեմիական տեղեկություններ: • Տրամադրել Ձեզ հնարավորություն զարգացնելու Ձեր գրագիտությունը մեդիայի ոլորտում:

Երեխաներ և երիտասարդներ • Դուք ունեք Ձեր կարծիքներն ազատ արտահայտելու և հասարակական կյանքին մասնակցելու իրավունք: • Դուք պետք է իմանաք, որ համացանցում Ձեր կողմից ստեղծվող տարածվող տեղեկությունները կամ համացանցի մյուս օգտատերերի կողմից հրապարակվող ձեզ առնչվող տեղեկությունները կարող ենոտնձգել Ձեր արժանապատվությանը, անվտանգությանն ու անձնական կյանքին: Այդ տեղեկությունները կարող են հասանելի լինել ամբողջ աշխարհով մեկ այս պահին կամ ձեր կյանքի հետագա փուլերում: • Դուք ունեք կրթության իրավունք, որով կպաշտպանեք ինքներդ ձեզ համացանցում ոտնձգություններից և բռնություններից:	• Սովորեցնել Ձեզ, թե ինչպես է պետք ապահով օգտվել համացանցից: • Տրամադրել Ձեզ հստակ տեղեկություններ առցանց ապօրինի տեղեկությունների և վարքագծի վերաբերյալ (օրինակ՝ առցանց սեռական բնույթի ոտնձգությունների) և հնարավորություն՝ հայտնելու ապօրինի տեղեկությունների մասին: • Տալ Ձեզ խորհուրդ և ցուցաբերել աջակցություն՝ պատշաճ հարգանք դրսևորելով գաղտնիության և անանունության նկատմամբ: • Պաշտպանել Ձեզ ֆիզիկական, հոգեկան և բարոյական բարեկեցության նկատմամբ ոտնձգությունից, մասնավորապես՝ համացանցում սեռական շահագործումից և բռնությունից, ինչպես նաև՝ կիբերհանցագործության այլ տեսակներից:
Օգնություն և օժանդակություն • Դուք ունեք աջակցություն ստանալու իրավունք այն դեպքում, երբ Ձեր իրավունքները սահմանափակվում են կամ խախտվում • Դուք ունեք դատարան դիմելու իրավունք	• Տեղեկացնել Ձեզ Ձեր իրավունքների մասին: • Տեղեկացնել Ձեզ, թե ինչպես է հարկավոր հայտնել ոտնձագությունների մասին: • Տեղեկացնել Ձեզ հասանելի աջակցության և օգնության մասին Ձեր իրավունքները խախտվելիս: • Պաշտպանել Ձեր թվային ինքնությունը և Ձեր համակարգիչն ապօրինի մուտքից և մանիպուլյացիաներից:

6.5 «ԷՋԱՆԻՇԵՐ» ՁԵՌՆԱՐԿԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄՇԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (1-2 ԺԱՄ)

Ներածական աշխատարան «Էջանիշեր» ձեռնարկի վարժությունների կիրառմամբ: Այս աշխատարանը մշակված է 25 մասնակցից բաղկացած խմբի համար:

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Աշխատարանի ներածություն (5 րոպե)
   - Բացատրե՛ք մասնակիցներին, թե ինչի մասին է աշխատարանը:
2. Ծանոթություն առցանց ատելության խոսքին (15 րոպե)
   - Հարցրե՛ք մասնակիցներին, արդյոք, նրանք երբևէ առնչվել են առցանց ատելության խոսքի հետ և խնդրե՛ք բերել մի քանի օրինակ կամ հակառակը՝ Դուք ինքներդ կարող եք ներկայացնել մասնակիցներին որոշ օրինակներ:
   - Հարցրե՛ք մասնակիցներին, թե ինչպես են իրենց զգում ատելության խոսքի առցանց դրսևորումների թիրախ դարձած անձինք, ինչ հետևանքներ կարող է ունենալ ատելության խոսքը նրանց կամ հասարակության մյուս ներկայացուցիչների համար:
   - Ներկայացրե՛ք մասնակիցներին մարդու արժանապատվության հայեցակարգը, որը վտանգվում է ատելության խոսքի պատճառով, ներկայացրե՛ք նաև ատելության խոսքի առցանց դրսևորումների բնորոշումը: (Եվրոպայի խորհրդի՝ ատելության խոսքին տված բնորոշումը տե՛ս Էջանիշերի 15-րդ էջում:
3. Անցե՛ք Էջանիշերի՝ «Վատագույն տարբերակը» վարժությանը (45-60 րոպե)
   - Դա ատելության խոսքի առցանց դրսևորումներին առնչվող ներածական վարժություն է: Մասնակիցները ներկայացնում են նույնասեռականների դեմ ուղղված ատելության խոսքի տարբեր օրինակներ, և դասակարգում դրանք ըստ “վատագույնի”: Հավելյալ տեղեկությունները տե՛ս էջ 145 :
4. Այս վարժությունից հետո կարող եք (20-30 րոպե)՝
   - ցույց տալ մասնակիցներին «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական շարժման քարոզարշավի կամ ատելության դեմ պայքարող Նինջա ծրագրի «Կատուների, ռնգեղջյուրների և ատելության խոսքի մասին» տեսագրությունը *(https://www.coe.int en/web/no-hate-campaign/videos1*), հակիրճ պատմել նրանց երիտասարդական

շարժման քարոզարշավի մասին, (Քարոզարշավի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս Էջանիշեր 2-րդ գլուխ «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավ էջ 15),

- քննարկել, թե ինչպես կարող են երիտասարդներն օգտագործել համացանցն առանց ատելության խոսքի և արդյունքում կազմել թույլատրումների և արգելքների ցանկ՝ համացանցը երիտասարդների կողմից ճիշտ օգտագործելու համար,
- կատարել դասընթացի հակիրճ գնահատում (օրինակ՝ խնդրել մասնակիցներին համառոտ բացատրել, թե ինչ են սովորել դասընթացից (5-10 րոպե)։

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Եթե աշխատարանի ներածական մասում ցանկանում եք կիրառել էջանիշերի թեմաներից որևէ մեկը, կարող եք իրականացնել մեկ այլ վարժություն, օրինակ՝

- խաղի փոխարինում, որտեղ դիտարկվում է սեքսիզմն առցանց խաղերում,
- պայքար կիբերբուլինգի դեմ, որտեղ դիտարկվում է կիբերբուլինգի խնդիրը,
- X խումբ, որտեղ դիտարկվում է ռասիզմի ազդեցությունը ռոմաների (գնչուների) վրա,
- անձնական էջեր, որտեղ դիտարվում են ատելության խոսքի առցանց դրսևորումները հրահրող նախապաշարմունքները և կարծրատիպերը։

2. ԱՇԽԱՏԱՐԱՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (4 ԺԱՄ)

Աշխատարանը նախատեսված է առավել երկարատև կրթական ծրագրի համար՝ Էջանիշերի կիրառմամբ։ Այս աշխատարանի ընթացքում մասնակիցները՝

- կսովորեն ատելության խոսքի, մարդու իրավունքների շրջանակի և արտահայտման ազատության սահմանափակումների մասին։

Այս աշխատարանը նախատեսված է 25 հոգանոց խմբի և մեկ վարողի համար։

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Աշխատարանի ներածություն (5 րոպե)

Բացատրե՛ք մասնակիցներին, թե ինչի մասին է աշխատարանը։

2. Ծանոթություն առցանց ատելության խոսքին (15 րոպե)

- Հարցրե՛ք մասնակիցներին, արդյոք, նրանք երբևէ առնչվել են առցանց ատելության խոսքի հետ և խնդրե՛ք բերել մի քանի օրինակ կամ հակառակը՝ Դուք ինքներդ կարող եք ներկայացնել մասնակիցներին որոշ օրինակներ։ Ներկայացրե՛ք մասնակիցներին մարդու արժանապատվության հայեցակարգը, որը վտանգվում է ատելության խոսքի պատճառով, ներկայացրե՛ք նաև ատելության խոսքի առցանց դրսևորումների

բնորոշումը։ (Եվրոպայի խորհրդի՝ ատելության խոսքին տված բնորոշումը տե՛ս Էջանիշերի 189-րդ էջում։

3. Անցե՛ք Էջանիշերի՝ «Անսահմանափակ ազատությո՞ւն» վարժությանը (60 րոպե)

   Մասնակիցները կծանոթանան արտահայտման ազատությանը՝ ուսումնասիրելով մի շարք գործնական դեպքեր։ Նրանք պետք է որոշեն, թե ինչպես վարվել վիճելի, վիրավորական կամ պոտենցիալ վտանգ ներկայացնող մեկնաբանությունների դեպքում (հավելյալ տեղեկությունների համար տե՛ս էջ 93)։

4. Առաջին վարժությունից հետո կարող եք առավել խորն ուսումնասիրել ատելության խոսքի առցանց դրսևորումների արմատներն ու դրա հետևանքները։ Այդ նպատակով կարող եք օգտագործել Էջանիշերում ներկայացված «Արմատներ և ճյուղեր» վարժությունը (60 րոպե)՝ էջ 140)։ Ինչպես նաև կարող եք օգտագործել ցանկացած օրինակ նախորդ վարժությունից՝ որպես ելակետ այս վարժության «խնդիրների ծառը» ստեղծելու նպատակով։

5. Նախատեսեք կարճատև ընդմիջում (20 րոպե)։

6. Կարող եք խնդրել մասնակիցներին «Խնդիրների ծառի» հիման վրա մշակել գործողություններ կամ քարոզարշավի նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն ատելության խոսքի որոշ հետևանքներին անդրադառնալու համար։ Կարող եք նաև բաժանել մասնակիցներին ավելի փոքր աշխատանքային խմբերի, խնդրել նրանց ընտրել ատելության խոսքի հետևանքներից որևէ մեկը և գտնել դրա լուծման ճանապարհները։ Տրամադրե՛ք խմբերին 20 րոպե քննարկման և ևս 20 րոպե՝ իրենց եզրահանգումները ներկայացնելու համար (40 րոպե)։

7. Այս վարժությունից հետո կարող եք (30 րոպե)՝
   - ցույց տալ մասնակիցներին «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական շարժման քարոզարշավի կամ ատելության դեմ պայքարող Նինջա ծրագրի «Կատուների, ռնգեղջյուրների և ատելության խոսքի մասին» տեսագրությունը (https://www.coe.int en/web/no-hate-campaign/videos1), հակիրճ պատմել նրանց երիտասարդական շարժման քարոզարշավի մասին, (Քարոզարշավի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՝ս Էջանիշեր 2-րդ գլուխ «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավ էջ 15),
   - քննարկել, թե ինչպես կարող են երիտասարդներն օգտագործել համացանցն առանց ատելության խոսքի և արդյունքում կազմել թույլատրումների և արգելքների ցանկ՝ համացանցը երիտասարդների կողմից ճիշտ օգտագործելու համար

8. Կատարեք աշխատարանի հակիրճ գնահատում (օրինակ՝ խնդրել մասնակիցներին համառոտ բացատրել, թե ինչ են սովորել աշխատարանից (5-10 րոպե))։

3. ԱՇԽԱՏԱՐԱՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԱՌՑԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (4 ԺԱՄ) – ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ

Աշխատարանը նախատեսված է առավել երկարատև կրթական ծրագրի համար՝ Էջանիշերի կիրառմամբ: Այս աշխատարանի ընթացքում մասնակիցները՝

- կծանոթանան ատելության խոսքի առցանց դրսևորումներին,
- մարդու իրավունքների շրջանակին և արտահատման ազատության սահմանափակումներին: Այս աշխատարանը նախատեսված է 25 մասնակից ունեցող խմբի համար:

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Աշխատարանի ներածություն (5 րոպե)

- Բացատրե՛ք մասնակիցներին, թե ինչի մասին է աշխատարանը:

2. Ծանոթություն ատելության խոսքի առցանց դրսևորումներին և մարդու իրավունքներին (20 րոպե):
    - Հարցրե՛ք մասնակիցներին, արդյոք, նրանք երբևէ առնչվել են առցանց ատելության խոսքի հետ և խնդրե՛ք բերել մի քանի օրինակ կամ հակառակը՝ Դուք ինքներդ կարող եք ներկայացնել մասնակիցներին որոշ օրինակներ:
    - Ներկայացրե՛ք մասնակիցներին մարդու արժանապատվության հայեցակարգը, որը վտանգվում է ատելության խոսքի պատճառով, ներկայացրե՛ք նաև ատելության խոսքի առցանց դրսևորումների բնորոշումը: (Եվրոպայի խորհրդի՝ ատելության խոսքին տված բնորոշումը տե՛ս Էջանիշերի 15-րդ էջում:

3. Անցե՛ք Էջանիշերի՝ «Մեկ օր դատարանում » վարժությանը (120 րոպե).
    - Մասնակիցները Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննված իրական դատական գործի հիման վրա փոքր դատական նիստ են բեմականացում: ուսումնասիրելով (հավելյալ տեղեկությունների համար տե՛ս էջ 33):

4. Նախատեսեք կարճատև ընդմիջում (20 րոպե):

5. Այս վարժությունից հետո բաժանեք մասնակիցներին ավելի փոքր խմբերի և խնդրեք նրանց կատարել փոքր հետազոտություն իրենց սիրելի ինտերակտիվ կայքէջերի մասին՝ ստուգելու համար նրանց քաղաքականությունը՝ կապված ռասիստական վիրավորանքների և ատելության խոսքի այլ դրսևորումների հետ: Տրամադրեք խմբերին 20 րոպե, ապա կրկին հավաքեք մասնակիցներին՝ քննարկելու և համեմատելու համար իրենց կողմից հայտնաբերված տարբեր քաղաքականությունները: Քննարկեք, արդյոք, նրանց կարծիքով դրանց շարքում կան օգտատերերին պաշտպանելու համար ոչ բավարար քաղաքականություններ, և թե ինչպես է հնարավոր շտկել դրանք: (40 րոպե):

Սա Էջենիշերի «Ծանոթանում ենք կանոններին» վարժության տարբերակներից է։ «Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս էջ 132։

6. Այս վարժությունից հետո կարող եք (30 րոպե)՝
    - ցույց տալ մասնակիցներին «Ո՛չ ատելության խոսքին» երիտասարդական քարոզարշավի կամ ատելության դեմ պայքարող Նինջա ծրագրի «Կատուների, ռնգեղջյուրների և ատելության խոսքի մասին» տեսագրությունը (https://www.coe.int en/web/no-hate-campaign/videos1), հակիրճ պատմել նրանց երիտասարդական շարժման քարոզարշավի մասին, (Քարոզարշավի մասին հավելյալ տեղեկությունների համար տե՝ս Էջանիշեր 2-րդ գլուխ «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավ էջ 15),
    - քննարկել, թե ինչպես կարող են երիտասարդներն օգտագործել համացանցն առանց ատելության խոսքի և արդյունքում կազմել թույլատրումների և արգելքների ցանկ՝ համացանցը երիտասարդների կողմից ճիշտ օգտագործելու համար,
7. Կատարեք աշխատարանի հակիրճ գնահատում (օրինակ՝ խնդրել մասնակիցներին համառոտ բացատրել, թե ինչ են սովորել աշխատարանից (5 րոպե)։

Եվրոպայի խորհրդի աշխատանքը ժողովրդավարության առումով առավելապես հիմնված է կրթության վրա. կրթություն դպրոցներում և շարունակական՝ ոչ ֆորմալ կրթություն ժողովրդավարության կայունության նպատակով: Մարդու իրավունքների ուսուցումը, ինչպես նաեւ ժողովրդավարական քաղաքացիության կրթությունը ժողովրդավարությունը կայուն պահելուն ուղղված մեր անելիքների անքակտելի մասն են կազմում:

Ատելության խոսքը ռասիզմի և խտրականության ամենավտանգավոր դրսևորումն է, որը գերակայում է Եվրոպայում և որով հագեցած են համացանցն ու սոցիալական ցանցերը: Ատելության խոսքի առցանց դրսևորումներն անհանդուրժողականության և էթնոցենտրիզմի սառցաբեկորի տեսանելի գագաթին են: Երիտասարդները առցանց տիրույթում մարդու իրավունքների ոտնահարման անմիջական թիրախներ են եւ Եվրոպան կարիք ունի, որ հենց նրանք հոգ տանեն այդ իրավունքների եւ ժողովրդավարության կենսունակության մասին:

«Էջանիշեր» ձեռնարկը նպատակ ունի աջակցել Եվրոպայի խորհրդի «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավին, որը նպաստում է առցանց տիրույթում մարդու իրավունքների պաշտպանությանը: Հրատարակությունը նախատեսված է այս խնդրին անդրադառնալ ցանկացող ուսուցիչների համար ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթական համակարգի շրջանակներում: Ձեռնարկը նախատեսված է 13-ից 18 տարեկան երիտասարդների համար, թեև վարժությունները հնարավոր է հարմարեցնել այլ տարիքային խմբերին և.ս:

Էջանիշերի այս հրատարակությունը թարմացվել է, ներառելով «Համացանցի օգտատերերի համար Մարդու իրավունքների ուղեցույցի», «Ո՛չ ատելության խոսքին» շարժման քարոզարշավի և ատելության խոսքի դեմ աշխատարանների մասին ավելի շատ տեղեկություններ (ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության համատեքստում):

NO HATE SPEECH MOVEMENT

www.nohatespeechmovement.org

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքում մարդու իրավունքների ամենաառաջատար կազմակերպություններից է և ներառում է 47 անդամ պետություն, որոնց թվում են Եվրամիության բոլոր անդամ-պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ-պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), որն միջազգային պայմանագիր է՝ ուղղված մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության պաշտպանությանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բոլոր անդամ-պետություններում հետևում է Կոնվենցիայի իրագործմանը:

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE